ձեզ համար չկայ յարութիւն"։ Հինգերորդ տղայն եւս տանջանքներուն մէջ խօսեցաւ Նախոքսին և ասաց. "Դուն հիմայ ինչ որ կ'ուզես՝ կ'ընես մեզ, մինչ մարդ՝ մեզ նման մահկանացու. դուն քեզ տրուած իշխանութիւնը չափաչար կը բանեցընես, բայց մի կարծեր Թէ Աստուած մեր աղքն երեսէ ձգած է։ Կաց դուն, շուտ չերթայ նորա սքանչելի զօրութիւնը կը տեսնես, ինչպէս քեզ և քու բոլոր ցեղդ պիտի չարչարէ"։ Նկէ յետոյ վեցերորդը բերին, որ իւր վերջին շունչը հանելով այսպէս ասաց անդութ իշխանին. "Կը խաբուիս դուն, մինչ Թագաւոր. և գիտցիր որ մեր մեղքերն են այս մեր քաշած վիշտերուն պատճառը. բայց մի կարծեր Թէ անպատիժ կը մնաս, դուն որ Աստուծոյ հետ կը պատերազմիս"։

Վերջապէս մնաց եօթներորդ տղայն, որ ամենէն փոքրն էր։ Նախոքսն բռնութիւն շատ աշխատեցաւ անոյշ խօսքերով տղուն խելքը դարձընել, յորդորելով որ իւր կեանքը մահէն ազատէ, նաեւ երդմամբ խոստացաւ փարեմանութեան և մեծ պատուոյ հասցընել, Թագաւորին բարեկամն կանչուիլ, միայն Թէ իւր նախարարաց օրինքը Թողու։ Երբ տեսաւ Թագաւորը Թէ նա բնաւ իւր խօսքին ականջ չդներ, կանչեց նորա մայրն իրեն մօտ, ազաչեց որ խրատէ իւր զաւակը, որպէս զի անողոքմտաբար չմեռնի։ Մայրը յանձնառու եղաւ խօսել իւր

սիրելի զաւակին հետ իրենց լեզուով և ասաց. «Ողջո՛ւմ քո մօրդ, որդեակ իմ. միտքդ բեր որ ես ինձ ամիս ապրանդիս մէջ կրեցի զքեզ, երեք տարիի չափ իմ կաթովս սնուցի, և մինչեւ այդ հասակին հասուցի քեզի։ Հիմայ կ՚ազատեմ զքեզ, բայց աչուընիդդ, սիրուն զաւակս. նայէ երկինքն ու երկիրը. ասոնք են Աստուծոյ ձեռքի գործերը, զոր դու կը պաշտես. նոյնպէս բոլոր մարդիկ անորմէ ստեղծուած են։ Օ՛ օրհնցիր, սիրտ առ, և մի վախնար այս անգութ դահձէն, այլ քո եղբարցդ արժանի լինելով՝ կեանքէն աւելի մահն ընտրէ քեզ, որպէս զի ամենքս միասին դառնանք Աստուծոյ արքայութեան մէջ, որ մեզ կը սպասէ.» Երբ մայրն այս մխիթարական խօսքերը կը խօսէր անոր, տղային մէկէն ի մէկ պօռաց. «Ո՛րո՛ւ կը սպասէք, ինչո՛ւ կ՚ուշացնէք. մտիկ ընելու չեմ ես թշնամուրին, այլ միայն Աստուծոյ սրբազան օրինաց հնազանդ եմ», և շարունակելով իր խօսքը՝ մարգարէական ոգւով այսպէս խօսեցաւ. «Իսկ դու որ մեզ այսքան տանջանք և մահ կրել կուտաս, չպիտի ազատես Աստուծոյ ձեռքէն։ Ան՛ր մեղքերուն էր որ այս պատուհասներն մեր գլխուն բերին. և Աստուած զմեզ խրատելու համար իր բարկութեան հանդիսացուց, որ շուտով պիտի դադրի, և իր ողորմութեամբ պիտի հաշտուի իր ծառայից հետ։ Ա՛յլ դու, անօրէն, չպիտի ազատես նորա արդար դատաստանէն»։ Ընտիքոսի բարկութեան չափ չը պատնեշեցաւ. Մէկէն հրամայեց միւս եղբայրներէն աւելի անգթութեամբ տանջել զինքը, որ անարատութեամբ աւանդեց հոգին դառն չարչարանաց մէջ։ Տղայոցմէ յետոյ մայրերնին նահատակեցաւ, որոյ արիւնն իր քաջասիրտ որդւոց արեան հետ խառնեցաւ, զորոնք իր ներկայութեամբն և իր յորդորանօք քաջալերելով մարտիրոսութեան արժանի ըրաւ։

Ձեմ երկբայիր ամենեւին, սիրելի զաւակնք իմ, որ այս աքանչելի տղայոց դիւցազնական մտաց հաստատութիւնը ձեր սիրտը շարժած չլինի, նաեւ հաստատուն առաքլուխ մի ընել չտայ ձեզ իրենց պէս ամէն կերպ տանջանք կրելու, քան թէ յանցաւոր երեւալու Աստուծոյ առջեւ։ Ա՛յլ ձեզ միշտ սիրտ տալու համար, որ ձեր անմեղութեան անդին գանձը անվիճաբանապահէք, աշխատութենէն չեմ փախչիր պատմել ձեզ ուրիշ զարմանալի օրինակ մի եւս։

Քրիստոնեայ տղու մի սուրբ հաւատոյ մէջ ունեցած դիւցազնական հաստատութիւնը։

Կապադովկիա Կեսարիայի մէջ երիտասարդ մի կար Վիբեղ անունով, որու հայրը կուապաշտ էր։ Սա չկրնալով իր տղային համոզել որ սուտ չաստուածոց երկրպագութիւն ընէ, վը-

ընտեց իւր տունէն լաւ ձեռ մի տալէն յետոյ։ Գաղաքին դատաւորը լսելով զայս , քանի մի զինուորներ խրկեց , իրեն բերել տուաւ տղայն և քաղցրութեամբ ասաց նորա . “Արդեակ իմ՝ ես քո յանցանացդ կը ներեմ , մատղաշ հասուկիդ վերայ խղճալով ։ Գո հօրդ աչքը մանեին և նորա ունեցած ապրանքներն վայելել քո ձեռքդ է ։ Խելքդ գլուխդ բեր ուրեմն , և Թող այդ կրօնքն որ բոլորովին մնապաշտութիւն է»։ Ադաքինի տղայն համբերութեամբ պատասխան տուաւ նորա . “Այս իմ ըրածներուս համար յանդիմանութիւն լսելու շատ գոհ եմ ։ Պատուած գիս իւր մօտ կը կանչէ , և նորա մօտ իմ հօրմէս աւելի հանգիստ կը լինիմ ։ Իմ հօրս տունէն վռընտուելուս չեմ դժուարիր , յուսալով որ ուրիշ աւելի ընդարձակ և գեղեցիկ տան մի մէջ պիտի բնակիմ ։ Յօժար սրտով կը հրաժարիմ այս աշխարհիս մեծութիւններէն , երկնից արքայութիւնն ստանալու համար ։ Չեմ վախնար մահէն , որ պատճառ պիտի լինի ինձ լաւագոյն կեանք մի ձեռք բերելու » ։ Այս խօսքերս այնպէս քաջասրտութեամբ կը զրուցէր , ասկէ յայտնի կ՚երեւէր Թէ Պատուած իրեն խօսել կուտար ։ Այն ատեն դատաւորը բարկանալով , խիստ դէմքով և զարհուրելի ձայնով պօռաց սուրբ տղուն երեսին , որպէս զի վախցնէ զինքն , ու ասաց . “Հիմայ մեռցընել կուտամ զքեզ» ։ Յետոյ կապել տուաւ

երկու հատ ծառի ճիւղերով , որպէս Թէ տանջելու պիտի տանին զինքը. հրաման տուաւ փայտակոյտ մի պատրաստել և նեռքեւը կրակ դընել , բայց աքանչելի տղայն վախնալու տեղ՝ աւելի սիրտը պնդացուց և քնաւ հոգ չէր ըներ . տարին զինքը կրակին մօտ և կը սպառնային մէջը նետել պրել ։ Դատաւորը պատուիրած էր անոնց՝ որ այն պատրաստութիւններով միայն վախցնեն զինքը , բայց տղայն ամենևին մաքէն չանտեցաւ ։ Դատի դատաւորին առջեւ տարին , որ սպառնալով ասաց . “Կը տեսնե՞ս այս տաբն և այս կրակին , որ քո կամակորութեանդ պատժելու համար պատրաստուած են։ Խելքդ գլուխդ ջո՛ն ուզեր բերել , և իմ ու հօրդ կամաց հնազանդելով՝ արժանի լինիլ նորա սիրոյն , որ կրնայ զքեզ իւր տունն ընդունի » ։ Պատասխան տուաւ Կիւրեղ . “Դու զիս աներկնչին մարդոյ մի տեղ դրիր՝ քո առջեւդ կանչել տալով ։ Գիտնաս ուրեմն որ ես ոչ կրակէ կը վախնամ և ոչ սրէ , և կը փափաքիմ երթալ այն յաւիտենական բնակարանն՝ որ այս աշխարհիս մէջ չէ , և կը բաղձամ ստանալ այն մեծութիւնները՝ որ իմ հօրս ունեցածներէն խիստ գերազանց են . Պատուած է որ պիտի սպ զինքը ։ Ճշտութիւնք մէկ ժամ առաջ տուէք ինձ մահն , որ իմ յաւիտենական երջանկութեանս սկիզբը պիտի լինի ։ Այն տեղ գանուած ոստիկանները նորա այսպէս խօսիլը լսելով , կուլային

քայց Կիւբեղ դարձաւ ասայ նոցա . « Դուք պէտք է ուրախանաք ինձ հետ . և ձեր արտասուքներուին իմ սիրտս թուլցընելու տեղ՝ աղէկ կ՚ընէք որ քաջալերէք զիս համբերութեամբ կրելու այս տանջանքները : Ահ , դուք չէք գիտեր այն փառքն՝ որ ինձ կը սպասէ , և ոչ իմ ունեցած յոյսս՝ թէ ինչ բանի համար է : Թողէք զիս որ այս յուսով մեռնիմ» : Այս կարօտութիւնները քաշելով նահատակեցաւ սուրբ տղան :

Դուք հիմայ այսպէս չարչարանքներ կրելու վախ չունիք , սիրելի որդեակք իմ , և ոչ այսպէս մեծամեծ զոհեր ընելու չափ վտանգի մէջ կ՚ինկնիք ձեր անմեղութիւնը պահելու համար. քայց գիտցած եղիք որ այս անմեղութիւնը շատ զգուշութիւն կը պահանջէ ձեր կողմէն , ինչ պէս որ հետեւեալ գլխուն մէջ պիտի ըսուցեմ :

ԳԼՈՒԽ Զ .

Անմեղութեան պահանջած խնամքներն և նախազգուշութիւնները , և զանիկայ պահպանելու միջոցները :

Ա ՆՄԵՂՈՒԹԻՒՆն նման է գեղեցիկ ծաղկի որ պայծառ գոյներով սիրուն տեսք մի կ՚ունենայ , և իւր շուրջը զարմանալի անոյշ հոտ մի կը բուրէ . քայց մի քիչ ծուխ կրնայ սեւցընել , և մի քիչ հովը կրնայ խլել ու գետին ձգել . չը

կրնար մարդ անվնաս պահել զայն , քայց եթէ հոգ տանելով որ փոթորիկն չվնասէ , այսինքն բոլոր վտանգաւոր բաներէն հեռացընելով :

Ա սա զրոյց մի , չար օրինակ մի ևս մնայ ընթերցողաց մի կրնայ կորսնցընել ձեր անմեղութեան պատուական զգեստը : Դուք պարտաւոր էք անբիծ և անարատ պահել զայն . վասն զի Աստուած այս դաշինքով ձեզ հպատակեցուցած է , և օր մի խիստ բարակ հաշիւներ պիտի պահանջէ ձեզմէ :

Գեղեցիկ նմանութիւն սուրբ գրքին :

Երբ Յովսեփայ եղբարքը զինքն խամրելու վճռաւորութեան վճռեցին , յանցանքնին իրենց հօր Յակոբէն ծածկելու համար , որ Յովսեփայ վերայ խիստ փափուկ սէր ունէր . առին նորա վերայի հպատակեցան և նոր մորթուած ոչխարի մի արեան մէջ թաթխելով , զրկեցին մէկուն հետ իրենց ծեր հօրն Յակոբին : Այս մարդս նորա դիմացն որ եկաւ , ինչպէս որ ուսուցեր էին իրեն անոզորմ եղբայրները . « Հայ , ասաց անոր , ասիկայ գտանք , տես՝ թէ քո որդւոյդ պէ՞տն է : — Այ՛ ինձ , կոչեց խեղճ հայրը , գիտեմ աղէկ որ այդ իմ զաւկիս պատմուճանն է : Բայց մէկ Աստուած , ինչ եղեր է այդ : Ահ , անշուշտ կ՚իմանամ , տարակոյս չկայ . իմ որդիս Յովսէփ ոչ ՚ի . չար գա-

զան մի կերած է զայն, Աստուած իմ»։ Այս պէս ասելով կը հառաչէր, կը ծեծկուէր, ա բիւն արտասուք կը թափէր, այնքան որ աղ քականները չկրցին մխիթարել վշտագին ծնողաց սրտին ցաւը։

Երեշտակները եւս օր մի ձեր անմեղու թեան պատմուճանը պիտի ներկայացնեն գե բազոյն Դատաւորին առեւանն՝ ասելով անոր, ինչպէս Յովսեփայ եղբայրներուն ըրած մար դն ասաց Յակոբին. «Տես թէ այս է քու որդւոյդ պատմուճանը»։ Ինչ խեղճութիւն կը լինի ձեզ, եթէ ձեր պատմուճանը բզոզոտին մեղքով աղտոտի։ Ձեր Թշնաւոր վիճակը յա ւիտենական պիտի լինի, վասն զի երկնից արքայութեան մէջ ամենեւին պիղծ և աղտոտ բան չմտներ. և եթէ կ'ուզէք որ զձեզ ներս առնուն, պէտք է կամ անմեղութիւննիդ պա հէք, կամ եթէ կորսնցուցած էք՝ ապաշխարու թեամբ վերստին ձեռք բերէք զայն։

Օգտակ կացէք ուրեմն, որ չլինի թէ լսեն ձեզ հասնալ՝ ինչ որ Յովսեփայ հասնալ պատ ահեցին, թէ չար գազան մի կերաւ զայն։ Ո՞ւ ասն այն է՝ որ զձեզ ուտող այս սոսկալի գազանը մեղքն է։ Փախիք ուրեմն անկէ, կ'ասէ իմաս տասէն, ինչպէս որ Թռչնաւոր օձ մի տեսնելը նաւագ կը փախչէք. և ի գործ դրէք Յիսուսի Քրս տոսի ուսուցած երկու միջոցները, այսինքն՝ աղօթքն և հսկումը։

Երիտասարդի մի քրտած գեշեցիկ աղօթքը։

Ուսալաւնոյ երիտասարդն, որ տասն և եօթ տարեկան ծաղկափթիթ և տուրբ հասակին մէջ մեռաւ, ինչպէս կը կարդացուի իւր վարուց դրքին մէջ, սովորութիւն ունէր թէ առաւօտ և թէ երեկոյ այս գեղեցիկ աղօթքն ընելու Աստուծոյ. «Աստուած իմ, երբ կը տեսնես որ իմ անմեղութիւնս կորսնցնելու վտանգին հասած եմ, վերցուր զիս այս աշխարհէս. վասն զի ես միտքս դրած եմ, և կը վախնամ աւելի մեղանչելու՝ քան թէ ապրիլ առանց զքեզ սիրելու»։

Շատ կը ցանկայի որ դուք եւս, սիրելի զա ւակունք իմ, այս աղօթքն ընէիք միշտ, որով անշուշտ մեծ օգնութիւններ կ'ընդունիք Աստուծմէ՝ որ զձեզ մեղքէ կը պահէ, մանաւանդ եթէ առիթ հաղորդութիւն առնելու լինիք։

Նկեղեցւոյ բոլոր սրբազան Հայրերը՝ զան մեղութիւնը պահելու համար խիստ ազդու մի ջոցներէն մին համարած են հաղորդութիւնը։ Այն է որ մեր կրից եռանդը կը մարէ, մեր հոգւոյն վերայ նոյն ազդեցութիւնը կ'ընէ, ինչ որ մի անգամ տղոյ մի մարմնոյն վերայ ըրաւ՝ հրը թաշնքով կրակներուն մէջէն վինքն ազատելով։

Աչաց համարձակ նայուածքին չարաչ եկած քնառները։

Դաւիթ մարգարէն մի միայն նայուածքով չանցաւոր եղաւ։ Ինչեւ այս չանցանքը գոր-

Ծերու ժամանակ անմեղութեան և առաւածպաշտութեան օրինակ մի էր. բայց դժբաղդաբար օր մի առնիքին վերայ ժուռ եկած առեն, նայեցաւ որ կին մի կը լուացուէր. և այս մի մին համարձակ նայուածքը իրեն պատճառ եղաւ յաճախակելու զայն, և անոր անմեղ առնիքը մեղցընել տալու, որ իրեն կին ընէ։

Աբեմն խիստ մեծ զգուշութիւն պէտք է ունենաք ձեր աչաց վերայ, և չմոռնաք որ տեսնեն այնպիսի բաներ, որ ձեր անմեղութեան ցաւալի վնաս մի հասցընեն։ Այս զգուշութիւնն առաւել արդի ժամանակիս մէջ պէտք է ունենաք, ուր կ'երեւի թէ անհամեստութիւնն և անպարկեշտութիւնը դրօշակ առած են։

Պարկեշտութիւնն եւ ամօթխածութիւնը անմեղութեան հաւատարիմ պաշտպաններն են, ինչպէս անառակութիւնն և մոլութիւնը հաստարակ պատճռներն են համարձակութեան, զոր տղայք ամենեւին բանի տեղ չդնելով, ամեն բիչ մըչ մարդկ և թէ վատ, կ'ուզեն տեսնել. ամեն գիրք կարդալ, և ամեն բան կ'ուզեն մտիկ ընել. չեն գիտեր թէ բիչ չար հետեւանք ներ յառաջ կուգան առնցմէ։

Քանի քանի երիտասարդներ իրենց մտաղաչ հասակին մէջ առանց փորձն ըլլին թշուառութեամբ։ Քանի հոգի իրենց չար հետաքրքրութիւնը կատարել ուզելով, անզգուշութեամբ չափերնին չգիտցան, և անմտաբար մեծ մեծ անկարգութեանց մէջ ինկան։

Ես չեմ հաւատար բնաւ, սիրելի որդեակք իմ, թէ դուք եւս ատոր պէս լինիք։ Բայց և այնպէս եմէկ զժբաղդութեամբ ծանր չանցանքով մի ձեր անմեղութեան պատմուճանն աղտոտած լինիք, շուտով առանց ժամանակ անցընելու խոստովանեցէք և ապաշխարեցէք որ Թողութիւն գանէք. վասն զի ինչպէս որ գիտէք, այս տուրբ Խորհուրդը՝ ապրուստին յատուկ գործուած մեղքերը ջնջելու համար սահմանուած է։

Եթէ ձեր վերայ ծանր և վտանգաւոր հիւանդութիւն մի գալու լինի, իսկոյն հոգ կը տանիք, բժիշկներուն ոտքը կ'ինկնիք, դեղեր կ'առնուք որ ձեր առաջին առողջութիւնը ձեռք բերէք։ Աբեմն հոգւոյն աւելի մեծ հոգ պէտք է տանիք ձեր հոգւոյն՝ եթէ հիւանդացնալու լինի։ Հոգւոյն վերայ բացած մեղայ վէրքերն հազար անգամ մարմնոյն հիւանդութիւններէն մեծ և վտանգաւոր են։ Ա՛ն ամեն ժամ պատրաստ կեցած է ձեր դիմուն տակ. Ի՛նչ կը լինի ձեր վիճակն երբ մահացու մեղք մի գործեցնէդ յետոյ՝ մահը ձեր հոգին առնու. ինչպէս հանդիպեցաւ մի դժբաղդ երիտասարդի, որոյ ցաւալի մահը կը պատմէ նոր հեղինակ մի։

ԳԼՈՒԽ Ը.

Մոլի բարեկամաց վերայ:

ՉՈԳՒՆ սուրբ նոյն իսկն կը հաստատէ մեզ թէ գիտուն և առաքինի բարեկամը բոլոր գանձերէն պատուական է. բայց ախտս որ շատ դըժար է զայն ձեռք բերել: Վիտուն մարդիկ սահուն են թէ, այն մարդոցմէ մեծ մասը, որոնք կը պարծենան ճշմարիտ բարեկամ լինիլ իրենց բարեկամաց, բարեկամութեան միայն պարտքին պարզ երեւոյթներն ունին իրենց վերայ: Այս առածս խիստ ստոյգ և փորձով եւս հաստատուած է: Վ՚ան որ սուտ բարեկամները չ՚ճանչնար մարդոց հետ սիրով կապուած են, ոչ մի այն անոնց սատարուածոց հետ, որոնց հանդուրժութեան և ունեցած վարկին աչք տնկած են: Սոյն բաղձանքը միայն իրենց օգտին համար է, զոր կը յուսան բարեկամաց երեսէն ստանալ, դիտաւորեալ սէր ցուցնելով անոնց: Ասոր նման այս տեսակ բարեկամութիւնն այնքան ժամանակ կը տեւէ, որքան որ իրենց շահաւոր է: Այս բանիս խիստ յարմար կուգայ լատին հեղինակի մի առակն, զոր այս տեղս կը դնեմ:

Ա Ռ Ա Կ

Խնձորին ծառն՝ իւր դրացիներուն մերկացած:

Խնձորի ծառ մի լեցուն պտուղներով, բայց առաւել գոռոզութեամբ լեցուած, կը դառ-

նայ օր մի մօտի ծառերուն, որ այն երկրին պարզանքն էին, և այսպէս կըսկսի խօսիլ. "Տեսէք, ով բարեկամներ, ինչ գովութիւններ կուտան ինձ, ինչ մեծարանք և պատիւ կ՚ընծայեն այս օրերս իմ վաստակոց արժանի: Պարտիզին տէրը կուրծքը տնկած և ուրախ դէմքով կուգայ վիս տեսնելու. երբեմն կը գովէ, երբեմն լուռ կեցած երեսիս վայր կը հիանայ կը մնայ: Ա՚ինչեւ սիկիլին և իւր պզտիկ տղայքը շատ անգամ կուգան իմ շուքիս տակ կը նստին. տան պահապանին ինչ կ՚ասես, սիրտը չուզեր որ մօտիս հեռանայ: Ա՚ևկին իմ պտուղներուս անուշ հոտով կ՚ըլմնցնէ, ուրիշն ազուր գոյները տեսնելով կը գովէ, և գրեթէ ամենուն բերնին ջուրը կը վազէ, սոցա . . . ինչ կ՚ասեմ սոցա, այլ բոլորին եւս խելքը միտքն իմ վերս է: Ո՚վ ունի այսպէս գեղեցիկ և պտղաւէտ գանձ մի: Երջանիկ և բարեբախտ եմ ես. աշխարհիս մէջ, ոչ, չկայ ասկէ աւելի փառքամուտ մի: — Ա՚ընեմ խնձորենի, պատասխան տուաւ ցած ձայնով տարին առած մի տանձենի, կ՚ազաչեմ, ներեցէք եթէ կը հակառակիմ խօսքիդ դէմ կենալ: Իրաւ է որ հիմայ ամեն մարդ կը փափաքի կ՚ուզէ հետազօտել և սիրելի երեւիլ քեզ. բայց մի վստահիր մարդկանց, որոնք բնութեամբ ագահ լինելով՝ սովոր են միշտ առնել և խօսքերնուն վերայ չկենալ: Կայ որ այն բարեբաստ ձմեռն գայ վրնտռէ զանձնէն, և այն ատեն կը տեսնես թէ նոցա պար-

ծենցած բարեկամութեան կապը հաստատ է»։ Տանձենւոյն տուած խրատը խիստ խելացի էր եւ խիստ յարմար, մանաւանդ թէ մարդարէի նման խօսեցաւ, եթէ հաւատալու լինինք Նշդբոսին։ Ո՛ւմն ղի հպարտ խնձորին ծառը իւր պտուղները կորսնցնելով մօրէ մերկիկ մնաց, եւ իւր տիրոջն ու ծառաներուն երեսէն եւս ինկաւ։ Այս փորձանքն որ գլուխն եկաւ, սիրտ ցաւիլ եւ զարմանալ։ «Ո՛հ, ի՛մաէր, ահա հիմայ ի՛միմեամ այն խաբեբայ գողերուն ըրած մատնութիւնը. բայց ի՞նչ օգուտ, ատեն անցաւ, վայ իմ գլխուս։ Նոցա ինձ տուած սէրն երեսանոյ էր, կեղծաւորութիւն էր ըրածնին, որ երեսէս ի վայր կը հիանային կը ծնային, եւ իմ պատիւս աւերել եղեր այն չարագործներուն միտքը»։ Կրկնեց այն ատեն տանձենին. «Այդ հիմայ ճշմարիտ կը խօսիս եւ ձեռ խաբուիր. վասն զի ես տարիներ եմ անցուցած մինչեւ որ վարժուեցայ գնաբուիլ նոցա սուտ գովեստներն, եւ խոհեմութեամբ յայտնել նոցա խաբեութիւնն եւ խարդախութիւնները. եւ իմ վնասս իմացայ թէ ինչ որ մեր գլուխը կը բերեն այդ մարդիկը, նայն վնասն իրենց մէջ իւրաքանչիւր եւս կուտան։ Վասն որ մի բարեկամի երեսէ իրենց գործը կը յաջողի եւ անկէ օգուտ մի կը տանան, անոր պատիւ կուտան եւ կը մեծցնեն, եւ կեղծաւորութեամբ ձեռաց վերայ ժուռ կ'ածեն, հաստատուն սէր եւ հաւատարմու-

թիւն կը ցուցընեն։ Այսպիսի բարեկամներ անթիւ են, որոնք միայն իրենց շահը կը նային, եւ միայն զուարճութեան եւ ոչ թէ մտերիմ բարեկամութեան կապով կապուած են»։ Այնմիսի խնձորենւոյն վերայ նայիս իսկայն եկաւ հատաւ աղքատութիւն վիշտ եւ ցաւ . . . : Այնինքն եւ բեսէ ձգեցին, եւ ոչ ոք մօտը կը պայ. եւ չկայր մէկն որ նորա դառն եւ տրտմելի վիճակին մէջ ցաւակից լըլայ իրեն։

Այս ճշմարտութիւնն՝ իրաւ չափահաս մարդկանց այնքան ազդեցութիւն չտայր, բայց ես մանաւանդ պատկէս հարկաւոր կը համարիմ փոքր ուշագրութիւն ընել, որպէս զի երբ կրակի խելքերնին տեղ ընել, ուսնին ճանչել զմարդիկ, եւ նոցա սուտ երեւոյթներէն չխաբուին։

Դժուար է առաքինի եւ հաւատարիմ բարեկամ գտնելը, ընդ հակառակն խիստ դիւրին է նենգամիտ եւ սուտ բարեկամներ ստանալ. ուստի իմ միտքս այն է որ զգուշացնեմ զձեզ այն վտանգէն, ուր անզգուշութեամբ կ'ինկնին, նախ որ բարեկամութեամբ հետերնին կը կապուին։

Կ'ուզէի որ դուք յայտնի թշնամի ունենայիք՝ քան թէ վատ ու մոլի բարեկամ։

Եթէ ձեր թշնամին յայտնի լինի, կրնաք զը վատահիլ անոր, եւ զգուշանալ նորա ըսած ու բոգայթներէն. իսկ ընդհակառակն՝ ընդհանրապէս խօսելով, բնաւ վախ մի չունենար մարդ

այն բարեկամին, որոյ հետ ընտանեբար կը տես-
նուի: Ասոի վայ կը լինի ձեզ՝ եթէ սիրով կա-
պուխք այն քնութիւնը ունեցող բարեկամնե-
րուն մէկուն հետ. քիչ քիչ առանց խանգարու
նորա վատ սովորութիւնները կ'ընդունիք,
չար օրինակները կ'ուսանիք և կամաց կամաց կը
լինիք դուք եւս նորա պէս չար և նենգամիտ
մարդ:

Մոչի բարեկամաց դատճառաւ ջատ եղոց երիտասարդ
իչխանը:

Քանի որ Ներսն Հռոմայոց կայսրը՝ սիրով
ականջ կը դնէր Պուրրոյի և Սենեկայի խրատ-
նեղութեան, որոնք նորա դաստիարակ ընտրուած
էին, ամեն մարդիկ կը զարմանային նորա բարե-
պաշտութեան և ողորմածութեան վերայ: Իւր
պաշտօնատարներէն մէկը օր մի գնաց մօտն և
ուզեց որ դատապարտութեան մի թղթի մէջ
իւր ստորագրութիւնը դնէ. «Աշրանի Թէ, պա-
տասխան տուաւ Ներսն, դիր գրել չգիտնայի,
որ հինգ այդպիսի վճռոյ մի ստորագրութիւն
դնեմ»: Ուրիշ անգամ մի քաղաքի կառավար-
չին դիր գրեց ասելով Թէ՝ ոչխարներուն բաւ-
դը միայն խուզել պէտք է և ոչ կաշին մաւոել
ակռդել: Հռոմ ուզեց խնայընել անոր, Թէ ժո-
ղովուրդը պէտք չէ ազբատացնել չափազանց
տուրք պահանջելով և զրկանք տալով նոցա:

Բայց եռքն երբ Ներսնի չորս դին առին շողո-
քորթ և վատ վարք ունեցող պալատականներ,
այն քաղցր և մարդասէր իշխանը կատղած ա-
ռիւծ մի դարձաւ, որ միայն մարդկանց արիւ-
նով կը սնանէր: Ահեղամեծներն և հասարակ
ժողովուրդը, մանաւանդ քրիստոնեաներն նո-
րա անգթութեան զոհ եղած էին: Ոչ միայն իւր
Պուրրոյ և Սենեկա վարժապետներն իմաստ դա-
տապարտեց, այլ մինչեւ Ագրիպպինա մայրը
և Հռոմտաւինա կինը սպաննել տուաւ: Հռոմ
անգամ կ'ասէր, Թէ կը ցանկայի որ աշխարհիս
բոլոր մարդիկ մէկ գլուխ ունենային, որպէս զի
մէկ անգամ սուր զարնելով զամենքը մէկէն ըս-
պաննէի, և զուարճանայի: Իւր անգթութիւ-
նը այնքան չափէն անցաւ, որ մինչեւ հրամա-
յեց կրակի տալ Հռոմ քաղաքն, և ինքը մի
բարձր աշտարակի վերայ նստած կը զուարճա-
նար կրակին բոցերը տեսնելով, և Տրովադացի
հրկիզութեան վերայ շինուած բանաստեղծա-
կան քերթուած մի կ'երգէր, ինչ ատեն Հռոմ
բոցերուն մէջ կ'այրեր կը մրկեր:

Երկրորդ օրինակ:

Վատ բարեկամաց կենակցութիւնը քիչ
մնաց չատաւ Յովսեփ Յուդայի թագաւո-
րին եւս: Այս երիտասարդ իշխանն իմաստու-
թեամբ կառավարեց քանի որ Յովիդա քահա-
նային խրատներուն հետեւեցաւ, որ դինքը Ո-

Թագաւորի բարկութենէն ազատելով՝ նորա ա-
ծուք նատեցուցեր էր : Այս առաքինի մայր
դաս վերայ Յովասու ունեցած ակնածութիւ-
նը և պատիւը զինքն ատատածպաշտութեան
եռանդով և առաքինութեան սիրով կը վառէ-
ին : Բայց Յովիդային վախճանելէն յետոյ , քիչ
ժամանակի մէջ զինքն մէջ տխմեց նա իւր վարքն ,
և իւր օրինակովը յայտնի ըրաւ , թէ մարդս ո-
րու հետ որ շատ սերնուտի՝ նորա կը նմանի . վա-
սն դի սերուցեան իշխաններուն երկրպագու-
թիւն ընելու գալով նորա առաջը , Յովասու
միտքը դարձուցին . Յովաս ետ նոցա շողոքոր-
թութիւններէն և անոչ խօսքերնէն խաբուե-
լով մոխի ըրաւ նոցա խօսքին , և այն չար մար-
դիկն իրենց ուզած պատուոյն հասուց , իւր հա-
ւատարիմ իշխանները պաշտօնէ ձգելով : Ա՛հա
այսպէս անկարգութեան ձեռնտուր լինելով
Թոզուցին թէ ինքն և թէ իւր պալատականնե-
րուն իրենց նախահարց ճշմարիտ Աստուածն , և
ծառայելին կուզց : Ո՛չ իւր չարութենն այն
աստիճան հասուց , որ մինչեւ պատանել տուաւ
Յովիադա քահանայի որդին Զաքարիան , ամե-
նեւին միտքը չբերելով նորա հօր իւր վերայ
ունեցած գութն , որ զինքն աթոռը նատեցու-
ցեր էր :

Երրորդ օրինակ՝ առաքինեն աւելի նշանաւոր :

Սուրբ Յովհաննէս աւետարանիչն Ա՛փեսա-

սէն քիչ հեռու քաղաք մի երթալով , այն տեղ
հնդիկ պատանի մի կը տեսնէ արթուն եւ
խելքը բաց , որ խիստ սիրուն երեւելով երեն՝
կ՛առնու կը տանի նոյն քաղաքի եպիսկոպոսին
և կ՛ասէ անոր . « Կ՛ուզեմ որ մանաւանդ հոգ մի
ունենաս այս տղուն վերայ , զոր քեզ կը յանձ-
նեմ Աղեքսեայ և Յիսուսի Քրիստոսի առջե-
Աշխատասիրութեան յանձնառու եղար , և սուրբ Յով-
հաննէս նորէն յանձնելով նորա՝ դարձաւ Ա՛ն-
փեսոս : Եպիսկոպոսն ընդունեց տղայն , իւր
մօտ մանաւանդ որ քանքար կրթեց , և յետոյ մկրտ-
եց : Յամանակ անցնելէն զինի եպիսկոպոսն
աւաչնեան սէս մեծ խնամք չէր տանիր նորա
վերայ , կարծելով թէ մկրտուելէն յետոյ ոչ ևս
երկիւղ կայ վատ լինելու :

Պատանին ինքզինքն ազատ դանելով՝ սկը-
սաւ անառակ տղայոց հետ ընկերութիւն ընել
որոնք զինքը կերսխտութեան վարժեցնելով և օրէ
օր զօսանաց և ուտելու խմելու սէրն աւելցը
նելով , առին հետերնին մի կտեղ որ գիշեր ժա-
մանակ ճամբորդներ կողոպտեն . ապա սկսաւ
աւելի ամօթալի և զազիր գործերու եւս ձեռք
զարնել : Ո՛չ երբ այսպէս վարժեցաւ յանգգանք
ներ գործելու , և որովհետեւ բնութիւնէ եւս
կրակոտ և յանդուգն էր , ամենեւին մէկուն
խրատը մոխի չդրաւ , երեսը ջուր չմտցուց խակ
մէկէն կ՛ամաչէր . և իւր վերութենէն յետա-
հասնելով՝ ձգեց զինքը սոսկալի չարագործու-

Թեանց անդընդին մէջ, մինչեւ որ անօրէն ըմբ
կերներու հետ աւազակաց խումբ մի կազմեց,
և ինքն նոցա առաջնորդ և գլուխ եղաւ ։

Վանի մի ժամանակէն յետոյ, սուրբ Ղուա
քեոսը՝ եկեղեցւոյ վերաբերեալ մանաւանդ
գործերու համար Նիփեռոս եկաւ և զանոնք
լմնցընելէն վերի, հաշիւ խնդրեց եպիսկոպոս
սէն իրեն յանձնուած աւանդին վերայ ։ Նպիս
կոպոսը խռովեցաւ այս հարցմունքէն, կարծե
լով Թէ դրամի աւանդ էր նորա ուզածը ։ Վի
տեր սոսկ որ անկէ ամենեւին բան մի ընդու
նած չէր, այլ չէր համարձակեր հարցընել Թէ
ինչ աւանդ է խնդրածը ։ “Իմ զրուցած աւան
դըս, ասաց անոր սուրբը, այն երիտասարդն է
զոր ես քո պահպանութեան և խնամոյ յանձ
նեցի, քո եղբօրդ հոգին ։” Նյն ժամանակ ծե
րունին աչքերը գետին իջեցընելով և սաս
կիկ լալով պատասխանեց՝ Թէ մեռաւ նա ։ —
Ո՞նպէս, կրկնեց սուրբ Յովհաննէս, ինչ մա
հով մեռաւ ։ —Ան խեղճը, ասաց նորին առաջ
նորդը, նա մեռաւ հոգւով, ըստ որում ինքզին
քըն անառակութեան տալով՝ չար ու անկաս
մէկն եղաւ. մէկ խօսքով՝ ձամբու վերայ գո
զութիւն կ’ընէ հիմայ ։ Նիկեղեցիէն գաղտուկ
փախչելով, լեռներու մէջ պահուըտած է իրեն
պէս չարագործներու խմբով մի ։ ” Սուրբ Ա
ռաքեալն այս լսելուն՝ վերայի զգեստը պատ
ռեց, ցաւալի աղաղակ մի հանեց, և ձեռքը

գլուխն զարնելով, “Ա՛հ, ինչ աղէկ հովուա
թիւն է այս, ասաց, որուն ես պարզմտու
թեամբ մեր եղբօր հոգին յանձնեցի ։ Ա՛զէ,
շուտով արձնթաց ձի մի բերել տուր ինձ, և մէկ
առաջնորդ ։” Հեծաւ ձին ու եկաւ եկեղեցիին
դուրս ժամանակ չանցուցած՝ վերայի հագուս
տովը ։ Գողերուն եղած տեղը հասած ին պէս,
անոնցմէ մին՝ որ հոն պահապանութիւն կը
նէր, բռնեց ձիուն. քայց, սուրբ Առաքեալն
առանց հոս քաշուելու, “Տար զիս, ասաց հա
մարձակութեամբ մի, տար զիս ձեր գլխաւո
րին մօտ. նորա հետ խօսակցելու համար յատ
կապէս եկած եմ ես ։”

Նիօրէն խմբին գլխաւորն աներկիւղ և զի
նուրուած կեցած կը տեսնէր որ իմանայ՝ Թէ
ով է նա որ ձիովը կը խնդրէր. քայց երբ տե
սաւ և ճանչցաւ որ Առաքեալն էր նա՝ ամա
չելուն փախաւ անկէ ։ Սուրբ Յովհաննէս իւր
ծերութեան չնայելով, ձիոյն սանձը թողլով
այնպէս կը վազէր եռեւէն և կը պօռար. “Որդ
եակ իմ, որդեակ, ինչո՞ւ կը փախչիս հօրդ ե
րեսէն, և մի ոդբամելի ծերունիէ որ առանց
ձիովն ալ քեզ փնտռելու կուգայ ։ Ողորմէ ինձ,
որդեակ իմ, մի վախնար ։ Քու փրկութեանդ
համար յոյս ունիմ. ես քեզ համար հաշիւ կու
տամ Յիսուս Քրիստոսի, և եթէ հարկը պա
հանջէ, իմ կեանքս եւս յօժարակամ կուտամ
քեզ համար, ինչպէս որ մեր Փրկիչն Յիսուս

Քրիստոս իւր կեանքը մեզ համար զոհեց: Կայ և պիտոյք որ նոյն ինքն է որ առաւ խրկեց զնա քո հոգւոյդ փրկութեան համար »:

Այս խօսքերուս վերայ երիտասարդին սիրտը դող եղնելով կանգ առաւ, աչքերը գետին խոնարհեցուց, նետեց վերայի զէնքերն, և դէպ ի հեն մինչեւ ոտքերուն սկսաւ դողալ: Սուրբ առաքեալը նորա մօտենալով, ողջոյն սիրտ առաւ, և աչքերէն արտասուքը թափելով փաթթուեցաւ իւր ազատչին վիզը: Սուրբը նորէն սիրտ առաւ նորա, երդումէ ըրաւ թէ ինքն նորա համար Յոգւոյ Քրիստոսի ընդունելի էր Աստուծմէ, ապաչեց՝ ծնկան վերայ եկաւ, համբուրեց նորա աջը, զոր իւր արտասուքով թրջեր էր, յետոյ բերաւ եկեղեցին: Սուրբ Յովհաննէս շատ ապաչեց զԱստուած նորա համար, և նորա հետ շատ օր ծոմ պահեց. վերջապէս չգնաց մօտէն՝ մինչեւ որ նորին եկեղեցւոյ գաւակ չըրաւ զինքը, որ յետոյ ճշմարիտ ապաշխարութեան հայելի և օրինակ եղաւ ամենուն:

Դուք կը զարմանաք հիմայ, սիրելի որդեակք իմ, տեսնելով թէ ինչպէս երիտասարդ մի աստուածպաշտութեան և առաքինութեան ճանապարհի մէջ քայլած ժամանակ, այսպիսի անօրինութեանց ասկալի անդունդին մէջ ինկեր էր: Բայց զարմանալու չէ բնաւ. վասն զի չար մարդոց հետ ընկերանալու որ լինիք, ի հարկէ նոցա կը նմանիք. սորա համար կ'ասէ առաքեալ թէ "Ապա թող ձեր խօսքերդ, և պիտանի ինչ մարդ լինիդ »:

ԳԼՈՒԽ Ը.

Դարձեալ նոյն թեմին վերայ, այսինքն նոյն վտանգին մասին մէջ կ'ինկնին աղագ մեղ ընկերանալու հետ առնուելով:

Ինչպէս որ տարաւոխիկ հիւանդութիւն ունեցող մարդու մօտենալը, որ լինիմք, նորա հիւանդութիւնը մեր վերայ եւս կը փոխադրուի, այսպէս մեղ բարեկամոց հետ առնուելու որ լինիմք, նոցա մեղութիւնը մեր վերայ կ'անցնի: Բայց ինչպէս ըսի, հիւանդ մարդուն մինչեւ որ չմօտենամք, նորա ախտը չենք առնար: Ուստի եթէ մեկն ըսելու լինի ձեզ թէ՝ այս ինչ մարդն կամ այս ինչ ազգին տարաւոխիկ հիւանդութիւն ունի, կամ ժանտախտ բռնած է, դուք որ այս լսէք, չէք զգուշանար և չէք հեռանար անոնցմէ. այսպէս և սակայն ուրիշ զգուշութեամբ պէտք էք հեռանալ անառակ և չար ազգոյց բարեկամութիւններէն ու տեսութիւններէն:

Ընկերքի եւ մոչի բարեկամաց վերայ երկու տեսքը ազգոյց ունեցած կարծիքը:

Սուրբ Դրիգոր աստուածաբան ի'սկ թէ

Այրը սուրբ Բարսղի հետ Աթէնքի մէջ փիլոսոփայութիւն կ՚ուսանէին, ամենևին տեսութիւն չէին ըներ այն դասընկերոջ հետ, որմէ աստհակ, կուսակրօն և անկիրթ էին. այլ միայն նոցա հետ կը տեսնուէին՝ որոնք իրենց պարկեշտութեամբն եւ խոհեմութեամբ կրնային մեզ օգտակար լինել մեր դիտաւորութեան մէջ հասատատ կենալու համար, զոր ըրած էինք այն պահի կեանք մի վարելու, որ ամենևին բամբասանաց և պարսաւանաց պատճառ չտանք այլոց, աղէկ դիտնալով թէ չար օրինակները տարբախիկ հիւանդութեանց կը նմանին, որ դիւրաւ կը փոխանին մարդոց:

Այսու բարեկամները կրնան նմանիլ փուած պտուղներու, որոնք շատով կը փտեցնեն իրենց քով եղած միւս պտուղները եւս: Այլ այս պանապանութիւնը կայ փտած պտուղներուն և վատ բարեկամաց մէջ, որ առաջինները իւրեանց յայտնի կը լինին որ փտած են: Նոցա վերայ սեւ ու կապտաւուն նշանները տեսնելով, դիւրաւ կ՚իմանանք որ մէջէն փտած են. իսկ ընկերահարուածն՝ անտեսակ տղայք տեսնելով ներս տեղնին ինչպէս որ է, նոյնը դիտեն չեն ցուցներ: Նոքա իրենց սրտին չարութիւններն արտաքին պարկեշտութեամբ կը ծածկեն: Յաճախակիւ պատահեր են ոչխարի մորթով ծածկուած, որ գիտութեամբ կը յարձակին եւ կը պատուհասեն կ՚ուտեն անմեղ գառնուկները: Ուրեմն մի

հաւատայք նոցա արտաքին խաբեբայ կերպարանաց, այլ այն մարդոց բարի խրատներուն մտիկ ըրէք, որոնք աղէկ կը ճանչնան նոյն իրենց շուտահասներն, և ձեզ եւս կը խրատեն որ փախչիք անոնցմէ: Յովհաննէս Պլուզ վարդապետն դեղեցիկ խրատ կուտայ մեզ ճշմարիտ բարեկամն մեզ ճանչցնելով. "Իշխանի և պարծանի, կ՚ասէ, պարտ է որ զայն մարդն սիրէ, որ յիւր երեսն խօսի, և յանդիմանէ՝ յորժամ անիրաւ բան առնէ, զի այն ի սրտէ բարեկամէ: Այլ մարդ որ զինչ պարսին առնէ, և նա ասէ՝ թէ լաւ է, առ ժամանակն զբարի դիւրն խօսի. նա չերեսաց բարեկամէ, և հոգւոյն չարիամ":

Ա Ո Ւ Ա Կ

Պզտի մուկն եւ ծեր կատուն:

Պզտի մուկ մի, որ դեռ կաթէն նոր կրծած էր, իւր խորունկ բոյնէն դուրս կ՚ելնէ, և ուրախութեամբ կրակոփ ինքն իւր վերայ նայելով պարծիլ և ասել. ինչ գեղեցիկ և սիրուն եմ: Խեղճն իւր հայրենի բոյնին մէջ շնչառութենէ ուրիշ բան չէր դիտեր. նայիս գլուխը ճակէն դուրս կը հանէ, իւր թաթիկները կը թոթվէ, և նոր աշխարհ եկած կը կարծէ ինքը: Ըրեւան լոյսը բնաւ չէ սեռած, կը խնդայ կ՚ուրախանայ, բայց ինչու համար՝ չգիտեր: Բարին ու վատը չճանչնար, խաբէութիւն չգի-

ոեր, վիշտին և ցաւին չխախտար, ամենեւին քանի մի խօսք չունի։ Խեղճուկը մէկ մի կ'ելլայ կը պահպանի, այլ իւր սրտին մէջ ազատութեան սէր ունենալուն՝ նորին դուքս կ'ելլէ նէ, կը հետանայ անիսկայ կենդանին իւր հայրենի բնակարանին, և ուրախութեամբ սիրտը կը լեցուի։ Աղջիկին չունի մնան խնամատուն բարեկամ մի որ իրեն առաջնորդ լինի, կամ քաջի խրատ մի տայ։ Աչքերը չորս դին կը պտտցնէ, և կը տեսնէ որ խաղողափիկ գոյնով կատու մի ոտքերը երկինգացեր արեւուն մէջ հանգստութիւն ետեր է։ Ետ պատերազմութեան մէջ գտնուելով այս անօրէն գողը վտանգած էր ծեծի, և մէկ կողմ երկինգեր փախեր էր, եւ այնպէս կը կեղծէր ինքն՝ որպէս թէ երինքին երեսը կը դիտէ, և միտքը ետեւէն կը վազէ։ Ա՛ն անմիտ պղտի մուկը կը նայի անոր և ուրախութենէն կրակի չտաքցուի. նենգութիւն կատուն ամենեւին տեղէն չշարժի և հոգը չընէր, այլ ինքնինքը խելքը ձեռքնելով՝ մեծ սէր ցոյց կու տայ անոր։ Ա՛ուկին ուրախութենէն կը գիտնայ և կրակի նորա բաղդատիքը տեսնելու, եւ իրենց լեզուով կ'ասէ անոր, "Սիրուն կենդանի, շնորհալի է քու դէմքդ, փայլուն են աչքերդ։ Ասա ինձ ի՞նչ է անունդ, որ տեսնեմ թէ քու արժանաւորութեան հատուցանը է։ Սիրելի, եթէ իմ վերայ դէշ աչք չունիս, ի՛ւղէի որ մեր երկուքին մէջ բարեկամութեան

կապ մի հաստատուն։ Գիտես թէ զատ ուրիշ մէկ կենդանի դանել ինձ աղէկ առաջնորդ, կամ հաստատուն ընկեր։ Ա՛յսպէս խօսելով անմիտ և սիմպար մուկը կը ժպտենայ խոհեմ կատուին, որ իւր ազգին աւերիչն է։ Կեղծաւորն՝ որ բնաւ զուր տեղ չիարձեր սարսափանելը, ճանկերը իսկոյն վերան կը նետէ, կը բռնէ ակուա նեղով, և խեղճին սիրտը պատառ պատառ կ'ընէ։ — Ա՛յս առակս կ'ուսուցանէ, թէ շատ անգամ մարդոց մէջ եւս կը գտնուին, որ երբեմն աչքերով, լեզուով, և երբեմն իրենց խնամարհ կերպարանքով կը խաբեն զմարդ, և իրենց պղծութեան վերարկուին և պարծենացած պարզամտութեան քօղին տակ շատ խարդախութիւն և կեղծաւորութիւն ծածկած ունին։ Իսկ կատուց ընտրութենէն առաւելապէս կախեալ է ձեր անմեղութեան պահպանութիւնը կամ կորուստը. վասն զի ինչպէս կ'ասէ Հոգին սուրբ. "Ուր բարեաց հետ բարի, և չարաց հետ՝ չար ու մոլի կը լինիք։"

Թէեւ վինչեւ այդ հատակն առաքինութեամբ հատած եւս լինիք, այլ հաւատացէք ինձ, որ մի միայն չար ընկերն բաւական է զձեզ գլխէ հանելու և իրեն պէս վատ ընելու։ Փորձով կը տեսնեմք ամեն օր, թէ երիտասարդ աղայոց մեծ մասը կ'երթան ինքնինքնին այս չաւալի քարին կը զարնեն։ Հետեւեալ օրին նախ կարծեմ որ մեծ ապերախտութիւն և երկիւղ

կոտոշ այն տղայոց սրտին, որունք բնաւ չեն պղտուշանար այնպիսի ընկերներէն հեռու կենալէ։

Ծ. աջիահատակ տցուն ցաւագի մասին։

Աշնուական երիտասարդ մի այնքան խելացի եւ աստուածապաշտ էր, որ ամենքն կը զարմանային եւ երանի կուտային նորա ծնողաց. բայց դժբաղդաբար անառակ եւ անամօթ ընկերի մը հետ բարեկամանալով խիստ մեծ անկարգութեանց առաջ գնաց։ Անոր խօսքերն եւ օրինակները քիչ ժամանակի մէջ խանգարեցին անզգոյշ երիտասարդին սիրտն ու միտքը։

Պարկեշտութիւնն եւ համեստութիւն մէկ դի թողուլ, որով այնքան լաւ անուն ստացած էր, խիստ անամօթ լքութեանց անձնատուր եղաւ։ Խելքն ու միտքը զբօսանաց, կերուխումի եւ խաղի հետ էր։ Իւր ծնողքը, բարեկամներն եւ վարժապետները ի զուր կը ջանային մոլութեան ճանապարհէն դուրս հանելու զինքը. եւ որքան արգելքներ որ կը դնէին նորա առջեւ, ամենեւին օգուտ չընելէն զատ, իւր շար կիրքերն աւելի կը զրդռէին, մինչեւ որ կամակորութեամբ անզգուշութեան վիճակին հնաւ։ Իւր ծաղիկ հասակին մէջ մահաբեր հիւանդութեամբ մի պատկելով, մի քահանայ եկաւ որ ապաշխարութեան յորդորէ զինքն եւ Աստուծոյ հետ հաշտեցընէ. տղայն նորա խօս-

քին եւ ոչ իսկ մտիկ ըրաւ. բայց դժբաղդ եւ մարդասէր քահանայն՝ քանի որ նա իւր սիրոյ կը խոստացընէր, այնքան աւելի կը յորդորէր հայրաբար. նախ թշնամական տղուն խլզծմանաց խայթերը յանկարծ աստիճ ոգք ելնելով, և ժանգոտ դէմքը քահանային դարձնելով, այս սոսկալի խօսքերը զրուցեց. "Այ այն թշնամականին որ զիս գլեխ հանեց և մոլորեցուց։ Իմ յանցանքներս խիստ մեծ են, և չեմ յուսար որ Աստուած թողութիւն տայ ինձ։" Այս խօսքերս տխուր և վշտագին ձայնով զրուցելովն, երեսը միւս կողմը դարձուց, որպէս զի այլ եւս չլսէ բարի քահանային ասածները. և մի քանի րոպէէն յետոյ մեռաւ յուսահատութեամբ դժբաղդ երիտասարդը։

Այս տեսէք, սիրելի որդեակք իմ, չար ընկերութեանց պտուղը։ Աւասիկ ինչպէս կը ճշմարտի Ղուկասի սրբոյ ասածը, թէ "Ա՛ւ որ ձեռքը ձիւթին մէջ կը խոթէ, մատուռները աղտոտած դուրս կը հանէ։" Սել կ'ուզէ թէ, ով որ վատ և անզգամ բարեկամաց հետ շատ կը տեսնուի, նոցա մոլութիւններն ինքն կըստանայ, և օրի նախնեւրուն կը հետեւի։

Այս յօդուածոյս վերայ քիչ մի երկար խօսելս ամիջապէս անոնզի խիստ կարեւորնեւթէ։

Եթէ ատոյգ գիտնամ որ ձեր սրտին մէջ տոկում և վախ մի կրցի պատճառել լերը տղ-

զայդ ընկերութեան մասին, այն ժամանակ կրնամ ձշմարտապէս հաւատալ՝ թէ ձեր անմեղութիւնը վտանգի ապատեցի: Քանի կը մնայ մեզ մի ուրիշ ապատաժ քար, ուսկի հեռանալու համար պէտք է որ մեծ հոգ և ղգուշութիւն ունենաք. և այս բոլոր ապատաժս վատ գրքերու ընթերցմունքն է, որմէ վերայ հետագայ դլխուն մէջ պիտի խօսիմ:

ԳԼՈՒԽ Ը.

Վնասակար և վատ գրքերը:

Ինչպէս որ կերակուրը մեր մարմնոյն, նոյնպէս և գրքերը մեր հոգւոյն սնունդն են: Կերակուրը կը սուրցանէ և ուժ կուտայ, բայց ասոնց մէջ կը գտնուին երբեմն որ մեր առողջութեան օգուտ ընելու տեղ, կը սկսրացընեն և կը վնասեն: Այսպէս, սիրելի որդեակք իմ, գրքերուն մէջ կը հանդիպին, որոնք մեր միտքը լուսաւորելու և կատարելութիւն տալու տեղ կը կուրցընեն և կը խանգարեն: Այսպէս են բոլոր մեծ մասին մտացածին պատմութիւնները, սիրոյ վերայ շինուած բանաստեղծութիւնները, և ընդհանրապէս կրօնի և բարոյականութեան դէմ եղած գրքերը:

Ոչը այս բոլոր գրքերուն մէջ բարակ թոյն մի կայ, որ կամաց կամաց նոյն գրքերը կարդա-

ցողներուն սրտին մէջ մտնելով, աստուածպաշտութեան զէմ տարերութիւն կը սերմանէ, Աստուծոյ տուրբ երկիւղն և բոլոր բարի բնաւորութիւնները անկէ կը հալածէ, և վերջապէս նորա հոգին Չշտութեան կը մահացընէ:

Այս բոլոր ձշմարտութեան համար կրնայի աւելի շատ օրինակներ բերել, և շատ երիտասարդներ եւս կը ճանչնամ որ այս ճշմարտութենէն իրենց վնասակար փորձերին: Վերևէն աւելի կը չիշեմ մի երիտասարդի վերայ պատմուածը, որուն վատ գրքերը բոլորովին միտքն աւրելով մոլորցուցին, և ահա այս է պատմելիքս, մանկ ընթերք:

Տցաւ մի ձատ գրքեր կարդացող գլխի եչնեչը:

Այս երիտասարդը խիստ ջերմեռանդ և աստուածապաշտ էր, և միանգամայն գրքեր կարդալու չափէ դուրս սէր ունէր: Անանց ընտրութեան ինչ գիրք որ ձեռքն անցնէր՝ կը կարդար: Վերջապէս այնպիսի գրքերու եւս հանդիպեցաւ, որ կարծես թէ գժոխքի վախճանք են, և անդադար երիտասարդաց բնութիւնն և բարի սովորութիւնները կ'աւերեն: Առջի բերան սկսաւ զանոնք աչքէ անցընել՝ առանց վտանգն իմանալու, և կամաց կամաց այնպէս կտպուեցաւ այն գրքերուն, որ մէջն թոյնին համն լաւ մի առնու: Այդ ժամա-

նախկին յետոյ իւր աստուածպաշտութեան և ուղղը պատեցաւ. հրաժարեցաւ եկեղեցւոյ սուրբ խորհուրդներէն, իւր սովորութիւն ըրած աղօթքները թողուց, և առջի բնաւորութենէն փոխուելով՝ եղաւ մէկ ուրիշ տղայ: Իւր վարժապետներն անգամ չէին հասկընար՝ թէ ինչ է արդեօք նորա այսպէս յանկարծ փոխուելուն պատճառը: Հազ օր մի տղայն իւր բերնով, պինքը մնաներ. բայց ութերորդ մի ինքզինքէն ելլելով՝ գարշելի խօսք մի փախուց բերնէն, զոր մի վաս գրքի մէջէ ուսեր էր, և գրքին անունն եւս տուաւ: Այս որ լսեց իւր վարժապետն որ այն տեղ կը գտնուէր, խնդրեց եղաւ գնաց նորա գրանոցը տեսնելու, և մէկիկ մէկիկ աչքէ անցընելով շատ վատ և անպարկեշտ գրքուածքներ գտաւ. լաւ մի յանդիմանեց պինքը, ցուցընելով միանգամայն այն տեսակ գրքեր կարդալէն յառաջ եկած ցաւալի հետեւանքները: Ինացաւ պատանին նորա խօսքին ճշմարտութիւնը, ուղիղ սրտով խոստովանեցաւ՝ թէ իւր այնպէս փոխուելուն առաջին պատճառն այն գայթակղեցուցիչ և մնհաբեր գրքերն էին: Ու որովհետև մարդս լաւէն աւելի վատին հակամէտ է, ուստի նորա այն վատ գրքերէն ծնած շար գաղափարներն, այնպէս խորունկ արմատացած էին իւր սրտին մէջ, որ մեծ ուշացութիւն կրեց մինչեւ որ զանոնք ջնջեց. և քանի որ կինդանի էր, մորքէն չելաւ բնաւ անոնց՝

մարդոյս մտաց մէջ գործած վնասակարութիւնները:

Վատ գրքերուն դատապարտած գործերուն գեղեցիկ օրինակ մի:

Ժամային օձը այս տուած էր մեր նախաձնողաց, թէ Աստուծոյ պատուիրած պտուղն ուտելով կը լուսաւորին և աստղծոյին նման կը լինին. "Կ'ըսանաք, ասաց անոնց, բարեաց և չարի դիտութիւնը": Դամ ու Եւա այս սուտ խոստմունքէս խաբուելով, ձեռքերնին կ'երկարեն այն թշուառ պտղոյն. բայց նորա հասն դեռ չառած, իրենց անմեղութենէն մերկացած և կսկծութեան ու թշուառութեան մէջ ընկղմած կը տեսնեն զիրենք:

Ոտք եւս ահա ձեր հետաքրքրութեամբն այս դժբաղդութեան կը հասնիք խլիք, եթէ Աստուծոյ պատուէրն բանի տեղ չդնելով՝ դըժնութեամբ կարգալու լինիք այն նախատական գրքերը: Ո՛գոչ կեցիք ուրեմն որ չմոլորիք բանսարկուին սուտ խոստմունքներէն: Ոտք նախահարց պէս հպարտաբար պտուղ ունիք ապրնվ և համեղ, այսինքն անհատնում ընծիր և գեղեցիկ գրքեր, որոնցմով կրնաք անուշանալ ձեր հոգին. և զանոնք կարդացը չէ թէ միայն նեբելի է ձեզ, այլ և կը պատուիրեմ իսկ որ կարդաք և հետեւիք այն գրքերուն: Իսկ միւսներու նման են դրախտին մէջի արգիլուած պտուղ

ներսն, որոնց վերայ խօսելով կրնամ և ես ա-
սել ձեզ ինչ որ Աստուած Ադամին ասաց ա-
զիլեալ պատճին համար, թէ «Քանի անգամ որ
ուտելու լինիք, նոյն առնելու ժամանակ կը
մեռնիք»։ այսինքն անմեղութիւնից կը կոր-
առնցնիք, որ հոգւոյն կեանքն է։

Բայց որովհետեւ այս վատ և վնասակար
գործերը չեն կրնար ձանձցուիլ, և քան զամե-
նից Թոյնը հատարակօրէն ճշմարտութեան
կերպարանք ունեցող անուան մի տակ ծած-
կուած կը լինի, նորա համար եթէ կ'ուզէք խո-
հեմութեամբ վարուիլ և վնասուիլ անանցմէ,
ամենէն լաւն այն է որ, ինչպէս ըսինք, քնաւ
գործք մի չէք կարդար, մինչեւ որ առաքինի և
լուսաւորեալ մարդու մի խորհուրդ չը հարցը-
նէք այն գրքին վերայ՝ թէ արդեօք օգտակա՞ր
է թէ վնասակար, և անոնք ինչ խրատ որ կու-
տան ձեզ՝ սիրով բռնեցէք։ Եթէ այս զգուշու-
թիւնն չընէք, կը խաբուիք այն գրքերուն մէա
պատճառութենէն, որոնք կ'երեւի թէ վնասա-
կար բան մի չիայ մէջերնին գրուած, և այն ան-
միա ու յանդուգն տղուն հանդիպած փորձանք
քին կը պատահիք, զոր այս տեղս պիտի պատ-
մեմ։

ԲԱՌՑԱԿԱՆ ԱՒԱԶ.

Երկրագործն ու. տգացի։

Աշնայ և բարեհամբաւ տղուն մէկը, օր մի

իւր վարժապետին հետ միատեղ գեղ կ'երթայ
և ինքն մինակ դուրս պտրտելու կ'ելնէ։ Դաշ-
տերը վեր ու վար կուտայ և թռչնիներուն ա-
նուշ ձայնով կը զմայլի. կը տեսնէ այն տեղ
մարգագետնի մի վերայ ազուոր ծաղիկներ, նոյն
գալով գնայ ի այն կողմն կ'արտորայ կ'երթայ որ
անոնցմէ ժողվէ. և տեսնը մարգագետնի մէջ կո-
խելով, այն գեղեցիկ ծաղիկները տեսնելուն և
անուշ հոտերն առնելուն այնպէս կ'ուրախա-
նայ՝ որ երեսին վերայ զուարճութիւնն և խոն-
ուումը կը փայլէ։ Ան անոնցմէ մի քանի փունջ
քաղելու համար, երկու ձեռքը մէկէն կ'երկա-
րէ, և մի փունջ կազմելու չափ կը քաղէ չքա-
ղեր, անդիէն ծեր երկրագործն մէկը դուրս
կ'ելնէ. «Օ՜հ, ի՞նչ կ'ընես, տղայս, խե՞ղճ ես
դուն, կը պօռայ անոր։ Այդ ծաղիկներուն
մէջ մահառու օձեր պահուըտած կան, որոնք
որչափ տղայք խածեր են ասոնց մէջ խոպոպացած
ժամանակնին։ Ան քու բարեկիդ համար կը խո-
սիմ, որդեակ, հաւատա ինձ, և ասկէ դուրս
եկնելը նայէ»։ Տղայն վախնալով իսկոյն դուրս
կը թափէ, և ձեռքի քաղած ծաղիկները կը նե-
տէ։ Բայց ծերը նորէն իւր գործին դառնալով,
անմիտ տղային սկսաւ նախատել զայն՝ ասելով.
«Ընդան և վախկոտ եմ՝ ես, թէ որ այն խոփած
մարդուն մօրիկ ընեմ, որ երեսանց սուտ սէր
ցուցնելով զիս ծաղր ընել կ'ուզէ»։ Ասաց՝ և
նորէն ետ դարձաւ այն տեղ, ուր չար օձ մի կոչ-

ձեւս թէ իրեն կը սպասէր խօսիլը։ Ան ծա-
պիկներուն և խոտերուն մէջ դարձեալ ձեռքը
կը խոթէ, և մանուշակներ քաղելու ժամա-
նակ նորա ձեռքին կը պլըսի և այնպէս կը խայ-
թէ, որ տղան կիսաձեռ գետին կ'ինկնի կը փղա-
ւի։ — Ա՛յս ծաղիկներն և խոտերը, ով երի-
տասարդ, այն պղտիկ տեսք ունեցող գըր-
քերն են, որ մարդս գլխէ կը հանեն և կը մո-
լորեցընեն, վասն զի իրենց թունաւոր խօսքերն
քաղցր և զուարճալի ոճով մի ծածկած են։

Ինչ որ գրքերու ընտրութեան մասին սպա-
սի ձեզ, նոյնը պէտք է իմանաք նաեւ լրագիր-
ներու և պարբերական թերթերու և հանդէս-
ներու մասին. և մեծ զգուշութիւն պէտք է
գանոնք կարդալու ժամանակ, որոնց շատին
մէջ ազգասիրութեան և աղաւաղասիրութեան
ոգին կարծես թէ կը փայլի, բայց գիտցիք որ
նոցա մէջ նաեւ այնպիսի բարակ ու անզգալի
թոյն մի կայ, որ ձեր բարեպաշտական ու կրօ-
նական հոգին կը սպանանէ, և անհաւատութեան
անդունդին մէջ կը գահավիժէ։

ԳԼՈՒԽ Ը.

Տղայոց պարտաւորութիւններն իրենց ծնողաց դէմ։

Մեծ կեանք ուսումներուն դէմ ունեցած
պարտաւորութիւնիս այնպէս յարմար են մեր

սրտի զգացողութեանց, որ գրեթէ աւելորդ
կը թուի զանոնք ձեզ յիշեցընել։ Այսու ամե-
նայնիւ՝ քանի որում շատ տղայք կը տեսնեմ որ
իրենց այս պարտքը չհատարելով բնութենէն
դուրս կը համարին, ուստի և ես, սիրելի որ
դեակք իմ, պարտաւորութիւն կը համարիմ
ինձ զգուշացընել զձեզ նոցա օրինակներուն
դէմ, որպէս զի այն ապերախտութեան հրեշ
ներուն չհետեւիլէն ի զատ, բարեկիրթ և ա-
ռաքինի տղոց մի պէս վարուիք։

Լաւ կը ճանաչէք դուք Աստուծոյ պատ-
ուէրն, որով յայտնապէս կը հրամայէ պատ-
ուել մեր հայրն ու մայրը։ Բայց այս պատուիրն
ինչ բանի մէջ կը կայանայ արդեօք։ Ա՛տիկ ը-
սէք ինչ որ պիտի զգուշեմ ձեզ հիմայ, և ջա-
նացէք օգուտ քաղել անկէ։

Առաջին դիտողութիւն։

Առաջին պարտքը՝ զոր ձեր վերայ կը դնէ
դրդօ՛ւ սուրբը, ձեր ծնողաց հնազանդիլն է։
Մինչ Աստուած յանկարծ երեւիր ձեր աչքին,
և իւր բերանով իմացընէր ձեզ իւր կամքը,
անշուշտ դուք չէիք կրնար չհաւատալ և չհնա-
զանդիլ։ Սակայն անոնք որ ձեզ կեանք տուին,
այս աշխարհիս մէջ այն Վերագոյն Արարչին
փոխանորդներն են, որ մեր առաջին Հայրն է։
Աստի այնպէս պատրաստ պիտի լինիք նոցա ա-

մեն մէկ հրամանը սիրով կատարելու , որպէս
թէ նոյն ինքն Աստուած հրամայած լինէր :

կրօնին դարտաւորութեանց մէջ հաւատարիմ եւ խր
հօրը հրամաններուն անյետացանք եղոց տգայն :

Տղան մէկը երբ անգամ մի պատարտալը
ած էր հաղորդութիւն առնելու , նոյն աստ
ուածային Խորհրդոյն վերայ քարոզչին ասած
խօսքերէն այնքան ստասիկ զգացուեցաւ , որ
միտքը դրաւ բոլոր սրտանց ամեն բանէ հրա
ժարելու յետ այնորիկ և եկեղեցւոյ բոլոր պատ
ուէրներն ամենայն խղճմտ բռնելու . և այս իր
դիտաւորութիւնը գործով եւս կատարել ց ,
չուզելով նմանիլ տղայոց մեծագոյն մասին , ո
րոնք գրեթէ իրենց գործովը միշտ սուտ կը հա
նեն խոստումնըներնին : Աստ հայրն՝ որ քրիստո
նէական պարտաւորութիւնները կատարելու
այնքան զգուշաւոր չէր , ամենեւին պատ չէր
բռներ՝ և ոչ մեծ պահոց մէջ . և իր որդին եւս
այնպէս վարժեցուցեր էր մանկութենէն : Իսկ
այս անգամ , երբ նորէն ուտեստ կերակուրներ
բերին սեղան , տղայն անուշ կերպարանքով մի
ջնորհակալ եղաւ իր հօրմէն . և միանգամայն
համարձակ պատճէ՝ թէ " Աչոհ հայր , այդ
կերակուրներէն չպիտի ուտեմ պատ օրերը ,
վասն զի եկեղեցին հրաման չտար : — Խիստ լաւ
պատասխան տուաւ հայրն սրդոզելով և զար
մանալով , որովհետեւ չես ուզեր իմ տուածս

ուտել , հայդէն ի զատ ուրիշ բան չպիտի ու
տես : — Ինչպես վերայ , կրկնեց տղայն , կրօնքն
ինձ կը պատուիրէ հնազանդիլ ձեզ՝ երբեւ Աս
տուծոյ , երբ սուրբ օրինաց դէմ հրամայելու
չլինիք ինձ , Աստուծոյ պատուէրներուն նման
կ'ընդունիմ և կը հնազանդիմ ձեր հրամանաց :
Պապին խելացի պատասխանը պէտք էր հօրը
բարկութիւնն խլեցընէր . բայց բնութեամբ
խիստ և կրակոտ լինելով , բնաւ սիրտը չիակիրը
ցուց իր որդւոյն դէմ : Պապէս չէր մտքն ,
այլ բռնիկոտ բզկտիլ և իր ամուսինէն ա
ւելի խոհեմ և իրաւունք հասկցող լինելով ,
սիրտը խիստ ցաւեցաւ նորա բրածին . և զա
ւակին վերայ հօրն անիրաւութեամբ դրած
պատիժը թեթեւցընելու համար , դարձաւ
պատասխան կերպարանք բերաւ անոր , ապահովե
լով թէ իր հայրը չկրնար հասկընալ : Բայց ա
ւագին տղայն ջնորհալի դէմքով մերժեց պա
տիժը և որովհետեւ մայրը խիստ կ'ազաչէր պինքն որ
ուտէ , պատասխան տուաւ նորա . " Չէ , մայր
իմ , անհնարին է որ ես տակէ ուտեմ , զոր դուք
պիս սիրելնուդ համար բերած էք : Իմ հայրս
հրամայեց , ինչպես դուք եւս լսեցիք , որ հա
յդէն դատ բան չուտեմ : Ես միայն հացով
կրնամ ապրիլ . բայց թէեւ անօթի եւս մեռ
նելու լինիմ , լաւ կը համարիմ մահը քան թէ
անհնազանդութիւնը » : Խարեփուռ մայրն այս
խօսքերուն՝ լացէն ի զատ պատասխան մի չկրը

յաւ տալ. և շուտով իւր ամուսնոյն երթալ, պատմեց անոր խօսածները. որու վերայ այնքան սիրտը շարժեցաւ, որ իւր ըրած անիրաւութեան եւ գայթակղութեան ձար մի դանելու և տղուն սիրտն առնելու համար, անկէ յետոյ պաս սրերն ուտեաց կերակուր բնաւ չտուաւ սեղան. և հաստատ պահեց Աիկեղեցւոյ պատուէրները:

Այս բարեպաշտութեան և հնազանդութեան դեղեցիկ օրինակս կ'ուսուցանէ, թէ պէտք չէ ծնողաց կամքին հնազանդիլ՝ երբ Աստուծոյ կամաց հակառակ է այն, ապա թէ ոչ՝ պարտաւոր է որդիական հնազանդութիւն ցուցընել անոնց, թէպէտ եւ տուած հրամանն նին սաստիկ և դժուար լինի:

Որդիական հնազանդութեան կատարեալ օրինակներ:

Յիսուս Քրիստոս նոյն ինքն հնազանդութեան օրինակ տուաւ մեզ, որ ամեն տղայ իւր հօրն ու մօրը պարտաւոր է: Ինքն երկնի եւ երկրի Թագաւորն էր, և ամեն ինչ իւր իշխանութեան տակն էր. այսու ամենայնիւ Աւետարանը կը վկայէ՝ թէ Յովսեփայ և Մարիամայ հնազանդ էր, և թէ մինչեւ երեսուն տարեկան լինելն նոցա հպատակութենէն չելաւ:

Իսահակ հին օրինաց մէջ լուսաւոր օրինակ մի տուաւ որդիական հնազանդութեան: Աբրահամ իւր հօրը Դաւթի Թագաւորին դէմ գլուխ վերցընելով և նորա վերայ պատե-

րահամ իւր հայրը լեռան մի գլուխը տանելով զինքն Աստուծոյ զոհ ընելու համար, ինչպէս որ յերկնից հրաման ընդուներ էր, Իսահակ առանց բերան բանալու հնազանդեցաւ իւր հօր կամաց. Թողուց զինքն որ կապելով խարոյկին վերայ դնէ, և պատրաստեցաւ ընդունել մահացու հարուածն իւր հօր ձեռքէն: Բայց Աստուած չուզեց որ այսպէս վհհանձնական հնազանդութեան՝ մահն լինի փոխարէն: Նորա ատենային սիրով կատարելիք զոհին Աստուած հաճելով, ձայն տուաւ Աբրահամին նոյն ժամուն որ ձեռքը վերուցեր էր սրով անմեղ զոհին վիզը կտրելու, չթողուց որ զոհէ. այլ նորա հաստատութիւնը վարձատրելու համար, խոստացաւ իւր օրհնութիւններն Իսահակով վերայ տարածել, երկնից աստղերուն պէս նորա զաւակները շատցընել, և բոլոր աղգերն նորա զաւակովն օրհնել:

Բայց եթէ Աստուած՝ ծնողաց հրամանէն դուրս չելլող տղայոց հնազանդութիւնը կը վարձատրէ, անհնազանդ և լիրբ տղայքն եւս կը պատժէ և կ'անիծէ, որոնք չեն ուզեր կատարել այսպիսի պարտաւորութիւնը:

Աղտեամբ տգու մի սոսկալի դատիժ:

Աբիաղամ իւր հօրը Դաւթի Թագաւորին

բազմի եղնելով, Դաւիթ իւր զօրքերը խրկեց որդւոյն դէմ, ապստիլով բանակի զօրավարին որ չսպաննեն իւր սպերախտ որդին Աբիսողոմ, եթէ զօրքերն յաղթելու լինին։ Երկու բանակները մեկմեկու զարնուելով, Թէպէտ Աբիսողոմայ զօրքերը խիստ անհամար և զօրաւոր էին, այլ բազմային խորտակեցան, այնպէս որ Աբիսողոմ պարտաւորեցաւ փախչիլ. բայց իւր տակի ջորին խիստ արագնօք վազելով, երբ մի սերեւախիտ կաղնիի տակէն կ'անցնէր, գլխի երկայն մազերը ծառին ճիւղերուն պլլուելով կախուած մնաց. մինչեւ եկաւ Յովաբ երեք նետ զարկաւ նորա սրտին՝ հակառակ Դաւթի պատուէրին. բայց Աստուած ներեց Յովաբին անհնազանդութեան, Աբիսողոմայ ապստամբութիւնն և սպերախտութիւնը պատժելու համար։

Այս օրինակէս լաւ կը տեսնէք դուք, սիրելի զաւակունք իմ, Թէ ծնողաց դէմ կը դառնայ, և ծրքան սոսկալի պէտք էք այսպիսի վարմունքէն։ Հիմա առաւել զգուշանալու էք որ դուք եւս ձեր ծնողաց պարտաւոր եղած յարգութեան և հնազանդութեան դէմ բան մի չը գործէք։

Երկրորդ դպրութիւն։

Այն պատճառն որ կը պարտաւորէ զձեզ

ձեր ծնողաց հրամանները կատարելու, նոյնպէս կը պարտաւորէ զձեզ որ ջերմնք յարգէք և պատուէք. և որովհետեւ ձեր ծնողքն՝ ինչպէս վերն ըսինք, Աստուծոյ փոխանորդներն են, չէք կրնար նոցա հարկաւոր եղած պատիւը չտալ. վասնզի այն ատեն Աստուծոյ պարտաւոր եղած պատուէն պակաս կը համարիք։

Իւր հօրմէն անիծուած տգայն։

Ռամ, որ Նոյի որդւոց մէկն էր, համարձակեցաւ ըզբուխեամբ ծաղր ընել իւր հայրը, որ խորունկ կը քնանար, և իւր եղբարց օրինակին չհետեւեցաւ, որոնք յարդութեամբ եւ պատուով վարուելեան իրենց հօր հետ։ Բայց Ռամայ ըրած չանցանքն անպատիժ չմնաց. վասն զի Նոյ քնէն արթնանալուն իմանալով նորա ըրածը, անիծեց զինքն ասելով Թէ քո եղբարցդ ծառայ լինիս. և ընդհակառակն օրհնեց Սէմ ու զՅաբեթ՝ երջանկութիւն աւետելով անոնց։ Աստուած՝ Նոյի տուած անէծքն եւ օրհնեքն իրօք կատարեց. Ռամ իւր կեանքը թշուառութեամբ անցուց, և իրեն տուած պանքնեքն իւր զաւկներուն և սերնդին եւս անցան. իսկ միւս եղբարքն երջանիկ կեանք մի ունեցան, և բարեբաղդ վիճակներն իրենց ցեղի զաւակաց եւս անցուցին։

Վերեւի Թէ Աստուած իսկ նոյն կերպով կը

վարուի նոցա հետ, որոնք այս յանցանքս կը գործեն: Խիստ քիչ անգամ կը պատահի որ կըլուսատէր և վատ տղայ քաւչանան և գործերնին յաջողի: Աքա չէ թէ միայն ատելի և քամահրելի են բարեկիրթ մարդոց առջեւ, այլ նաեւ շատ անգամ կը տեսնեմք որ մեծամեծ դժբաղդութեանց կը հանդիպին, որու միմիայն պատճառն իրենց ծնողաց պատիւ չցուցընելն է, և իրենց պարտաւորութենէն պակսելնուն արդար պատիժը:

Ցցուս մի իւր հայրը նախատելու համար գտած դատիժը:

Մի չարագործ մարդ, որու նամանը խիստ քիչ կը դանուի աշխարհիս վերայ, իրեն պէս ժանտագործ և ապիրատ որդի մի ունէր: Աքա ամեն տեսակ յանցանք գործելով, ամեն անգամուն դժբաղդութեան պատահեցան, որ նոցա սովորական հետեւանքներն են: Կամակոր, անկիրթ և անհնազանդ տղայն միանգամայն այնպէս բարկացուցած էր, որ մինչեւ մեկը եթէ փուճ բանի համար իրեն խօսքին դէմ կենար, իսկոյն կրակ կը դառնար: Օր մի հայրն ուզելով յանդիմանել և կշտամբել զինքն իւր վարմունքին համար, Թշուառական տղայն խիստ բարկութեան եկնելով, կը վազէ ծեր հօրը վերայ, կը զարնէ գետին կը վռէ, և մազերէն բռնելով պահէն դուրս կը քաշէ կը տանի, որ

տունէն դուրս ձգէ: Անդուլին կէսն որ հասաւ, հայրը բերանը բանալով. "Թշուառական, դոշեց, բաւական է, ալ ասկէ վար մի նետեր զիս. ես իսկ մինչեւ այս տեղ քաշկրտեցի բերի իմ հայրս, երբ քո հասակիդ չափ էիր: Աշօրէն հայրն այս վայրկենիս մէջ ճանչցաւ Աստուծոյ արդարութիւնն և վրէժխնդրութիւնը, որ զինքը պատժելու համար թողուցեր էր որ իւր որդին եւս նոյն կերպով վարուի նորա հետ ինչպէս որ ինքն իւր հօրը հետ վարուեր էր:

Այս բանս խիստ շատ անգամ կը հանդիպի, ուստի ամեն տղայք պէտք է որ խրատուին ասով, և իրենց ծնողաց հետ այնպէս վարուին, ինչպէս կ'ուզեն որ իրենք եւս զաւկի տէր որ լինին, օր մի իրենց հետ նոքա վարուին. վասն զի տղայ մի իւր հօրն ինչ որ ընէ, նոյնն իւր զաւկընեըէն կը դանէ, թէ բարի և թէ չար:

Իւր յանցանքն քաւող տղայն:

Թրխատունեայ տղուն մեկը օր մի բարկանալով նախատական խօսքեր խօսեցաւ իւր մօրը դէմ, և բոլոր դրացիներուն գայթակղութիւն տուաւ: Նաքն ինքնիրեն գալով և իւր բերնէն եղած խօսքերը յիշելով, կանչեց բոլոր դրացիները, և ծնկան վերայ գալով նոցա առջեւ, Թողութիւն խնդրեց իւր մօրմէն՝ քրած պակասութեան համար: Յետոյ իւր յանցանքը քա-

ւելու համար, խելացի տղայն ծանր ապաշխարանք մի դրաւ իւր անձին, և մօտն եղողներուն դառնալով՝ այսպէս ասաց. «Քրիստոնեայ մի ստուածպաշտութեան դէմ կրնայ մեղանչել և իւր ընկերը գայթակղեցընել, բայց իւր կը ծնքը կ՚ուսուցանէ նորա գործած յանցանքը խոհեմ քաւել. սորա համար է որ ապաչեցի ըզձեզ, որպէս զի իմ ըրած սրտմտոյ ապաշխարութեանս դուք եւս վկայ լինիք։

Երրորդ դարտաւորութիւն։

Բաւական չէ, սիրելի աշակերտք իմ, միայն պատիւ տալ ձեր ծնողաց, այլ պէտք է նաեւ որ սիրէք, և պատրաստ լինիք միշտ օգնել անոնց՝ երբ հարկը պահանջէ։ Նոցա փոխուկ սէրը՝ զոր ձեր վերայ ունեցան, անոնցմէ ընդունած կերպ կերպ օգնութիւնները, զձեզ կրթելու համար անոնց քաշած վիշտերն և նեղութիւնները, բոլոր սոքա կը պարտաւորեն զձեզ վճռել սիրելու։ Երախտագիտութիւնը կը պահանջէ զայս, կրծքը յայտնապէս կը հրամայէ և ձեր ծնողքն՝ որ այնքան սիրեցին զձեզ, եթէ փոխարէն դուք եւս պիտի սիրելու չը լինիք, պէտք է որ անպիտան եղած լինիք, կամ երկրքէ սիրտ մի ունենաք։

Հեթանոսներն և կռապաշտներն անգամ այս որդիական սիրոյն վերայ անհամար գովելի օրինակներ տուած են։

Կռապաշտ աղքատ կնկան մէկն այրի մնացեր էր երեք զաւակով, և աշխատութեամբ իւր ապրուստը կը ձարէր։ Բայց աղայքը՝ կամ շահաւոր գործ մի չըլլալուն, կամ իրենց արհեստն լաւ չգիտնալնուն՝ չէին կրնար բան բաւականին շահիլ. սորա համար ամենքն միանալով արտաւոյ առաջադրութիւն մի ըրին։ Այն օրերը գողութիւն մի պատահելով, մնանեւոյնն հրապարակաւ ձայն տուած էր՝ թէ ով որ գողը բռնէ ու դատաւորին բերէ, նորա փոխարէն մեծ գումար մի դրամ կ՚ընդունի։ Այս երեք եղբարքը, որ իրենց չբաւորութենէն աւելի մօրեղբօրնէ պատգիր կը հոգային, խորհուրդ ըրին որ իրենց միջէն մին գող համարուի, և միւս երկուքն եւս բռնեն դատաւորին տանին վինքը։ Ասոնք միջերնին վճռակ ձգեցին որ տեսնեն թէ որո՞ւ կ՚ինկնի որդիական սիրոյ զոհ լինել. վճռած կը պզտի եղբօր վերայ ինկաւ, որ խոհեմ մօրեղբօր պատգիրն կատարեն և դատաւորին դիմաց տանին։ Նորը սկսան քննութիւն ընել, ազգին ինչն իւր բերնով խոստովանեցաւ յանցանքին տէրն լինելը. ուստի դրին ի բանտ, և միւս երկու եղբարքն առին դատաւորին խոստացեալ գումարը։ Սոքա տուն դառնալէն յառաջ կերպը գտնելով դիւրութեամբ բանտը մտան, ուր կարծելով թէ ամենեւին ոչ ոք զերենք չէր տեսներ, փաթ-

Թուեցան իրենց անմեղ եղբօր վիզն և դառն արտասուքներով հաղիւ իրարմէ զատուեցան։ Դատաւորն դիպուածով այնպիսի տեղ մի նըստած էր, որ կրնար զանոնք տեսնել. ուստի խիստ զարմացաւ երբ տեսաւ թէ գողը զինքը մատնողներուն այնպէս արտանց բարեկամուԹիւն կը ցուցընէր։ Խոհոյն ծառաներէն մէկին կանչեց, և պատուիրեց որ այն երկու ամբաստանող մարդկանց եռեւէն երթայ, և աչքին առչեւէն չվորսունցընէ զանոնք, մինչեւ որ լաւ մի չհասկընայ նոցա ով լինիլը։ Ծառայն հնազանդեցաւ. գնաց եռեւնէն որ լրտեսէ. յետոյ եկաւ պատմեց դատաւորին՝ Թէ աղբատիկ տան մի մէջ մնալով այն երկու եղբարքը, ինքն եւս գացեր կրցած չափ տանը մօտենալով լսեր էր որ մօրեղբունն կը պատմէին իրենց ըրածը, իրաւունք բերելով Թէ՝ զինքն աղբատուԹենէ ազատելու համար գործած են. Թէ՝ մնչբերնին երբ լսեց զայս, սկսաւ ողբալի ձայնով կանչել և ասել իւր որդւոց, որ շատով տանին դրանն եւս տան ուսկէ որ առնին, ինչու որ լաւ է կ՚ասէր, որ անօԹի մեռնիմ քան Թէ որդւոյս մահուամբն իմ կեանքս պահպանեմ։ Այս որ լսեց դատաւորը, կանչեց խոհոյն բանտին մէջ եղողն և ետքէն հարցուց գողուԹեան վերայ, կրկին կրկին հարցուփներ ըրաւ որ տեսնէ Թէ արդեօք նորա խօսքերուն մէջ սխալ կամ հակառակ ղըլայց մի կը գտնէ։ Վերջապէս տեսնելով Թէ իւր

ամեն հարցմունքները իրարու համաձայն էին, և չկրնար նորա բերնէն այս գաղտնիքն առնել, յայտնեց անոր ինչ որ ինքն իմացեր էր, և հետեւաբար պարտաւորեց զինքն որ ամեն ինչ խոստովանի իրեն։ Յետոյ գնաց դատաւորը կայսեր իմացուց այս լուրը. կայսրն եւս զարմանալով այսպիսի դիւցազնական գործին վերայ, ուզեց որ աչքով տեսնէ երեք եղբարքն. որոնք երբ իւր մօտ գնացին, շատ մարդասիրաբար Թիւն ցըցուց. մեծ եղբօր 150 Թալէռ տարեկան կամուտ կապեց, և հինգ հարիւրական եւս միւս երկուքին։

ՈՒրիշ օրինակ որդիական սիրոյ։

Չինացի երիտասարդ մի հայրը, իւր առնախալուԹեան պաշտօնին մէջ խիստ մեծ չանցքներ գործած լինելով, դատաստարտուեր էր գլխատուելու։ Իւր որդին գնաց կառավարչին տունն ինկաւ և բռնադատեց երդմամբ որ ընդունի իւր ընելու աղաչանքը, այսինքն հօրը տեղ զինքը գլխատել տայ։ Անատրինը հարցուց երիտասարդին՝ Թէ այս առաջարկուԹիւնն ինքն իւր անձամբը կ՚ընէ, Թէ ուրիշ մի խրատուած է։ Յետոյ խմանալով նորա որդիական սիրոյ զգացումը և պարզմուԹիւնը, գիր մի գրեց կայսեր, որ խնդրն անոր ԹողուԹիւն շնորհեց, և տղուն եւս պատուոյ

նշան մի տուաւ : Բայց տղայն ամենեւին չուզեց յանձն առնուլ այն պատիւը . «Ով որ այս պատուոյ նշանն ընդունելու լինիմ, կ՚ասէր, իմ հօրը յանցանաց յիշատակութիւնն երբէք չպիտի մոռցուի հասարակութեան մտքին մէջէն » : Օրաբնակով կայսրն այսպիսի ազնուական խորհրդածութեան մի վերայ , ուզեց իւր պատանին մէջ առնուլ տղայն , և մնաւոր հոգ տարաւ անոր . յետոյ շատ չքաշեց , նորա արժանաւորութիւնները տեսնելով , տերութեան պաշտօնատարն առիւծան բարձրացուց :

Ընչ օրինակներէս պէտք է մակաբերեմք , թէ ուր որ լինի , գովելի են և կը վարձատրուին միշտ այն երիտասարդները , որոնք երենց սրտիական սիրոյն երեւելի կը հանդիսանան . բայց հետագայ երկու պատմութիւնները որ պիտի պատմեմ , աւելի մեծ ազդեցութիւն կրնան լինիլ :

Երրորդ օրինակ արդիական սիրոյ :

Փրեսերիկոս Բ Բրաւսիոյ Թագաւորը օր մի իւր փոքրիկ զանգակը զարկաւ , և մարդ մի ներեցաւ : Դուրս եկաւ որ նայի ինչ՞ մեկը չը դար , և տեսաւ որ իւր սենեկապետը նստարանի մի վերայ պառկեր խորունկ կը քնանար . մոտեցաւ անոր որ արթնցնէ , և տեսաւ որ նորա գրպանին մէջէն թղթի մի ծայր կ՚երեւայ : Ուզեց գիտնալ թէ ինչ գիր լինի . ուստի բացաւ կարդաց և իմացաւ որ տղուն մայրը գրած էր զայն , որու մէջ ընդհակառակ կը լինէր իւր զաւկէն , նորա համար որ տղայն իւր ստացած թոշակին մէկ մասն ծնող կը ղրկէր , նորա կարօտութեանն օգնելու համար : Ժամակը կը վերջացընէր մայրը շատ օրհնութիւններ տալով իւր զաւկին , որ իր բեն վերայ մեծ խնամք և սէր կը ցուցընէր : Թագաւորը կարդալէն յետոյ , մտաւ նորին ննջասենեակը իւր սենեակին , և փոքրիկ գումար մի ոսկի թղթէ ծրարի մէջ փաթթելով դրաւ նոյն նամակին մէջ , և զգուշութեամբ կրկին խոթեց նորա գրպանն , ուսկէ որ առեր էր : Դարձաւ յետոյ իւր տեղն և այնպէս ստահակ զարկաւ զանգակը , որ տղայն քունին մէջէն ցատկելով վազեց նորա մօտ : « Կ՚երեւի թէ խիստ անուշ կը քնանայիր , ասաց Փրեսերիկոս » : Խեղճ տղայն մերթ յարգութիւն ցցուցնելով , մերթ վախնալով , կ՚ուզէր ներումն խնդրել . և շփոթելով մի ձեռքը դեպ ի գրպանն տարաւ . բայց տեսնելով թէ նամակը ծանր էր մէջի եղած ոսկւոյն պատճառաւ , միտքը հազար ու մէկ կասկածներու դնաց : Վրպանէն դուրս կը հանէ ծրարած ոսկին , Թագաւորին կը նայի և դեռ նման արտասուք կը թափէ , ոչ անոնց կարենալը բերնէն խօսք մի հանել : « Ո՞նչ ունիս , հարցուց Թագաւորը : — Ա՜հ , տէր իմ , պատասխան տուաւ բարեպիտակ տղայն , մոտ-

նութիւն ըրած են ինձ : Իմ եռեւս ինկնող թշնամի մի ունեցած պիտի լինիմ ես : Չեմ դիտեր ուսկի է այս գրպանիս մէջ եղած ոսկին :

—Միրոզ հանդարտ բռնէ , տղայս , կրկնեց Թադէոսը : Աստուած իւր բարութիւնները նաեւ մեր քնացած ժամանակին եւս կը շնորհէ մեզ : Այդ ատակը մօրդ խրկես , իմ կողմէս եւս բարեւ դրես և ասես՝ որ ես Թէ նորա և Թէ քեզ հոգ պիտի տանիմ : Երիտասարդ տղան ցաւն և տրտմութիւնն ատոր վերայ ուրախութեան փոխուեցան , և փութով դիտցաւ՝ Թէ տղայ մի երջանիկ լինելու համար ամենէն աւելի պատուաւոր միջոց , իւր ծնողաց կարօտութեան օգնելու մտօք՝ ամենեղութեանց չանձնառու լինելով աշխատիլն է :

Այս ժամանակներս տեսնուեցաւ որդիական պիղծ օրինակ մի , որ պատմելու արժանի է , և ահա այս տեղ կը դնեմք :

Ծորթոթ օրինակ որդիական պիղծ :

Ընտանական դէպքերս տասնեակ երիտասարդ մի որ զինուորական արքունի վարժատան մէջ կը կրթուէր , միայն ապաք մի և քիչ մի եւս հայ ջրին մէջ Թաթխելով կ'ուսէր և անով կը քահանայէր : Պատահան դպրատուր կառավարիչն այս բանս դիտելով , չանգիմանեց զինքն , կարծելով Թէ չափազանց ջերմեռանդութենէն

կ'ընէր : Տղայն մտիկ չըրաւ , այլ իւր ժուժկալութիւնը կը շարունակէր առանց մէկուն յայտնելու իւր դաւանութիւնը : Փարի Տիւվէրնէյ , որ դրան ըրած զարմանալի համբերութիւնն իմանալով , կանչեց իւր մօտ , և շատ բան ըսելէն յետոյ՝ Թէ պէտք է դպրատան սովորութեանց հետեւի , և ինքնիրեն նոր բաներ չհնարէ , ըսպառնացաւ եւս ասելով՝ եթէ խօսք մտիկ չընես և քու գիտցածդ եւս չկենաս , հօրդ տուներ կը խրկեմ զքեզ : — Այս , տէր իմ , ասաց այն ժամանակ տղայն . որովհետեւ դուք իմանալ կ'ուզէք Թէ ի՞նչ պատճառաւ բռնադատուած եմ այս բանս ընելու , և ես չեմ ուզեր ձեղմէ իմ դաւանութիւս պահել : Վիճացած եղիք ուրեմն որ ես հօրս տունը կտոր մի սեւ հացէն ի զատ ուրիշ բան չեմ ուտեր : Ինձ շատ անգամ ծաքատութիւննիս մարելու համար ջրէն զատ բան չխմիլ ունենար , հիմայ այս տեղ պատուական ապուր կը ճաշեմ , հացն եւս աղուոր և պէտք եղածէն աւելի : Վ՚երջապէս՝ մինչեւ կշտանալս ուտելէ զատ , կերած հացս եւս պատուական է . բայց ի՞նչպէս կրնամ ասկէ աւելի ուտել , երբ կը մտածեմ (որ քնաւ մոռնալ եղած չըլնի այս ցաւալի յիշատակը ,) Թէ ի՞նչ վիճակի հասած են այդ եօք իմ հայրս ու մայրս » : Փարի Տիւվէրնէյ և կառավարիչը հաղիւ կրնային իրենց արտասուքը բռնել , տեսնելով առաքինի տղուն պատին այնչափ զգացողութիւնն և հաստատու-

թիւնը : « Ո՛չ թէ քո հայրդ , ասաց Փարի , Թա-
գաւորին զօրաց մէջ ծառայութիւն ըրած է ,
ի՞նչպէս կարելի է որ իւր Թոշակը չընդունի :
—Չէ , պատասխան տուաւ տղայն , անիկա թո-
շակ չունի : Թէպէտ այս բանիս համար աղեր-
սագրեր տուաւ , և մէկ տարիի չափ շատ աշ-
խատեցաւ որ առնու , բայց պարապն ելաւ : Ու-
ազքատութիւնն եւս չհաղուց որ իւր իրաւ-
ունքներն յայտնէ , թէպէտ յետին ճիգը թա-
փեց : Վերջապէս քաղաքին մէջ եւս պարտքի տակ
ձինկնելու համար՝ վերջին կարօտութեան հա-
սաւ : — Լաւ տղէկ , կրկնեց Փարի , թէ որ ձրիշ
մարիս է ասածդ , որու վերայ բնաւ չեմ երկ-
բայիր , որովհետեւ քո բերնէդ կը լսեմ , կը
խոստանամ քեզ միջնորդ լինիլ Թագաւորին որ
հինգ հարիւր ֆրանք տարեկան Թոշակ մի կա-
պէ անոր : Ա՛ստ որում քո ճնողքդ այսքան խեղ-
ճութեան մէջ են , հաւանական է որ դքեզ տատ
խրկելու ժամանակնին և ոչ քիչ մի տակ կըր-
ցած պիտի լինին քեզ ճարելու : Ա՛ս ուրեմն հի-
մայ իմ ձեռքէս այս երեք ոսկի դահեկանը , զոր
Թագաւորին կրզմէն կուտամ քեզ . և քո հօ-
րըդ եւս առաջին վեց ամսականը կանխիկ պիտի
խրկեմ իւր տարեկան Թոշակին , զոր կը յուսամ
ընդունիլ Թագաւորէն նորա համար : — Ո՞նչ
պէս պիտի կրնաք տէր իմ , կրկնեց տղայն , հօ-
րըս ձեռքը հասցընել այդ դումարը : — Ա՛յդ իմ
դիտալու բանս է , պատասխանեց Փարի Տի-

վերնէյ , նորա հնարքը դանել մեզ համար բան
մի ասել չէ : — Ա՛հ , տէր իմ , կրկնեց նորին ա-
շակերտն , որովհետեւ այս դիւրութիւնն ու-
նիք , հնարհք ըրիք այս երեք ոսկին եւս խրկել ,
զոր դուք մարդասիրութեամբ լինճ պարգեւե-
ցիք : Ես այս տեղ ամեն բարիք առատապէս
կը վայելեմ , ուստի ինչպէս կը տեսնիք՝ անօ-
գուտ են ինձ ասոնք . ուր ընդհակառակն խիստ
մեծ օգուտ կրնան ընել իմ հօրս և իւր խեղճ
ընտանեացն , որոնք մեծ նեղութեան մէջ են » :

Ա՛հ , ինչ մխիթարութիւն է , սիրուն որդ-
եակ իմ , այսպիսի ազնուական զգացողու-
թիւններ ունենալն . ինչպէս որ մեծ ամօթ է
խոստասիրտ մարդուն՝ որ չկրնար իւր ճնողաց
սիրոյն փոխարէն ինքն եւս զանոնք սիրել , այլ
միայն անտարբեր և առելի սէր կը ցուցընէ :
Ա՛սուած չընէ որ դուք եւս ասանց պէս լինիք ,
շատ աղէկ է որ տղայ մի իւր մօրն արգանդին
մէջ մեռնի , քան թէ նոցա կենաց օրերը դառ-
նացընէ այնպիսի վարմունքով՝ որ ազնուական
տղու մի չը վայելեր : Ա՛յ որ պատիս , հնազան-
դութիւն և սէր ցուցընելը իւր ճնողաց , ոչ քիչ
բիտանելոյ և ոչ իսկ մարդ կանչուելու արժա-
նի է , այլ գործելի և հրեշտակաւոր գաղանի տեղ
պետք է դնել այնպիսին :

ԳԼՈՒԽ ԺԱ.

Տէրոյ Երենց դաստիարակաց և վարժապետաց դէմ առնեցած պարտաւորութիւնները։

Ամենէրտաց պարտաւորութիւնները՝ որ Երենց դաստիարակաց և վարժապետաց դէմ ունին, դրեթէ հաւասար է աղջոյ Երենց ծնողաց դէմ ունեցած պարտաւորութեանց հետ. վասն զի վարժապետ ասելն՝ երկրորդ հայր ասել է։

Այս ճշմարտութիւնս խիստ աղէկ իմացեր էր մեծն Աղեքսանդր, որ սովոր էր միշտ ասել թէ՝ "Փիլիպպոս իմ հօրս պատճառ որ պարտաւոր եմ, նոյնքան եւս Արիստոտէլ վարժապետիս պարտաւոր եմ". և ասիկ սա իրաւունքը մէջ կը բերէր, թէ մին իրեն կեանք էր տուեր, եւ միւսն աղէկ կեանք վարել ուսուցեր էր։

Ուրեմն և դուք ձեր վարժապետաց համար այն պատիւն և երախտագիտութիւնը պէտք է ունենաք, զոր ձեր ծնողաց պարտաւոր էք. և ծնողք առաջին պիտի լինին այս աշխատական ըլլալնիդ դատմունքները ձեր սրտին մէջ ծնցընել տալու, եթէ աշակերտաց Երենց վարժապետներուն դէմ ունեցած երախտագիտութիւնն և հնազանդութիւնն իրրեւ սիմպոլն կը համարին բարի վարուց և կրթութեան, որու վերայ պիտի պատճառեմ հիմայ։

Ինքնակալի մի խնդրոյն քարոզութիւն։

Երբ Թէոդոս կայսրն իւր Արկադէոս որդուն կրթութիւնն Ասենիոս արժանապատիւ մարդոյն յանձնեց, սա նշանաւոր խօսքն խօսեցաւ անոր. "Թուք ասկէ յետոյ իրեն հայր պիտի լինիք ինձմէ աւելի"։ Հայց այսքան խօսք բաւական չհամարելով, ուզեց որ որդին եւս իւր կողմէն վարժապետի պատիւն ճանչնալով արժանաւոր յարգութիւն տայ անոր։ Ուստի օր մի մտաւ այն սենեկին մէջ, ուր Ասենիոս դասս կուտար Արկադէոսին. տեսաւ որ վարժապետն ոտքի վերայ կանգնած է և աշակերտը նստած, վրդովեաւ կայսրն իւր բարկութիւնը զսպելով յանդիմանեց զվարժապետն՝ որպէս թէ իւր իշխանութեան օրէնքները չէր պահեր։ Ասենիոս թաղութիւն խնդրեց ըսելով թէ անվայելուչ բան կ'երեւի ինձ որ թագաւորազուն իշխան մի ծիրանիներ հագած՝ իմ դիմացս ոտքի վերայ կանգնի։ Թէոդոս՝ որ կը ջանար մեծ յարգ ցուցընել տալ որդւոյն իւր վարժապետին դէմ, շուտ մի հանել տուաւ նորա վերայէն թագաւորական նշանները, և հրամայեց որ Ասենիոսի առջեւ միշտ ոտից վերայ և դիմաբաց կանգնի։

Վարժապետին անաչառութեամբ կարգի մտնող աշակերտաց։

Իմաստուն և առաքինի վարմունքը, որ քաջ

պրիճի արքեպիսկոպոսէր, վարժապետութեան պարագք մի համարեց հասարակ ազգոյց պէս կարճելու Պոլսոյնայ դուքան, որ իւր աշակերտն էր. բայց ուրիշ կերպ մի բանեցուց: Օր մի առիթ գտնելով, երբ խստութեամբ կը խօսէր երիտասարդ իշխանին հետ, դառնութեամբ մի պապէս պատասխան առաւ անկէ. "Ոչ, պարոն, ես հրամայող չեմ ուզեր: Դուխեմ ով եմ ես՝ և ով ես դուն": Խոհեմ վարժապետն այն միջոցին բերանը չբացաւ, այլ աւելի շատ համարեց լուռ կենալ և ախորժ կերպարանք մի ցուցընել, և յետոյ տալ անոր իւր օգտակար խրատները: "Ձեմ դիտեր, պարոն, ասայ ա. նոր հետեւեալ օրը. միտքդ է արդեօք երեկուան պատահածդ. — դուխեմ ով եմ ես՝ և ով ես դուն —: Հիմայ իմ պարտքս է խնայողութիւն ձեզ, թէ այս երկու խօսքն ես ձեր ինչ կը նշանակեն: Ուրեմն դուք միտքերնիդ այնպես դրած էք թէ ինձմէ վեր էք: Դուխեմ անտարակոյս որ պալատի որ և իցէ ծառաներէն մին կրնայ ասել ձեզ իմ պատուելիքս. և ես վախ մի չունիմ ասելու ձեզ, որովհետեւ դուք կը բըռնադատէք զիս. ասասի կը համարձակիմ պատուել ձեզ՝ թէ ես ձեզմէ վեր եմ: Ընդհակառակն նաև թէ այս տեղ ցեղի վերայ չէ մեր խօսքը: Եթէ մի մարդ պնդելու լինի՝ թէ ինքն Ոսմանցմէ մանաւանդ շնորհք գտնելուն համար, անձրեւը միայն իւր պատերուն մէջ տեղալով

պատաբեր ըրած է, իսկ դրացւոյն պատերն և ոչ թրջած: Ընդ՝ այս մարդը դուք եւս անտարակայս անբասիկ տեղ կը դնէիք. ապա ուրեմն դուք եւս ասիկ խելացի չէք կրնար համարուիլ եթէ ձեր ցեղին վերայ անպատշաճելու լինիք, որ ամենեւին օգուտ մի չբերը անձնական արժանաւորութեանց: Չէք կրնար ժխտել երբէք ձեղմէ վերագոյն լինելը, թէ հանճարով և թէ դիտութեամբ: Դուք լինձմէ ուսածնիդ աւելի բան չէք գիտեր, և ձեզ ուսուցածս ոչ լինչ բան մի է, եթէ բաղդատեմ զեռ ուսանելիքներուդ հետ": Երիտասարդ իշխանը խիստ լաւ միտք առաւ այս դեղեցիկ դասս. և իւր սիրելի վարժապետն եւս ուրախացաւ՝ իմանալով որ նորա պատին մէջ հնազանդութեան հունարը ծլերէ զուռզութեան տեղ: Այս դուքսը յետոյ աշխարհիս խիստ դիտուն թագաւորաց մին եղաւ:

Բայց վարժապետները պատուելու ժամանակ կը վայելէ նաեւ որ երախտապէտ և դիւրազգաց սիրտ ցուցընէք անոնցմէ ընդունած ծառայութեանց համար. վասն զի՝ թէպէտ որ իրենց ապերախտութիւնը կը յայտնեն եթէ ցոյց չտան, այլ նաեւ ինքզինքնին չանցաւոր կ'ընեն՝ եթէ պարտաւոր եղած երախտապիտութիւնը ցոյց չտան անոնց, որոնք մեր բարեկրթութեան պատճառ եղած են, և իրաւունք առացած ունին մեր վերայ:

Մարդս բնութեան ձեռքէն ելած ժամանակ կը նմանի կոշտ ու ալոշտ մարմարիոնի, ուստի մարդկութեան հարկաւոր եղած կատարելութիւնն ստանալու համար, պէտք է որ կրթուի, լուսաւորուի, ինչպէս որ այն մարմարիոնն ալ դեղեցիկ արձան շինելու համար, հարկ է մշակով տաշել և յղկելով մաքրել: Մեր վարժապետաց պարտաւոր եմք այն դեղեցիկ առաքինութիւնները և գիտութիւնները, ոք բոնք մեր միտքն և սիրտը կ'ուղղեն:

Աշակերտի մի իւր վարժապետաց դէմ ունեցած շափաշանց երախտագիտութիւնը:

Մարկոս Աբելեոս կայսեր այս լսածներս այնպէս զարմանց ղգացեր էր, որ մինչեւ շափ դուրս անարժան երախտագիտութեամբ մի իւր վարժապետաց արձանները կուռց մէջ տեղ կանգնել տուաւ, և անոնց գերեզմանացն ալ մեծ տարի ղհեր կը նուիրեր: Նաեւ կենդանեաց մէջ եւս տեսնուած են սիրոյ և երախտագիտութեան օրինակներ, զորոնք պարտաւոր է մարդս ցուցընել անոնց՝ ուսկէ որ բարիք մի կը տեսնեն:

Երախտագէտ առիւծ:

Երիտասարդին մէկը Ընտրոկղէս անուն, գերի ինկած էր մի հռոմայեցիի ձեռք, որ Ասիրիկէի մէջ փոխհիւպատոսի պաշտօն կը վարեր: Ընտրոկղէսին իւր տիրոջմէն ամեն օրուան քաշած նեղութիւններն այնքան սիրտը թափեցին, որ միտքը դրաւ փախչիլ նորա ձեռքէն, թէպէտ և շատ վտանգաւոր էր: Նոր որովհետեւ շատ կը վախնար որ նորէն իւր անգութ տիրոջ ձեռքը կ'ինկնի և վրէժխնդիր կը լինի իրեն, ուստի գնաց պահուըտեցաւ Նումիդիոյ մէջ այնպիսի անապատ մի, ուր հնար չէր որ բնաւ մէկը մտնէր. մինչեւ աչքն առաւ այն տեղ մտնելու, եթէ ուտելու բան չգտնէ: Երեւան ճառագայթներն այնպէս տաստիկ տաք էին, որ չէր կրնար ճանապարհին քայլել, շատ տեղ մի փնտռեց որ գլուխը խոթէ քաշուի, բայց չտրմար տեղ չգտաւ. այն դիտ կողմնքար այր մի տեսնելով մտաւ և խոր, մտաւ ներս այս մտաք՝ որ քիչ մի տաեն անցնելէն յետոյ ուրիշ աւելի ապահով տեղ գտնէ: Մտքը ներս խոթեց վոխթեց, նայիս դիմացն առիւծ մի եկաւ, որ մեկ թաթը ցաւէն չէր կրնար դետին դպցընել, ուսկէ արիւնը գետի պէս կը հոսէր, և տագնապալի ձայնով մի մռնչելով քարայրը կը սարսեցընէր: Ընտրոկղէս այս որ տեսաւ, տաստիկ վախուն ինքզինք մեռած համարեց, բայց առիւծը դինքը տեսնելուն՝ մտերցաւ անոր հեղ և ընտանի անասնոց նման, երկարեց անոր իւր թաթը, ցոյց տուաւ վէրքն, և կ'երեւէր թէ իւր մէկ օգնութիւն կը խնդրէր: Դերին՝ որուն քա-

շած թշնամութիւնները ատոնցմէ էին իրեն
խեղճերուն ողորմելու, իմացաւ նորա միտքը,
քննեց նայեցաւ ոտքն և մէջէն հատած փուշ մի
քաշեց հանեց. յետոյ լացը տղուն, մէջն թա-
րախը վազուց և մինչեւ նորա չորնալն ագիկ
հոգ տարաւ: Աղիւծն ոտքին ցաւը դադրելուն
պէս՝ փուռերցաւ իւր բարեբարին ոտքին տակ
և իւր թաթին անոր ձեռքերուն մէջ դնելով՝
հանդիստ քնացաւ: Այն օրէն յետոյ ճիշտ երեք
տարի միասին ապրեցան նոյն քարայրին մէջ:
Աղիւծն իւր ըրած որսերն Ընտրոկղէսին կը բե-
րէր, և նա կերակուր կը պատրաստէր տոք ա-
րեւուն մէջ եփելով: Բայց այսպէս մինակուկ
կեանք վարելէն ձանձրութիւն գալով իրեն, օր
մի երբ աղիւծն որսի եղեր էր անապատին մէջ,
աղիւձ գտնելով եղաւ ճանապարհ, թէպէտ
ուր երթալը չէր գիտեր. և երեք օրէն յետոյ,
խեղճ գերին դժբաղդութեամբ վինուորներու
ձեռք ինկաւ, որոնք բռնեցին Հոմ բերին,
ուր իւր տէրը տեսնելով ճանչցաւ զինքն և դա-
տապարտեց գազաններուն դիմաց նետելու
տեսարանի մի մէջ, որ պատրաստ պատրաստ ընեն:

Օրն եկաւ հասաւ, երբոր Ընտրոկղէս տե-
սարանին մէջ կանգնեցուցին, ուր տեղ կային
կատաղի և անօթի գազաններ, որ կարծես թէ
պիտի պատրաստէին զինքն: Սանոց մէջ սոսկալի
աղիւծ մի եւս կար, որու աչքերէն կրակ կը
ցայտէր, և ձակտի բաշերն մկմկիկու խառ-

նելով և մռնչելուս ահագին ձայներով բոլոր
հանդիսատեսները մեծ ահադոյղի մէջ կը ձգէր:
Կերեւար թէ ահռելի գազանը դիմացն եղողը
պիտի պատառէ ուտէ. բայց զԸնտրոկղէս տես-
ծին պէս իսկոյն կանգ կ'առնու. կամաց կամաց
մօտը կուգայ, և բնական գազանութիւնն մէկ-
դի ձգելով կարծես թէ ծանօթ էր իրեն խեղճ
գերին. քծնելով մի կըմօտենայ և ուրախու-
թեամբ պոչն օրելով կուգայ կը քաուի անոր և
ձեռքերն ոտքերը կը լիզէ: Աղիւծին այսպէս
քծնիլը տեսնելով Ընտրոկղէս՝ կ'ուշադրէ, աչ-
քըները կը բանայ և կը տեսնէ որ աղիւծն եւս
իրեն կը նայէր, և որպէս թէ երկու բարեկամ
ղիրար ձանչնալով, աղիւծն ու մարդն իրենց ու-
րախութիւնն և քաղցր սէրը կը յայտնեին: Հան-
դիսատեսք այս բանիս վերայ զարմանալով տա-
շտութեան ձայներ հանեցին. կայսրն եւս իրեն
մօտ կանչելով զգերին, մանրամասնաբար պատ-
մել տուաւ ինչ որ ես ձեզ հատատարմութեամբ
պատմեցի: Յողովուրդն որ իմացաւ զայս, գո-
չեց մեծ ձայնով. Թողութիւն շնորհուի գերի-
ին, եւ աղիւծն եւս իրեն պարգեւ տրուի.
կայսրը բարեհաճելով երկու խնդիրքն եւս
կատարեց: Ընտրոկղէս իւր եաեւն ձգեց իրեն
աղատիչը՝ վիզէն փակ մի կապած, և նորա հետ
միասին Հոմայոս փողոցներուն մէջ կը պտը-
տէր. ժողովուրդը նորա վերան ծաղիկներ և
պարգեւներ կը տեղացընէր՝ այսպէս աղաղակե-

ըսվ. «Ահա առիւծն հիւանդանալու մարդուն, և մարդն բժիշկ առիւծուն։

Վասն զի որ պիտի զարմանալ հիմայ այս եւ բախտագէտ դաղանին վարմունքին. բայց ա ւիւծին Նոյոսկղէսէն ընդունած երախտիքն ինչ ընելն բանէ, եթէ բաղդատելու լինիմք ձեր դասախոսականերին և վարժապետներին առնն օր ընդունած ծառայութեանց հետ։ Որքան դէշ ծիլեր և օրքան փշեր ձեր սրտին մէջէն կը փոյլանեն կը հանեն նոքա թեղուելով։ Որքան խնամքով կը մնուցանեն նոքա ձեր միտքն և հոգին գեղեցիկ դասերով և հոգեշահ իրատներով։ Որեւէն գործ անատուն նեղէն առնել անզգայ չէիք լինիր, եթէ ապերախտութեամբ մինչեւ մտնալու կամ գոյ արհամարհելու եւս լինէիք այն վարժապետներն՝ որոնք ձեր աղէկութեան համար բարի նախանձութեամբ այսքան հոգ կը տանին. և արժանի չէք լինիր նոյն յանդիմանութեան՝ զոր ժամանակաւ Յոյն երիտասարդի մի ըրին։

Աղերախտ երիտասարդի մի եղած յանդիմանութիւնը։

Այս երիտասարդը շատ տարիէ ի վեր փիլիսոփայի մի մօտ վարժուելէր և կրթուելէր էր. որ զինքը դիտուն և առաքինի ընելու համար աշխատութենէ բնաւ չէր փախչեր. բայց երիտասարդն իւր բարեխոհանձ վարժապետին

պարտաւոր երախտագիտութեան նշաններ չը ցուցընելէն ի զատ, ինքնիրեն կը պարծենար և կը քամահրեր զայն. օր մի եւս լրբութեամբ ատաց անոր, թէ անարգ անասնոյ կը նմանիի, և անասնոյն անունն իսկ տուաւ։ «Չեմ գիտեր, պարոն, պատասխան տուաւ փիլիսոփային, թէ կը նմանիմ ես արդեօք այդ կենդանւոյն, որուդալիս կը նմանցընես. այլ գիտեմ ազէկ որ դուկը նմանիս մի ապերախտի, որ բոլոր կեանդանեաց մէջ ամենէն ատելին և գարշելին է»։

Ահա, սիրելի որդեակք իմ, այս բանս կատելի է որ օր մի ձեզ համար եւս ասեն, եթէ դժբաղդաբար զանց ընէք ցոյց տալու ձեր վարժապետաց երախտագիտութեան պարտքերնիդ, կամ եթէ վերը պատմած երիտասարդին պէս, անոնցմէ ընդունած աղէկութեանց փոխարէն՝ պաղ վարմունք մի կամ յայտնի ատելութիւն ցուցընէք։

Սողոմոն իմաստուն՝ ծոյլ մարդիկը մրջիւնները դպրատունը կը խրկէր, որ անոնցմէ ուսանին աշխատասէր լինիլ, և իրենց ծուլութեան վերայ ամչնան։ Այս օրինակիս վերայ կ'ուզեմ և ես հետեւեալ առակը պատմել ձեզ, որու մէջի կենդանիին կրնաք բան ուսանիլ։

Ա Ր Ա Կ

Լուր տերը խածնող շանը։

Հաւատարիմ և անվնաս բարեկամին անդին

դանձ մի է, որու մօտ ամենէն և փայլուն ադա-
մանդներն և ամէնն ոչինչ համարուած են։ Բա-
րեկամութեան ճշմարիտ պատկերը՝ անբան կեն-
դանեայ մէջ չուներն է, ինչպէս ամենուն յայտնի
է. և ամեն մարդ դիտէ թէ ինչպէս այս կեն-
դանիս իւր տիրոջ հրամանները կատարելու ար-
թուն և պատրաստ է միշտ, և նորա դէմ ու-
նեցած հաւատարմութիւնն իւր հետ միասեղ
ծնած է։

Մի հարուստ երիտասարդ այսպէս գեղե-
ցիկ շուն մի ունէր, որ ծաղրական եւ սիրուն
շարժուածքներուն համար անունը Մխիթար դը-
րած էր։ Դիշերները արթուն կը կենար, մի վա-
խըը ձայն լսելուն կը հասկէր, և ամենեւին օ-
տար մարդ արնէն ներս չէր մտցըներ։ Խարե-
կենդանին օրերն եկան և Մխիթար արնէն չէր հե-
ռանար. իւր տիրոջ հետ ոչ ի թատրոն կ'եր-
թար և ոչ ի պարահանդէս և ոչ ի հացկերոյթ։
Դիշերն իւր սովորականին պէս՝ ականջներն
դէպ ի դուռը անկած կը սպասէր։ Ընձրեւուս
երեկոյ մի էր, ուշ առեն և մութն այնպէս կու
խեր էր՝ որ աչք աչքի չէր տեսներ, նայիս
տերը կախարդ կնկան կերպարանք մտած և ե-
րեսը դիմակ անցուցած տուն դարձաւ մինակ,
և յոգնած լինելով՝ վերայի լաթերը պիտի փո-
խեր ու պառկեր քնանար։ Շունն այս պղտի-
դակ մարդը տեսնելուն պէս՝ ականները կը
կրճտէ, և գոռ կարծելով կը վազէ նորա դէմ

և սաստիկ կը խածնէ։ Խեղճ տէրը ցաւէն մեծ
ձայնով կը պօռայ. շունն իւր տիրոջ ձայնը
ճանչնալուն ուժն կտոր կ'առնու, և նորա դէմ
պարծած չարութեան վերայ անվախճար որա-
մոլութեամբ կը լեցուի։ Կը փախչի կ'երթայ կը
պահուըտի, և ապերախտ գտնուելուն համար
գլուխը գետնէ գետին կը զարնէ։ Թէպէտ տէ-
րըն անուշխոհութեամբ նորա անունը տալով կը
կանչէ և մօտ կ'երթայ կը շոյէ, բայց ինչ օ-
գուտ. վասն զի շունը արդէն կախիճէն ինքզինք
կ'ուտէր, տիրոջ ցուցցած սէրը մոռիկ չէր ը-
ներ, և ինչ որ տային՝ բերանը չէր դներ։ Վերջ
ջապէս այն իւր անմեղ սխալմունքը պատժելու
համար, անօթի ծարաւ և ցաւալի մեռաւ խեղճ
կենդանին։

Այս առակս ինքնահնար վարձէք, այլ
ճշմարիտ պատմութիւն է, ինչպէս որ արժա-
նահաւատ հեղինակին մէկը կը վկայէ։ Ըստ-
եղէմ կենդանի մի մարդոյս վերայ այսքան սէր
կը ցուցընէ, ո՞րքան պէտք է որ ապերախտք ա-
մէնուն իրենց վերայ։

Կ'ասեն թէ շունը նշան՝ մանաւանդ թէ օ-
րինակ է հաւատարմութեան և սիրոյ, զոր մենք
մեր վարժապետաց դէմ պարտաւոր ենք ունե-
նալ. և այս բանիս ապացոյց՝ հայ գեղեցիկ օրի-
նակ մի պատմեմ ձեզի։ Ընտուած տայր,
սիրելի որդեակք իմ, որ դուք եւս այս ապե-
րախտներուն դասին մէջ չլինիք։ Եղէկ գիտ-

նամ որ դուք այսպէս մեծ չարութիւն մի գործելու չէք առնչեր, մկկէն կը ձգէի զձեզ ձեր դժոխային անարգ կամաց, և երեսնիդ անգամ չէի նայեր, բնութենէ դուրս տղայք համարելով զձեզ. վասն զի կայ աւելի բնութեան հակառակ բան մի, քան ապերախտ գտնուիլ նոցա դէմ, որոնց պարտաւոր եմք այնպիսի անգին երախտիք մի, ինչպէս է մեզ տուած բարեկրթութիւնն։

Այլ եթէ այս ապերախտութիւնն ինչ և իցէ աստիճանի մարդ որ ունենայ, աւելի և անարդ կը լինի մարդկանց, ուրեմն գովելի են աշակերտի մարդոց մօտ նոքա որ երախտադէտ են իրենց վարժապետաց, որոնք նոցա տղայութեան հասակը կրթութեամբ և ուսմամբ զարդարեցին։ Արեւելի Շամիլլի կոմսին գեղեցիկ գործոց մէջէն այն կտորը, որ իրեն մեծ պատիւ ըրաւ և իրրեւ օրինակ բարի միշտ յիշատակութեան արժանի պիտի լինի, կ՚ուզեմ այս տեղ ձեզ պատմել։

Գեղեցիկ օրինակ երախտագիտութեան։

Շամիլլի կոմսը Կուալէ քաղաքը պաշտպանելէն յետոյ, այնպիսի քաջութեամբ որ իւր թշնամիներն անգամ զարմացուց, վերադարձաւ Պուդովիկոս ԺԴ թագաւորին ներկայանալու։ Թագաւորն նորա լուսած պաշտպանութիւնը լսած լինելով, շատ գովեց զինքն, և քաջալերեց որ իւր սրտին ուզած շնորհքն իրմէ խնդրէ։ «Տէր իմ, պատասխան տուաւ Շամիլլի, այս շնորհքը միայն ձեզմէ կը խնդրեմ, որ թողութիւն ընէք իմ հայրապետիս, որ Պասդիլլի մէջ բանտարկեալ կը կենայ։ — Ո՞վ է քու հայրապետդ, կրկնեց թագաւորը զարմանալով։ — Պարոն տը Պրիմօզէն է, ասաց Շամիլլի։ Այս ժամանակաւ նորա դէմքին մէջն էի, որուն իմ երիտասարդութեանս մէջ ինձ կրթելու համար ունեցած հոգերը եթէ չմանչեմ, ապերախտ սիրտ համարիմ։ Զարմացաւ թագաւորը Շամիլլիի ուղղին վեհանձնութեան վերայ, որ իւր անձնական շահը մէկդի թողլով բարեբարին օգուտն միայն կը մտածէր. և իսկոյն շնորհեց անոր իւր ուզած խնդիրը։

Ձեր սրտին մէջ աւելի զգացնելու համար երախտագիտութիւնը, որ գեղեցիկ հոգւոյ առաքինութիւնն է, կ՚ուզեմ այս տեղ ձեր առջեւ դնել այնպիսի օրինակ մի, որ այնքան աւելի մեծ ազդեցութիւն ունի, որքան որ գործողը բարբարոս համարուած է։

Ուրիշ օրինակ երախտագիտութեան։

Լուդովիկոս ԺԴ Պազրեացւոց թագաւորը Թունեսոյն (Թունուզ) քաղաքը ռմբակոծելէն

յետոյ, մէջի քնակիչները նայեցան որ չպիտի կրնան նորա նաւատորմիղն իրենց ծովեզերքները հեռացընել, յոյսերնին կարելով մէջերնին որոշեցին որ Դաղղիացի գերիները Թէդանօթ ներսն բերանը կապեն և նետելու ժամանակ զանոնք ջարդուբուրդ ընեն, որոնց կախկախուած անդամները կերթային Դաղղիացւոց նաւերուն մէջ կ'իյնային։ Այն ժամանակներս Թունուզի նաւահանգիստ մի սպասաւոր Թիւրք ըրած ժամանակ Դաղղիացւոց ձեռքը գերի ինկած լինելով, անոնցմէ շատ մարդասիրութիւն գտած էր բոլոր իւր գերութեան մէջ. երբ սեսաւ Թէ Թէդանօթներուն բերանը կապուողները ներսն մէջ պատուաւոր գինուոր մի կայ, ճանաչեց ով լինին. ւսանի դի ինչն նորա մօտ եղած ժամանակ շատ բարեկամութիւն սեսած էր անկէ։ Այս ազէտալի միջոցիս մէջ իւր բարերարը մահուանէ ազատելու համար ձեռքին եկածէն աւելի ջանք ըրաւ, աղաչեց և խրատներ բանեցուց, բայց ամէն ինչ պարապուն եղաւ։ Ընդհէն պատրաստուեր էին Թէդանօթին կրակ տալու, որուն դիմաց կապուած էր Դաղղիացի գինուորը. և ահա յանկարծ Թունուզի գերին աչքերը սևցած՝ կը նետուի նորա վերայ ասելով. «Ո՛չ, հիմայ կրակ տուր Թէդանօթին. որով հետեւ չեմ կրնար բարեկամիս կեանքն ազատել, գոնէ նորա հետ մեռնելով միութիւնս եւ սրտիս ցաւ չլինիմ»։ Ըսին գանուող Պէյին սիրտ

արին այնքան շարժեցաւ այս սեսարանին վերայ, որ գինուորին Թողութիւն շնորհելէն յետոյ, երկուքին եւս ազատութիւն սուաւ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վարժապետոյ անհաշտութիւնը պէտք չէ որ աշակերտոյ սէրը պաղեցընէ անոնցմէ.

Աշակերտներուն իրենց վարժապետոյ դէմ ունեցած երախտագիտութիւնն և սէրը սովորաբար պաղեցընողն անոնց անհաշտ վարմունքն է, որով երբեմն կրսախպոսն իրենց աշակերտաց հետ վարուել։ Թերեւս յանդիմանութիւն մի եւս եմէ լսեն, խակըն կը մոռնան նոցա բոլոր հոգերն՝ աշխատութիւնները և ծառայութիւնները, մինչեւ զանոնք իրենց թշնամին կը համարին քան թէ բարերարը։ Նոյց եմէ նոցա այնպէս անհաշտ ոտքեամբ վարուելնուն պատճառը դիտնային, անշուշտ իրենց սխալ կարծիքը ուղղելին կը հասկընային։

Ա. Ր Ա Կ

Ըրթն եւ այգեգործը։

Օր մի կախ ըրաւ, կ'ասէ Իշխանը, որմէն այգեգործին հետ, նորա համար որ իւր ձիւղերուն եւ տերեւներուն շատը կը կտրէր։

«Խղճմտանք չունիս դու երբէք, ասաց գիւղացուն, որ ինձ հետ այսպէս խստութեամբ կը վարուիս. կ'երեւի թէ խիստ քար սիրտ մի ունիս դու որ ամենեւին իմ ցաւերս չես զգար, անգութ մարդ. ատս նայիմ ինչո՞ւ համար այսքան կը վերաւորես զիս: Իրաւ է որ ինձ համար այսքան խնամք և հոգ կը տանիս, և ես դորա համար ապերախտ չեմ լինիր քեզ, կամ ագահութեամբ իմ խաղողներս քեզմէ չեմ խլեր, որոնք քո տակառներդ գինիով կը լեցնեն: Բայց քանի անգամ ասացիր դու ինձ՝ թէ իմ քաշած նեղութիւններս և թափած քրտինքս և բոլոր իմ սէրս, չար այդեղործ, քեզ հաճար է, և միայնակ քո անգթութեամբ տուած վէրքերդ եւս ինձ համար են եղեր: Կուլամ խեղճանամ և գիշեր ու ցերեկ իմ արտասուքներովս գետինը կը թրջեմ. բայց ինչ օգուտ, վայ ինձ. եթէ դու այդպէս միշտ քարսիրտ ես ինձ դէմ: Ուր գնեմ կը սիրեմ կ'ասես. աւաղ անգութ սիրոյս, որ ամեն կերպ աւելորդներէ վատ է: Յանձէք քո լացդ, դադրեցու քո բարկութիւնդ, պատասխան տուաւ խոհեմ երիտասարդը, վասն զի չես գիտեր դու իմ նախատեսութիւններս և միտքս. գիտցիր ուրեմն որ քո աղէկութեանդ համար՝ պէտք է որ ես քո հետ այս կերպով վարուիմ: Ի՞նչ քո օգտիդ համար հոգ ունեցեր եմ, և ինչպէս որ դու կը կարծես՝ քեզ դէշութիւն գործելու մը

ոչ ձեռքս վերադ դպցուցած չեմ. այլ այն իմ սրտիս մէջ եղածն, զոր դու անգթութիւն կը կարծես, ճշմարիտ սէր է: Նիթէ ես քո խոշորացած մեծցած ճիւղերդ չյապաւէի, եթէ թողուի զանոնք իրենց գլխնուն մեծնալին տարածուէին, անշուշտ օր մի եւս գլեզ քաղորովին չորցած ծառի կոճերուն մէջ կը տեսնէիր, բայց ես քո լացերդ մտիկ չընելով՝ անպիտան տերեւներդ և ճիւղերդ կտրեցի, նորա համար որ աւելի պտուղ տաս, և իմ կարծիքը ըրածէս աւելի Բադոան[1] ու Նրկինք նպաստամատոյց և յաջող պիտի լինին քեզ»: —Տղայք, դուք որ եթէ՝ ձեր վարժապետը պատժելու լինի զձեզ, իբրեւ բռնաւոր կը դանդատիք անորմէ, ուսիք այս առակէս և դիտցիք որ նոքա զձեզ սիրելնուն համար կ'ընեն: Դուք էք որ եթէ վարժապետն է դիտաւն այդեղործը. վայ այն խեղճ տղուն՝ զոր իւր վարժապետը չհամարձակիր յանդիմանել և պատժել, երբ չարութիւն և լքութիւն ընելու լինի:

Ա՛յ, որդեակք իմ, ձեր վարժապետայ անաչառութիւնն, նորա ձեր աղէկութեան համար ունեցած բարենախանձութեան նշանն է: Նորա ըրած պատերազմը ոչ եթէ ձեր անձին, այլ միայն ձեր պահպանութեանդ դէմ է: Նրքա կը ջանան անկարգութեանդ առջեւն առնուլ, որունք կրնան ժամանակի մի յետոյ այն ծլած

1 Բագաս ըստ դիւցազանից՝ ի գինւոյ չասչուած:

ընձիւղներէն ծագիլ՝ եթէ արմատ ձգելու վնասին ձեր հոգւոյն մէջ։ Օր պիտի գայ որ դուք եւս պիտի ձանձրանաք եւ ասիք՝ թէ երթալուն ու նին եղեր այսպէս լինելու. և չէ թէ նոցա հետ հակառակ լսելիք լինիք, այլ ձեր անկեղծ երախտադիտութիւնն եւս պիտի յայտնէք։

Այս իմ պզտիկ ծառս՝ փարձալ ամեն օր տեսանելիս է։ Ոնբան ազայք կան՝ որ երբ մեծանան՝ վատ կը լինին, և սորա պատճառն ուրիշ բանէ չէ գար, եթէ ոչ՝ ալրենք կրթող վարժապետաց չափազանց ներողամտութենէն, որով նոցա մտադիր հետակին մէջ հետեւեալ կը վարուին։ Հետեւեալ փոքրիկ պատմութիւնը թող ազատ լինի պզտիկ ծառիս, որ Տէր մեծարան աղբատաց ըստ ած գրքին ու նաեւ ուրիշ գրքերու մէջ կը կարդացուի։

Իւր մօրը ներողամտութեան ջոյն գնացող տղայն։

Երիտասարդին մէկը գողութեան պատճառաւ իւր ծանիկ հետակին մէջ դատապարտուելու էր կախուելու։ Երբ կախաղանին մօտեցաւ, իւր մայրը անգամ մի ցրցուցին էրեն, և տղան ուզեց որ նորա ականջին խօսք մի պզտիկ. ուստի երբ հրամանն եղաւ, մօտեցաւ իւր մօրն և բան խօսելու տեղ՝ ահռաւնեղով ականջին մէկը պինդ մի խածաւ փրցուց։ "Ձայր տղայ, ա սաց դատաւորն, ի՞նչպէս համարձակեցար այդ

անգթութիւնն գործել նորա դէմ, որ քեզ կեանք տուաւ։ — Տէր իմ, պատասխանեց ողորմելին, ահա այս է որ իմ վնաս անզգնել տուաւ այս չուանը։ Եթէ անխիղճ պատժելու ինձ զիս իմ ըրած մեղք մտքը դողութեան համար, զոր դպրատան ընկերներէս կ'ընէի, ի ժամանակին ես իմ վարքս և պահպանութիւնս հետաքրքիր կը լինէի. բայց նա ընդհակառակն կ'ուրախանայր և սիրտ կուտայր ինձ այս կերպով մեղանչելու։ Ով այն ատեն ինքն է պատճառ որ ես հիմայ դահճին ձեռքով պիտի կախուիմ և կորսուիմ"։

Ինն պատմութեան մէջ ուրիշ օրինակ մի կը կարդացուի, որով ապեկ կրնանք նմանալ թէ երիտասարդի մի վատ լինելուն քան պատճառինն իր գլխուն Թողութիւն նորա վարքը ուղղելու համար ամենեւին չկրնան։

Ինքն իւր անձին Թողութեան երիտասարդը։

Վիճակեսս բռնաւորն՝ երբ իւր իշխանութեան տակ ունեցաւ Վիճակի իւր անհաշտ թշնամին որդին, միայն ըսաւ նորա հօրմէն վրէժ առնուլ մտնալու՝ մտնալ անգթութեան կերպով մի, Թէպետեւ երեսանց քաղցր կ'երեւէր։ Ուստի փոխանակ պատանին տալու զորպան, կամ մուրճ բանտի մի մէջ դոցել տալու, ուզեց նորա միտքն աւրել և ոգւոյն բոլոր գե-

ղեցիկ ձիրքերը փճացընել: Այս մտօք մինակ դվսուն Թողուց որ իւր գաղանային յանկուցիչները կատարէ, և հրամայեց նաեւ որ ոչ ոք նորա կամաց չհակառակի: Ինքորձ երիտասարդը զուարճութեանց սիրոյն յափշտակուելով, տուաւ ինքզինքը խիստ մեծ անառակութիւններու: Երբ որոշեաւ իւր վերայ հոգ տանող մի ջունէր, ուսաի և ոչ իւր կրից սահմանակ յորդութիւնը կարելի էր բռնել և սանձի տակ առնուլ: Իւր բոլոր բաղձանքները կը կատարէր, և ըրած չարութիւնները գովութեամբ կը զուգուէր. վերջապէս ինկաւ մոլութեանց խիստ խորունկ անդընդին մէջ: Երբ բռնաւորը տեսաւ թէ միտքը դրածին պէս եղեր էր տղայն, այնուհետեւ ազատ իւր հօր մօտ զրկեց: Վիտն որդին գալուն պէս՝ գիտուն վարժապետապ ձեռք յանձնեց, որպէս զի անդադար հոգ տանին անոր և վարքն ու բարքը ուղղեն և կրթեն. բայց ամեն ինչ անօգուտ եղաւ, վասն զի փոխանակ զգաստանալու, այնպէս կատղեցաւ և մոլորեցաւ, որ օրին մէկը բարձր տեղէ մի վայր նետուելով և քներքը (չենէ պաշը) ջախջախելով յոտահատած մեռաւ:

Վիտեմ՝ թէպէտ շատ վարժապետներ և ծնողքներ տղայոց հետ չափազանց ներողամտութեամբ վարուելով, այսինքն նոցա գործած պակասութեանցն աչք խփելով և ներելով՝ տղայք միշտ այսպէս վատ չեն լինիր, բայց յետոյ միշտ անոնց դժբաղդութիւն մի կը պատահի, եթէ իրենց յանդիմանող և խրատող մի չունենան. վասն զի՝ կամ աներես կը լինին, և կամ մէկ յանցանք մի կը գործեն:

Թագաւորի մի գեղեցիկ խօսքերը:

"Իմ բոլոր տէրութեանս մէջ գաւազանները չեմ ուզեր օրդեօք գտնուեր . . . — կ'աղաղակէր օր մի Թագաւորին մէկը՝ երբ իւր հպարտութիւնն և անափառութիւնը Թողլով, խելքն ի վերան եկաւ. զորմնք քանի որ միշէր՝ կ'ամչնար և կը կարմրէր: — Ո՞նչու համար այսքան անհոգութեամբ հետս վարուեր են իմ վարժապետներս մատղաշ հասակիս մէջ, երբ խելքս բանի մի չէր հասներ: Ո՞նչ աղէկ սիրտ լինէր ինձ, եթէ խստութեամբ վարուելով յանդիմանէին և պատժէին զիս":

Ահա անոնք որ մանկութեան ժամանակին խիստ փափուկ կը մեծնան և կը կրթուին, և իրենց վարժապետը խիստ մեծ ներողամտութեամբ կը վարուի հետերնին, յետոյ երբ ջահտահաս որ լինին, այսպէս կը խօսին և կը գանգատին իրենց վարժապետներէն: Ասոր հակառակ կը տեսնենք որ խիստ մեծ անաչառութեամբ կրթուող անձինք աւելի երախտապարտութիւն կը ցուցընեն իրենց վարժապետացը, ինչու որ կը ճանչնեն թէ իրենց պակա-

առաքեանց համար կրած պատիժներին և քիչ անգամ աչք խոնեցնին՝ զերծանք սիրելուն համար է եղեր, որպէսզի մի ատելին և խրատուին ։

[Երիտասարդ իշխանի մի խնամատուն դատաստանք ։

Հարցուցին օր մի Պորինիայ երիտասարդ դքսին, Թէ իւր երեք դասընկերներէն ո՞րն աւելի կը սիրէր ։ “Յովհաննէս անուն ընկերս կը սիրեմ, պատասխան տուաւ . վասն զի նա իմ մասուշաշ հասակիս մէջ ամենեւին ինձ չէր խրնայեր , և ինչ չարութիւն որ ընէի , կ՚երեսայր վարժապետին կը զրուցէր որ զես պատժէ ։”

Ասկէ դուք եւս այս երիտասարդ իշխանին սիրել զանոնք որոնք զձեզ յանդիմանելուն և պատժելուն համար ձեր աչքին դուժկ դէշ կ՚երեւին ։ Խրատներն և պատիժները քան զըզ սէրն և քան զողջոյնդ ու թիւնն աւելի օգտակար են աշակերտի ։

Ո՛րքերնուդ մէջ վասն մի խորհիք ատելի, սիրելի որդեակք իմ, Թէ որ ձեր վարժապետներն երբեմն անաչառութեամբ հետեւինդ վարուին . այլ մանաւանդ երբեւ ձեր որդեսէր հայրը սիրեցէք զանոնք, որոնք ձեր ազիւ թեան համար կը ջանան և հոգ կը տանին ձեզ ։ Ա՛ի քանի վարժապետաց իրենց աշակերտներուն դէմ Թունաւ թեամբ վարուին և անոնց գործած ամեն պակասութեանց աչք խոնեցը՝ դէշ և

վնասակար է միշտ , երբ տհմանեալ խոհեմութեան չափէն խիստ դուրս ելնեն . և դիտցիք որ եթէ ձեզ մեծ ապստամբութիւն չհորհեն , ձեր թշնամութեան պատճառ կը լինին . և ընդհակառակն եթէ ձեր վերայ միշտ արթուն կենալով հոգ տանին , ա՛ն նաեւ հարկը պահանջած ժամանակ յանդիմանեն և պատժեն զձեզ , ձեր ճշմարիտ երջանկութեան ապահով ճանապարհ մի կը բանան ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Հնազանդութեան վերայ ։

Բաւական չէ ձեզ սիրուն զաւակունք իմ , միայն պատիւ , սէր եւ երախտագիտութիւն ցուցընէք ձեր դաստիարակաց և վարժապետաց , այլ և պէտք է որ հնազանդ լինիք նոցա ուսած խրատներուն և կրթութեանց ։

Թէ ոյնքան են դժուարութիւնք որ կը դիտուրեն ցուցայլ իրենց վարժապետաց հնազանդ լինել ։

Վարժապետները կամ դաստիարակները ձեր առաջնորդներն են . ուստի պէտք է ձեզ որ անոնց հետեւին երջանկ ։ Նոքա ձեզմէ աւելի քան գիտեն և ձեզմէ աւելի միտքերնին ըստուգութիւ է . նոցա համար պէտք է նոցա

խորհուրդները ձերինէրէն առնլի լաւ համոզիք : Ձեր ծնողքը զձեզ նոցա կառավարութեան յանձնելով, կ'ուզեն և ա որ հնազանդիք նոցա իրենց ամեն բանի մէջ : Այսու որոյ անհնազանդութիւն դործած կը լինիք ծնողաց դէմ, եթէ հակառակիք նոցա կամացն՝ որ ձեր ծնողաց փոխանորդներն են :

Այս իրաւունքներուս վերայ պէտք է որ ձեր միտքն լաւ մի պառկի, թէ խիստ արդար և իրաւացի է որ դուք հնազանդիք նոցա հրամաններուն, որոնք ձեր կրթութեան հոգն իրենց վերայ առած են :

Երիտասարդ իշխանի մի խելացի կրթութիւնը :

Պորիոնիոյ երիտասարդ դուքսը օր մի բարկութեամբ դէմ խօսեցած էր իւր պապուն, և իրենց վիճաբանութեան մէջ գլուխը տաք ցած լինելով, բերնէն սա խօսքը փախուց թէ՝ "Ցետնենք մեզմէ ոչ իրաւունք ունի" : Այդ մի քանի րոպէ անցաւ չանցաւ, մոռացեց նայեցաւ՝ որ իւր ըրածը չէր վայլեր, այլ պէտք էր հաւատնութիւն և հնազանդութիւն ցուցընել իւր պապուն . ուստի կրկնեց նորէն և ասաց . "Ի բաւունքը ձերն է, տարակոյս չունիմ, ինչու որ դուք ինձմէ աւելի խելացի էք" :

Հնազանդութեան օրինակ :

Պաթագորի աշակերտներն իրենց վարժապետին խօսքերն իբրև Աստուծոյ պատգամ կը համարէին, մինչ ալ մեկը չէր համարձակեր երկբայիլ նորա ասածներուն . վասն զի իւր լուսաւորեալ միտքն եւ համարումը բաւական փորձ էր իւր խօսքերուն . ուստի առակ եղած էր աշակերտաց մէջ, եթէ իրարու բան մի հասատել ուզէին՝ կ'ասէին . "Այսպէս ասաց վարժապետը" . և ամեն բան կը վերջանար : Փիլիսոփայն ուզեց որ իւր աշակերտաց մէջ լուութիւն մի հաստատէ, որ քիչէն քիչ երկու տարի կը տեւէր . և այն աշակերտներն որ խոսակցիլը կը սիրէին, նոցա համար մինչեւ հինգ տարի լուռ կենալու պատիժ կը դնէր, որուն սիրով կը համբերէին :

Հրեաներ թէ մեր ժամանակի տղայք և այսպէս պառաւ և հնազանդութիւն ցուցընէին իրենց վարժապետաց : Ջմիւռնիոյ պրոցեմ, տղայք սրտանց կը հնազանդին վարժապետաց հրամաններուն, միայն թէ ուզած բաներնին դիւրին և աշակերտաց սրտին սիրացն լինի, հակառակեալ մտիկ կ'ընեն անոնց, միայն թէ ա նոչ խօսքեր խօսին, կամ այնպիսի ձգնարատութիւններ՝ որ իրենց անձնասիրութեան չդպչին. բայց երբ իրենց կամացն հակառակ կենան, կամ իրենց սակաւութիւնները յանդիմանեն և շիտակել ուզեն, նախ տղայք կը սկսին մռմռալ և կը նմանին այն անմիտ մարդոց, որոնք կ'ուզեն որ ուրիշներն իրենց մտքի գործերը գտնեն .

և այսպէս խաբուելով կը մնան իրենց կուրա-
թեան մէջ, և անկարելի լինի յետոյ իրենց պա-
տուէրն և առաքինութիւն առանալ:

Ի՞նչ շահ կը կարծէք դուք որ լինէ մեզ ձա-
նապարհորդ մի, որ առաջնորդ բռնած լինի
իրեն ճանապարհը ցուցընելու համար, և ինքն
չուզելով նորա հետեւիլն երթալ, իւր ուզած ճա-
նապարհներն քայլէ՝ զոր ջանչէր: Կամ զա-
նիկայ խեղդի տեղ չէիք դներ, անտարակոյս.
վասն զի իւր միտքը դրած տեղն ուր որ է, հան
երթալու տեղ՝ գէշ ճամբաներու մէջ կը կոր-
սուի: Այդ՝ այս ճանապարհորդն անհնազանդ
ոգուն օրինակ է, որ իւր վարժապետոյ խելա-
յի խրատներուն ականջները գոցելով, ինքն
իւր անձը կատաւարել կ'ուզէ, և իւր կամքին
ի գաս ուրիշ առաջնորդի չուզեր հետեւիլ:

Կրթութիւն և վարժութիւն չընդունող
ազգին կը նմանի սովորաբար կրակոտ ձիու, զոր
մարդ վարժեցընել կ'ուզէ: Ոմանք զայն մի վար-
պետ ձիավարժի որ կրթէ. եթէ կենդանին ա-
մենեւին չուզէ, գլուխը պինտ լինի, և սանձ
մտիկ չընէ, բարկանայ, չուզէ գնալ կամ վա-
զել՝ ինչպէս որ տէրն կը կամի զինքը կրթելու
համար, պարապ կ'երեւին ձիավարժին քաշած
նեղութիւնները, ձին միշտ անվարժ կը մնայ,
և ամենեւին բանի մի չծառայեր: Այդ այսպէս
կը լինի այն ոգուն վիճակին որ մտիկ չընէը իւր
վարժապետին խնամատարն խրատներուն, որ զին-

քը կրթելու յանձնառու եղած է:

Կ'ուզէք մեկ ուրիշ նմանութիւն ալ բե-
րեմ ձեզ, որ լաւ մի հասկնաք՝ թէ հնազան-
դութիւնը որքան հարկաւոր է տղայոց: Ջա-
նեցէք արտի մի մէջ, որուն հողը բնութեամբ
պարարտ լինի, խիստ բնական հունտ. եթէ
հողն իւր ներսը չընդունի զայն, եթէ հոգ չը-
տանիք ծածկել նորա վերայ՝ որ ծլի, դէպ ի հո-
վուն ցանած կը լինիք և չէք կրնար պտուղ մի
յառաջ բերել: Նոյնպէս կարող եմ ասել ան-
հնազանդ և կամակոր ոգու մի համար: Պա-
տրաստ տեղ կը ցանէ վարժապետն նորա միտց
մէջ գիտութեան և առաքինութեան հունտը.
փուշը կ'երթայ նորա տրտում խիստ օգտա-
կար կրթութիւնները, վասն զի իրենց վարժա-
պետոյ ջանքերուն հնազանդութեամբ չհե-
տեւելով, և իւր կողմէն ինքն ևս ջանք չընե-
լով, անօգուտ տեղ կորսնցուցած կը լինի իւր
ժամանակն և աշխատութիւնը, և նոյա տը-
ւած դասերն անպտուղ կը մնան:

Ջանք ըրէք, սիրելի որդեակք իմ, շահ մի
կրթելու այս դասէս, և զգոյշ եղէք չհետեւիլ
բնաւ այն անհնազանդ ոգւոյց անդոնելի վար-
մունքին, որոնք չեն ուզեր ուրիշին գլուխ ծռ-
ռել, այլ կը համարձակին իրենք ուրիշին օրէնք
տալ, Նարեկացւոյն գրուցածին պէս՝ "Ուշա-
կերտք հեզոյ ի յուսանել՝ և փոյթք ի վարդա-
պետել": Այս տասը տղայոց մէջ կան նաեւ

այնպիսիները , որոնց անհնազանդութիւնն եւ կամակորութիւնը խիստ չափազանց լինելով , դրեթէ անբան անասնոց կը նմանին : Ահա ձեզ փորձի համար սորա վերայօք օրինակ մի տամ :

Գաղղիացի ազնուական պարոնին մէկը մի ածին տղայ մի ունէր , և բնութիւնը շնորհեր էր նորա բոլոր այն ձիրքերն՝ որոնցմով տղայ մի կրնայ սիրելի լինիլ ամենուն . բայց միանգամայն անհնազանդ և կամակոր բնութիւն մի ունէր , որուն չէին կարող համբերել իւր վերակացուներն և վարժապետները : Չկրնալով ամենևին մէկուն դլուխ ծռել , կ՚ուզէր որ ուրիշներն իւր կամաց հնազանդութիւն ցոյցն . և եթէ մէկն ի բուն դէմ կենար , այնպէս յամառութիւնը կը բռնէր՝ որ կարծես թէ խենդեցեր է : Օր մի իւր հայրը դուրս եղած լինելով՝ խելքին այն պէս փչեց և ուզեց որ ինքն եւս դուրս ելնէ , և պտտզութեամբ մի կը հրամայեր որ դուռը բրեն բանան : Բայց երբ մանկավարժ կինն անոր դուռ սեղն նորա իրաւունք հասկնալէն ետեւ յայտնապէս ատոր իրեն թէ՝ ուզածդ ջրիսի լինի , տղայն է սկսաւ լալ և կանչըրտուել . և չկրնալով յաղթել մանկավարժ կնկան՝ որ ուզածը չէր կատարեր , և դուռն եւս բացուելէն յետը կորելով , վասն զի բանիքսալ կզպեր էին որ չիսիչի , ինկաւ գետինն և չարութենէն ինքզինք գետնէ գետին կը զարնէր՝ ամապտըխը բռնած խենդի պէս : Ա յս միջոցիս նայիս

հայրը տուն դարձաւ , և տղայն չտեսնելով՝ հարցուց մանկավարժ կնկան թէ՝ ո՞ւր է , և թէ ի՞նչպէս կեցաւ , խելքը կը թէ ոչ . և նա պատմեց իրեն ինչ որ ըրեր էր : Հօրը սիրտը նեղացաւ նալով՝ սրահը կը մտնէ , ուր տղայն երեսն ի վեր փռուած պառկեր էր , դուռ չտեսնելու գալով՝ ոտքով գետնին կը զարնէ , ձեռքերը դէպ ի երկինք կը վերցընէ , և սրտին խորունկ հառաչանք մի հանելով կը գոչէ : «Ա՛հ , Աստուած , ի՞նչ կը լսեմ , իմ որդիս խենդեցե՞ր է . հա՛ , և այնքան խենդեցեր է որ կապուելու չափ ինքզինք գետնէ գետին կը զարնէ : Ա՛յս , ասիկա ինձ . ուրեմն ես ասկէ յետոյ այն քաղցր միխիթարութիւնը չը պիտի ունենամ իմ մօտս տեսնելու զաւակս , թեւերուս մէջ վնասը գրկելու , սիրելու և իմ սիրոյս օրէ օր նոր նշաններն անոր ցուցընելու : Ուրեմն պիտի ստիպուիմ վռնտել զինքն իմ տունէս , բանտի մի մէջ կապել տալ . և այն զաւակս որ իմ ուրախութիւնս էր , իմ սրտիս ցաւը և երեսիս ամօթը պիտի լինի : «Ա՛հ Աստուած իմ , եթէ դիս պատժել ես միայդ , ան՛ր ինձմէ կ՚առնես իմ հոգիս , այլ սիրական զաւկիս խելքը դլուխը բեր : Ա՛ռաւել կ՚ուզեմ մեռնիլ , քան թէ խենդեցած տեսնել իմ որդիս , և իմ կեանքս ցաւով մաշեցընել» :

Երբ հայրն այսպէս կը խօսէր , ցուցընելով միշտ թէ ի՞նչ յուսահատութեան մէջ է իւր տղուն համար , տղայն՝ որ սեղանի մի տակ պահ

ուբուած էր սրահին մէկ ծայրը, իւր հօրն ամեն մէկ շարժմունքներուն կը դիտէր, լուռ թեամբ մոխիկ կ'ընէր ամեն ղուրացածները. ձեզ կը թո՛ղամ որ մտածէք թէ ի՛նչ վիճակի մէջ էր նա այն ժամանակ։ Կը դողար, կը կաթմըէր, և չէր կրնար ինքզինքն յայտնել։ Այսաւ ամենայն նիւ իւր սրտին ցաւն այնքան սաստիկ էր, որ մէկդի թողուց ամէնքը. և ինչ սաեն իւր հայրն՝ որ միշտ ոտքի վերայ վեր ու վայր կ'երթար կատաղի, ոտքերը գետնին զարնելով, և աղուն սրահուբուած տեղին դիմացի կողմին կ'անցնէր, տղայն սկսաւ դողդողալ նորա եաեւէն երթալ մինչեւ որ իւր հայրն եաս դառնալու ժամանակ որ անդադար կը գոչէր, "Ով Աստուած. իմ զաւակս, իմ սիրական զաւակս խեղդեցաւ։", ինկաւ տղայն նորա ոտքերն և ասոց սաստիկ լալով. "Ձէ, չէ, հայր իմ, քո զաւակդ խեղդեցած չէ. մանաւանդ խոսք կուտայ քեզ որ ասկէ յետոյ խիստ խելօք պիտի կենայ։" Այս խոսքերը լսելով բարի հայրը նորա վիզը կը փաթթուի, գրկին մէջ կը սեղմէ, արտասուքներով կը թրջէ և սիրալիր փայփայանքներով կը յայտնէ անոր իւր հաճութիւնն և սրտին ուրախութիւնը։ Դայց առաւել միխիթարուեցաւ հայրն, երբ տղայն խոսքին վերայ հաւատարիմ ձնաց, և յետոյ խիստ զգոյշ եղաւ իւր ամեն մէկ պարտաւորութիւնները հաստատ կատարելու։

Վարմանի կամքին նամակներուն մէջ եւս ուրիշ այս տեսակ պատմութիւն մի կը կարդայուի, որուն չէի հաւատար՝ եթէ արժանահաւատ մարդիկներէ հաստատուած չլինէր։

Կամակորութեան շարմանալի օրինակ մի։

Տիկին մի միածին զաւակ մի ունէր, զոր այնքան կը սիրէր և կը դողայր վերան, որ ամեն ինչ որ ուզէր՝ մէկէն կը կատարէին. և ամենեւին չէին լսեր որ չհնազանդեր, այնչափ որ սրբազան տան մէջ փոքրիկ բռնաւոր մի դարձած էր, և իւր խօսքն յառաջ կը տանէր. իսկ եթէ հակառակէին իրեն, իսկոյն կը կատղէր կը պոռայր և կը կանչուըտէր։ Տիկնոջ այրը, տղայ կանանչին եւ բարեկամները լսելով հակիրճ նէ կ'ուզէին իրեն՝ թէ այս չափազանց սիրով իւր զաւակը դէշ պիտի բնէր։ Օրին մէկը մայրն իւր իրսին մէջ նստած ժամանակ տղան ձայնն ականջին կուգայ, որ բակին մէջ աստիկ կայսր և կաստղաթենէն երեսները կը ճանկէր, ծառայն իւր ուզած բանը չտալուն համար։ "Ձա՛ծառայ, պօռաց տիկինը, իրաւցնէ դուռ լերը մ' ես եղեր, որ իմ զաւկիս հոգին կը մաշես և ուզածը չես տար. աղէ, շուտով հնազանդէ անոր, և ինչ որ ի'սաէ՝ ըսէ։—Ո՛չմարխա ի'սաեմ տիկին, պատասխանեց ծառայն, երեք օր այսպէս կանչէ պօռայ, չկրնար իւր ուզածն տա-

նուլ»։ Ա՛յս պատասխանիս վերայ չափէ դուրս կը բարկանայ տիկինը, այնպէս որ մազ մնացեր էր ջղային ցնցումէ պիտի դայր վերան. կ՛ելնէ տեղէն, մէկ խօսքէն միւսը կը վազէ, իւր այրը կը տեսնէ հոն բարեկամաց հետ մէկտեղ նըստած, և կ՛աղաչէ որ իւր եռեւէն դուրս գայ և այն անհնազանդ ծառային շուտով ճանապարհ տայ։ Ա՛մուսինն, որ հինգան խելքով մարդ մի էր, և իւր հինգ վերայ չէր կրնար խլեցել, ինչպէս և ոչ կրնար իւր տղուն վերայ, ուսերը տընկելով կ՛երթայ նորա եռեւէն. և իւր բարեկամները պատուհանը կուգան կը հաւաքուին՝ որ տեսնեն թէ բանին վերջը ուր պիտի կայանայ։ “Լ՛երը, ասայ ահերը ծառային, ինչպէս հանդարտութեամբ դուռ դէմ կենալ հինգս, մեր տղուն ուզածը չտալով։ — Տէր իմ, պատասխան տուաւ ծառային իւր ծիծաղը բռնելով, ձեր տղուն ուզած բանն ինչ որ է, թող իւր սիրական մայրը տայ, ևսան ալ ես չեմ կրնար։ Քառորդ ժամ չկայ, ջրի դոյլին մէջ լուսինը տեսաւ, և կ՛ուզէ որ իրեն տամ զայն»։ Ա՛յս որ լսեցին այրն ու բարեկամները, սկսան խնդալէն ճաթիլ. և տղուն մայրն ևս թէպէտ բարկութեան մէջ էր, ծիծաղը բռնեց, և ամչցաւ իւր ըրածին. բայց շատ լաւ եղաւ իրեն այս բանս, ևսան ալ ատոր վերայ ինքն ևս խնդացաւ՝ թէ որքան դէշ կ՛ընէր իւր զաւկին՝ չափէ դուրս սիրելով զայն. ուստի անկէ յետոյ սկսաւ այնքան երես չտալ

անոր, խստութիւն ցուցընել և երբեմն ևս պատժել, որով եղաւ սիրելի և խելօք տղայ մի։ Ո՛չմարիտ կ՛ասեմ, տղայ մի որ կամակոր և դուռոզ է, անկէց աւելի անարդ և աւելի տղայ չկայնիր։ Ա՛յս բնութիւնն ունեցող տղայոց վերայ պէտք չէ հոգ և խնամք ունենալ, և շատ անգամ երեսէ ինկնելով՝ իրենց արտասուոց կաթոյն և գլխնուն թողուած են։ Բայց ընդհակառակն հնազանդ և խոնարհ տղայք միշտ սիրելի կը կրնին, զերծնիք կրթելու և ուսում տալու եւս յոժարութիւն կ՛ունենայ մարդս. վասն զի սայդ գիտէ որ իւր տուած խրատներն եւ դասերը օգուտ պիտի բնեն անոր, և նոցա պիտուն օր մի պիտի տեսնէ ինքը։

Աշակերտի մի ցարմանալի հնազանդութիւնը։

Փիլոսոփայի մէկին խնամալով թէ իւր աշակերտներէն մէկը յանցանք մի գործեր էր, մօտը կանչեց տղայն և ատոյ ասոր. “Նշան գործած յանցանքդ չեմ ներեր մինչեւ որ երեք տուրի հարեւրութեամբ անարգանք և նախատինք կրես»։ Տղայն ընդունեց իւր վարժապետին դրած տուգանքը. և երեք տարին լմնանալուն, նորա մօտ դնաց որ թողութիւնն առնու, ինչպէս որ կը յուսար։ “Վեցիր, ասայ վարժապետը, դուռ եկար որ թողութիւն առնուս, բայց ես և ոչ հիմայ պիտի տամ, մինչեւ որ ե-

քեք տարի եւս քո դրամով նախատինք եւ ա-
նարգանք չկրես »։ Աշակերտը նորէն հնազան-
դեցաւ այս երկրորդ անգամու փորձին, եւ հը-
րամանը կատարելէն յետոյ՝ « Հիմա Թոզա-
Թիւն կը շնորհեմ, ասաց վարժապետը, եւ կրկ-
նա սակէ յետոյ Ա՛ԼԻՆՔ երթալ եւ խնամու-
Թիւն ուսանելու։ Գնաց հան երիտասարդն եւ մէ-
ուտ փիլիսոփայի մի քով։ Այս փիլիսոփային ա-
ղօթուԹիւն ունէր նորեկ աշակերտաց համ
բերուԹիւնը փորձելու համար նախատական
խօսքեր կը զրուցէր նոցա, ուստի այս նորեկ ա-
շակերտն դէմ առաջին անգամ դպրոցէն ներս
ոտք կոխելուն եւ վարժապետին իրեն դէմ ըրած
նախատինքները լսելով, սիրտ ծխծաղիլ եւ ձայն
չհանել։ Ո՛ւրմնցուց վարժապետն եւ ասաց.
« Այս գլքեղ այսքան ծաղր կ՛ընեմ կը նախատեմ
եւ դուն կը խնդաս » ։ Պատասխան տուաւ աշա-
կերտը. « Այս երեք տարի դրամ տուեր եմ մար-
դոց որ զիս նախատեն. հիմայ այնպիսի մարդ
մի գտեր եմ որ առանց դրամ մի ինձմէ զգա-
հանջելու՝ աւելի զսպաւ կը խօսի եւ կը նախա-
տէ զիս, եւ չեմ ուզեր որ ծխծաղիմ։ — Ա՛տիր
ներս իմ դպրոցս, կրկնեց փիլիսոփան. դուն կա-
տարեալ ես և կրնաս ուսանիլ իմ դաս տուած
գիտուԹիւններս »։

Ո՛նացէք, սիրելի որդեակք իմ, այս գե-
ղեցիկ օրինակիս հետեւելու։ Պարապ համարե-
ցէք ձեզ վարժապետին խրատները մտիկ ընել

ըլլն, որոնք ձեր ուսման եւ ձեր բարի վարուց
համար կուտան, իրաւ քիչ մի նեղուԹիւն է
ձեզ, բայց պիտնաք՝ որ եթէ բանելու լինիք,
շատ յառաջ կ՛երթաք գիտուԹեան եւ առաքի-
նուԹեան մէջ եւ առատօրէն կը վարձատրիք։

Այս եւս պիտնաք, որ այն նեղուԹիւննե-
րըն երկար չեն տեւեր. եւ ժամանակ պիտի գայ
որ դուք ձեր գլուխն ազատ պիտի լինիք եւ հը-
րամայող չպիտի ունենաք հնազանդելու պէս, եւ
վտանգի մէջ ինկնելու եւս երկիւղ չպիտի ու-
նենաք։ Իսկ հիմայ եթէ ազատ լինիք, շատ գէշ
կը լինի ձեզ, ինչպէս որ փորձն եւս կը հաստա-
տէ. վասն զի եթէ տղայ մի ինքն իւր գլխուն
Թողուի, միշտ դէպ ի իւր կորուստը կը քայլէ
կ՛երթայ նա։

Վերջապէս որ եւ իցէ ազատուԹիւն՝ զոր
այս աշխարհիս մէջ մարդս կը վայելէ, հետզ
հետէ միշտ ընդդիմուԹիւն մի կ՛ունենայ. եւ եթէ մէ-
կուն իւր ընկերոջ հետ սիրով ապրիլ կ՛ուզէ,
պէտք է որ շատ անգամ ուրիշին կամաց խո-
նարհի, պէտք է անոչ եւ հեզ բնուԹիւն ու-
նենայ, պէտք է որ բան մի տեսնելու կամ լսե-
լու որ լինի, չտեսնելու կամ չլսելու զարնէ. եւ
յանձնառու լինի այն ամէն բաներուն՝ որ իւր
անձնական պարտաւորուԹեանց եւ խղճմտա-
նաց չդպչիր։

Այն մարդն որ ուրիշին կամացն ամենեւին
հաճուԹիւն չտար, այլ հպարտուԹեամբ կ՛ու-

ջէ որ ուրիշներն ամեն պարագայի մէջ իրեն միաբանին, նա իւր անձն առելի կ'ընէ, և հեռուեսէա՝ կամ շատ կամ ուշ իւր հպարտութեան եւ կամապաշտութեան պատիժը կը գտնէ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Տղայք իրենց ընկերաց հետ ինչպէս պէտք է վարուին։

Ձեր ծնողքներէն եւ վարժապետներէն յետոյ կը մնան ձեր հաւասար ընկերները, որոնց հետ կը վարուիք, և որոնց հետ առելի կապակցութիւն մի ունիք. այս ընկերական կապակցութիւնը պէտք է որ պահանց լինի, որ պէտ մի իրարու վերայ ունեցած ձեր յարգն և սէրը հաստատուն լինի, ուսկից կը կախուի ըստ մեծի մասին ձեր կենաց հանգստութիւնն և երջանկութիւնը։ Այս տեղ պիտի ցուցընեմ ձեզ, սիրելի զաւակունք իմ, այն գլխաւոր պակասութիւնները, որոնցմէ հեռանալ պէտք էք դուք ձեր ընկերաց հետ վարուած ժամանակ։

Առաջին դիտողութիւն։

Այս ատած պակասութիւններուն առաջինն է գոռոզութիւնը, որով մենք զմեզ ուրիշներէն վեր կը համարինք, կամ ինքզինքնիս խիստ խե-

լացի մարդոց տեղ դնելով, և կամ երեւելի և աղնուական ցեղէ զմեզ համարելով։ Այս պակասութիւնն թող որ քրիստոնէութեան եւս դէմ լսվին հակառակ է, որ կը հրամայէ իրրեւ եղբայր նկատել ցկրաք, այլ եւ մեծապէս առելի կը յուզընէ զմեզ մեր ընկերաց աչքին, և պատճառ կը լինինք արհամարհութիւն կրելու ա նոնցմէ, ինչու որ մենք պիտինք արհամարհելու խիղճ չեմք ըներ։

Գոռոզութեան դատիժը կրոց երիտասարդը։

Երեւելի վարժատան մի մէջ կրթուող երիտասարդ տղայոց հետ մի աղնուականի տղայ եւս կայր, որ իւր աղնուութեան վերայ խիստ կը հպարտանայր, և ինքն իւր անձին վերայ միշտ պարծենալով կարծես թէ յերկինից իջած էր։ Այսպէս նորա այսպէս մեծ մեծ խօսելուն չկրնալով համբերել ընկերները, սկսան առելու թեամբ նախ անոր երեսը։ Այս առ ամենայնիւ շատերն եւս տեսնելով թէ նորա ինքնապարծութիւնը և հպարտութիւնը թեթեւամտութեան նշանն էին, կը խղճային իւրեան։ Այսպէս մի եւս հպարտութեամբ այնքան խոշոր խօսքեր բերաց, որ ամենքն սկսան արդարել իրեն դէմ։ Իւր դասընկերներէն մին եւս, որ հասակաւ մարդու որդի էր, և գոռոզ տղային հետը միշտ կը զուարճանայր, իւր հաւասար ընկերը

կարծելով, կամ համարելով թէ դպրոցին մի բոլոր աշակերտները հպարտ եւ աղքատ ազգենէն հետաւոր են, սկսաւ անխորհրդաբար վարուիլ հետը, ինչպէս որ միւսներուն հետ կ'ընէր. բայց մեր հպարտ ազնուականը կարծելով՝ թէ այնպէս վարուելովն իւր պատուէն պակսած կը համարուի, սրտողեցաւ եւ գոռոզութեամբ ու խիստութեամբ մի առաջ. "Այդ ինչպէս վարուիլ է, լմնդ. չես գիտեր որ ես սէյի մի զաւակ եմ" : Այս մէկ ջուխտ խօսքով բոլոր աշակերտաց առջեւն խաղք եղաւ. մէկ մ' ալ նայիս ամենքն չորս կողմն հաւաքուեցան, որոնք կեղծաւորութեամբ գետնէն բարեւ տալով անոր, իւր պատուասէր անունն երիտ մէկ էլ սաբր կը կանչէին ականջն ի վայր : Այսքան բաւական չեղաւ, այլ քանի որ դասընկերներէն մին երեն հանդիպէր, նոյն կեղծաւոր քաղաքավարութեամբ կը պատուէր զինքը Պէյ կանչելով : Վերջապէս բանն այն տուիճան հասաւ որ գոռոզամիտ աղային այլ չկրնալով համբերել նոցա ըրած ծաղրաբանութեանցը, սակայն հետեւանքն վարժատունէն. և փորձով ուսաւ թէ՝ անպարծութիւնն և հպարտութիւնն ուրիշ բանի մի օգուտ չունին, բայց եթէ ամենուն աչքին առելի ընելու զանոնք՝ որ կը ցանկան ուրիշներէն վեր դասուիլ :

Հետս ուրիշ ձեղմէ ամբարտաւան վարմունքներն և արհամարհոտ դէմքով մարդու

երես նայիլը, որով կ'երեւի թէ զուրիշները նախատելու համար կ'ընեն : Նոյն քաղաքավարութիւնը դէմ՝ և դիտցած եղիք որ դուք նոյա հետ ինչ կերպով որ վարուիք, նոքա եւս նոյն կերպով կը վարուին ձեզ հետ : Մէկ պերճ պատուէր՝ նոքա եւս զձեզ կը պատուեն. իսկ եթէ առէք՝ նոքա եւս զձեզ կ'առնեն, վերժիտղ կը լինին, մինչեւ որ ձեր քիմքը կտրուին :

Գոռոզ տղու մի խոնարհիչը :

Փարիզու օրագիրը ճանապարհորդի մի բերնէ լսելով հետեւեալ պատմութիւնը հրատարակած էր, ուսկից մենք եւս քաղելով այս տեղ կը դնեմք : "Դոզոզային եւս դասնալուս, կ'ըսէ ճանապարհորդը, Փարիսասնայէն անցայ, ուր տեղ միայն չորս ժամ մնացի. և պանդոկի մի մէջ նստած կրսպասէի որ սեղան պատրաստեն, ուր ուրիշ շատ ճամբորդներ եւս կային : Իմ հանեցէք քիչ մի յետոյ, Փարիզու կառքով երիտասարդ մի եկաւ նոյն պանդոկը. սրահէն ներս մտաւ, վայելուչ և հնարքով հագուած, սրգուած, և առանց մէկուն բարեւ տալու՝ անցաւ հպարտի մի դիմաց, և իւր վրնջոտ ձեւ դէմքովն վերայ վրանալով և օդերայի եղանակ մի երգելով, սկսաւ բոլոր այն տեղ գտնուողներուն արհամարհոտ դէմքով մի դիտել ու

նայել յոտից մինչեւ գլուխն : Ուրիշ երիտասարդ մի եւս պարզ հագուստով, որ հին մեկ կողմը նստած գիրք մի ձեռքը կը կարդայր բազմաթիվն խելքն նորա տալով, և ամենեւին աչքը վեր չէր վերցներ երիտասարդին նայելու. որուն դժարը գալով նորա այնպէս անհոգ անտարբեր կենալը, կը մօտենայ քովը, կէս բերան քարեւ մի կուտայ ու կ'ասէ. " Հրամանքնիդ կը կարդաք այդ տեղ : — Հրամերնէք, ինչպէս որ կը տեսնէք, պատասխան տուաւ երիտասարդը : — Ի՞նչ գիրք է կարդացածնիդ, եթէ հարցընելս ամօթ չէ : — Կատակերգութեան գիրք է : — Ի՞նչ է անունն, ի՞նչ նիւթի վերայ է, որուն այսքան խելքերնիդ տուած էք, և ամենեւին ընկերութեան չէք խառնուիր : — Հետաքրքիր գործ է. պատասխանեց կարդացողը՝ քիթին տակէն ծիծաղելով " : Հարցնողը խիստ աղէկ իմացաւ նորա միտքը, կատարմիր կարմրեցաւ երեսն, և թոթովելով մի ատայ ատ նոր. " Կրնայի՞ գիտնալ արդեօք ձեր անունն, որ այսպէս արհամարհութեամբ պատասխան կուտաք ինձ : — . . . . ին ասպետն եմ, որ . . . . այս ինչ գործդը կ'երթայ : Լաւ իմ անունս պէտք է որ ճանչէք : Լաւ լսեցէմոս ձեր հայրը շատ անգամ կուգայր իմ տունս զանազան կերպարանք ծախելու " : Հետը վերայ սրահին մէջ ոչքան մարդ որ կայր՝ ամենքն եւս քրքրոց մի ձգեցին : Պարոնին երեսին գոյնը նետեց, և ա-

ռանց բերան բանալու աներեւոյթ եղաւ անկէ " :

Համեստ Թագաւորը :

Ալեքսանդրէս Մակեդոնացի Թագաւորը կատարգործի մի որդի էր, բայց իւր անձնական արժանաւորութեանց համար Թագաւորական իշխանութեան հասեր էր : Հայտնաբերի իշխանն իւր սորին սահմանել լինելը չմոռնալու համար, կ'ուզէր որ ամեն օր իւր սեղանին վերայ դրուին ոսկիէ և արծաթէ ամաններուն հետ մեկտեղ հողէ ամաններ եւս, զորոնք իւր սեղանակից երիտասարդներուն ցուցընելով. " Հա, կ'ասէր նորա, այս ամաններս ես իմ ձեռքս կը շինեմ ժամանակաւ : Եթէ հիմակուան գործածածներս առնուամբ աւելի սուղ և պատուական են, և եթէ կաւին տեղը հիմակ ոսկի և արծաթ կը բանեցընեմ, այն իմ անխոնջ աշխատութեանս և իմ քաջութեանս արդիւնքն է " :

Օրինակ ազնիւ համեստութեան :

Փող ասպետն, որ լուացարար կնկան մի որդի էր, փոքրիկ նաւակի մէջ ձնաւ սոսկալի փոթորիկներու ժամանակ : Երբ մեծացաւ նա, ուռաջ նաւու մանչ եղաւ, և յետոյ մինչեւ ծովապետութեան աստիճան հասաւ : Օր մի Նորը

սիրեալ Նազարեթիտը ժառ գաղթել Նազա-
րեթի մի քանի պաշտօնատարաց հետ, Նազա-
ար մի տեսաւ, որ իւր հին բարեկամն էր, և կը
յանկարծ սկսաւ սիրտ ինքը տեսնելու, այլ չէր
համարձակեր նորա մօտենալու: Փոխ ասպետն
խնդալ նորա վարքէ, մեծեցաւ քովը բարեկա-
մաբար և ասաց. "Ո՞ւրեք հետս կը վախչիս
ինձմէ, գուցէ կը կարծես դու՝ թէ բաղդը մո-
ցընել ուզաւ ինձ իմ բարեսիրտ բարեկամնե-
բուս»: Այսքն իւր հետն եղող մարդկանց դար-
նալով. "Պարոններ, ասաց նոցա, ահա իմ հին
ընկերներեաս մէկը: Եթէ բաղդն ինձ յաջող
նորա հակառակ գնաց, ես այս բանիս համար
սորա վերայ ունեցած յոյգս չեմ պակաեցըներ
և առջի աչքովս կը նայիմ: Համբերեցէք մի
քիչ որ նորա հետ առանձին բերան առ բերան
խօսակցիմ»: Ամենքն մէկէն զարմացան նորա
այնպէս ազնուական և խոնարհ վարմունքին վե-
րայ:

Ամենուն քով աւելի են այն մարդիկն, որ
կը ջանան ծածուկ պահել իրենց առաջին ա-
նարգ վիճակն, և իրենց անմիտ վատասիրու-
թեամբ ծաղր և ծանակ կը լինին ամենուն:

Երկրորդ դիտողութիւն:

Երկրորդ պակասութիւնն, ուսկէ պէտք էք
հեռանալ, այն վատ սովորութիւնն է, որ առա-

ջել տալոց վերայ կը տեսնուի, այսինքն ուրիշ-
ին յանցանքն իւր ընկերոց յայտնել:

Ընդհանուր թիւնը դժուարին կատարելի
կերպարանօք կը նկարագրեն, ձեռքը վառած
ջայտ մի, և գլխուն վերայ իրարու խառնուած
անհամար օձեր, որոնք ամեն կողմ իրենց առե-
լութեան թոյնը կը թափեն: Սորա դործն է մի-
այն ամենուն սրտին մէջ անմիաբանութիւն եւ
թշնամութիւն ցանել, ուստի ամեն մարդ բան-
սարկուի տեղ դնելով ինքը կ'ատեն և քովէն
կը վախչին:

Բայց եթէ մէկը, որ ձեր վերայ իշխանու-
թիւն մի ունի, այսինքն կամ վարժապետիդ և
կամ հայրերնիդ՝ գաղտուկ հարցընելու լինի
ձեզ այս կամ այն տղուն կամ մարդուն վերայ լսած
յանցանքները, զոր դուք գիտցած լինիք կամ
կարող լինիք իմանալու, պէտք չէ այն ժամա-
նակ ծածուկ պահել անորմէ և լուռ կենալ:
Ասան ալ այսպիսի պարագայի մէջ պարտաւոր
էք գիտցածնիդ խոսել, որպէս զի մոլութեան
առջեն առնուի. Թէպէտ և այսպիսի առիթ-
ներու մէջ զգուշութիւն եւ խոհեմութիւն
պէտք է բանեցընէք որպիսի ձեր գիտցածը խոս-
սիք, և ամենեւին երկբայութիւն ունեցած չը-
լինիք նորա վերայ:

Ամէն ի զուր պէտք չէ ուրիշին պակասու-
թիւնները խառնուիք և քննիչ լինիք, այլ մի-
այն նայեցէք որ ձեր ունեցած պակասութիւնե-

րը ճանչէք և զանոնք ուղղէք , վասն զի մարդս իւր պակասութեանց մասին կույր կը լինի և տա-
վղաբար այլոց ունեցածները կը տեսնէ :

Նաեւ չէ թէ ուրիշին պակասութիւնները միայն պէտք է որ ծածուկ պահեմք , այլ և մեզ
տրուած գաղտնիքները : Այսն զի եթէ զանոնք յայտնեմք , մատնութիւն ըրած կը լինիմք նո-
ցա . և սակէ աւելի կշտամբութեան արժանի և աւելի բան չլինիր . բայց դուք նայեցէք որ
տղայոց մէջ սակէ հասարակ բան չկայ : Ասանց մտածելու՝ ինչ որ տեսնեն և լսեն , այլոց կը
պատմեն , և իրենց պատուիրելու եւս լինին՝ թէ սամենեւին մէկուն բերան չբանան , նոցա
պատուէրն եւս չեն բռներ , թէպէտ և խօսք կուտան մէկուն չյայտնելու : Ինչ մարդիկ գըտ-
նուեր են որ իրենց տրուած գաղտնիքը չյայտ-
նեն , թէպէտ և խիստ բռնադատած լինին :
Հռովմայեցւոց պատմութեան մէջ այսպիսի
օրինակ մի կը կարդացուի , որ շատ դեղեցիկ լի-
նելուն կ'ուզեմ այս տեղ դնել :

Հռովմայեցի երիտասարդի մի սքանչելի խեղացիութիւնը :

Ատենօք սովորութիւն կայր Հռովմայե-
ցւոց մէջ , որ ծերակուտի անդամներն խորհրդ-
դարան գացած ժամանակ՝ հետերնին կը տա-
նէին իրենց որդւոց մէջէն նախանձելիները , թէ-
պէտ և տասն և չորս տարին դեռ լրմնցուցած

չը լինէին : Օր մի խիստ հարկաւոր գործի վե-
րայ խորհուրդ կ'ընէին , բայց նոյն օրը վրնա-
լով որոշել , պէտք եղեր էր հետեւեալ օրուան
ձգել , ուստի մէջերնին խօսք դրին որ ամենեւին
մէկուն չխօսին , մինչեւ որ գործը վճռաբար չը-
րուշուի : Փաբիրիուս անուն պատանին նոյն օրն
իւր հօր հետ ժողովին մէջ կը գտնուէր , և տուն
դառնալուն՝ հարցուց մայրը , թէ ժողովին մէջ
այսօր ինչ բանի վերայ խորհուրդ եղաւ : Պա-
տասխան տուաւ տղային , թէ արգիլեալ է ի-
րենց որ ամենեւին որ և իցէ մէկուն չխօսին : Այս
մէկ խօսքս մօրն այնքան հետաքրքրութիւնը
շարժեց , որ տղային որքան հաստատ կը կենայր
և չէր ուզեր խօսել , մայրն այնքան վերան ինկաւ
որ պղտցել տայ : Վերջապէս պատանին տես-
նելով որ ձար չկայ , միտքը դրաւ որ խոհեմու-
թեամբ ուրիշ սուտ մի հնարէ , և ասաց իւր
մօրն . " Այս օրուան ժողովին մէջ խորհուրդ ե-
ղաւ թէ՝ արգելք հասարակապետութեան
մէն աւելի օգտակար կրնայ լինիլ , այր մարդոց
Թողուլ որ երկու կնիկ առնուն , թէ կանանց՝
երկու այր առնուն : Այսն այս լսելն
պէս տարակուսանքը զինքն առաւ , և անմիջա-
պէս տունէն դուրս ելնելով , Թռաւ գնաց բոլոր
իւր դրացիներուն , բարեկամուհիներուն իմաց
տալու : Հետեւեալ օրն ինչ կը նայիս , բազ-
մաթիւ Հռովմայեցի կանայք եկան խորհրդա-
րանին չորս դին պատեցին , որոնք արտասուքն

աչքը բնին տատիկ կ՚աղաչէին ժողովի անդամնե-
րուն , որ ամենեւին բան մը չորոշեն առանց ան-
դամ մը իրենց մտիկ ընելու : Խիստ զարմացաւ
Ծերակոյտն , և հարցուց թէ այս հինի մարդիկը
խելքերնին թռուցե՞ր են , և թէ իրենց ուզածն
և միտքերնին ի՞նչ է : Փաբիրիոս պատասխին եւ
կատ խորհրդարանին մէջտեղ կանգնեցաւ , և
պատմեց իւր մօրն ըրած թախանձանքներն , և
ժողովին գաղտնիքը յայտնելու համար բանե-
ցուցած վարպետութիւնն , և անանկով իւր
մօր հետաքրքրութիւնն անցընելը : Ծերակոյ-
տը դովեց նորա հատատարմութիւնն և խելքը-
ու վճռեց որ անկէ յետոյ ծերակուտի անդամ
ներէն և ոչ մին իւր հետ բերէ այն պատկառե-
լի ժողովին մէջ իւր որդին Փաբիրիոսէն ի զատ,
որ իւր փառաւոր գործովը գովելի եղաւ բոլոր
Հռոմայեցւոց քով :

Երրորդ դպրութիւն

Երրորդ պակասութիւնն, ուսիկ զգուշանալ
պէտք է ձեզ, խաղութիւնն և բարկութիւնն է:

Տղայոց մէջ շատ կը գտնուին խօսք չվերցը-
նողներ , որոնց՝ ոչինչ խօսք մի զրուցելու լինի
մարդ՝ խոլին կը բարկանան, կուլան և կռիւ կը
հանեն . կը նմանին այն քարերուն , զորոնք ի-
րարու զարնելով, կայծեր կը հանեն . քիչ մի
ղէմ կենալու լինիս իրեն , և կռիւ ծագելու

պըղտի պատճառ մի որ գտնեն՝ կըսկսին բարբա-
քիլ, կրակ գառնալ և բերանէն եղած վատ խօս-
քերն և հայհոյութիւնները ականջնին չբեր :
Բայց ձեռքերնին ի՞նչ կ՚անցնի արդեօք, ոչինչ ,
այլ ընդհակառակն իրենք կը վնասին . ինչու որ
ուրիշները կը զրպտեն և պատճառ կուտան ա-
նոնց զիրենք ծաղր ընելու . ինչպէս կը տեսնեմք
սովորաբար որ կատակներն ալ որ իւր վերան
առնու՝ նորա կը վնասէ . և մէկ անգամ որ մէկը
գալէլու խօսք մի եղած ժամանակ ինքն իւր վե-
րան առնու բարկանայ , բաւական է , այնու-
հետեւ կըսկսին այլք անոր ետեւն ինկնիլ, և
երկու մէկ չեն բսեր կը կրկնեն նոյն խօսքը , և
իրենց զուարճութիւն մի կ՚ընեն :

Եւսոի եթէ մէկը սիրտ ծակող կծու խօսք
մի զրուցէ ձեզ, այնպէս ինդուժ երեսով մի ըն-
դունիք , որ նա եւս գիանայ թէ կատակ և
ծաղրաբանութիւն վերցընող և հոգ չընող
էք : Այս բանս շատ հարկաւոր դաս մի է՝ որ
միտքերնիդ անգամ չանցնիք : Եթէ ձեր պակ-
սութեանց վերայ ուրիշները չծիծաղին , նախ
դուք խնդացէք և ծաղր ըրէք նոյն պակասու-
թիւնները :

Շատ կը նայիք թէ ղձեզ ծաղր ընող անձիս
և անոնցմէ մարդոց ձեռքէն ազատելու ձար
վայ , ամչցուցէք զանոնք ձեր շնորհալի վար-
մունքով , ծիծաղ երես ցուցընելով անոնց :

Կը պատահի երբեմն որ հաղարատար պա-

բադաներու մէջ կը գտնուիք, որոնց մէջ կամ կատակ ընելով և կամ ինչ քնաւորութեան տէր լինելնիդ իմանալու համար, մէկը մէկալը սուտ իրաւ պակասութիւն մի գտնելով ձեր վերայ՝ ե՛ր բեանիդ կը զարնեն. եթէ դուք բաժիս պէս չնորհալի և խնդուն երես ցուցընէք զձեզ, և մարդաւարութեամբ չվարուիք, ինչպէս որ ա՛մեն մարդու կը վայելէ, անկիրթ մարդու տեղ կը դնեն զձեզ. և չէք կրնար ընկերութեան զարմանալի վայելել: Այսպիսի դիպուածներու մէջ ցուցցած կիրքերնիդ և խիստ քնաւորութիւններնիդ, ուրիշ շատ վատ հետեւանքներ եւս կը պատճառեն ձեզ:

Դիւրին անուն երեւեցի մարաջախտին խօսքերը:

Ա՛մառուան մէջ խիստ տաք օր մի Դիւրէն մարաջախտ ձերմակ բաճկոնով և գտակը գլուխն իւր սենեկի պատուհանին մէկուն առջև կայնած պարտէզը կը դիտէր: Այսիս անդիէն իւր ծառաներէն մին գալով և վերայի հագուստէն խաբուելով՝ իւր ընկերը կը կարծէ, որու հետ խիստ բարեկամ էր. կամաց կամաց քով կ'երթայետեւէն, և կռնակին ամուր հարուածի կ'իջեցընէ, ու խնդալով մէկդի կը քաշուի: Մարաջախտն է յանկարծակիի կուգայ, ետեւը կը դառնայ որ նայի թէ ո՛վ է, և տեսնելով քեռանը չքանաք: Ծառայն երբ կը ճանչէ իւր տէրն, խելքը գլխէն կ'երթայ, և դողալով ամբողջ ոտքը կ'ինկնի ու կ'ասէ. «Ներողութիւն ըրէք տէր, իմ ընկերս Վէտրգը կարծեցի զձեզ»: Պատասխան տուաւ մարաջախտը՝ զարկած տեղը չփնելով. «Յանցանքը ձեռքիդ է՛ և ոչ աչքերուդ, վասն զի քո ընկերոջդ եւս ծանր պիտի գայր այդ կերպով բարեւ տալը. և թէպէտ նա լինէր իմ տեղս, պէտք չէր այսպէս ամուր զարնէիր»:

Այս մարդուս տուած խրատը ձեռքի կատակի վերայ էր, իմ խօսքս ձեզ լեզուով եղած կատակներու վերայ է: Ա՛ի գուցէ չափէն աւելի սիրտ ծակող լինին անոնք, այլ իբրեւ առակ միտքերնիդ պահեցէք այս ըսածս թէ՛ և ոչ կատակ ընելու ժամանակ պէտք է մէկուն ձանձրութիւն տալ:

Այս կանոնս պահեցէք և ամենուն սիրելի կը լինիք: Ւրե եթէ Աստուած ցուցընէ, ձեր հաճոյքը հետեւելով, երգիծական խօսք մի ընելու լինիք մէկուն, գիտնաք որ նախ դուք ա՛նոր պատիժը կը կրէք:

Պատիժ կրող ծաղրաբանը:

Պատմութեանց մէջ կը կարդանք թէ Վէսկլիտոս անուն փիլիսոփային մէկը, Ընտիգոնոս Թագաւորին կը դժարացնէ, որուն մէկ աչքը կոյր էր. և Թագաւորը կը խոստանայ Թողու-

թիւն տաղնապ, միայն թէ իւր առջեւն ելնէ անգամ մի։ Փիլիպպոսի խիստ վախնալով Թագաւորին բարկութենէն, չուզեց երկար տանել նորա դիմաց ելնել։ Այսու ամենայնիւ իւր բարեկամներն այնքան ըրին՝ որ վերջապէս երթալու եղաւ։ Բայց պալատին մօտենալու ժամանակ, իւր հետ եղողներուն մէկը՝ տեսնելով թէ նորա արտին մէջ վախը կը մնայ, «Ձա՛ւակ դնա, ասաց, մի՛ վախնար՝ մինչեւ որ Թագաւորին աչքերուն երեւաս, վասն զի անիկայ քեզ Թողութիւն պիտի տայ։—Ա՛յ ինձ, պատասխան առաւ այն ժամանակ Դիոկղետոս, թէ որ մինչեւ Թագաւորին աչքերուն չերեւամ, Թողութիւն չպիտի գտնեմ. ախոռս, իմ քանս լմնցած է»։ Այս պատասխանովս ծաղր ընելու համար յաջնակին կը բանեցընէ աչքերուն ըսելով. և որովհետեւ մէկ աչք ունէր Թագաւորը, վասն որոյ անկարելի էր որ նորա երկու աչքերուն մէկէն երեւայ, ուստի Թողութիւն գտնելն ալ անկարելի համարելով կ'ախոռայր։ Բայց այսպէս անտեղի երկիւղ բանութիւնն իրեն շատ տուղնատաւ, վասն զի Թագաւորին ականջն հասնելով, այնքան բարկացաւ՝ որ հրամայեց անգթութեամբ զինքն սպանելու։

Թէպէտ կատակաբանութիւնն այսպէս մեծ պատիժ չբերեր միշտ մարդուս գլխուն, այլ աւելի կը լինի մարդս ուրիշներուն աչքին

Ծաղրաբան եղողն այնպիսի բնաւորութեան տէր կը լինի, որու վերայ ամեն մարդ կը կատկածի և ամենքն ալ կը վախնան. ընկերութեան ալ պատիժն համարուած է. և բաւական է դիտնալ՝ որ այնպիսին ամենեւին մէկուն պատիւը բանի տեղ չդներ. ուստի և ամեն մարդ առիթ պատահելուն՝ կ'ուզէ որ իսկոյն փոխարէնն անոր հատուցանէ։

կատակաբանութիւն ընելէն յառաջ եկած գէշ հետեւանքները։

Գուլիելմոս Անգղիոյ Թագաւորը խիստ դիրնալէն վատառողջ ըլլալով, շատ ժամանակէն ի վեր էր որ անկողնէն չէր ելներ, և միշտ դեղեր կ'առնոյր որ նիհարնայ։ Փիլիպպոս Ա Գաղղիոյ Թագաւորը կատակ ընել ուզելով, իւր պալատականներուն խնդալով մի հարցուց՝ թէ ե՞րբ պիտի ծնի այս Թագաւորը։ Այս կատակը պէտք էր որ լսողներուն ծիծաղը միայն շարժէր, բայց ընդհակառակը աստիճան պատեբաղմի պատճառ եղաւ։ Գուլիելմոս բնութեամբ բարկացոտ լինելով, այսպէս պատասխան բրաւ Փիլիպպոս Թագաւորին. «Երբ ես ղատակ բերելու լինիմ, ծննդեան օրերս պիտի դամ Փարիզու Սանդա Ղէնէֆիֆա քաղաքն անցնեմ տասը հազար տիպաւորներով, ասաց՝ և խօսքին վերայ կեցաւ. եկաւ անձամբ Նանդէս քաղաքը պաշարելու, նեղը խոթեց զայն,

և յետոյ մոխիր դարձուց. և գուցէ իւր զօրքերով մինչեւ Փարիզ կուգար կրակի և սրեան մէջ ձգելու զքաղաքը, եթէ մահն իւր տակաւին միջոցն դադրութեան արգելք չլինէր:

Ցաջորդութիւն մի դեմ ցրուցուած ցուարճալի կատակը:

Ընտիոք Ասղթայի ասպետները մէկտեղ ժողովուած խորհուրդ կ'ընէին՝ թէ ինչ կերպով Օսմանցւոց վերայ պատերազմի երթեն, ուրանք անթիւ զօրքերով իրենց դէմ կուգային: Ասպետներէն մին Սամիսոն կը կոչուէր և խիստ կարճահասակ մէկն էր: Ուրն գտնուողներէն մին ծաղր ընելով ասաց. "Պարոններ, ինչ տարակուսեր մնացեր էք. չէ որ Սամիսոն մեր մէջն է: Ընդհակայ կրնայ բոլոր Օսմանցւոց դէմ երթել և յաղթել": Այս խօսքիս վերայ բոլոր ժողովն սկսաւ ծիծաղիլ. բայց կարճահասակ ասպետն իսկոյն պատասխան տուաւ զինքը ծաղր ընողին. "Ճշմարիտ է ըսածդ, պարոն, բայց այդ քանը գլուխ տանելու համար, պէտք է քո ծոր նօսիդ[1] մէկն ինձ տաս, այն ժամանակ կը տեսնես թէ ինչ հրաշքներ կը գործեմ":

Զօրքերի դասակարգութիւն:

Զօրքերդ պակասութիւնն, ուսկէ դուք խիստ

1 Ցայտնի է ամենուն որ Սամիսոն փղշտացիներէն անհամար հոգի սպաննեց էշու մի ծնօտով:

զգուշանալ պէտք էք, չարաբաստութիւնն է: Կը գտնուին երբեմն այնպիսի տղայք, որոնք կարծես թէ ուրիշներուն պատիժ ծնած են: Կ'ունենան մանկին ատոնք օձի և չար ճճիներու, որոնց եթէ մարդ մօտենայ, մէկէն կը խայթեն. և ասոր համար է որ այսպիսի տղայոց՝ օձ ու կարիճ կը կանչեն: Կարծես թէ ամենեւին ուրիշ հոգ մի չունին, այլ խելքերնին միտքերնին այն է թէ ինչ կերպով նեղութիւն և վիշտ հասցունեն իւրեանց ընկերաց. և երբ միտք դրած չարութիւնն ուզածնուն պէս յաջողի, այն ժամանակ սրտերնին կը հանգչի և կ'ուրախանան:

Այսպիսի չարասիրտ մարդիկ խիստ քիչ գտնուելուն համար չեմ յուսար որ դուք եւս այնպէս լինիք: Բայց եթէ դժբաղդութեամբ կը տեսնէք որ սրտերնիդ կ'ուզէ այնպէս չարութիւններ ընելու, ձեռքերնիդ եկածէն աւելի ջանք ըրէք զձեզ զսպելու: Իսկ եթէ ինքզինքնիդ Թող տալով այս պակասութիւնը գործելու լինիք, անշուշտ գլխնուդ փորձանքը կը գտնէք, և անոնց դէմ ըրած չարութիւննիդ՝ կամ շուտ և կամ ուշ ձեր գլխուը կուգայ:

Իւր չարութեան դատիճը գտնող տգաչն:

Տան տաններկու տարեկան տղայ մի, խիստ գիւխ եղած և չար, օր մի հօրը հետ գեղ կ'երթայ, բայց սիրտը նեղանալուն չգիտէ թէ ինչ

պէս անցընէ այն օրը. ուստի մուածեց գեղջ խեղճ ոզայոյ։ Հետ խաղ մի հանձարել. կանչեց զանոնք իւր գլուխն հաւքեց, և ամենուն սիրտն ընելէն յետոյ, անոնոյ նման լծեց զանոնք իւր սլլուկ կառքին առջեւ, զոր հետը բերած էր, և ինքը մէջը նստելով ուզած տեղը կը քալեցնէր ։ Գեղացի ոզայք բնականապէս վախկոտ լինելով, չկրցին դէմ կենալ անոր, վասն զի էթէ միայն անոր Պարոն անունէն կը քաշուէին, հապա իրենց հետ խրոխտալով ալ կը խօսէր ։ Ուստի Թողուցին զիրենք որ կառքին լծէ, և ե՛ տեւէն կը քալէր իւր Մէտրօ անուն մեծ և ուժոտ շունը, որ այս ծառայութեան մէջ խիստ սովրած էր. և որովհետեւ խեղճ գեղացիները (որոնց համար պարոնը՝ իմ երկու ոտքով ձիերս են՝ կ՚ըսէր,) մեծ շան պէս աչքաբաց և յամրզակ չէին, անոր համար անդթութեամբ և ատելի կը յանդիմանէին զիրենք. և երբ կը տեսնէր էթէ խօսքով գլուխ չէրներ, խարազանով եւս կը զարնէր ։ Փուճ տեղը կը պօռային կուլայինս ողորմելիները, վասն զի ոզայն աւելի իւր անգը Թուխթիւնը կ՚աւելցնէր, և անոնց արտասուքը ներսն վերայ մեղքնալու տեղ՝ կը ծիծաղէր բարձր ձայնով ։

Ա՛սոր այսպէս սոսկալի չարութեան վերայ բոլոր ոզայք մէկէն կատղեցան, դժարնին եկան, և գեղի միւս երիտասարդ ոզայոց խմբովք, մէկտեղ հաւաքուեցան ամենքն որ ա-

զէկ վրէժ մի առնուն անկէ ։ Ասիկա նոյն տեղն ուր տեղ բռնաւոր ոզայն իւր կառքը տարեր էր նորէն սկսելու անգութ խաղը, և զանոնք տեսնելուն պէս հրամայեց որ գան լուծին տակ մնանեն և կառքը քաշեն. բայց նոքա փոխանակ հնազանդելու՝ վազեցին ամենքնին մէկէն վերան Թափեցան, բռնեցին զինքն և իշուն ալ մանն ապրին առջեւ լծեցին ։ Յետոյ մէջերնին զբաւորը ասնձը ձեռքն առաւ, սկսաւ կանչել պօռալ որ քալէ, բայց տեսնելով Թէ մարկ չէ նէր. "Ա՛նդէ տեսնեմ, անդէ, շուտով վազէ", ասաց ու եռեւէն խարազանի հարուած մի ուղեղան լիշեցուց ։ Ա՛ւս ոզայք եւս ասոր հետեւեցան, և իրենց երկու ոտքով ձիուն վրայ կարկառ պէս բռնաւնքները մէկը կ՚ելնէր՝ մէկը կ՚իջնէր ։ Կուլայր կ՚ողբար պղտի պարոնը, բայց ինչ օգուտ. վասն զի ամենքը զինքը ծաղր կ՚ընէին, ինչպէս որ ինքն եւս զանոնք ըրած էր. և մէկուն հոգը չեղաւ նորա լացերն ու պօռալը ները, այլ կը ծիծաղէին վերան ։ Ա՛ երջապէս յոգնելով, քակեցին կառքէն և Թողուցին որ երթայ։ Կատղեցնէն կը դողայր և ինքզինքի՛ ուզեր ոզայն, բայց տեսնելով Թէ իւր կարողութիւնը չպիտի օգտէ անանցմէ վրէժ առնելու, մուածեց երթալ իւր հօր գանգատելու։ Հայրը գիւտուն և խելացի լինելով, ուզեց աղէկ մի խնամով իւր տղուն կերած ծեծերուն ատյգ պատճառը. ուստի մէկը խրկեց իրեն կանչել տուաւ գեղն

աղայքը, և պարտաւորեց զանոնք որ անկեղծ ծոմթեամբ չհատակը զբաւցեն իրեն՝ թէ ինչպէս համար իւր աղուն հետ այնպէս բարբարոսաբար վարուեցան։ "Տէր իմ, ասաց մէջերնէն աւելը սրտոտը, քո որդիդ եւս, այն պատրանիկը, մեր ըրածին երեք պատիկն ըրաւ մեզ. և մենք՝ չհատակը զբաւցիմ, դեռ չկրցանք ինչպէս որ պէտք է փոխարէնն անոր ընել, վասն զի անտրամ մեր կերած ծեծը խիստ շատ և սաստիկ էր, և մենք մի անգամ միայն ծեծեցինք զինքը իբրեւ արդար պատիժ։ Եթէ այդպէս է, պատասխանատուաս հայրն, ինչպէս որ չեմ երկբայիր և ես, միայն մէկ բանի համար կը յանդիմանեմ զձեզ, որ դուք ձեր դէմսուն ուղեցիք վրէժխնդիր լինել անոր, որպէս թէ ես բաւական կաթողիկէ չունէի և չէի կրնար պատժել իմ որդիս։ Բայց որովհետեւ բան մի է եղեր է, գացէք ուրեմն, խելքերնիդ գլուխնիդ պահեցէք, և նայեցէք որ իմ զաւկէս աւելի խելք կենաք, որ իւր անխելքութեան պատիժն գըտաս ձեզմէ»։ Այսքը խոժոռ դէմքով մի իւր որդւոյն դառնալով. "Ասիր, ասաց անոր, և Թող խրատ լինի քեզ անոնց ըրածը. և որովհետեւ խմացար հիմայ թէ չար տղայք կամ շուտ կամ ուշ իրենց չարութեան պատիժը կը կրեն, ուստի միտդ բեր միշտ որ երջանիկ լինելու մի միայն միջոց բարի և մարդավար լինելն է»։

Այս խելացի հայրն իրաւունք ունէր այսպէս զրուցելու. վասն զի բարի վարմունքով և անոյշ լեզուով միայն կրնամք շահիլ նոցա սիրտն՝ որոնց հետ կը կենցաղավարիմք. և եթէ մարդ կ'ուզէ ինքզինքն այլոց սիրցընել, պէտք է որ նախ ինք սիրէ զանոնք. և իւր սիրելը յայտնի ընելու համար՝ բաւական չէ որ իւր սիրոյն վկայութիւնները երեսանոց ցուցընէ, այլ պէտք է մանաւանդ նոցա սիրտը հաճելցընել արժանաւոր և պարկեշտ խօսքերով. և երբեմն եւս եթէ հարկաւորի, նոցա կամքը հաճելցընելու համար իւր անձնական շահը մեկդի թողուլ։

Պզտիկ պարգեւները բարեկամութիւն կը ծնանին, կ'ասէ առակը։ Ընդհակառակն՝ ընկերութեան պզտիկ աղաչանքը չընդունելը, և այն ոչ բաւական՝ բարեկամութիւնը կը տկարացընէ և կը քանդէ. վասն զի իւր ընկերէն ամէն ինչ խնայելով, և իւր սիրած մարդուն ամէն խօսքին չէ ըսելով, յայտնի կը ցուցընէ՝ թէ անկեղծ և ճշմարիտ սիրով չսիրեր զանիկայ։

Ինչ որ բարեկամոյ մասին զրուցեցինք, աւելի կը յարմարի եղբարց. վասն զի եղբայրութեան կապը՝ բարեկամութեան կապէն աւելի զօրաւոր է։ Ձեր եղբարքն և քոյրերը չեն թէ միայն ձեր ընկերներն են, այլ մանաւանդ՝ ինչպէս կ'ասէ սուրբ Գիրքը, ձեր մարմինն եւ ձեր արիւնն են, և ձեզ նման ուրիշ մի են։ Ուրեմն դուք ձեր աղէկութեան համար որքան հոգ որ կը տանիք, այնքան եւս նոցա համար

ամենիկ պետք էք ։ Ո՛չ դուշմութեամբ դիտելու էք նաեւ որ նոցա ամենեւին՝ ինչ մի չհասցը նէք եւ դժպանին գալու բան մի չընէք , այլ ինչ ոմն նայիք որ նոցա հաճելի եւ շահաւոր բան ը նէք ։ Կարճ խօսքով՝ այնպիսի բաներ սիտի ը նէք նոցա , ինչ որ կ՚ուզէք որ նոքա եւս ձեզ ընեն։

Ամենիկ ինքզինքնիդ կը սիրցնէք նոցա , եւ կատարեալ միաբանութեամբ կ՚ապրիք հե տերնին ։ Ո՛չ դուշացէք խորութիւն ցոյց տա լու , այլ առաջին քրիստոնէից պէս զիրար եղ բայր համարելով՝ միայն մի սիրտ եւ մի հոգի ու նեցիք , եւ ասով զիրար երջանիկ կ՚ընէք ։ Ոչայց վտանգաւոր պատահար եղած բարեկամութի նը հոգալու թիւնն եւ պատիւն նոցա ցուցընե լու , իբր թէ նոքա դուք մարդիկ չլինին թէ ներհակութեան եւ մինչեւ առելութեան նշան ցուցընէք , վասն զի այսպէս ընելովիդ , դիտ նաք որ նոքա եւս նոյն աչքով ձեզ կը նային . անկէ յետոյ անմիաբանութիւնը միջերնիդ կը տիրէ . եւ նոքա եառեւէն ոչքան եւ օրպիսի չա րիքներ կատարեն , այն յայտնի է ։

Սուրբ պետ մէջ կարդացիք տեսաք որ Կա յին իբր եղբօրն Աբելին դէմ նախանձելով , իբր ձեռքն սպանեց զայն ։ Տեսաք նաեւ որ այս նախանձով Յակոբոյ որդիքն անգթա թեամբ իրենց Յովսէփ եղբայրը գերիի պէս ծախեցին ։ Ահա , ով սիրուն որդեակք , մինչեւ ո՞ր աստիճան կրնայ մանիկ ձեզ առելութիւնն

եւ նախանձը , եթէ այն գաղանաբարոյ եղբայրը պէս՝ դժբաղդութեամբ ձեր կրկից հետեւելու լինիք ։ Ո՛չ դուշ կեցիք ուրեմն , որ նոցա տեսնել վարմունքը ձեզ օրինակ չառնուք ։ Այլ Յովհ սեւիին նմանելու ջանացէք , որ իւր եղբարց ա տելութեան վտանգին սէր ցոյցով , նորա չար վարմունքին տեղ բարիք ըրաւ . եւ թէպէտ ձեր եղբայրն եւ քոյրերը ձեզ դէմ հակառակու թիւն մի ցուցընեն , դուք նայեցէք որ միշտ քա րիք ընէք նոցա ։ Թէպէտ ձեր բարութիւնն նոցա տեղութեան չյաղթէ , այլ գիտցէք որ դուք միշտ քաղցր հաճութիւն մի կը զգաք ձեր պատասխանութիւնը կատարելնուդ , եւ մարդոց աչքին յարգելի եւ Աստուծոյ առջեւ հաճոյ կը լինիք ։

ԳԼՈՒԽ ԺԵ ։

Թէ ինչպէս պետք են վարուիլ տղոց ազգքառոց հետ , եւ ինչպէս ազդմութիւն ընելու են նոցա ։

«Ո՛ՐԴԵԱԿ իմ , ազդմութիւն տուր քո տղ րանքիդ , զգուշացիր տղքառէ մի երես դարձընելէ , եթէ կ՚ուզես որ Աստուած եւս իւր ե րեսը քեզմէ չդարձընէ ։ Ազքան կրնաս՝ մարդա սէր եղիր ։ Եթէ հարստութիւնդ շատ է՝ շատ տուր , եթէ քիչ է՝ քիչ տուր առանց տժգոհե

լաւ, յիշելով թէ Աստուած ամենևեքեան անվարձ չծառայեր ոզորմած մարդը »։

Ահա այսպէս կ'ապստրեր միշտ Տօքիմէ իւր որդւոյն. և ես կրցածիս չափ ձեզ կ'ապաշխրեմ, սիրասուն որդեակք իմ, ոզորմեցէք աղքատին, օգնեցէք դժբաղդներուն, թէ որ կրնաք. ապա թէ ոչ՝ սիրով զանոնք յարգեցէք։ Յիսուս Քրիստոս կ'ասէ որ՝ եթէ այս փոքրիկ ներէն մէկուն ընելու լինիք, ինձ ըրած կը լինիք։ Ուրեմն պէտք էր ընել դուք եւս աղքատներուն, այն բանն որ յօժարութեամբ յանձնառու կը լինիք ընելու Աստուծոյ Փրկչին, եթէ անձամբ ձեզ ներկայանար ոզորմութիւն խնդրելու։

Սուրբ Հերոտարանը կ'ասէ թէ, երբ երկնաւոր Դատաւորը դատաստան ընելու գայ մեզ, ամբարիշտները պիտի դատապարտէ աղքատաց չոզորմելնուն համար, և ընտրեալները պիտի վարձատրէ իրենց ոզորմածութեան համար։ Շատ յայտնի է որ, եթէ աղքատներուն դէմ քարասիրտ լինինք, և նոցա մեզմէ խնդրած ոզորմութիւնը ձեռքերնիս եկածին չափ չտանք, Աստուծոյ նզովքը կ'ընդունինք և նոքա վարձքերէն զուրկ կը մնանք։

Ոզորմածութեան օրինակներ առաւելաղէս սրբոց Հայրապետաց մէջ։

Աղքատասիրութիւնն ամեն ժամանակ բո-

լոր սրբոց սիրած առաքինութիւնն եղած է։

Ինչպէս Լուսաւորիչ Գրիգոր Թագաւորն և Կոստանդ Կոնդեայ Թագաւորն, և ուրիշ ներն այնքան խնամարհեցան՝ որ իրենք անձամբ սիրան ծառայութիւն ընել նոցա հիւանդութեան մէջ։ Ամենք եւս, ինչպէս սուրբն Պաւլոս նոս, այն աստիճան առատաձեռն եղան՝ որ մինչեւ այսոր տեղ բանտ մնան և դերութեան դատապարտութեան, որպէս զի խեղճութեամբ դատապարտուածները դերութենէ ազատեն։

Աշտա Գ. Հայոց Թագաւորն, որ իւր սուրբ և աղքատասէր բարուց համար Պղծած կանչըեցաւ, զարմանալի օրինակ մի է ոզորմածասիրութեան, և գրեթէ իւր բովանդակ երկնաւոր կութիւնն այս առաքինութեան մէջ դրած էր։ Իւր ժամանակի խեղճ և աղքատ մարդիկ, վանկայ են նոցա մարդասէր խնամոյն և գորովալից ոզորմածութիւնը, որով իւր հոգին վառուելով՝ այն աստիճան հասեր էր աղքատաց վերայ ունեցած նոցա սրտին գութը, որ իւր շինել տուած աղքատանոցներն և հիւանդանոցներն ինքն անձամբ շատ անգամ շրջելով, սքանչելի խոնարհութեամբ կը ծառայէր նոցա իբրև Քրիստոսի. և իւր սեղանը նստեցընելով կը պատուէր, կը պաշտէր և կը մխիթարէր զանոնք։ Մինչեւ որ խոնարհութեամբն և ոզորմածութեամբ բոլոր Թագաւորներէն գերազանցեց, ինչպէս կ'ասէ Սեբէոսն Ասողիկ. վասն զի

գանձերը, կաղերը և կոյրերը կը հաւաքէր իւր մօտ կը նատեցընէր ուրախութեան հայկերու- թիւ հանդէսներու ժամանակ. մկրտուն իշխան կը կանչէը, միւսին իշխանապետ և ուրիշին կիւրապաղատ, և նոցա հետ կը զբօսնոյր: Ի- րանեցոյն կարմիր քառերն և նոցա խոցերն իւր աչքին դիմաց զարդի և դոհարներու տեղ կը համարէր. նաեւ իւր Թագաւորական գաւա- Թուին նոցա ջուր կամ գինի կուտար և աւելցա- ծը ինքը կը խմէր: Այս այնքան առատաձեռնու- թեամբ ողորմութիւն կը բաշխէր կարօտնե- րուն, մինչեւ որ մեռնելու ժամանակ գանձա- տան մէջ մէկ դրամ չգտնուեցաւ. նաեւ սեն- եականերուն կարասիները, պատերուն վերայի զարդերն աղքատաց կը պարգեւէր:

Ասոր այս գեղեցիկ առաքինութենէն վար չէր մնար նաեւ իւր երանելի ամուսինը Տոսրո- վանոյշ Թագուհին. շատ սիրոյ և խոնարհու- թեան գործեր ըրած ունի աղքատաց և հիւ- անդաց դէմ, շատ հոյակապ եկեղեցիներ եւ վանքեր շինել տուած է, ինչպէս է Սանահնի և Հաղբատոյ ուխտ ըսուածները: Մէկ խօսքով՝ Հայոց ազգին դէմ ամէն բան մոր նման էր, և արժա- նաւոր Թագուհին Հրաշատեան Թագաւորու- թեան: Այս երկու բարեպաշտ և ողորմած անձինքներուն հպատակներն երջանիկ և հան- գիստ կեանք կը վարէին:

Ընդհոյ Աթբերտոս Թագաւորին վերայ,

եկեղեցական պատմութեան մէջ կը կարդայ- ի, թէ վեց ամսէն աւելի իւր Թշնամիքն այս քաթեխրա Թագաւորին եաուէն ինկեր կը հա- լածէին, որոնց ձեռքէն ազատելա համար՝ վերջապէս անտառի մի մէջ մտեր սոպա իներ էր, որու չորս կողմը ճախիներով պատած էր և անկէ անցնիլը խիստ դժուարին էր. այն տեղ յուսութեամբ կրպակեր որ աստուածային Նա- խախնամութիւնը վախճան մի դնէ իւր պատ- րանաց և թշնամութեան: Օր մի եւս երբ իւր Թագուհուն հետ առանձին նստեր էր, և իւր բոլոր ծառաները ձիւնապատ լեռներն և սառած գետերը խրկած էր՝ որ ձուկ կամ վայրի կենդանի մի որսան կերակուր պատրաս- տելու համար, յանկարծ ձայն մի լսեց, որ աղ- քատին մէկին եկեր խիստ ազաչանքով ողորմու- թիւն կը խնդրեր: Աթբերտոս Թագուհուն դարձաւ և հարցուց՝ թէ ուտելու բան մի կայ արդեօք աղքատին տալու. Թագուհին պա- տասխան տուաւ թէ՝ միայն մէկ հատ հաց մը նոցեր է: "Օրհնեալ լինի Աստուած, ա- սաց Թագաւորը. քիչ ուրեմն նորա կէսը այս խեղճ աղքատիս տանք. վասն զի այն Աստուա- ծըն որ հինգ նկանակով հինգ հազար մարդիկը կշտացուց, կրնայ միւս կէս հացով եւս զմեզ կշտացընել: Ի՛սկ Թագաւորն այս կերպով ո- ղորմելին մխիթարելէն յետոյ՝ դիրք մի առաւ ձեռքն որ կարդայ, և քիչ մի ժամանակ անցաւ

վերան՝ քունը տարաւ ։ Հրաշքին մէջ կուզայր դա | Ինոխոֆարնէի եպիսկոպոսն երեւցաւ իւրեն , որ տուրը կը կոչուէր , և այսպէս ասաց . “Առաւած պղծեց պիս քեզ որ իմացընեմ թէ՝ քո քիչ մի յառաջ ըրած ողբմութիւնդ այն պէս ընդունելի եղաւ իրեն , որ ողբմելով Ինդիացւոց այսքան ժամանակէ ի վեր քաշած տառապանաց և նեղութեանց , կը խոստանայ նոքին քա ամենայն վերայ հաւատալ պիտի . և այս բանիս ճշմարտութեանն ապացոյց՝ որսի գացած մարդիկդ , թէպէտ ջրերը բաղդատելին առած են , այսու ամենայնիւ՝ այնքան որս պիտի բերեն , որ գուք եւս պիտի զարմանաք ” ։ Ընդերաց քունէն արթնանալով՝ կանչեց Թադէոսին , և իւր առած երազն նորա պատմեց . և նա ասաց թէ՝ ինքն եւս նոյն ժամանակ քնացած լինելով նոյն երազը տեսած էր ։ Այս մի ջրհոս մէջ որսի գացողներն եւս գարձան , որոնք այնքան ձուկ բերած էին հետերնին , որ մէկ բանակի զօրաց բաւական կրնար լինիլ ։ Ընդերաց մի քիչ ժամանակէն յետոյ իմացաւ թէ Տանիմարդացւոց զօրավարն Ասպա անուն , ուրաւ հետ կը ճեմկուէր , ապաւնաւեր է ։ Ասոր վերայ Թագաւորը ժողվեց մէկտեղ իւր ցրուած զօրքերն՝ վազեց յանկարծ Թշնամեաց վերայ և ցիրուցան ըրաւ զանոնք . և այս երեւելի փառօք իմացաւ թէ՝ ինչպէս անվարձ չթողու Աստուած ողբմութիւնը ։

Հեթանոսներուն ացքատաց մասին շրուցած գեղեցիկ խօսքերը։

Կարօտ մարդկանց կարեկից լինիլն այնքան բնական առաքինութիւն է և մարդկութեանս վայելուչ, որ նոյն հեթանոսներն անգամ իրենց անհրաժեշտ պարտք համարած էին ։

Հեթանոսին մէկը սովոր էր ասել, թէ՝ “Ես այն բանն ինձ ստացուածք կը համարիմ, զոր այլոց պարգեւած եմ” ։

Տիտոս կայսրն այն ժամանակ լաւ դրծածած կը համարէր իւր ժամանակն , երբ ողբմելի մարդոց օգնութիւն կ՚ընէր ։ Մէկ իրիկուն մի միտքն լինելով թէ այն օրս առանց մէկուն բարիք ընելու անցուցեր էր , գոչեց հառաչելով . “Կորսնցուցի իմ օրս” ։

Վիմեն Ընթերցուց զօրավարն , այնպիսի բաներու մէջ կը դրծածէր իւր հարստութիւնն ներն , ուսկից իւր քաղաքակցաց օգուտ մի կը լինէր . և ինչ ժամանակ առիթ գանէր , ուրախութիւն մի կը զգայր՝ անանց լաւ հաղցնելով և անանց խնդութեան օդնելով ։

Ի՛ն պատմութիւններէն անհամար օրինակներ կրնայի բերել այս տեղ . բայց ես առաւելապէս կ՚ուզեմ զանոնք պատմել , որ մեր օրերը հանդիպած են ։ Այսան պիտի ասեմ ազնիւ կ՚երեւի թէ այս մեր գարուս մէջ , որ անհաւատութիւններով կը տիրեն և աշխարհս աւերուած է , դեռ սրբան մարդիկ կան , որ իրենց երջան-

ֆութիւնն ուրիշներն երջանիկ ընելէ կախեալ ՚ի կը համարին . և ես կը յուսամ որ ասոնց օրինակները մեծ ազդեցութիւն կրնան տալ ձեր սրտին՝ քան թէ իմ խօսքերս :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Բարեգործութեան օրինակ :

Առաջին օրինակ :

ԴԵՂԻՆՈՍ՝ Լուդովիկոս ԺԶին հօրը վերջուց մէջ կը կարգացուի, թէ իւր ոգեպատութեան հաստակէն խիստ ոգեմած էր, և ոգեմելի մարդոց քաշած տառապանաց ևնեղութեանց վերայ շատ կը ցաւէր, և անոնց օգնելու միշտ պատրաստ էր : Օր մի ճանապարհին վերայ գինուոր մի կը տեսնէ աղնուական դէմքով, բայց խեղճ կերպարանքով, և կ՚ուզէ դիտնալ նորա ով լինելը և ուր երթալը : Երբ լսելով թէ քաջ գինուոր մի էր և իւր դունդը կ՚երթար, որու մէջ շատ տարիէ ի վեր մեծ պատուով կը ծառայէր, կանչեց իւր մօտ և պարգեւեց նորա առանց հարմելու՝ ինչ որ ունէր քսակին մէջ. անկէ ի զատ քանի մի կտոր Թանկագին ապառնեղներ եւս շնորհեց, որոնք իրեն աչքին լոյսն էին : Այս ծաղկահատակ իշխանիկ դատ տիարակը տեսնելով՝ թէ դիմացն երևող բոլոր

մարդոց բարիք կ՚ընէր և այն՝ չափազանց կերպով, մինչեւ բոլոր իւր քսակ եղածը կը հանէր կուտայր, շատ դրաւ որ մէկ թագէորէն աւելի ողորմութիւն չտայ մուրացկան աղքատի : Ինչ կէ յետոյ երբ կը տեսնէր մէկին որ իրեն աւելի աղքատ եւ կարօտ կ՚երեւայր, վարպետութեամբ մի թագէոի տեղ լիրա մի կը դնէր նորա ձեռքին մէջ : Օր մի եւս աղքատ կին մի տեսնելով՝ այնքան դութը շարժեցաւ նորա խեղճութեան վերայ, և իւր դատարարակին քով չկրնալով ուշացին պէս առատ ողորմութիւն տալ, կամաց մի ասաց կնկան՝ որ այս ինչ ժամուն իւր պալատի պատուհանին տակը գայ : Պայմանեալ ժամն եկաւ, Լուդովիկոս պատուհանը մօտեցաւ, տեսաւ կինն և ափով լեցուն տակի նետեց նորա :

Երկրորդ օրինակ :

Դանիելաւ՝ Բոլոնիայի Թագաւորն, որ իւր տէրութ բարուց համար փառաւոր տիտղոս ունեցաւ Արթիար կանչուելու, իւր մատաղ տարիքին յայտնի ցոյց տուաւ ողորմածասէր բնաւորութիւնը : Ութ տարեկան էր, տեսաւ որ ծառայ մի բանտը կը դնէին դողութիւն ընելուն համար, վազեց իւր հօրը մօտ արտասուքներն աչքը, որ Թողութիւն խնդրէ ծառային համար : Թագաւորն, որու հրամանաւ

պիտի պատժուէր գողը, չուզեց որդւոյն կամ-
քը կատարել. այս բանիս վերայ աղուն սիրտը
խիստ վիրաւորեցաւ: Հետեւեալ օրն ծաղիկ
հատակ իշխանը գաղտուկ դէպ ի բանտ երթա-
լավ, հարցուց բանտապանին՝ Թէ ինչ կ'ընէ գո-
ղը: Նա պատասխան տուաւ. «Ո՛նչ որ կ'ընեն
բանտի մէջ եղողներն, որոնց կերածն է լուկ հաց
և խմածնին լուկ ջուր»: Ադանիալաւ տրտմելով
այս խօսքիս վերայ, աղաչանքներ ընելով և շատ
բան խոստանալով բանտապանին՝ ջանք ըրաւ
միայն չինել նորա՝ որ Թողուլ ուրիշ կերակուր
տալ բանտարկելոյն. բայց չկրցաւ այն անգութ
մարդուն սիրտն ընել. այլ այս միայն Թողուց որ
բանտն եղող աղային իւր պատուհանին մօտ
կախուելին մօտ գայ այս ինչ ժամուն: Իշխանա-
զուն աղային դառնալով խօսք կը կապէ իւր մէկ
հաւատարիմ ծառային հետ հնարք մի բանեցը-
նելու, ինչպէս որ իւր բարի սիրտը մտածել
տուեր էր: Ինչ մի կերակուր կը պատրաստուին
և երկայն ձող մի առնելով, կ'երթան երկուքն
նին մէկտեղ բանտին պատուհանները տակ,
որ կերակուրը ներս մտցընեն ձողին ծայրն ան-
ցընելով: Նայց դժբաղդաբար կարճ գալով ձո-
ղը, և ծառայն յայսը կտրելով՝ որ չափսի կրնա
նայ իրենց մտքին դրածը կատարել, ետ դար-
նալու վերայ էր, երբ անդիէն գոչեց աղբայր-
զուն երիտասարդը. «Կեցիր, միտքս բան մի
ինկաւ, որ կարծեմ Թէ պիտի յաջողի մեզ: Թե-

ւերտը վերան առ ղիս, և այն առեն գուցէ
կրնամ ձողը պատուհանին մօտեցընել»: Օրա-
ւայն հաւնեցաւ նորա մտայ. վերցուց աղային
իւր Թեւերուն վերայ, այնպէս որ նորա ուսե-
րուն կռթնելով բռնեց ձողը, և այնքան եր-
կնցաւ՝ որ բանտին մէջ եղող աղային կրնար
հասնիլ և բռնել զայն: Երբոր ծայրի եղած կե-
րակուրնեն առաւ, Ադանիալաւ վար իջաւ՝ ու
բախանալով իւր միտքը դրածն յաջողելուն վե-
րայ, և ասաց. «Ղազդաւոր եմ ես որ կրցայ
դժբախտի մի պէտք եղած բաներըը հոգալու»:

Երրորդ օրինակ:

Կարդաց Բ. Սպանիոյ Թագաւորն իւր աղայ-
ութեան ժամանակ օր մի եկեղեցին գացած ա-
ռեն ճամբան աղքատ աղա մի հանդիպելով,
կուրծքը կախուած ադամանդեայ խաչը փրը-
ցուց նեռեց անոր՝ առանց մէկը տեսնելու իւր
չափազանց առատաձեռնութիւնը: Երեկեցին
որ հասաւ, պալատականները տեսնելով Թէ ա-
նոր ականակուռ խաչը կուրծքը կախուած չկայ,
ըսին Թէ՝ անտարակոյս գողին մէկն իրած պիտի
լինի: Այն միջոցին աղքատն անոնց հետեւը
կանդնած լինելով՝ ասաց. «Այհա Թագաւորին
խաչն իմ քովս է: Նորին Վ. Եհափառութիւնն
իւր ձեռօքն ինձ շնորհեց»: Երիտասարդ Թա-
գաւորն եւս հաստատեց նորա խօսքը, բայց մե-

ծամեծներն արժան չդատեցին աղքատին մօտ ձգել այնպիսի դահաւ մի, որ աքքունական Լեռ պին անգին քարերուն մէկ կտորն էր. և խորհուրդ ընելով որոշեցին ԹԷ՝ ինչ եղանակաւ որ Թագաւորին իւր ստացուածքը քաշելու լինի, սուրբ կը համարուի: Ասոնի այն խաչին արժէքն եւս տասնեւերկու հազար Թալէու լինելով, այնքան ատակ համրեցին քարեբախտ աղքատին տուին և խաչն եւս առին:

Զորրորդ օրինակ:

Օր մի Վ՚ենետիկ մէջ Յովհէփ Բ կայսեր կառքին առջեւ ինն տարեկան տղայ մի եկաւ կանգնեցաւ՝ և ասաց. «Տէր իմ, ես տակաւին մէկէն ողորմութիւն խնդրած չունիմ, բայց հիմայ մայրս ծանր հիւանդութեամբ պառկած լինելով, բռնադատեցայ ականջ ձեր Վ՚ենետուեան ներկայանալու: Բժիշկ մի կանչելու համար մէկ ֆիորին պէտք է, իսկ մեր այնքան աղքատ ենք որ այս խիստ հարկաւոր օգնութիւնն անգամ ընելու կարող չենք: Ա՛հ, Թէ որ ձեր Վ՚ենետուեութիւնը բարեհաճի մէկ ֆիորին շնորհել մեզ, երջանիկ կը լինենինք մենք»: Կայսրն նորա անունն և հիւանդին տունն ու լինելը հարցնելէն յետոյ, ազատն (որ Թագաւորին ըրած հարցուփորձին պատասխանելով նորա ոտքերն ինկած կ՚ասէր ԹԷ, ինչպէս

որ առջի անգամն է որ ողորմութիւն կը խնդրեմ, նոյնպէս վերջինը պիտի լինի,) տուաւ ֆիորին մի: Տղայն զայն առնելուն, խակայն վազեց դնաց շնորհակալ լինելով կայսրէն: Յովհէփ առանց ժամանակ անցրնելու, իւր հետն եղող մարդոց մէկուն վերարկուն հագնելով, կ՚երթայ հիւանդին տունը, որ բժիշկ կարծելով վինքը, կլսկսի երկար բարակ իւր հիւանդութիւնը պատմել. և կը ցուցընէ անոր գլխոց մի, ուր կային իւր որդւոյն թղթերը և գրիչը, և կ՚ազաչէ որ իւր հիւանդութեան վերաբերեալ նուսխայն գրէ: Կայսրը Թուղթ մի կ՚առնու կը գրէ, կը մխիթարէ տառապեալ կինը, և կը Թողու կ՚երթայ: Տղայն այս միջոցիս եւս կը դառնայ ֆիորինը ձեռքն և հետը մէկ բժիշկ: Ա՛սորը զարմանալով կ՚ասէ ԹԷ հիմայ բժիշկ մի եկաւ վինքը տեսնելու. և նուսխայն եւս կը ցուցընէ անոր: Բժիշկը կ՚առնու կը կարդայ, և կայսեր ստորագրութիւնը ճանչնալով կը պատմէ անոնց առջի եկող բժիշկին ով լինելը: Նուսխայն մէջ 500 տուգատ գրուած էր, զոր Թագաւորն իւր յատուկ դանձէն կը շնորհէր խեղճ աղքատ կնկան, նորա Թշուառութեան օգնութիւն ընելու համար:

Կուցէ կ՚ասէք, ԹԷ ամեն մարդ կարողութիւն չունի այսպիսի մեծ գործեր ընելու. և Թագաւորաց պէս բարիքներ ընելու համար, նոցա պէս ճոխ և կարող լինել պէտք է: Բայց

ահա ձեզ մի քանի օրինակներ պատմեմ, որ հաս-
կընաք թէ կրնայ մարդ բարերար լինել որ և ի-
ցէ մարդու նման, և թէ՝ երբ որ սիրտը բարի
և գթած է, նեղութեան մէջ գտնուող ոլորմե-
լեաց օգնելու համար՝ կրնայ կերպը գտնել։

Չինգերտրդ օրինակ։

Վերմանիայի մէջ գեղացի մարդ մի դլուխը
խիստ շատ թշուառութիւններ հանդիպելէն
աղքատանալով, և շատ գառակաց եւս տէր՝ ո-
րոնք անօթութենէ կը մեռնէին, միտքը դրաւ
մօտ քաղաք մի երթալ, և այն տեղ որ և է կերը-
պիս քանի մի ստակ ճարելով՝ իւր տղայոց հաց
հոգալ։ Վնաց հոն վերան դլուխը պատուած
լսութիւով, և իւր ողջ պիտի վիճակը խօսքերէն ա-
ռնելի արտասուքներովն կը յայտնէ անոնց՝ ո-
րոնցմէ ակնկալութիւն մի կրնար ունենալ։ Բայց
խեղճ մարդն մի քանի քարտիսա և անողորմ
մարդոց հանդիպելով, որոնք ականջ չէին դներ
ամենևին իւր լացերուն, և նորա անգթու-
թեան վերայ խիստ վշտանալով, կը մտնէ ան-
տառի մի մէջ և միտքը կը դնէ որ առջեւն ե-
լած մարդուն վերան երթայ և ունեցածը կո-
ղոպտէ։ Այսքը դրածը նոյն ժամուն յայտնե-
ցաւ։ Իեռնակրի մի կը հանդիպի, որ առանց
դէմ կենալու կը հանէ քսակ մի կուտայ նորա
ձեռքը, մէջը քառասուն ֆիորինով։ Բայց պա-

զացին քսակը ձեռք չառած, երբ դործը խըղ-
ճին դպչելով, կ'ինկնի բեռնակրին ոտքն, և իւր
գողութեան պատճառը լալով կը պատմէ անոր,
և կ'աղաչէ որ մինչեւ իւր տունը դայ հետն և
այդքան տեսնէ իւր թշուառ վիճակը։ Բարեսիրտ
բեռնակրին սիրտը շարժելով, կ'երթայ հե-
տը կ'երթայ, կը մտնէ խեղճին խրճիթը, քանի
մի տղայք կը տեսնէ հոն մերկ և անօթութենէ
երեսնին դեղնած՝ իրենց մօրերնուն մօտ, որ նա
եւս անօթի ծնողէն քաշուերը ու մաշուեր էր։
Այս կինն՝ իւր թշուառութենէն աւելի ա-
մուսնոյն գործած յանցանաց վերայ՝ ղոր իրեն
պատմեց, զարհուրելով, կ'ինկնի բեռնակրին
ոտքն և արտաշարժ խօսքերով կը խնդրէ որ ո-
ղորմի ամուսնոյն և անմեղ զաւակաց. և իւր ա-
ղաչանքը պարապ չելնելը։ Բարեգութ մարդ-
դուն սիրտը չդիմացաւ այս ցաւալի տեսարա-
նիս, և իւր արտասուքներն եւս նորա արտա-
սուաց հետ խառնելով՝ ասաց. «Այս ձեր բարե-
կամն եմ. առէք այս քառասուն ֆիորինը՝ ղոր
յօժարութեամբ կ'ընծայեմ ձեզ։ Այսուհետև որ
այնքան ունեւոր չեմ որ կարող լինեի աւելի ա-
ռատաձեռնութեամբ օգնել ձեզ—Ինչ կ'ասես
դու, պատասխանեց գեղացին, փոխանակ ղես-
քո Թշնամիդ համարելու՝ բարերարիս իսկ կ'ու-
զես լինիլ։ Ոչ, լաւ է որ ես անօթի մեռնիմ,
քան թէ քո քսակիդ ձեռք դպչինեմ»։ Այս-
պէս ասելով հանեց տուաւ նորա քսակը. բեռ-

նակին առատասիրտ ցուցընելով զինքը՝ չուզեց առնուլ, և ոտիպեց որ նա առնու, և իւր սիտոյքն հոգայ: Այսր վերայ ամենքն եւս երեսն երենց բարերարին ձեռքը համբուրելու սաքթեափելով: Խարեսիրտ բեռնակիրը չեսաց այս դիպուածը պատմելով կ'ասէր, թէ ամենեւին կենաց մէջ այնպես քաղցր համով մի ունեցած չէ:

Ասիկա երկու օրինակ եւս կ'ուզեմ պատմել ձեզ, որոնց մէջ եղած ոգրմնածառէր անձինքը ձեր հասակակից քլնելով, աւելի մեծ ազդեցութիւն կրնան տալ ձեր սրտին:

Վեցերորդ օրինակ:

Շրեւելի դպրատան մի մէջ մեծ ուսոյ մի կայր, որ իւր ամենուսական բնաւորութեանն և բարի վարուց համար իւր բոլոր ընկերներէն աւելի սիրելի եղած էր ամենուն: Օր մի աշակերտակիցներուն հետ զբօսանքի երթալով, աղքատ մի տեսաւ, որուն դլխի վերջերը քիչ մի առաջ սասիկ հալ մի փչելով թռուցեր և դեսին մէջ նետեր էր: Խեղճ ուսոյն փերջերը կորսընցնելուն վերայ սրտմտելով, և աւելի օգէն վախնալով որ սասիկ ցրտէն նորէն չհիւանդանայ, որ տակաւին նոր էր ազէկցեր, և խեղճ աղաչելով հոն եղոյնները գտակ մի կը խնդրէր որ գլուխը ծածկէ: Շրխտասարտ ուսոյն նորա

աղաչանքներէն սիրտը շարժելով և երեսին դեղ նուիրելուն եւս տեսնելով որ հիւանդութենէ երեսնալուն նշանն էր, ձգեց որ ընկերներն յառաջ անցնին երթան, և ինքը մինակ մնալով խեղճ ուսոյն ասաց. "Ո՛ւր իմ գտակս գլուխդ ծածկէ, վասն զի քանի տակ չունիմ որ քեզ տամ. կը ցանկամ որ հիմակ առնլ անցընէք ձեր հարկաւորութիւնը". և գտակին նորա գլուխը ծածկելէն յետոյ, վազեց գնաց իւր ընկերաց մօտ հասաւ: Սոցա մէջ եղող գլխաւորն առատասիրտ ուսոյն ըրած գործին ականատես չլինելով, մինչեւ որ տուն հասան՝ չէր դիտած թէ նորա գլուխը գտակ չկայր: Յետոյ երբ հարցուց, ուսոյն կարմրեցաւ և ձայն չհանեց: Մէկդի քաշեց տարաւ, տասիկ բռնադատեց որ ճշմարիտն խոստովանի: "Ընդ, պատասխան տուաւ բարեսիրտ ուսոյն, որովհետեւ գիս կը բռնադատես որ ստոյգը խօսիմ, աղքատ ուսոյ մի տեսի ես իմ գտակս: Զդխմացաւ սիրտս, տեսայ որ հիւանդ էր, չունէր բան մի որ գլուխը ծածկէ. և ծախու առնելու եւս ձեռքս չէր հասներ, մտածեցի թէ տուն դառնալու որ լինիմ ես, կրնամ մէկ ուրիշ մի առնելու հօրս տուած վոզերով": Իւր բարի հոգին եւս որոշ ըրած բարերարութեան գովելի գործն իմանալով, այնչափ գոհ եղաւ իւր տուած վոզերը այսպիսի բարեգործութիւններու ծախս ընելուն, որ իւր սրտին ուրախութիւնը յայտ-

նելու համար կրնապատրիկ աւելցուց նորա ամ
սեմիա տուած փողը, զոր սովորութիւն ը
րած էր տալ սրտին ուզած բաներուն ծախս ը
նելու համար:

Եօթներորդ օրինակ:

Շատ ժամանակ չկայ, Լիսն քաղաքը Սաճ
գետին կամրջին վերայ գինուոր մի կանդնած
տեսան, որ անսովոր շարժմունքներու նշաններ
տալին կուտայ, անշարժ կեցաւ մի քանի րոպէ,
գլուխը կամրջին երկաթին վերայ կռթնած.
մեկ մ' ալ յանկարծ յուսահատած պէս ձգեց
գինքն գետին մէջ: Տաննէլջրա տարեկան տղան
մեկը Վիկտոս անուն, հասարսկ որդի, իր եղ
բօրը գառնալով գոչեց ետկոյն. "Նուեր էնկ
եղբայր, մենք կ'ազատենք այն մարդը": Նրկու
քըն ևս կ'երթան կը նետուին գետին մէջ, և
շատ փնտռտելէն յետոյ կը գտնեն խեղճը, որ
շունչը դեռ վերան էր, և կը բերեն գետեղելք
կը հանեն: Ձեն եկող հաւաքուղ բազմ մար
դիկ միաբերան կըսկսին գովել գինքնք: Մեծ
եղբայրը պինտ մի բռներ էր պզտի եղբօրը ձեռ
քէն և կ'սաէր անոր ուրախութեամբ. "Ձա
սայի ես քեզ թէ մենք կ'ազատենք խեղճը":
Այն տեղ գտնուողները՝ որ զանոնք գովելէն
չէին դադարեր, հանեցին ամեն մէկերնին իրենց
կարողութեան չափ ստակ տուին անոնց պար

գեւ, և տղայք ընդունեցին՝ բայց առանց ար
ժանի ցուցընելու գինքնք այն վարձատրութեան.
և աւելի մեծ զարմանքի մէջ մնացին հանդիսա
կանները՝ երբ տեսան որ այն երկու եղբայրքը
կը վիճէին իրարու հետ՝ իրենց դիւցազնական
քաջութեան տրուած վարձքը գինուորին հետ
բաժնել ուզելով: Այս առատասրտութեան
վերայ ամենքն ևս ստակ զարմացան, և իրենց
տուած իրարացի գովեստներն լսացընել տուին
այն քաջասիրտ տղայոց՝ թէ չկայ աշխարհիս մէջ
այնպէս փառաւոր և անոյշ բան մի, քնչպէս ե
թէ մեկին իւր անձնական շահն ընկերին օգտին
զոհ ընէ:

Ըսիներորդ օրինակ:

Փարիզու օրագրի հին թիւերուն մեկուն
մէջ, 16 մարտի, 1786, հետեւեալ վեհանձնա
կան գործն յօդուածը կը կարդացուի, որ նա
մակի մէջ գրուած՝ և նոյն օրագրին հեղինակին
ղրկուած է:

"Նոյեմբեր 27 ին, մի քանի տղ
ղայք երբ Վերսալի պարտէզներուն մէջ կը
խաղային, մէջերնէն երեք հոգի յառաջ երթա
լով գետին վերայ՝ որ բոլորովին սառած էր,
յանկարծ սառը խորտակեցաւ ոտքերնուն տակ
և ինկան ջրին մէջ: Կոշկակար տղայ մի Յակէմ
անուն, սան և եօթ տարեկան, տղայոց մէ

կան պօռալու ձայնը լսելով, որ քիչ մի ըղձալ
պիտնալուն դլուխը ջրէն դուրս հանած էր, վա-
ղեց շուտ մի դեռեղերքն, և տեսնելով զանոնք՝
սիրտը կ'ելլէր որ խեղճերուն օգնութեան հաս-
նի. բայց ձեռքովը մէկ մի սառը գտնելով՝ խել քը
կարեց որ իւր ըրած չանքը սպառած ելլելով դէն-
քին եւս վտանգի մէջ պիտի ձգէ և զանոնք չը
պիտի կարենայ ազատել: Այսու ամենայնիւ
իւր սրտին ցաւուն և տղայոց պօռալու ձայնե-
րուն չդիմանալով, որոնք յօդնութիւն կը կան-
չէին, ծնկան վերայ կուգայ գետնին երեսը, և
խաչ հանելով կը նետուի քաջութեամբ սա-
ռած ջրին մէջ, և շատ դժուարութիւն քաշե-
լէն յետոյ, վերջապէս մէկիկ մէկիկ դուրս կը հա-
նէ խեղճերը մէկ ձեռքովն առջեւի սառերը
կոտրելով և ճամբայ բանալով, և միւսով տղայն
բռնած:

«Պըղտիօղլի պարոնն, որ տէրութեան առե-
նադպիրն էր, իրեն պարտք մի համարեց թա-
գաւորին իմացընելու այս գործը բոլոր պարա-
գայներովն, որ բարեհաճեցաւ իսկոյն ոսկի մի
տալ մի չինել տալ հազար ֆրանքի արժողու-
թեամբ, և քաջասիրտ Յովհաննիսին ընծայել, իշ
խանութիւն տալով միանգամայն կուրծքը կա-
խելու զայն, որպես զի այսոյ հետայոյս և իւր ը-
րած վեհանձնական գործոյն յիշատակ լինի, ո-
րոյ համար արժանի եղաւ անոր, և միանգամայն
յիշեցընել իրեն միշտ՝ չգործել բնաւ այնպիսի

գործ մի, որ իւր քաջասրտութեան և մարդա-
սիրութեան դեղեցիկ և պատուաւոր վկայու-
թիւն հանէ:

«Փորել տուած միտալին մէկ կողմը Լու-
դովիկոս ԺԴ-ին պատկերը կը ներկայացնէր, և
միւս կողմը հետեւեալ խորագիրը դրուած էր:

ԹԱԳԱՒՈՐՆ
ՊԱՏՈՒԻՑ ԱՅՍ ՄԻՏԱԼՈՎ
ՋՅՈՎՍԷՓ ՔՐԻՍՏԻԱՆԻՆ
ՎԵՐՍԱՅԼՅԻ
ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹ ՏԱՐԵԿԱՆ
ՈՐ ՔԱՋՈՒԹԵԱՄԲ ՆԵՏՈՒԵՑԱՒ
ՍԱՒԻՆ ՏԱԿ
ԵՒ ԴՈՒԲՍ ՀԱՆԵՑ ԵՐԵՔ ՏՂԱՅՔԸ
ՈՐՈՆՔ ՄԵՌՆԵԼՈՒ ՎԵՐԱՑ ԷԻՆ
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1785:

«Այս միտալը, կ'ասէ նամակին տէրը, և
թէ չեմ խաբուիր, թէ քաջասիրտ առաքինու-
թեան պատիւ կը բերէ, և թէ տէրութեան
խոհեմութեան՝ որ դիտէ այսու կերպիւ վար-
ձատրել զառաքինութիւնը:

Այս օրինակներէս դեղեցիկ բան մի կրնամք
մակաբերել, սիրուն որդեակք իմ. իւր ղ բա-
րի ընել ամեն հատակի և ամեն վիճակի մար-
դոց յատուկ է: Թէև կարողութիւն որուած
չէ ձեզ բան ամենայն մասին օգնութիւն ընել

լաւ դժբախտից , գոնէ ձեռքերնէդ եկածին չափ զանց մի առնուք բարիք գործել :

Նէթէ ձեր ծնողքն երբեմն սուակ պարգեւ տալու լինին ձեր տղայական ծախսուց համար , դուք ձեզ օրինք մի դրէք նորա մէկ մասն աղքատաց տալու : Այս է ամենէն աղէկ և գովելի միջոցն լաւ բանի գործածելու ձեր փողը : Վերջապէս գիտասիրտ մարդու կամ մանաւանդ քրիստոնէի մի արժանաւոր եղած ղաւարճութիւնն և ուրախութիւնն այս է :

Գեղեցիկ օրինակ բարերարութեան :

Բարերարութեան և ողորմութեան գեղեցիկ դասերը կարծես թէ մօրը կաթին հետ մէկ տեղ ծծած էր Վարսիլեացի վաճառականի մի որդին, որ իւր խիստ մատղաշ տարիքէն յայտնի ցոյցով աղքատաց վերայ ունեցած իւր մեծ խնամքն և օգնութիւնը : Ծանապարհին վերայ քանի որ աղքատ տեսնէր , մէկէն կ'երթայր կը մօտենայր , և անոր ողորմութիւն կուտայր քովն ղքան ատակ որ գանուէր , ղոր ծնողքը կուտային իւր տղայական պզտիկ ծախսուցը համար : Ընդ վեց տարեկան էր երբ անգամ մի հիւանդութեամբ պատկեցաւ , և բժիշկներն էին նայեցան և ասացին թէ՝ մինչեւ որ իւր հիւանդութեան հարկաւոր եղած դեղը չառնու՝ չաղկնար : Ցաւարութիւնը հիմայ դէն

խոյլնեն էր . վասն զի առջի անգամն երբ դեղը տուին իրեն որ խմէ , ատատիկ լաց մի ձգեց . և թէպէտ կ'ատէին իրեն որ դժուարութեան չաղկնէ և ակռաները սեղմէ, պատռտման կուտար թէ՝ չեմ ուզեր և չեմ խմեր այդ դեղը : Ինչ յորդորանքներ որ կ'ընէին և տղայոց ամէն խորհրդակից յարմար բաներ կը խոստանային , բողոքը փուճ կ'ելնէր , և չկրցին սիրտն ընել . և ոչքան որ կրատխոսէին կ'աղաչէին , նա այնքան կը խոստանար իւր կամապաշտութեան վերայ , մինչեւ մօրը ձարը հատնելով , այսպիսի հնարք մի բանեցուց . որովհետեւ կը ճանչէր իւր որդւոյն քնաւորութիւնն որ խիստ աղքատասէր էր , դարձաւ ասաց . "Սիրուն զաւակս, եթէ չես ուզեր դժուարութեան չաղկնել քո մօրդ և հօրդ սիրոյն՝ որ այսքան կ'աղաչեմք ըզքեզ , աղէ , խմէ սա դեղը գոնէ ի սէր աղքատաց , որոնք այնքան սիրելի են քեզ : Ահմայ ես մէկ աղքատ տղայ մի տեսայ , որ կէս մէջքէն հին շորի կտոր մի հագած էր , և ցրտէն փայտ կտրեր էր մտիմնը : Արդ՝ եթէ այս դեղը խմելու քաջութիւն ունիս , որ հիւանդութեանդ խիստ օգտակար է , խօսք կուտամ քեզ որ դէ ձեր չեղած այն աղքատուկ տղուն նոր լաթեր հագցուենեմ : — Նէթէ այնպէս է , պատռտման տուաւ որդին , տուր ինձ դաւաթը " : Ձեռքն առաւ զայն և ակռաները սեղմելով սկսաւ խըմել . բայց կէսը միայն խմեց չխմեց , դաւաթը

ձեռը երկնցընելով. «Ա՛հ, մայրիկ սուտ, այս մրքան լեղի է. բունե. այլ չեմ կրնար խմել»։ Վրհնեց այն սահեն մայրը. «Աբրիմն կ'ուզես որ ես եւս այն աղքատ տղուն մինչեւ կէս մկրքը յաթի հադցնեմ. ես ոչքան որ քեզ խօսք տուի նոր լաթեր չինելու անոր, բայց եթէ դեղին ա մինը խմելու լինիս և ոչ թէ կէսը»։ Այսր վերջապ տղան նորէն ձեռքին տուաւ գաւաթը, բեւ բանը տարաւ և մինչեւ տակը քամեց։

Այս պզտիկ տղուն աղքատասիրութիւնն այնքան արտաքոյ կարգի և գիւղացիական է, որ թէ իւր ծնողքը պատմած չլինէին, չէի հաւատար, և ոչ ձեզ պատմելու կը համարձակէի։

Պզտիկ տղու մի գեղեցիկ պատասխանը։

Տղայ մի կը ճանաչեմ ես, որ եօթ տարեկան էր, և խիստ աղքատուկ հնկան մի երեսուն դրամ կուտայր ամէն ամիս։ Այդն իմանալով որդւոյն այս գործը, հարցուց թէ՝ ինչու համար իրեն բան մի չէր գնուցած։ «Ա՛հ մայր իմ, պա տասխանեց որդին, դուն լաւ գիտես որ ձախ ձեռքը սեաք չէ իմանայ ինչ որ կը գործէ աջ ձեռքը»։

Այս գեղեցիկ օրինակիս դաք եւս հետեւեցէք. նախանձաւոր եղէք նմանակս և դաք չյայտնել ուրիշին ձեր լրած ողորմութիւնները զոր կը վախնաք կարօտ մարդոյ ընդհարելու։

Եթէ Աստուած այնպէս անօրիներ որ դուք աղքատ և տառապեալ վիճակի մի մէջ ծնած լինէիք, անտարակոյս խիստ կը ցանկայիք և կ' ուզէիք որ ուրիշները ձեզ օգնութիւն ընէին, որու պէտք կ'ունենայիք։ Ազէ ուրեմն, աժենասիրելի զաւակունք իմ, դուք եւս ըրէք նոյն պէս այլոց, ինչ որ կ'ուզէիք որ այլք ձեզ ընէին։ Բայց ողորմութիւն ընելու ժամանակին դուք աչքերնիդ միշտ դէպ ի Աստուած դարձուցէք և համարեցէք թէ Աստուծոյ կուտաք. վասնզի աղքատն Աստուծոյ պատկեր է, և ինչպէս կ'ասէ Սողոմոն. «Որ կուտայ Աստուծոյ, ան որ աղքատին կ'ողորմի»։ Այս կերպով չէ թէ միայն ընդունելի կը լինին ձեր ողորմութիւնները, այլ և կը շահուան իսկ. վասն զի ան որ ճշմարիտ ոգի ունի ջերմեռանդ հաւատոյ, անհնար է որ ողորմութիւն չընէ խղճալի մարդոյ, որոնց վերայ կը տեսնուի Յիսուս Քրիստոսի պատկերը։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ճշմարիտ արժանաւորութեան վերայ։

Զկաց մէկն որ չցանկայ արժանաւորութիւն ունենալու. բայց քիչ մարդիկ կան ճշմարիտ արժանաւորութիւնն ալէկ ճանչցող։

Առաւելապէս տղայք սխալ կարծիք մի ու-

նեցեր են ասոր վերայ : Սոքա կը կարծեն թէ մարդոց մօտ յարգ և պատիւ գտնելու համար բաւական է որ աղնուական ցեղէ և իշխանութեանց և պաշտօններու տէր լինի և անհատնում գանձ ունենայ : Ուրիշ դուք եւս այսպէս կը կարծէք , սիրուն ոդեակք . ուստի կ'ուզեմ իմացընել ձեզ ձեր խաբուիլը , և ուսուցանել ձեզ՝ որ յարգութեան արժանի համարիք միայն այն քանի որ ճշմարտապէս յարգելի է :

ՅՕԴՈՒԱԾ Ա ·

ճշմարիտ արժանաւորութիւնը ցեղի ազնուութեան վրայ չէ :

Այ , արդարեւ , աղնուական ծնողքեանց կամ աղնուատոհմութեան վերայ չէ ճշմարիտ արժանաւորութիւնն : Ինչ օգուտ է երեւելի տոհմէ լինիլ , եթէ իւր մեղքերովք կը մեծցընէ նորա պատժաւորութիւնը : Մեր նախահարց ունեցած արժանապատուութիւնը չկրնար զմեզ պատուոյ արժանի ընել , և անոնց գեղեցիկ գործերն՝ որով երեւելի եղած են , եթէ անոնց չհետեւինք , ուրիշ օգուտ մի չեն ըներ , բայց եթէ իրենց ապազգայ սերնդոց անարգութիւնն և նուաստութիւնն աւելի յայտնի կը ցուցընեն :

Ազգան աւելի ազէկ էր անարգ և նուաստ վիճակի մէջ ծնանիլ և անձնական առաքինութեամբք երեւելի լինիլ , քան թէ մնոտի սխալ

պատկերք իւր վերայ՝ Պէյի կամ Վէզիրի և կամ Էֆէնտիի :

Հռոմայեցւոց մի գեղեցիկ խօսքը :

Երբեմն Հռոմայեցւոց մի երբ երեսը կը զարնէին անարգ տոհմէ լինելը , պատասխան կուտայր ազդու կերպով մի . " Հիրաւի ես չեմ կրնար իմ աղնուատոհմութիւնս յառաջ բերել ձեզ , բայց կրնամ ցուցընել իմ վերքերուս նըշանները , զոր իմ հայրենեացս պաշտպանութիւն ըրած ժամանակս ընդունեցի : Ահա անոնք են իմ աղնուականութեանս տիտղոսները " : Այս մարդուս տուած պատասխանը խիստ խելացի էր , և կրնար նաեւ զուցել Իւիկրատէս անուն մէկու մի ասածը հպարտ աղնուականին , որ նոյն չանդիմանութիւնը կուտայր Իւիկրատէսին , և իւր վարմունքովն իւր պատիւը կորնցուց . " Իմ ցեղս , ասաց անոր Իւիկրատէս , ինձմէ կը սկսի . քո ցեղդ քո վերջադ կը վերջանայ " :

Ուրեմն հիրաւի , ոքան աղնուատոհմ մարդիկ մոռացութեան մէջ ինկած են , և ոքան ցած ազգէ մարդիկ մեծ անուն ունեցեր են , և իրենց անձնական գեղեցիկ յատկութիւններով և փառաւոր գործերով արժանի եղած են իրենց ժամանակի մարդոց և ապագայից յարգանաց :

Առանց ազնուութեան ծննդոց արժանաւորութիւնն
աւելի մեծ դատելիներու կը բարձրացնէ ։

Օրինակ միակ ։

Մեսրոպ ե այգեպուծի մի որդի էր, և կոչ-
ուեցաւ Աբջանիկ Փերեդդի ։ Իւր հայրը չկրա-
նալով որդւոյն ապրուստը ձարել, դեղացւոց
մի մօտ դրաւ. նա եւս իւր ոչխարներուն պա-
հապան ըրաւ, և յետոյ խոզերու վարպետի պա-
շտօնի կարգեց ։ Մեսրոպ իւր գործին հազ կը տա-
նէր, երբ օրին մէկը տեսաւ որ Դրանչխաչեան
կրօնաւոր մի կ'անցնէր, և կ'աղաչէր զինքն որ
Ասկոզ քաղաքին ճանապարհը իրեն ցուցընէ ։
Տղայն ընկերացաւ անոր. և այն կրօնաւորայ
վանքին մէջ հնար եղաւ մնալով, այնպիսի մեծ
փափագ մի ցոյց ուսման, որ յետոյ ազգիկ
կրթութիւն առնալով երեւելի եղաւ գիտու-
թեանց մէջ ։ Ան որմէհետեւ սրամիտ էր, իւր
վարժապետայ չանքն և ակնկալութիւնն ան-
դուստ չէին ելներ, և իւր հաճութեամբն ըն-
դունեցաւ և հագաւ սուրբ Դրանչխաչի կար-
գի պատմուճանը ։ Աբջանիկ Փերեդդին քիչ
ժամանակի մէջ եղաւ քերթող և քաջ վիպաս-
փյռ։ Արքային կարգն ընդունելով վարդապետ
ձեռնադրեցաւ եւ աստուածաբանութեան
դասատու կարգեցաւ Սիւնեաց մէջ ։ Ընկէ յե-
տոյ օր աւուր իւր արժանաւորութիւնները
պայծառ եղան, և մէկ պաշտօնէ ուրիշն անցնե-

լով, վերջապէս 1585 ին Հայրապետական ամե-
նայն Տաճեցւոց, և բոլոր աշխարհին ցոյց տուաւ
զինքն նոյն պաշտօնին արժանաւոր լինելը, և իւր
օրինակով ուսուց թէ՝ արժանաւորութիւնը
կրնայ ծննդեան պակասութիւնը լեցընել, և թէ
ապերասիկ խոհեմին մէջէն կրնայ երբեմն յա-
ռաջ գալ այնպիսի մէկին, որ արժանաւոր լինի
մեծ պաշտօնի հասնելու ։

Այս խորհուրդս ունէր նաեւ երեւելի մա-
թեմատիկոս Պապոն, որ զինուորական աշխատու-
մէջ նշանաւոր եղաւ ։ Հենրիկոս Դ ին դիմացն
երթալով՝ զինքն իւր կարդին տալէս ընդունելու
համար. "Տէր իմ, ասաց իւր ազնուականու-
թեան համար ունեցած վիրաւորանքներն նորա
ցուցընելով, ահա իմ դերդաստանիս ազնուա-
կանութիւնը հաստատող ախտագրերը ։" Ցե-
տոյ ուզելով խնայընել Թագաւորին՝ թէ Ն-
վ եհատուածութեան համար փառաւոր գոր-
ծեր ընելն աւելի մեծ կը համարի, քան թէ յա-
ռաջ բերած իւր հին ախտագրերը, վերոյ բե-
րած իւր թրին կոթէն բռնելով. "Առաւել այս
սերը, ով Թագաւոր, սեսէք նոցա աստուա-
ծութիւնը ։"

Այս օրինակներուս վերոյ կրնանք դիտել
ճշմարիտ արժանաւորութիւնը ։ Միտքերնիդ
բերէք անգամ մի որ ազնուատոհմութեան
որուած փառքը՝ մնացածին փառք մի է, եթէ
առաքինութեան հիման վերոյ հաստատուած

չէ. և եթէ պատիւը մարդոյս ցեղին հնութեան վերայ լինէր, մենք ամենքս եւս աղնուական և պատուոյ արժանի կը լինէինք, որովհետեւ ա՛մենքս եւս Ադամայ որդիք ենք:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Արդուս արժանաւորութիւնը փարթամութեան վրայ չէ:

Ուրիշին յարգանաց արժանի լինելու համար, ինչպէս որ աղնուականութիւնը՝ նոյնպէս և ոչ փարթամութիւնը կրնան օգուտ մի ընել մարդոյ, և եթէ փարթամութեամբ է որ պատիւ կ'ընդունի, զանոնք գովելի և աղէկ բաներու գործածելով միայն կը լինի: Ա՛յսէկ ի զատ՝ աշխարհիս բոլոր գանձերն իմաստուն մարդոյն աչքին արտաքին և ընդունայն զարդ մի են, և ես ադամանդներով զարդարուած պատկերն և կամ ոսկիէ ու արծաթէ արձանը կը նմանեցընեմ այն մարդուն, որ գոյքերէն ի զատ ուրիշ արժանաւորութիւն մի չունի:

Ա՛յսու ամենայնիւ դուք ամեն տեղ կը լսէք որ փարթամութիւնները կը գովեն և կը պատուեն, և կը տեսնէք եւս որ մարդոց մէջ շատերն ունեւորութիւնն իրենց պատուասիրութեան տատապելի և անհնչ աշխատութեանց առարկայ մի ըրած են: Բայց սիրելի որդեակք իմ, ուրիշին օրինակով մի մոլորիք, այլ գիտցիք որ նոյն իսկ մարդիկ, որոնք կարծես թէ ուրիշ

ամեն բանէն աւելի կը յարգեն այս ընդունայն մեծութիւնները, նոքա դարձեալ կը խոստովանին նոցա ոչքան արհամարհելի լինելը, և թէ ի՛նչպէս անշահասիրութիւնը վեհանձն մարդոց առաքինութիւնն համարուած է միշտ:

Ընչահասիրութեան օրինակ:

Ա՛յս առաքինութիւն, զոր աւելի իրաւամբ առատաձեռնութիւն կրնամք կոչել, նոյնն է որ Փոկիոն հռչակաւոր յոյն ատենաբանին և փիլիսոփային անունն անմահացուց: Օր մի Ա՛ղեքսանդր մակեդնացին մեծ ընծայ մի ղրկելով անոր, նոյն ընծայն բերողներէն ուզեց իմանալ թէ ինչո՛ւ համար Ա՛ղեքսանդր այնքան բազմաթիւ Ա՛թենացւոց մէջէն զինքը միայն ընտրած էր իր բարեբարութիւնը վայելող: Պատասխան տուին թէ՝ «Ա՛ղեքսանդր այնքան մարդոց մէջ զքեզ միայն առաքինի և բարեկիրթ դատեց»: Կրկնեց Փոկիան. «Երանի թէ, Ա՛ղեքսանդր, իրօք այնպէս լինէի»: «Թագաւորը նոյնին փոխել ուզեց զինքն, և Ա՛թիոյ մէջ չորս քաղաք առաջարկեց անոր՝ որ նոցա մէջէն իր սրտովն հաւնած մին ընտրէ, և վայելէ բոլոր եկամուտները: Բայց Փոկիան չուզելով որ նոյնա առատաձեռնութեան շնորհքները չընդունելովն արհամարհութեան կասկած մի տայ իրեն, ուստի չափաւորելով իր հնդիքն՝ ազա-

չեղ կայսեր որ բարեհաճի ազատութիւն շնորհել քառս հազարաց, որոնք Սարդի քաղաքին բերդին մէջ բանտարկեալ էին. և իսկոյն ընկալաւ խնդիրքը: Այս առաքինի գիւցազնին, այս անշահասէր քաղաքացին նոյնպէս հրաժարեցաւ ընդունելու ժամանակէ մի յետոյ Կ. պօլսոյ յաջորդին Կոնստատեայի ըրած պարգեւները: Նրբ իւր բարեկամները կը յորդորէին վնքն որ ընդունի զանոնք գոնէ իւր զաւակացը համար, պատասխան տուաւ. «Մինչ իմ զաւկներս իրենց հօր պիտի նմանին, գոհ կը լինին իմ ձգած փոքրիկ ժառանգութենէս. իսկ եթէ դժբաղդութեամբ անառակութեան տալու լինին վերնէք, վնաս կրնար եւ նոցա զեղխութիւնը հաշեցնելու համար մեծագոյն ժառանգութիւն մի թողուլ:

Անշահասէր գիւցազուններ:

Պայտոս ասպետը, որ էր Կարոլոս Ը. ի թագաւորութեան ժամանակ, քիչ երեւելի վերաբերեալ գեղեցիկ գործովը՝ զոր հիմայ պիտի պատմեմ ձեզ: Նրբ Վ. ենետիկցւոց Պրեշիա քաղաքին վերայ թշնամիները յարձակելով նուաճեցին, Պայտոս մեկ առն մի պահպանեց աւարառութենէն, որու մէջ ինքն ապաւիներ էր, և ան ոչ՝ որ սիրելի մի էր, երկու աղջիկներ բոլին ազատեց: Տընէն եղնելու ժամանակ սկսան ուզել իւր երախտագիտութիւնն անոր յայտնել, տուփ մի ընծայեց, որու մէջ պարսատիկ մի կայր երկու հազար հինգ հարիւր տուգաթի արժողութեամբ, զոր Պայտոս ասպետն ամենեւին չուզեց ընդունիլ: Բայց յետոյ տեսնելով թէ զայն չընդունելին, իւր աղատաձեռն վարմունքովը պիտի վշտացնէ, որ միանգամայն նորա երթալուն վերայ եւս կը ցաւէր, հաճեցաւ ընդունիլ այս մեծ պարգեւները, և նորա երկու աղջիկները կանչել տալով որպէս թէ իւր հրաժարական ողջոյնը տալու համար, շնորհեց նոցա ամեն մէկուն հազարական տուգաթ, որ իրենց ամուսնութեան դիւրութիւն մի լինի, և մնացած հինգ հարիւրն ևս բաշխեց աղքատ ընտանեաց, որոնք պատուարժան երեսէն կարօտութեան մէջ մնացեր էին:

Հռչակաւոր Վիւրէն զօրավարին երեւելի գործերը պատմող հեղինակն, նորա փառաւոր և յիշատակութեան արժանի գործերէն մին կը համարի հետեւեալ դիպուածը, որուն վրայօք չեմ ուզեր լռութեամբ անցնիլ: Նրբ Գերմանիա մէջ կը հրամայէր, չեզոք քաղաքի մի բնակիչները կարծելով թէ Դաղլհայսւոց բանակը նոյն քաղաքին մէջէն պիտի անցնի, հարիւր հազար թալէռ շնորհեցին զօրավարին, որ իրենց քաղաքն ոտք չկոխելով, ուրիշ ճանապարհէ մի անցնի երթայ: Բայց Վիւրէն անարգութիւն համարելով ընդունիլ այն գումարն, զոր իրենց պա-

նոսի երկիւղէն և սխալմամբ կ՚ընծայէին, պա-
տասխանեց նոյն դեսպաններուն. «Չեմ կըր-
նար ընդունիլ ես առանց խղճմտանաց այդ գու-
մարն՝ զոր դուք ինձ կը նուիրէք, վասն զի ամե-
նևին մտքես իակ չունիմ ձեր քաղաքին մէջ
անցնիլ»։

Ծադկեան ծովապետն պատարագ ընելու
համար եկեղեցին երթալով, աղքատ մի մօտե-
ցաւ իրեն ողորմութիւն խնդրելու՝ երբ ինքն
ներսեանդութեամբ ազօթքի կեցած էր։ Ձեռ-
քը դրպանին մէջ խոթելով քանի մի ոսկի դուրս
հանեց և առանց համրելու տուաւ անոր։ Աղ-
քատն այս մեծ գումարը տեսնելով զարմանքի
մէջ մնաց, և որովհետեւ բարի մարդ մի էր,
մտածեց թէ գուցէ ծովապետը սխալած լինի,
ուստի առանց ձեռք դպցընելու պահեց քովը։
Յետոյ գնաց սպասել եկեղեցւոյն դուռը, և
տեսնելով այն ողորմածասէր մարդուն դուրս
ելնելը, մօտեցաւ քովն և ասաց. «Տէր իմ, ան-
տարակոյս սխալած էք դուք։ Ահա այս ոսկին,
կ՚աղաչեմ, այս ողորմութիւնը ինձ համար չալի-
ան լինի»։ այսպէս ասելով տուաւ անոր ոսկի-
ները, զոր քիչ մի յառաջ անկէ ընդուներ էր։
Ծովապետն անոր ոգւոյն վերհանձ-
նութեան վերայ, մարդասիրութեամբ մի աղ-
քատին երեսը կը նայի ու կ՚ասէ. «Իրաւ է բա-
րեկամ, ես չգիտնալով այսքան ոսկի ողորմու-
թիւն ուսած եմ քեզ. բայց որովհետեւ դու

առատասրտութեամբ նորէն ետ տալ կ՚ուզես,
զոր սխալմամբ առի քեզ, ահա հիմայ երջանկու-
թեամբ վայելէ այս դրամը, և շնորհակալ եղիր
Աստուծոյ նախախնամութենէն»։

Այս աղքատին օրինակն, որ իւր պարկեշ-
տութեամբն առատօրէն և արդարութեամբ
վարձատրուեցաւ, ազէկ փորձ մի է, որ մեր
անձնական շահուն վնաս մի չտալէն ի զատ,
շատ անգամ եւս խիստ օգտակար կը լինի մեզ
առատաձեռնութիւնն. այսպէս չէ ընչից ցան-
կութիւնն և զանձ դիզելու սէրը, զոր ունե-
ցող մարդն աղատ չէ երբէք թշուառութիւն-
ներէ։ Այս կիղբս շատ անգամ անիրաւութիւն
ընելու եւս պատճառ կը լինի. և կը տեսնեմք
որ դրամի վերայ եղած չափազանց սէրը, մոլու-
թիւն մի կուտայ մարդոյս օրէ օր իւր գոյքն ա-
ւելցընելու, զոր սովորաբար իւր պատուոյն և
բարեպաշտութեան վնասուին կրնայ ձեռք բե-
րուիլ։ Փարթամութեան սէրն ոչ միայն ար-
դարութիւնն և պատիւն կը մոռցընէ, այլ և
մինչեւ բնութեան զգացմունքները խափանել
կուտայ նոցա սրտին մէջ, ուր պէտք էր որ խոր
արմատացած լինէին։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Գործուոց եւ խչխանութեանց վերայ։

Գուցէ դուք կը կարծէք՝ թէ մեծ իշխանու-

թեանց հանողներին աւելի պատուաւոր են նոյնա համար որ առաքինաբար հաստատակամ մարդոց մէ վեր են: Այլ այնպէս չէ, սիրելի որդեակք իմ, եթէ այս դարուս մեծ երեւցող անձինքն իրենց իշխանութենէն և պատուէն ի զատ՝ ուրիշ արժանաւորութիւն մի չունին, մարթ է ըսել՝ որ անոնք ճշմարտապէս արժանաւորութիւն չունին: Կը նմանին այն արձաններուն, որոնք պատուանդան ունենալնուն համար՝ տեսնողներուն աչքին հակայաձեւ կ'երեւին:

Ուշ, սիրուն որդեակք իմ, իշխանութիւն ներսը մարդոց արժանաւորութեան ուրիշ բան չեն կրնար ընել, այլ այն միայն՝ զոր պատուանդանները գաճաճներուն արձանին կ'ընեն: Որոնք թէպէտ և հեռուստանց սեւնողին աչքին խիստ մեծ կ'երեւցնեն, բայց մօտին նայողին խիստ փոքր կ'երեւին: Այնենեւին մէկին իւր իշխանութեան համար պատիւ չէ գոյած, այլ միայն բարի վարմունքովն արժանի եղած է պատուոյ:

Թագաւորի մի իմաստուն ջարմունքն իւր որդւոյն հետ:

Ասիոյ թագաւորներէն մին իմանալով թէ իւր որդին անհարգութեան սէր ունի զինքը, կանչեց մօտն, և իւր դերբիներուն մէջէն ամենէն անարգն եւս բերել տալով, երկաբին եւս վերայի լաթերը մերկացուց, և դարձաւ դէպ

ի որդին ասաց. "Այսչափ եւս մնադրութեամբ սորա մարմինն, յետոյ քո վրադ դարձու աչքդ և նայէ՝ թէ ինչ խորհութիւն կայ իշխանի մի և դերվին մէջ: Այնենեւին զանազանութիւն մի չես կրնար գտնել, այլ մարմնոյ կողմանէ կը տեսնես որ սորա հետ հաւասար եւս. բայց եթէ այս դերվին ոգւոյն մէջ կարող լինիս թափանցել, կը տեսնիս որ սորա հոգին քան զքայլաւելի գերազանց է. վասն զի նա ինքզինքն անկարգութեան և մոլութեան չտալ որպէս զի պատուէդ կը ձգեն և անարգ կը դատապարտեն ամենուն աչքին: Այն խորհուրդ ուրիշին իշխանութեան սին շքեղութենէն՝ որուս մէջ ինքզինքդ կը տեսնես. այլ միտքդ բեր թէ՝ որքան որ իշխանական վիճակի մէջ ես, այսու ամենայնիւ ամենէն անարգ դերվին մը եւս չշատանաս, եթէ նա քեզմէ աւելի առաքինի լինի»:

Երիտասարդ իշխանազունը բնութեամբ բարեսէր լինելով, շատ օգուտ ըրաւ իրեն այս խրատս, և առանց դժուարութեան խնդացաւ՝ թէ անձնական արժանաւորութիւնն է միայն որ ճշմարտապէս մարդ մի ուրիշ մարդէ կը զանազանէ:

Արդանոյ կը ցանկամ եւս, սիրուն որդեակք իմ, որ դուք եւս այս իշխանազունն ասպէս հատնողութիւք առած ճշմարտութեանս: Այն ժամանակ, այո, ձեր խնամատուն վարմունքով կը կանաք երեւելի լինիլ. և չէք ցանկար նմանիլ

անարգ մարդոց, որոնք մեծ երեւալու համար անարգութիւն և խորամանկութիւն կը բանեցընեն: Ու որովհետեւ սոքա այս միջոցներով չկարեն իրենց դիտաւորութեան հասնելու, ուստի ուրիշին պաշտպանութեամբ կ'աշխատին մեծ պատիւներու հասնիլ. բայց պաշտպան եղող անձինքն ոչ երբէք կրնան տալ նոցա ճշմարիտ արժանաւորութիւն: Իսկ դուք սովորութիւն ըրէք հիմակուց ձեր վերայ որեւէ երեւելի լինելու համար հարկաւոր եղած միջոցները, կ'ուզեմ ըսել ձեր խոհեմութիւնն և խելքն ազէկ բանեցրու դործածեցէք, և կանոնաւոր ու իմաստուն ընթացք մի ունեցէք:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Քաջութեան եւ դատերաշմտական գործոց վերայ:

Երեսատարդ տղայոց աչքերը դիւրաւ կրնան խաբուիլ. և ինչպէս որ փոքր տղայոց մեծ մասը փայլուն և շաքարուն իրերը կը սիրեն, նոյնպէս եւս կը զարմանան այն կարգի դուրս դիւցազանց վերայ, որոնց յաղթութիւններն և աշխարհակալութիւնները դովութեամբ կը յիշատակուին պատմութեանց մէջ: Ալէքսանդիր որ ամենէն մեծ աշխարհակալն արհամարհութեան արժանի է, երբ բոլանդակ ժողովուրդեան կամ ազգի սիրելին կուտոյ, ինքն իւր կկորչեցընէ, և արդարութիւնն ու մարդկութիւնն ոտքի տակ առնելով՝ այն յաղթութիւնը կը ստանայ:

Աղդատակի մի խեչացի դատաստանը:

Մեծն Ալէքսանդր շատ ընդարձակ երկիր նեղու սիրելին կուտոյ, ուր տեղ իւր պատուսիրութիւնը կ'առաջնորդէր իրեն, հարցուց ծովատպատակի մի, զոր ինքն գերի բռնած էր, թէ ինչ իրաւունքով ծովերուն վերայ աւազակութիւն կ'ընէ: Որուն պատասխան տուաւ. "Նոյն իրաւունքով՝ որով դուն բոլոր աշխարհս աւարառութեամբ կը կողոպտես. բայց ես փոքրիկ նաւու մի վերայ միայն կը յարձակիմ՝ և աւազակ կը համարուիմ, դուն որ ամենիս և զօրաւոր նաւատորմիղով կը յարձակիս կը թալես՝ աշխարհակալ կը կոչուիս»: Խելացի է տուած պատասխանն, որով պէտք է համոզուիլ թէ մեծամեծ գործերը եթէ արդարութեան վերայ հիմնած չեն, մեծ յանցանք ներ են:

Պիւոթ առաքինի գեղեցիկ խօսքերը:

Պիւոթ առաքինի մեռնելէն յառաջ ըսած խոսակցութենէն յայտնի կ'երեւի թէ այսպէս կը մտածէր նա: Իւր թագաւորին համար պատերազմելու ժամանակ սատակի վիրաւորուելով

ծառի մի տակ փառաւոր պատկեր էր։ Պուրտօնի դուքսը, որ Վաղենտինոսի բանակը կը հալածէր, հոն մնացեր անցնելով ճանչցեր էր զինքն եւ քովը մտերմացեր ատոր մէջ՝ «Ես ատ կը ցաւիմ այդպիսի վիճակի մէջ դրեր տեսնելով»։ Պէյտր զօրավար պատասխան տուաւ. «Պարոն, իմ վերայ պէտք չէ որ ցաւիս, վասն զի ես իրրեւ պատասխանատու եւ հաւատարիմ զինուոր կը մեռնիմ. այլ քո վերայ ցաւիլ պէտք է, որ Թագաւորիդ եւ հայրենեացդ դէմ կը պատերազմիս»։ Եւ այսպէս ասելով հոգին աւանդեց։

Ինձմէ ալ սովորութիւն ըրէք, սիրելի ընդհակառակ իմ, այս խնամատուն առածներուս վերայ կանոնաւորել ձեր գազափարները եւ ընթացքը։ Այս համոզեցէք միշտ պատասխանատուութիւնն քան զփառքը, եւ մանաւանդ ատոնց դիտցէք՝ որ ճշմարիտ փառքն իւր պատասխանատուութիւնները կատարելու մէջ կը կայանայ, եւ ամենեւին մի խաբուիք պատասխանատուութեան առտ հրապոյրներէն։ Այն մի պատասխանատուութեան կիրքը շատ բաներու չյայտ կուտայ, բայց քնաւ օգուտ մի չունի. եւ մեք ամեն օր կը տեսնենք որ իշխան վեր բարձրանալ ուզող մարդիկ մեկէն վար ինկնելով, ինքզինքնին կը կորսնցնեն միշտ։

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Տագանդաց եւ հանճարոյ ջերայ։

Տաղանդն և հանճար սովոր են իրենց պայծառութեամբ մարդոց աչքերն առնել, և ոչ թէ զանոնք ունեցողներն յարգ և պատիւ կը գտնեն, այլ ընդհակառակն առելի կը լինին և թէ չարաչար գործածեն։

Ասօք մի կայ կ'ասեն թէ՝ գեշ մարդոց մի ուղեցած հանճարը, յիմար մարդու ձեռք եղած թրի կը նմանի։ Ձկայ հեղինակաց մէջ անկէ վատն և վնասակարն, որ իւր խելացի հատանելով՝ այլոց սովորութիւնքն և կրօնքը կ'արհամարհէ։ Ա՛յս ոգին ունեցող հեղինակները կը նմանին հատարակութեան թոյն խմցընողներուս, վասն զի իրենց դիտաւորութիւնն կարգացողը ներսն միտքն և սիրտն ապականել և խանգարել է։ Կը տեսնեմ նաեւ որ ատոնցմէ մին երբ ուշը վերան բերելով մտածելու լինի անպատմ մի թէ ինչ մեծ չարութիւն յատաջ կուգայ իւր դրուածներէն, պատասխանութիւն մի իրեն կը համարի առջի գրածները մերժելու եւ հրապարակաւ զանոնք արհամարհելու։

Ճացկահատակ հեգինոգին ցրած գեղեցիկ ցոլք։

Ուսումնական ազգն մեկը Տոկէ անուն, դիպուածով առասպել պատմութիւն մի կար-

պալով, ուղեց որ ինքն եւս ուրիշ պատմութիւն մի չարադրէ նորա նման, եւ որովհետեւ սուր միտք ունէր, յաջողեցաւ իրեն դլուխ հանել մոքին դրածը: Լրացընելէն յետոյ իւր մօրը ցցուց զայն. բայց մայրը ճշմարիտ քրիստոնեայ լինելով՝ քանի մի երես կարդալով, դարձաւ ասաց անոր. "Ո՛հ, որդեակ իմ, դժբախտ մարդ մի կը լինիկիր դուն, եթէ Աստուծոյ սրբած տաղանդն այսպէս չարաչար գործածեիր:" Տղայն հնազանդութեամբ մոխիկ լուաւ մօրը պատճառին, եւ ճշմարիտ առաքինութենէ դրդռեալ՝ զգաց իւր անճնասիրութիւնն, եւ իւր չինած փոքր դրքոյքը կրակը նետեց:

Զգուշութիւն եկոց հեգինակը:

Լաֆոնդէն, որու չինած սիրուն առակներ շատերուն յայտնի է, դժբաղդութեամբ քանի մի անվայելուչ փոքրիկ պատմութիւններ դրեր եւ տպել տուեր էր: Յետոյ ծանր հիւանդութեամբ պատկելով, բոլոր իւր գործած մեղքերը խոստովանեցաւ, եւ երբ վերջին թոշակին ընդունելու պատրաստուեցաւ, Թողութիւն խնդրեց Աստուծմէ ի ներկայութեան քանի մի երեւելի անձանց Դազիոյ ճեմարանին, խոստովանելով անկեղծութեամբ ըրած զրքոյկներուն պատմութիւնները դրելուն համար զղջանք պատանց կ'ատէր, եւ խոստացաւ որ եթէ

առողջանայ, իւր հանճարը բոլորովին բարոյականութ եւ աստուածպաշտութեան գրքեր շարադրելու նուիրէ:

Ես որպէս զի մարդս իւր ունեցած տաղանդները հաւասար ուրիշին յարդանացն արժանաւոր լինի, հերիք չէ միայն ի չարն չգործածել զայն, այլ եւ պէտք է զգուշանալ զայն փճացընելէն: Մարդոյս խոտութեան ամենէն մեծ դժբդը պարկեշտութիւնն է, որու վերայ հեռուեալ առակը շինած է մեկը:

Ա Ր Ա Կ

Ըրամացի, պարկեշտութիւն եւ միւս Առաքինութիւնք:

Ըրամազդ հեթանոսաց մեծ աստուածը, իւր աստուածային պայծառ մոտայ հայելին մէջ տեսաւ պառաքինութիւնն, ինչպէս որ միշտ իւր մօտէն չէր պատուեր, որուն բոլոր աշխարհս երանութիւն կուտայ, եւ ամեն մարդ աշխարհիս մէջ ունենալ կը պարտաւորի: Յետոյ երբ մահկանացուաց ազգն սկսաւ սերիլ երկրիս վերայ, Առաքինութիւնը թեւաւորելով նորա բնակարանը գնացին ուրախ դէմքով, եւ ամեն մէկն կ'ասէր անոր թէ՝ ես գրեզ երջանիկ պիտի ընեմ: Պարկեշտութիւնը՝ որ տակաւ է միշտ ամենէն ետեւ մնալ, ինքն եւս ուղեց նոցա գացած տեղն երթալ տեղ մի գտնել, բայց ամենեւին պարապ տեղ չէր մնացեր: Ամեն

ֆած օրիորդը սիրտը կտրած և ամէնազգալ այդ
պիսի և այն դէմն աչուընները կը պարտցընէր և
տեղ մի չգտանելով եղ սիրոյ դառնապը իւր ելք
կնայէն քնակարանը, երբ չտատուածոյ Հայրն,
մարդասիրութեամբ անոր նայելով, "Աղջիկս,
ասաց, մոխկ ըսէ, իմ սէրս քեզ յուսընելու
համար ինչ դաշինք սիրոյ ընեմ քու հետդ: Ե-
թէ քեզ համար, սիրուն աղջիկս, քու քոյրերուդ
պէս քոյն մի կամ օթատան մի չծաղուցի քեզ որ
ունենաս այն քնակարանին մէջ, ուր տեղ վայ-
բենամիտ և ապատամբ մարդն իւր օրոց քը դը-
րած է, բայց դիտցիր որ անոնցմէ աւելի մեծ
պատիւ սիրոյ ունենաս դու: Քա ընկերներդ
ամեն մէկդ ընտրեսին առանձին իշխանութիւն ունին.
իսկ դքեզ Աղէմզոյի Թագաւորն իւր մանաւոր
սիրոյն համար այսօր ամենուն վերայ Թագուհի
կը կարգէ" : Այսպէս ասաց Երամազդ վեհա-
փառ կերպարանօք, և Պարկեշտութեան ձեռ-
քէն բռնելով նստեցոյց յաթոռն: Այն ժա-
մանակ բոլոր Առաքինութիւնները երկրպա-
դութիւն ըրին նորա դիմաց. և նոր Թագուհ-
ւոյն յաւիտենական հաւատարմութիւն երդ-
ւընալով, մէկընէն և ոչ մին կարող է նորա ա-
թոռը նստել. և ոչ առաքինութիւնը յարդ մի
կ'ունենայ, եթէ Պարկեշտութիւնն նորա հետ
չէ:

Յիրաւի առանց պարկեշտութեան՝ առա-
քինութիւնները զմարդ անպատիւ, յանձնա-

պատան, և կամակոր կ'ընեն. և ատոնք այն-
պիսի պակասութիւններ են, զոր եթէ մէկին ա-
նենայ, ամենուն առելի կը լինի:

Պատիժը գողոց պատպարծը:

Ամենեղբատես անուն քաջիշխ մի անպարտ-
ծութեամբ անուն դրած էր իրեն Երամազդ թըր-
հէս, մի քանի հոգի քաջիշխելուն համար, զոր իւր
յաջողակութեան կատարը: Փիլիպպոս Ամէնի
Աղէքսանդրի հայրն լսնանալով զայս, ուղեց
հաւկրընել անոր իւր ծիծաղելի գործողութիւ-
նըն, ուստի օր մի ի ճաշ հրաւիրեց զանիկայ, և
պատ սեղան պատրաստել տալով նորա համար,
հրամայեց որ միայն խնկամանն մի դնեն վերան՝
հանդերձ ծխով: Քաջիշխն առջի բերան կարծեց
թէ իրեն պատիւ էր այն, բայց յետոյ տեսնե-
լով՝ թէ առանց կերակուր բերելու երկար ա-
տեն կը սպասէր անօթի, խմցուած խնկոյն այն
ծխած խնկին նշանակութիւնը. և բոլոր հրա-
վիրելոց քով խաղալիք և ծաղր լինելէն յետոյ,
կրծնցուց սեղանին մօտ իւր դեղեցիկ տիւղա-
սին հետ միասեղ բոլոր իւր հարստութիւն, և միայ
իրեն միայն տնօթի, ուստի արդարապէս արժա-
նի եղաւ իւր անպատութեամբ:

Եթէ բնութիւնն հաղորդութեան տաղանդ-
ներ տուած է ձեզ, դուք կեցէք, կ'աղաչեմ, որ
անով անպարծութիւն չտանաք: Ձեր հրշ-

պարտութիւնը բոլոր ձեր ունեցած վաստքն ու պատիւը կը փճացընէ, արժանապատուութենէ կը զրկէ. զգոյշ կեցէք նաեւ խիստ բարձրամտութենէ: Ասոկը կ'ասել թէ Վեհամտութիւնն ամեն ինչ կը ներողութեամբ: Ոչ իրաւի այնպէս է: Ընդհանրապէս երեւոյթով մի մեծութեան հասնելու յոյս կուտայ մեզ, բայց աւելի կը նուաստացընէ, և երեսին ամօթով կը ծածկէ: Ուրիշ պակասութիւն մի եւս կայ, որու մէջ շատ անգամ կ'իյնայ մարդ, այսինքն իմաստութիւնը քան զհասատատուն և ճշմարտապէս օգտակար եղող յատկութիւնները լաւ հասկնալ: Օրինակի համար. շատ մարդիկ խելացի մարդուն պատիւ կուտան, և զգօնամիտ մարդուն չեն տար այն վայելուչ յարգանքն՝ որու արժանաւոր է: Ասոնցմէ ունեցած խելքն, որ այնքան մեծ հասկնալուած է, շատ մեծ մարդոյ կոչումեան պատճառ եղած է, և նոյն խելքն է զանոնք կորսնցընողը. իսկ ճշմարիտ զգօնամիտ մարդը շատ անձինք չիմացեր և դժուարին գործերէ ազատած է և կ'ազատէ միշտ ամեն օր նաեւ ստորին աստիճանէ եղողը:

Արտաքին գեղեցկութեան վերայ:

Շատ մարդիկ կան որ ոգւոյ գեղեցկութեամբ և հանճարեղութեամբ երեւելի լինելու ամենեւին հոգ չտանելով, կը նային որ մարմնով գեղեցիկ և շնորհալի երեւին. և այս բանս առաւել կանանց մէջ կը տեսնուի, որոնք գեղեցկութիւնը գերազանց արժանապատուութիւն մի կը համարին: Բայց միայն ատոնք չեն այսպիսի յիմարական միտք ունեցողները. կան շատ երիտասարդ տղայք եւս, որ Աստուծմէ տեղը բան են ղրկենք. որոնք իրենց ազատ դիմագծերով գոռոզանալով սիրամարգի նման կը փքանան ի'ասկէլըկին, որպէս թէ չկան իրենց պէս աշխարհս վերայ ուրիշ գեղեցկադէմ մարդիկ: Բայց այս բանս անպատուութիւն լինելը ձեզ իմացընելու համար, կը հարցընեմ, սիրելի որդեակք իմ, կը պատուէրնք դուք այն արձանին ու բուն դիմագծութիւնները կանոնաւոր լինելին, կամ քնական և կենդանի գոյն ունենալ. և նոյն արձանը հնչաւոր կենդանիէ մը առաւել կը համարէնք դուք, որու երեսն այնքան գեղեցիկ չլինելը նման արձանին, անտարակոյս ոչ: Արդ՝ դիտցիք ուրեմն որ երիտասարդ մի, որու միայն դէմքը գեղեցիկ է, բայց գովելի յատկութիւն մի չունի, այն արձանէն աւելի չարդոյ վիրնար լինիլ:

կուռքի մի դատկերը:

Կռապաշտութեան ժամանակ տաճարի մի մէջ կուռքի պատկեր կայր այնման գեղեցկութեամբ: Յաղթողուրդը խիստ սիրով վառուած

էր այս պատկերիս և Աստուծոյ տեղ դրած կը պաշտէր, և պատիւ ու մեծարանք կուտայր ա նոր: Օր մի դիպուածով գետնին ինկաւ արձանն և կոտոր կոտոր եղաւ, և ամենքն եւս զարմացան միացին տեսնելով որ նորա գեղեցկութիւնն ընդունայն և արտաքին էր, մէջը դատարկ և միայն գարշելի մկներով լեցուն: Այս կուռքը շատ նմանց և անթիւ երիտասարդներ պատկերն է, որոնք արտաքին կերպարանօք կը վայելուչ կը նային, և ներսերնին հաստատուն բան մի չունին. ուղեղնին լեցուն է հողմով և անթիւ մոռածմունքներով, որ կը նմանին արձանին փորին մէջէն դուրս ցատկող մկներուն: Չկրնաս մօտէն քննելու լինիք, աւելի արհամարհութիւն մի կ'ունենաք նոցա դէմ, քանզի ես որ այն հոյակապ արձանը տեսնողները ունեցան, երբ կործանելէն յետոյ տեսան որ այն առջի տեսածնէն շատ տարբեր էր:

Նմի՛ դուք քնութիւնէն այն արտաքին գեղեցկութիւններն ունեցած էք, որոնք ուրիշներուն աչքերը կը խաբեն, մի՛ պարծենաք և միտքերնիդ մի՛ դնէք թէ ձեր գեղեցկութեան հաւատը ուրիշները պարտաւոր են ձեզ պատուել: Այլ ձեր պահեն և փառքն այն բաներուն մէջ խնդրեցէք, որոնք գեղեցկութենէն աւելի կը դիմանան և հաստատուն են: Կան ոմանք եւս որ գեղեցկութիւն մի չունին, և կարծեն թէ զարդարուելով և չինուս գեղեցկութեամբ ե-

րեսնին այլ և այլ ներկեր քսելով քնութենէ ուրեցած պակասութիւնին կը ծածկեն: Մխաբերներն այնպէս կը դնեն՝ թէ վերնիք տեսնողները զարմանքի մէջ կը մնան, և կարծեն թէ ամենէն աւելի պէտք է որ վերնիք պատուեն և յարգեն ամեն մարդիկ, նորա համար որ հագած հագուստներն վայելուչ է և զարդարանքներն պատուական և թանկ գնով: Բայց յետագայ երկու պատմութիւններն՝ որ պիտի զուգեմ՝ ձեզ, լաւ կը հասկցընեն այս պատուոյ արժանի համարուած սուտ կարծիքները:

Պարծենկոտ տգու մի գտած անապատանքը:

Մեծն Պետրոս Լուսոյ կայսրը, վէրայլ քաղաքը գտնուելով, և տեսնելով թէ պալատին մէջ երիտասարդ պարոնին մէկն ամեն օր զանազան տեսակ նոր զգեստ կը հագնէր, ասաց իւր մօտ եղողներուն. "Կ'երեւի թէ այս գաղղիացի ապահաս իւր դերձակէն գոհ չէ": Ահա մեարհատ տղուն մեծութիւն սիրելուն համար եղած դաւեսորը: Ինքը կարծեր թէ այն օտարական իշխանը պիտի զարմանայ իւր վերայ, բայց ընդհակառակն իշխանը ծաղր ըրաւ զինքը:

Ասոր նման ուրիշի մի եղած արհամարհութիւնը:

Իրաւիայ Փրեսերիկոս Թագաւորին ծառաներէն մին օր մի նորա դիմացն եկաւ ձեռք

մի ընտիր ղեւտա հագած՝ մարմնոյ դունոմ կար-
ծելով թէ այն գեղեցիկ հագուստով հաճոյ պի-
տի լինի իւր Թագաւորին աչաց, նորա սիրած
դային լինելուն համար: Բայց տեսաւ որ խա-
բուեր էր. ուստի դարձ ելաւ և ուրիշ պարզ
հագուստով նորէն ներս մտաւ: Ա՛յն ժամանակ
Փրեաերիկոս անոյշ դէմքով մի անոր դառնա-
լով՝ ասաց. "Ո՛րտեղ ինձ, բարեկամ, ոմէ էր
այն անմիտն որ քիչ մի յառաջ դիմացս եկաւ
մարմնոյ դայն ղեւտա հագած": Ծառայն չկրցա
ցաւ բնաւ պատասխան տալ. բայց խիստ լաւ
հասկցաւ թէ՝ ընտիր հագուստներով պատիւ
մեռուելն՝ զուր անմտութիւնը յայտնել է:

Պէտք է որ մեք եւս հագուստներն և զար-
դարանքներն այնպէս համարիմք, ինչպէս որ կը
համարէր Ա՛լեքսոս ե Ա՛բակենցի (Սպանիա)
Թագաւորը, որ մականուամբ Փիտան կը կո-
չուեր: Երբ ասացին իրեն՝ թէ ժողովրդին առ-
ջեւ խիստ նուաստ հագուստով կ'երեւի, որ չը
վայելէր իւր Թագաւորական իշխանութեան,
պատասխան տուաւ. "Օրհասներն և ազա-
մանդներու փայլունութիւնը չէ Թագաւորին
երեւելի յատկութիւնն, այլ իւր գիտութիւնն
և առաքինութիւնը:

ՑՕԴՈՒԱԾ Զ.

Ճշմարիտ արժանաւորութիւնն առաքինութեան մէջ կը կայանայ:

Ա՛յո, սիրելի որդեակք իմ, մարդոյս ճշմա-
րիտ արժանաւորութիւն՝ միայն առաքինու-
թիւնը կրնայ տալ. եթէ այս չլինի՝ ամեն ինչ
ընդունայն է, և ոչքան գեղեցիկ յատկութիւն-
ներ ունենայ մարդ, սակայն կը լինի երբ մոլու-
թիւնն նոցա զայծատուութիւնը կը խաւարե-
ցընէ:

Ա՛յս ճշմարտութիւնս ամեն մարդ ճանչ-
ցեր է, և հեթանոսաց իմաստուններն իրենց
բարոյականին հիմը այս դրած են, և միշտ ի
բնոյ ընթացքն ասով կանոնաւորած են: Նոքա
թէպետեւ իմացականութենէ ի զատ ուրիշ
լուսաւորութիւն չունէին, այսու ամենայնիւ
առաքինութիւնն՝ իրենց պատուոյն միմիայն ար-
ժանաւոր բարիք համարած էին, վասն զի ազէկ
իմացեր էին՝ թէ այս է միմիայն բարին որ բա-
ւական կամքէն կախեալ չէ բնաւ:

Իմաստասիրի մի գեղեցիկ պատասխանը:

Դեմետրիոս աշխարհակալը՝ Ա՛ղեքսա-
ղրոսը կողոպտելէն յետոյ Հարցուց Սիկլոնին,
թէ բան մի ամենեւին կորուսած է ինքը, որուն
պատասխան տուաւ իմաստասէրը. "Բան մի

չեմ կորուսած »։ Վասն զի պատերազմը չկրնար զառաքինութիւնը կոչտպտել։

Ամէն չէր լիներ, սիրուն որդեակք, եթէ մէք՝ որ բարեբախտութեամբ քրիստոնեայ ծնած եմք, հեթանոսներուն ցուցցուցածէն քիչ յարգ ունենայինք առաքինութեան վերայ։ Ա՛ք միայն իրենց իմացական զօրութեան լուսովը կը ճանչէին զայն, իսկ մէք ընդհակառակն ճշմարիտ կրօնին վարդապետութեամբը ուսած եմք դասել զայն և նորա յարգը ճանչել։

Ընդ՝ այս աստուածային վարդապետութեանց համաձայն, միայն առաքինութիւնը կրնայ մարդոյս ճշմարիտ արժանաւորութիւնն տալ. և որքան որ աստիճանաւ, խելքով մեծութեամբ երեւելի լինի, Աստուծոյ առջեւ քան մի չարժեր՝ եթէ առաքինի չէ։

Իշխանի մի իւր քաւարանց ցրուցած իմաստուն խօսքերը։

Վեղիլիոս՝ Լուդովիկոս ԺԴ-ին հայրը, այն ճշմարտութիւնն իւր զաւակաց ականջին ամէն ամէն կրկնելու համար, եկեղեցւոյն արձանագրութիւնը բերել տուաւ իրեն, որուն մէջ նայա անուններըը գրուած էին. և բանալով զայն՝ ցոյցուց անոնց իրենցմէ առաջ գրուած մնաց զոյն անունը, որ մէկ աղքատ արհեստաւոր մի էր, յետոյ ասաց. « Ահա կը տեսնէք դուք, որ ամենուն աստիճանն Աստուծոյ առջեւ հաւասար է. և միայն հաւատոյ և առաքինութեան տուած յատկութեամբ կրնայ տարբերութիւն մի ունենալ ուրիշէն։ Յամանակ պիտի գայ որ դուք այն աղքատ արհեստաւորին տեսլի մեծ պիտի լինիք ժողովրդեան առջեւ թէ պատուով և թէ համբաւով. բայց աս ձեզմէ մեծ կը լինի Աստուծոյ առջեւ, եթէ առաքինի լինի »։

Այս գեղեցիկ դասն ամեն ոտքայոց կը պատշաճի, և ամեն մարդ կրնայ անկէ օգուտ մի ըստանալ։ Մի մտնաք ուրեմն, բայց միանգամայն միաբերնիդ եւս բերէք, որ ճշմարիտ առաքինութիւն չհամարիք զայն՝ որ հաստատուն աստուածպաշտութեան վերայ հիմնած չէ. և եթէ ճշմարտապէս առաքինի լինել կ'ուզէք, ուրիշ բանի մի ցանկաք, այլ միայն վերը պատմած իշխանին նման սուրբ լինելու։

Բարի օրինակ տուող դատաւորի մի։

Վերջիվերջոյ երիտասարդ իշխանին վարժապետը, օր մի Վաղղոյ Թագաւորաց[1] նորա նախնիներուն ժամանակագրական ցուցակին դիմաց ցուցընելով, հարցուց թէ՝ անոնց մէջ որու առաւել նմանիլ կ'ուզէ։ « Սուրբ Լուդովիկոսի », պատասխան տուաւ իսկոյն, և երանի թէ ես եւս նորա նման սուրբ լինէի »։ Այնպէս

1 Լուդովիկոս թագ. առ. երես 22, ծանօթութեան մէջ։

ես ուրիշ բանի չեմ ցանկար, սիրուն որդեակը, թէ՛ ձեր փառաց և թէ՛ երջանկութեան համար, այլ այս բանիս միայն՝ որ դուք եւս այն աղբերաւ իշխանեն պես նոյն դեղեցիկ միտքն ունենայիք:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Գիտութեանց վերայ:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Գիտութեան յարգը:

Արեւուն լոյսը մեր աչաց ինչ գործութիւն որ կուտայ, նոյնպէս գիտութիւնն եւս մեր մտաց կուտայ: Ինչպէս որ մարդ մի խաւարին մէջ մնալով բան մի չկրնար որոշել, ոչ իրեն ուղիղ գալը գիտէ, և ոչ ուր երթալը, և միշտ շաբաշար գետին ինկնելով կը վնասի, այսպէս և մտքիք նաեւ տգէտ մարդն: Արդարեւ ինտած անշունչ կտոր նման, աչք ունի և չտեսներ. ականջ ունի և չլսեր, վասն զի տեսած իրերին առնելիքն բան չհասկնար: Խիստ սարդ բաներն եւ նորա համար խորհին առակներ են, և իր անմտութեամբն անքանութիւ՝ հաւասար կը լինի, որոնք կուբօրէն իրենց բնազդեցութեան կը հետեւին: Ահա խնամտութիւններէն շատն այսպէս տրամաբանած են:

Խմաստասիրի մի գեղեցիկ պատասխանը:

Օ՛սաւակի տէր մարդ մի կ՛երթայ օր մի Աբիսադիպաս խնամտասիրին մօտ կ՛երթայ, և կ՛աղաչէ որ իր որդին քովն առնու, և փիլիսոփայութիւն և ուրիշ ուսումներ ուսուցանէ անոր: Խնամտասէրն նորա աղաչանքը կ՛ընդունի այս դաշինքով՝ որ իր աշխատութեանց վարձ հարիւր դահեկան տայ: Տղան հայրն այս խոհեմ վերայ սիրտը վրթելով, որովհետեւ խիստ ագահ էր, և այնքան տակ զաւակին կրթութեան համար տալ աչքին խիստ մեծ երեւելով իսկոյն պատասխան տուաւ Աբիսադիպասին. "Այդ քու ուզած դրամով գերի մի կրնամ ծախու առնուլ:—Գնա՛ ուրեմն առ, տասց փիլիսոփային, որ երկու գերի առնեհաս տանդ մէջ»:

Ուրիշ մարդ մի եւս հարցուց նոյն Աբիսադիպասը փիլիսոփային թէ՝ "Գիտութիւնն ինչ օգուտ կրնայ ընել իմ որդւոյս:—Ընկէր քաղաք պտուղը, պատասխանեց փիլիսոփայն, այն կը լինի որ հրապարակական խաղերու մէջ դանուած ժամանակ ուրիշ քարի մի վերայ նստած քար չհամարուիր ինքը»:

Այս պատասխաններով ինչ իմացնել կ՛ուզէը խնամտասէրը. կ՛ուզէը հասկցնել թէ՝ կոպիտ և տգէտ մարդը կրնայ բազդատուիլ գերիի կամ քարի հետ: Իր գիտութեան վերայ այնքան մեծ յարգ ունէը, որ երբ ուրիշ

անգամ մի հարցուցին իրեն՝ թէ ի՞նչ տարբերութիւն կայ դիտուն և անգէտ մարդոց մէջ, պատասխան տուաւ. «Այն տարբերութիւնն՝ զոր կը տեսնեմք մարդու խչհանութեան տակ եղած քուրակին և ազատ քուրակին մէջտեղ»։

Դիոգինեսին խեչացի խօսքերը։

Արեւելի Դիոգինէս փիլիսոփայն եւս այս մտօքս էր։ Օր մի երբ պատմեցին առ՝ թէ Աթենացի բնակիչներն խելքերնին միայն իրենց ոչխարներուն տալով, ամենեւին զանազանայ կրթութեան հոգ չեն տանիր. «Այն պէս է, ասաց Դիոգինէս, լաւ կը համարեմ Աթենացիի գառն լինել, քան թէ որդի»։ Յայտնի խօսք մի է, որով պէտք է խնամոք թէ՝ նայն խնամատարին կարծեաց համեմատ՝ ազգէ առաջնորդ ունեցող կենդանին լաւ է քան զազգէտ մարդը։

Չէ թէ միայն այս փիլիսոփային մտածմունքն է այս, այլ մինչեւ մեր օրերը՝ դուք եւս անշուշտ կը տեսնէք որ ազգէտ մարդիկ ընդհանրապէս պարապելի և առելի են, և անոնց խիստ անարգ անուններ կը տրուի իրենց տգիտութեան համար։

Թագաւորի մի գեղեցիկ դատաստանը։

Աբիմաա ե Աբրահամայի թագաւորին գիտութեան պակասութենէն մէկը, իւր առջեւ հանձակութեամբ կը հատուցանէր, թէ պատմութեան մէջ կարդացած է՝ որ Սպանիոյ թագաւորին մէկը կ'ասէր, թէ երեւելի իշխանաւոր և խիստ հարուստ մարդոց չէպտելը գիտութիւն ուսանիլ։ Որուն պատասխան տուաւ Աբիմաա. «Արդարեւ թագաւոր մի չէ եղեր այդ զուտ ցորը, այլ արջ կամ գոմէշ մի»։

Այն տգիտութիւնը պարապելի եղած է ամեն ժամանակ, գիտութիւնն բոլոր աշխարհիս առջեւ պատուական համարուած է միշտ։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Գիտութեան վերայ եղած յարգը։

Որ և իցէ մարդ՝ որ իւր միտքը գեղեցիկ ուսմունքներով զարդարած է, ամեն տեղ ան նման կ'ունենայ. և ուր որ երթայ՝ յարգութեամբ կ'ընդունին զինքը։ Ամեն մարդ կ'աշխատի նորա մօտենալու և հետը խօսակցելու, և ամենքն եւս առ հասարակ կը գովեն և կը պատուեն զինքը։

Պատուաւոր գիտուններ։

Թէպէտեւ Պզատան երեւելի չոյն փիլիսոփայն և աշխարհիս խիստ մեծ գիտուններէն մին, հասարակ մարդ էր, այսու ամենայնիւ՝

պրակհեան գիտութեամբ և առաքինութեամբ հռչակաւոր եղած էր, Ժիմնեսիոս քոնաւորն նորա Ակրակուսա քաղաքը մօտենալը լսելուն պէս, անձամբ նորա դիմաց գնաց, որ զինքը ծովեղերքն ընդունի, և կառքին մէջ իւր մօտ նստեցընելով՝ իբր յաղթանակաւ իւր պալատը տարաւ։

Աղէքսանդր երբ Թեբէ քաղաքն առաւ, հրաման ըրաւ որ կրակի տան այրեն զայն, բայց նախ պատուիրեց որ Փինտարոսի տանն և նորա ընտանեաց վնաս մի չտան։ Լսով խնայնել ուզեց՝ թէ ոչխարի յարդ և պատիւ ունէր երեւելի բանաստեղծին վերայ։

Երբ Ակիտասոս քաղաքի մի կառավարիչ էր, զոր հելլադներէն (հայտուտ) կ'աւրէին ու կ'աւրշալիկէին, օր մի անզգուշութեամբ նոցա ձեռքն ինկաւ։ Անդերնէն մեկը ճանչցաց զինքն, և խնայուց իւր ընկերաց թէ նա Ակիտասոս կառավարիչն է։ Իւր անունը միայն լսելով չարագործաց բարկութիւնը մեղմացաւ, սկսան անուշութեամբ վարուիլ հետը, նորա սրտին վախը հեռացընելով, և յետոյ սարին իւր ամբոխն ասելով՝ թէ իրենց տուած յարգութիւնն նորա բանաստեղծութեան համար էր և ոչ կառավարութեան։

Այս պատմական զրոյցներուս վերայ պէտք է համոզուիք, թէ ամեն մարդ իրեն պարծանք մի կը համարի յարգել գիտութիւնն, և գի-

տուն մարդոց արժանաւոր պատիւն տալ։

Գիտութեան մէջ երեւելի եղող վնասը տգիտութենէ։

Նախ ձեզ հասակակից փոքր տղայ մի օրինակ բերելու համար կը պատմեմ ձեզ ութ ինն տարեկան տղու մի ուսման մէջ ըրած յառաջադիմութիւնները, որ շատ ժամանակ չկայ՝ քննութեան հանեցին քերականութեան, աշխարհագրութեան, պատմութեան և լեզուաց գիտութեան դասերուն համար։ Կ'ուզէի որ դուք ձեր աչքով տեսնէիք նորա լսած գովեստները։ Մէկ հարցման մի պատասխան տալուն պէս, ամեն դիմէն կեցցէս կը պօռային, ծափ կը զարնէին ուրախակելով. «Ո՜հ զարմանք, ինչ հրաշալի բան. երանի՛ հօրը, որ այսպիսի զաւակ ունի»։ Բայց քննութենէն յետոյ տեսնել պէտք էիք որ ամենքն եւս մէկմէկէ տալով իւրենց սրտին ուրախութիւնը կը յայտնէին։ Ամենքն գրկել կ'ուզէին տղային, բոլորտիքը կը ժողովէին և կը ցանկային զինքը տեսնել. ամենքն կը սիրէին, ամենքն հետը կը խօսէին. և իւր անունը մինչեւ օրագրաց մէջ կը կարդացուէր, և բոլոր ազգայնոց զարմանք մի տուաւ։

Յարեհամբաւ Փիլօ Միրանտոլայ ասոր պէս՝ զինքն աշխարհիս օրինակ տուած էր։ Իւր առջի պատանեկութեան մէջ այնպիսի մեծ յառաջադիմութիւններ ըրած էր գիտութեանց

մէջ, որ մարդուն մէկը նորա հրաշալի վարդապետութենէն յաղթուելով, կարծեց թէ գերբնական բան մի կայ նորա վերայ. բայց յետոյ իսկոյն իմացաւ՝ թէ նորա ընդարձակ հմտութիւնը միայն իւր բնական զարմանալի յիշողութենէն և կարդէ դուրս ունեցած հանճարէն յառաջ կուգայր։ Բնաւ և հինգ տարեկան որ եղաւ, սկսաւ գիտութեանց մէջ ուներացած կարծիքներն և դրութիւնները հրատարակել, և թէպէտ փոքր հասակի մէջ մեռաւ, բայց իւր ձգած գրուածները բոլոր գիտուն մարդիկ զարմացուց։

Փերեզ երիտասարդն՝ որ Փրովինցայի Իշխ քաղաքին էր, սորա պէս երեւելի եղաւ փոքր հասակին մէջ իւր գիտութեան համար։ Իշխ տարեկան որ եղաւ, իւր փոքր եղբօրը կառավարութիւնն իւր վերան ուղեց առնուլ։ Հայրը՝ իբրեւ տղայական խաղ՝ նորա դէմ չկեցաւ. մի քանի օր յանձնեց անոր, միայն կամքը հաստատելու համար. բայց մէկէն տեսաւ որ ծաղր կահասակ վարժապետն այնպէս ազէկ կը կառավարէր իւր պաշտօնը, որ հայրը բոլորովին վստահանալով, նորա եղբօր դաստիարակութիւնն իրեն յանձնեց, և ուրիշ վարժապետի կարօտ չեղաւ։ Ինկէ յետոյ յիսուսի իւր հարազատ եղբօր Անտոնն եղաւ, և այնպէս լաւ կրթեց նորա վարքն, որ խիստ խելացի վարժապետ եւս չէին կրնար։

Ջեմ սակը թէ ըստ ամենայն մասին նմանողել եղիք այս գովելի օրինակներուս, վասն զի կարելի է որ բնութիւնը ձեզ շնորհած չը լինի այսպիսի հազուագիւտ տաղանդներ, որպէս զի այս երեւելի երիտասարդ տղայոց նախանձաւոր լինելու ջանք ընէք, այսու ամենայնիւ՝ նոցա օրինակումն պէտք է որ քաջալերութիւք և զանցառութիւն չընէք հոգ տանելու այն բաներուն, որ կրնան օգուտ մի ընել ձեզ՝ ձեր կարողութեան համեմատ հարկաւոր եղած ուսմունքն և տեղեկութիւնները ձեռք բերելու։

Իւր գիտութեամբն երեւելի եղոց երիտասարդք։

Ո՛ւրդիկ կարդինալն, որ ներկայ դարուս խիստ գիտուն մարդկանց մէկին էր, տղայութեան ժամանակին անուանի եղաւ իւր սրամիտութեան և յայնահարհատ գիտութեան համար։ Տղայ էր երբ իւր հօր հետ Ո՛րինէվա գնաց, և հոն լսելով թէ հասարակաց դպրոցներ կան, վնիքը հոն տանել տուաւ, և դրան մօտ ոտից վերայ կեցաւ՝ ապառնելով աստուածաբանութեան գաստն աշակերտաց դուրս երթելուն. որոնք երբ տեսան օտարական փոքր տղայն որ դրսի կերպարանքէն խլրտուտ և խաղալու մի կ՚երեւէր, բայց իւր աչքուժութիւնը՝ վառվռուն աչքերը, զոր իրենց վերայ ունեցած ուշադրութեամբ կը դիտէր, յայնժմ կը ցուցը-

Նէին որ կը փափաքէր անոնցմէ մէկուն հետ տեսնուելու , ուստի ամենքնին նորա գլուխը ժողովեցան որ խօսակցին և իմանան ով լինելը : Ն՛երդիվ աչքը կը տնկէ նորա մէկուն վերայ , որուն կերպարանքէն դէմքէն և շարժմունքնե- րէն կ՛երեւայր իրեն՝ թէ ամենէն մուսայի և ա- մենէն աւելի բաւականութիւն ունի վիճա- բանութեան մտնելու : Ասոր կը սկսի քրիս- տոնէական վարդապետութեան վերայ հարց- մունքներ ընել , զոր իրենք դաս կ՛առնուին , որ պէս զի իւր բերնէն քանի մի սխալներ գտնէ նոյն Ն՛ինէվէա քաղաքին մէջ դաստիարակ կրօնին վերայօք : Նոյն Ն՛երդիվ վարպետութեամբ նոյն նիւթին վերայ այնպիսի տեղ մի բերաւ , որ ուղայն իւր բերնովը խոստովանեցաւ , այլ սկը- սաւ նեղը խոթել իւր հակառակորդն աւելի նեղելին և զրպարտութիւններով , որ այնպիսի ծագ- կահասակ և խակամիտ պատանեկի մի մարդ չէր յուսացը : Նոցա ըրած վիճաբանութիւնը լսելով բոլոր աշակերտներն եկան ժողովեցան այն տեղ , և սկսան իրենք եւս մէջ մտնել և վի- ճել օգնութիւն ընելով իրենց ընկերին՝ որ նո- քա սխալեանին յաղթեն : Ն՛երդիվ մինակ էր և իրեն կուսակից չունէր , ամենուն պատասխանն ինքը կուտար , և ինքն մինակ նոցա մէջ բերած աւաջարկութիւնները կը հերքէր անխոտորելի քաջասրտութեամբ . և վիճաբանութիւնը կ՛ աւարտի՝ ինքն տանելով փառաւոր յաղթա-

նակը , և իւր բոլոր հակառակորդները պա- տասխան մի չկրնալով տալ՝ կը լռեն կը պատան- ձին : Փոքր վարդապետ տղայն նոցա ամչցնա- լէն առիթ գտնելով , կը սկսի առաքելոյ նման խօսիլ հետերնին , և բարի նախանձաւորու- թեամբ մի և անոյշ խօսքերով նոցա աչքերնու- ջեւ կը բերէ դժբախտ վիճակնին՝ որու մէջ կը գտնուին ուղղափառ եկեղեցիէն բաժնուելով . և միանգամայն հանդերձեալ կեանց մէջ իրենց ինչ վիճակ ունենալը , որ հազար անգամ աւե- լի թշուառ սխալ լինի կ՛ասէր , թէ որ խեղ- ճութեամբ իրենց կամակոր բնութեան մէջ մեռնելու լինին : Ա՛սիկ ընդվզերուն մէջ ամե- նեւին մէկուն չդպաւ այս վիճաբանին խօսքե- րը , թէ իւր փոքր տարիքին նկատմամբ և թէ անուշ լեզուին եւ բնաւորութեանն հաճար , այլ մանաւանդ կը զարմանային նորա վերայ : Միայն մէկը գտնուեցաւ մէջերնին , որ այսպէս դարձաւ ասաց անոր . “Նէթէ մեզմէ մէկը ձեր հայրենիքը գայ , և այսպիսի լեզու բանեցնէ ձեզ , ի՞նչպէս կը վարուիք հետը ” : Ա՛յսքան միայն կրցաւ ասել , և ամենքն եւս եռաքաշու- ցան գնացին ամօթով և պատկառանքով , եւ յաղթական տղայն ուրախութեամբ լեցաւ , զոր ճշմարտութեան յաղթանակը պատճառեց իրեն : Ա՛յս երիտասարդ տղան ըրած յաղթու- թիւնն ուշ թէ միայն գերազանց հանճարեղու- թեան գործն էր , այլ նաեւ ուսման մէջ ունե-

ցած չափիւ դուրս եւանդոյն . վասն զի ի տղայոյթեան կարդացեր եւ կշռեր էր երեւելի Պուսեւեան Պատմութիւն փոխոխութեանց լսած դիպցն , եւ իւր միաքն նորա մէջն եղած նըբին եւ լուսաւոր վարաերն այնպէս լաւ ըմբռնած էր , որ սովոր էր ասել շատ անգամ . " Այ այն , ես բաւական կրնամ համարել զիս , ասպարէզ կանչելու այն նորադանդներն , ո՛ր ունք այս գըքին մէջ յաղթուելով կը հերքըւին " :

ՅՕԴՈՒԱԾ Գ .

Գիտութեան օգուտները :

Հարկաւոր եղած գիտութիւնն զոր դուք պէտք է ուսանիք , մեծ օգուտ կ'ընէ ձեզ , որ մաքերնիդ չանցնիր : Գիտնական մի , որ և իցէ աստիճանի տէր , կը նմանի ճանապարհորդի , որ իւր գնալու ճանապարհները կատարելապէս ճանչնալով , ապահով կը հասնի իւր մտքին դրած տեղը . ընդհակառակն տգէտ մարդը կրնայ նմանիլ կոյրի՝ որ խարխափելով կ'երթայ , երկու քայլ կը նետէ՝ կը տասի կ'իյնի , և ճանապարհէն միշտ դուրս կ'ելնէ : Հազարումէկ դիպուածներ կը պատահին , որոնց մէջ գիտութիւնը մեծ օգուտ կրնայ ընել մեր բարեկեցութեան , և աղքատութեան մէջ մեղ մխիթարիչ և օգնական կը լինի :

Այ , սիրելի որդեակք իմ , գիտութիւնը միշտ օգտակար է : Կան երբեմն այնպիսի պարզ ոտներ և վիճակներ , որոնց մէջ խիստ օգտակար է գիտութիւնն , և որու մէջ հնար չէ համարմանք ունենալ առանց գիտութեան միջոցի , վասն զի ինչպէս կ'ասէ Լաֆոնդէն .

Իշխանաւոր մարդ՝ թէ որ ապէտ է .
Իշուն հաւէտին արժանաւոր է ,

Մի զարմանաք ուրեմն եթէ այսքան դըժուարութիւններ կան , եւ այսքան միջոցներ պէտք են զձեզ կրթելու և ձեր միաքը լուսաւորելու համար : Այս հարուստ մարդիկն իրենց ունեցածներուն կէսը յօժարակամ կուտային՝ եթէ քիչ մի բան գիտցած լինէին , զոր իրենց տղայութեան ժամանակ դիւրութեամբ կրնային ուսանիլ , բայց հիմայ որ տարիքնին աւեր են , անօգուտ է , վասն որոյ կը ստիպուին ասել թէ՝ գիտութիւնը հնար չէ դրամով շահիլ , և իրենց բոլոր կեանց մէջ արտերնին կը ցաւին տղայութեան ժամանակնին պարապ անցընելնուն համար , երբ առիթ կայր ձեռքերնին՝ կրթութիւն և ուսմունք ուսանելու :

Աչեկ կրթութիւն չունեցող իշխանի մի ցցուածը :

Օր մի տեսնելով մեծն Պետրոս որ իւր դիքն խել քերնին կարդալու տուած՝ այնպէս կը պարապէին , ասաց նոցա . " Նախատուր էք

դուք որ աղայութենէ կը սկսիք գեղեցիկ գրքերու հաճի առնուլ։ Ես աւելի կը ցանկայի որ մանուկս մեկը պակաս լինէր և առաքինութեամբ կրթուած լինէի։ Այսպիսի մեծ շահ մի է այս, ուսկէ զրկուած լինելուս համար, սիրտս խիստ կը ցաւի »։

Նայեցէք որ դուք եւս այս Թագաւորին նման չզրկիք յետոյ. այլ քանի որ ժամանակը ձեռքերնիդ է, նայեցէք որ պարապ չանցընէք, միշտ օգուտ մի քաղէք անկէ։ Օրինակ առէք ձեզ մրջիւնին բռնած խելացի ճանապարհը, որ պարզ եղանակին իւր կերակուրը կըպատրաստէ, որ ձմեռուան մէջ հարկաւոր եղած ուտելիքն ունենայ։

Հիմա դուք գեղեցիկ ու պարզ եղանակի մէջ կը գտնուիք այն հասակին՝ ուր մեծ դիւրութեամբ կրնաք հոգալ հարկաւոր պիտոյքներն, որոնց ժամանակ սիրտ գայ որ պէտք պիտի ունենաք։ Ձեզ տարիք ուրիշին ձեր մանկութեան ժամանակն անօգուտ չանցընէք, վասն զի երբ այս երջանիկ հասակն անցնի, ոչ եւս կրնաք յետ դարձընել, և գիտութեան դժբախտ վիճակին մէջ կը մնաք յաւիտեան։

Ա Ր Ա Կ

Գեղին մօտ ճանապարհորդք։

Ուղեւորին մէկն անտառները մէջէ երկար

ժամանակ քայլելուն, և արեւուն տաքութենէն սաստիկ ծարաւած պատահելով, գետ մի կը տեսնէ անտառին մէկ կողմը, որ կանանչ խոտերուն և պըտի ծառերուն մէջ տեղէն կը վազէր կ'երթայր, թէպէտեւ ջուրը քիչ էր։ Կը հասնի այն ջրին մօտ, որուն այնչափ կը փափաքէր . . . բայց ափսո՜ւս իւր անմտութեան. կանգ կ'առնու մէկէն, կը նայի ջրին մէջ և կ'սաէ ինքն իրեն . « Պէտք չէ որ ես մէկէն գձկութիմ խմեմ այս ջրէն, թէպէտ տաքութենէ կ'այրիմ։ Այս գեղեցիկ արծաթի նման փայլուն ջրերը կ'անցնին կ'երթան անուշիկ մի խոխոջալով, և քանի որ կը վազեն յառաջ կ'երթան՝ այնքան կը պայծառանան և ջրերը վեր վեր կը ցայտեն։ Ուրեմն պէտք է սպասեմ՝ որ աւելի մաքուր ջուր գան », ասոյ՝ և երկնցաւ պառկեցաւ գետին մօտ ծարաւութիւնը չմարած։ Մէկ մ' ալ, ոմն դժբախտութեան, երբ պառկած տեղէն ելաւ, տեսաւ որ գետին մէջ ջուր կայ. զարմացաւ խեղճն երբ իմացաւ իւր խաբուիլը. ցաւեցաւ՝ բայց ուշ, և պարապ տեղ բարկութեամբ կը նեղանայր, վասն զի գետին մէջ և ոչ մէկ կաթիլ ջուր կրցաւ գտնել։

Այս ուղեւորն օրինակ է անոր, որ ծուլութենէն իւր մատաղ հասակը վատնելու և հեշտութեամբ կ'անցընէ, և կը կարծէ ոլորտելին, կամ ինքնիրեն այնպէս կ'սաէ՝ թէ ժամանակ սիրտ կրնայ գտնել որ ըրած վնասնե-

բուն տեղը լեցընել: Այսձևի նման կ'անցնի եւ բիտասարդութեան հասակին, և արդը պատուղ չտայր, թէ որ ծոյլ երկրագործին ազահ ձեռքը ժամանակին խոտոնը չքաղէ չպատրաստէ. կ'անցնի մատաղ հասակը, ինչպէս որ գետին ջրերը սրընթաց կը վազեն կ'անցնին: Ա՛հ, եթէ յանկարծ ջրերը քաշուելու լինին... ըրած յոյսերուն երթաս բարեաւ թող ասէ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տղայոց ուսանելու ուսմունքները:

Ա՛ՆՏԱՐԱԿՈՑՍ կը կարծեմ ես, սիրելի որդեակք իմ, որ նախընթաց գլխոյն մէջ զուցածներս ձեզ մեծ յորդոր են որ ցանկայք կրթել և վարժել զձեզ ուսանելոյ մէջ. հիմայ եւս մանրամասնաբար պիտի ցուցընեմ ձեզ հարկաւոր եղած այլ և այլ ուսմունքները: Ձեր ուսման առաջին նպատակը պիտի լինի բարի վարք ունենալ, որ Աստուծոյ ընդունելի և մարդոց հաճելի լինի: Բայց ինչպէս կրնաք դուք ուսանիլ այսչափ գիտութիւնը, առանց որոյ ուրիշ ամեն բնչ անօգուտ են ձեզ, մանաւանդ և վնասակար իսկ: Այս առած ուսմունքս է կրթնագիտութիւն. ասիկայ միայն՝ իբր առաջնորդ ծայրն բարոյականութեան սրբութեան և մարդասիրութեան միջոցով կրնայ ուսուցանել մեզ աղէկ ապրելուն և իմաստութեամբ վարուելուն եղանակը. ասոր համար է որ գիտութեանց դաշտին մէջ ուր տեղ կ'ուզեմ ձեզ առաջնորդել, կրօնագիտութիւնը բոլոր ուսմունքներէն վեր կը դասեմ, զորմնք դուք պէտք է ձեռք բերելու աշխատիք:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

կրօնագիտութեան վերայ:

Ամեն բանէն առելի ուսանելու հարկաւոր եղած գիտութիւնը, զոր դուք պարտաւոր էք մեծ փութով ձեռք բերել, կրօնքն է՝ զոր Աստուած տուաւ մեզ իբրեւ առաջնորդ դէպ ի յաւիտենական երանութիւնն զմեզ տանելու, զոր մեզ համար պահած է և ամեն ջնորհէ այս թշուառ և վաղանցիկ աշխարհին երնեկնիս չտեսայ:

Երբոր կրօնին ցոյց տուած ճամբան ճանչնամբ և անկէ երթանք, ամենևին վախ չունենաք մոլորելու. վասն զի նոյն ինքն Աստուած բացած է մեզ դայն և ինքն ապրեցուցած. բայց երբ չգիտնանք, այն ճանապարհը, կամ մոլորուելով դուրս ելնենք անկէ, դէպ ի խաւար կ'երթանք, կը սխալինք, կ'ինկնինք անկարգութեանց մէջ, ուր տեղ մարդոց մտայ սխալմունքն և սրտին մոլութիւնները կը քաշեն կը տանին զմեզ չարաբաստութեամբ:

Այսէ զոր մեք դժբախտաբար միշտ կը տեսնենք այս վերջին ժամանակներուս մէջ, ուր ամբարիշտ մարդիկ ինքզինքնին փիլիսոփայի տեղ դնելով, պատերազմ բացին կրօնին դէմ, և քիչ մնաց որ պիտի ոչնչացնէին զայն։ Աստուածներն կրնային գեղեցիկ ջահը, որ մեր աչքերուն կը շողշողէր, մարելով խաւարը վոխանակեց լոյսին, և կուրութիւնն այնքան աւելցաւ որ Խանէն 1 ի գլուխ ուրիշ Աստուած չպիտի ձանձ չէին, մինչեւ այս մոլորածին աստուածութիւնը պիտի կանգնեցընէին Վոլղիայ մայր և կեղեցւոյն առաջին տաճարի սեղանին վերայ՝ կիսամերկ կնկան կերպարանքով. մինչեւ աստուածային պատիւը գաղանի մի հրեշի մի պիտի տային, որ միայն ընդհանուր նզովքի արժանաւոր էր, մեկ Մարաթի մի, այն գազանացեալ մարդոյն, որու նմանը կիայր Վոլղիայ և ոչ աշխարհիս մէջ։

Սրտին մոլութիւններն եւս հաւասար էին մտաց մոլութիւններուն։ Երբ այն սուրբ ամբարտակը վրաս, զոր կրօնը մարդկեղէն չարութեանց դէմ կանգնած էր, չար կիրքերը մեկէն դուրս թափեցան և Վոլղիա բոլորովին քաւանատակութեանց ջրհեղեղով ։ Ես որ դարերու միջոցին մէջ չգործուած յանցանքներըն քիչ տա-

1 La raison.

րուան մէջ կատարուեցան և ապականութիւնն ընդհանուր լինելով, թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ տգէտ, և ամեն աստիճանի մարդիկ բոլորն եւս աւերեց և ապականեց։ Երիտասարդք Աստուծոյ սուրբ երկիւղը մկրտի խոստով անտանական անառակութեանց տալին զերծնէք, մինչեւ տղայքն անգամ՝ որ մինչեւ այն ժամանակ անբասական համարուած էին, այնպիսի յանցանաց տէր եղան, որոնք յաւուր սրտի կ'առեմ՝ թէ դժբախտաբար մինչեւ այսօր կը տեւեն. և անոնց չար ազդեցութիւնը մինչեւ մեր արեւելեան երիտասարդաց սրտերուն վերայ ներգործած է։

Անկրօն տգէտ սոսկաչի անկարգութիւնները։

Ի օրագրութեան մէջ կը կարդացուի թէ՝ 1800 սեպտեմբեր 23 էն մինչեւ 1801 փետրուար 20, այսինքն հինգ ամսուան մէջ, փարիզ կատաղարշական տեղին մէջ, 75 երիտասարդ տղայք ի դատ բերուեցան իբր գողկամ բարի վարուց դէմ մեղանչող, և թէ՝ անոնցմէ 45 ը բանտարգելութեան գատապարտուեցան այս կերպ չարութեանց տէր լինելնուն համար ։ Այն օրագրին նոյն թուին տակը դրուած ծանօթութեան մի մէջ կը կարդացուի նաեւ, թէ դատաւորներուն դիմաց հանուած երիտասարդաց հանդանքէն դուրս են

փոքր տղայոց գործած յանցանքները. եւ կը հաստատեն թէ փարիզու մէջ գործուած չարութիւնից եւ անիրաւութիւնից կիսէն չատին տէրերը անառակ երիտասարդներն են: Բայց այս անօրէն գործերը, որ առաջ ամենեւին չէին պատահեր, մեզի կը ծադին այժմէօք: Այս բաներս արդարութեան առնելին խանգնող խոհեմագործականը, մի քանի պատճառներ կուտայ, եւ յատկապէս ոստիկանութեան կամ կրօնի վերայօք եղած անհոգութեան կ'ընծայէ զանոնք, այն կրօնք՝ որ առաջնորդելու մի բերելով մարդոց սրտին մէջ, միանգամայն եւ քաջքը յոյս եւ միխիթարութիւններ կուտայ ամեն հասակի մարդոց:

Այս վիճաբանութեանս քով ուրիշ մի եւս կը դնեմ, որ թէպէտ այնքան մեծ չէ, այսու ամենայնիւ կրնայ նոյնպէս օգտակար ազդեցութիւն տալ մեզ, զոր կրօնք՝ մարդկանց մանաւանդ երիտասարդաց սրտին վերայ կը ներգործէ:

Կրօնին ջատագովութեամբ առաքինութեան շահուցին մեջ մատուցեալ երիտասարդներ:

Շատ տարի վայ, գեղացւոյն մեկը փարիզ գալով, կը հարցնեն իրեն թէ ինչ լսած ունիս գիւղին, ուր տեղ ապստամբութեան ժամանակ այնքան անկարգութիւններ կը տիրէին: — Լ'Ո, պատասխան տուաւ գեղացին, հիմայ ամեն ինչ լաւ կարգին է. փառք Աստուծոյ:

Մեզ աւազերէյ մի գտանք. որ Աստուծոյ հաճոյ անձ մի է: Նա զմեզ կը կրթէ, լաւ քարոզներ կուտայ, մեր մոռցած բաները միտքերնիս կը ձգէ, եւ իւր խնամքովը (քանի մի չար մարդոյմէ ի զատ, որոնք կ'ուզեն զԱստուած նոքա համար որ գողցուած բաները տիրոջը դարձնել կը պատուիրէ,) միւս ամենքը ուղիղ ճանապարհի մէջ մնան: Ամենէն աւելի մեր տղայքն իրենց առաջին վարքերնին փոխելով, այնքան հեռու են հիմայ այն բնութենէն, որքան որ լոյսը հեռու է խաւարէն: Մինչեւ այս օրս ամեն մէկ երկրին մէկ մէկ չար սատանայ դարձեր էին, որոնք ոչ հօր եւ ոչ մօր մտիկ կ'ընէին, կ'երդուելնային, իրարու հետ կը կռուէին, եւ քիչ քիչ գողութիւնը ձեռք առնելով սկսեր էին անառակութեամբ անցընել իրենց կեանքը: Բայց քանի որ մեր բարի առաջնորդը քրիստոնէական վարդապետութիւն ուսուց նոցա, եւ խոստովանանքի կանչեց եւ շատերուն եւս հաղորդութիւն տուաւ, որոնք շատ ժամանակէ ի վեր առած չէին, գառնուկի նման անոյշ ևհեզ եղան, եւ հրեշտակի պէս ջերմեռանդ եւ Աստուծոյ սիրոյը վառուած: Ա'հ, կեցցէ ուրեմն կրօնքը, որու շնորհած հրաշիկ եւ զօրութեան հաւատարը չկայ, կրօնքը կորսնցընելով ամեն ինչ կորուսած էինք, բայց Աստուծոյ ողորմութեամբ կրօնքովնորէն ամեն ինչ ձեռք բերինք:

Իրաւունք ունէր այս բարեմիտ գեղացին

այսպէս պատչելու . վասն զի կրօնքը կորսունցը նելով՝ ամեն բան կը կորսունցնէ մարդ : Այլ ուրիշ բան չինար նորա , ոչ լոյս գինքը լուսաւորելու , ոչ սանձ զսպելու , ոչ նեցուկ մի գինքը բռնելու , և ոչ յոյս քաջալերող . և ողորմելին միայն իւր կիրքերն իրեն առաջնորդ ունելով , ամեն փոսի մէջ կը գահավիժի կ'ինկնի , ուր մարդոյս կիրքերը կը քաշեն կը տանին բոլոր զանոնք որ անկարգութեան կուտան գինքնք :

Բայց երբ իրենց մտաց աչքեւ և սրտիցը մէջ պրտաց կ'ունենան սուրբ կրօնին մեծ ու օրհնաշարժ ճշմարտութիւնները , կը հեռանան այս կորստական ժայռերուն մօտէն , և հաստատ կը քայլեն ճշմարտութեան ճանապարհ ներսն մէջ . ու նաեւ ամեն օրուան փորձերով կը տեսնեմք , որ եթէ մարդոց մէջ բարեկրթութիւն , ուղղութիւն և առաքինութիւն կայ , միայն նոցա մօտ է , որոնք ճշմարտապէս կրօնասէր կրնան կոչուիլ :

Այս ուրեմն , սիրուն որդեակք , հիմա կուզ այս փրկարար կրօնիս հետ հաստատ սիրով կապուելցէք , որ այն միայն ձեզ երբեւ նեցուկ և առաջնորդ լինելով , կրնայ հմտուլ որ ճանապարհէն դուրս չելնէք և կորսուիք : Որքան աւելի ճանաչէք գայն , այնքան աւելի սրբատանց սիրելու կը ջանայք . և որպէս զի աղէկ ճանաչէք գայն , պէտք է որ աշխատիք մտաղրութեամբ ուսանելու :

Կարող էք դուք հիմայ ուշադրութեամբ կարդալ քրիստոնէական վարդապետութեան պատառներն , որ ձեզ համար մանաւանդ պէս չինած են համառօտ և աշխարհաբառ : Բայց երբ ժամանակ լաւ ուսանելու լինիք , պէտք է որ ուսմունքը կատարեալ լինելու համար , անկէ յետոյ ուրիշ գիրքեր եւս կարդաք որ լաւ ճանաչէք սուրբ կրօնին ճշմարտութիւնները : Իւ ձեր կարդալու գիրքերն են՝ սուրբ Գրոց հին և նոր Կտակարանն և Կաթոլիկեայ Եկեղեցւոյ մեհնութիւնները , Ներսէս Շնորհալւոյն ուղղափառ դաւանութեան վերայ գրած թուղթերը , Սահակեանի կրօնագիտութեան գիրքը և այլ ուրիշ հաւատոյ և կրօնի վերաբերեալ գիրքեր , զորոնք Հայաստանեայց սուրբ եկեղեցին ընդունելի է : Այսոնցմով ինչպէս որ պէտք է , կատարեալ կ'ուսանիք ձեր կրօնքը , և կրնաք յետ այնմիսիկ պատասխան տալ ձեր կրօնին վերայ եղած հարցմանց , ինչպէս եղաւ Հնդկաստանցի ոզոն , զոր կ'ուզեմ կարճօրէն այս տեղ պատմել :

կրօնի մէջ շատ կրթուած երիտասարդի մը կատաղած մարդոն ամչցընելը :

Հնդկաստանցի ոզոյ մի ուղղ տարեկան , որ աղէկ կրթուած էր քրիստոնէական կրօնին ճշմարտութեան մէջ , օր մի ընկերութեան մէջ դանուելով , կատաղած մարդոն մէկը սկսաւ

ծաղը բնել նորա կոճղը, և վերջապէս հարցուց անոր թէ ո՞ւր է քո Աստուածդ։ Տղային ամենեւին չխոհեցաւ, այլ միկէն պատասխան ըրաւ ծաղը բնողին և ասաց. "Իմ Աստուածս քոլոր աշխարհիս ստեղծիչն է. անիկա պարզ հոգի է, և չեմ կարող ցուցընել. այլ անոր տեղը քո Աստուածդ կը ցուցընեմ»։ Այսպէս ասելով քար մը առաւ ձեռքը, և կրցածին չափ նորա վերայ մարդու կերպարանք մի նկարեց. յետոյ դեռևին դնելով քաղաքավարական կերպով մի, հրեց այն դին ոտքովին և ասաց. "Ահա ձեր պաշտած Աստուածը»։ Այս տղան խելացի զուարճութեան վերայ սկսան ամենքն ևս ծաղ զարնել, և ծաղը ընողը մեծ ամօթով մնաց։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Գրաւոր չեզուխն վերայ։

Կրօնագիտութեան հետ կը պարտաւորիմք նաեւ գրաբառ լեզուն ուսանիլ, որ խիստ օգտակար և անհրաժեշտ պարագայ է մեզ։ Ձեր մէջ տղայք կան որ գրաբառ լեզուն բանի տեղ չեն դներ իբր անօգուտ համարելով զայն, բայց չեն գիտեր թէ ինչ պատուհասներ կը բերէ իրենց, զոր եթէ ճանչնալու լինէին, այնպէս բան և ոչ մըտքերնին կ'անցընէին։ Գրաբառ լեզուն գիտութեանց բանալին է, զոր եթէ մէկը չգիտնայ՝

չկրնար հասկնալ այն գրքերը, զորոնք կարգալով մարդս գիտուն և բազմագէտ կը լինի։

Ե՞տ անգամ լսած էք դուք խորհնաբոյն, նշանաւոր, Նորհալւոյն գրքերը, Մխիթարեանին ճառերը, Ե՞տ ոսկեանը և ուրիշ անթիւ հեղինակներու գրուածներ, որոնց անունն ամենուգ ծանօթ է. բայց ամենեւին չեմ կարծեր որ գիտնաք թէ ասոնք ինչ բանի վերայ կը խօսին, կամ թէ ինչպիսի մարդիկ են գրողները։ Ա՛րդ մի որ գրաբառ ուսանիլ չուզեր, այնպիսին պէտք է որ եկեղեցական պաշտօնի մէջ եւս չմտնէ, վարժապետութեան, քարոզչութեան, գրագրութեան և այլ ուրիշ պաշտօններու ձեռք չզարնէ, զոր լաւ արժանաւոր դործի դնելու և կատարելու համար՝ պարտաւոր է նախ գրաբառ լեզուն ուսանիլ. վասն զի այն պաշտօններուն մէջ մտնողը շատ բառեր և դիտութիւններ պէտք է դիտնայ, որոնք միայն գրաբառ լեզուով գրուած են։

Ի՞նչ կ'ասեմ եւ՝ թէ նոյն պաշտօնները ձեռք բերելու համար պէտք է գրաբառ լեզուն նախ ուսանիլ, միթէ ամեն հայազգի պարտաւոր է դիտնալ իւր մայրենի լեզուն, մայրենի կ'ասեմ չէ թէ մեր խօսեցած աշխարհիկ լեզուն, այլ գրաբառը, այն լեզուն՝ որ մեր նախնի նահապետները կը խօսէին, Տիգրան, Արամ և Հայկ, ոչ միայն ասոնք՝ այլեւ Նոյ և Հեռեւսախ Ադամ։ Իսկ մեր պատուական լեզուն՝ որ հիմայ

մեռեալ լեզուներու կարգը համարուած է, ժամանակաւ բոլոր աշխարհիս կը սիրէր. ինչո՞ւ համար այն ազնիւ լեզուն մեր առջեւ անարգ պիտի համարուի, և թէ որ մեռեալ է, ինչո՞ւ համար չաշխատինք կենդանացընել: Ասոնք կան մեր ազգին մէջ որ ի՛ սանեն թէ դպրաւոր ամենեւին իրենց օգուտ մի չուներ և շուկային մէջ չգործածուիր, իրաւունք ունին, վասն զի չեն գործածեր և նորա համար անպործածելի մնացած է. նամականիներն և հաշուետումարն ուրիշ լեզուով գրելը լաւ կը համարին և դպրաւոր հոգ չեն տանիր: Ներկայական ժամեր դպրութիւնները միթէ բոլորն եւս դպրաւոր չե՞ն կարգացուիր. մոխի կ՚ընեն նոքա և ամենեւին բան մի չեն հասկնար. քարոզիչն եւս նոցա ազիտութեան պատճառաւ իր առնաբաշնութիւնը տաճկերէն լեզուով կը տախտակի լնել, որպէս զի միայն առնուն. աշխարհաբառ եւս տալու լինի, անկէ եւս չեն շահիր, վասն զի դպրաւոր բառեր կը գործածէ: Պտնէ սա մեր աշխարհաբառ խառնակ լեզուն վհուկելու համար քանամբ ուսանիլ դպրաւոր համառօտ կերպով մի: Ահա նոցա ազիտութեան համար չէ՞ որ հիմայ նոր սովորութիւն եղած է շատ դրքեր աշխարհաբառ կը գրուին, (ինչպէս որ մենք եւս տախտակեցանք սոյն լեզուով խօսիլ ձեր հետ), նաև օրագիրներն աշխարհաբառ կը խմբագրուին. բայց ափսո՜ս որ զանոնք եւս կա-

րող չեն ինչպէս որ պէտք է՝ հասկնալ. ուստի նորէն կը պարտաւորին դպրաբառ ուսանելու. ապա թէ ոչ այն ժամանակ կը տախտակէր աշխարհաբառն աւելի պարզ և ամենուն հասկնալի ընելու համար՝ տաճկերէն և դաւառական բառեր գործածել, որ է մուրացկանութիւն, և մեր լեզուն իբր աղքատ լեզու մի համարել տալ, որ է անարգութիւն և ամօթ մեր ազգին:

Աղէ, սիրուն որդեակք իմ, պարտք համարեցէք ձեզ ջերմել դպրատունին մէնչեւ որ լաւ չուսանիք քերականութիւնը: Այս ուսմունքը վրա կը լինիք դուք աստուածապաշտ և ջերմեռանդ անձինք, աստուածաբան, խմաստուն, ճարտարախօս, տրամաբան, բազմագէտ, ուստեւ՝ զոր չէք կարծեր ընաւ, եռանդուն ազդասէր. վասն զի ձեր ազգասիրութիւնն աւելի բարբառողը դպրաւոր լեզուն է. անով կ՚իմանամք մեք մեր լեզուին պատուականութիւնն և անդրանկութիւնը. նորա մէջ կը կարդամք և կ՚ուսանիմք մեր նախնի նահապետաց և թագաւորաց անպարտելի քաջութիւնն, ազգասէր գործերը, զարմանալի մեծագործութիւնները. նոյն Աղամախօս լեզուով կը կարդամք Ներսէսի գրած ողբալի պատմութիւնը. Խորենացւոյն աքանչելի հայկաբանութիւնը, որոնց մէջ պայծառ կը փայլի ազգասէր ոգին, Ղարեհացւոյն ողբերգութիւնները և աստուածային հոգեբուխ ճառերը, որոց վերայ եւ բոպտիչք ան-

գամ կը զմայլին. Հնարհալուն գեղեցիկ ոտա-
նաւորները և ամբծնացուն սքանչելի առե-
նաբանութիւնները. որ մեկն զուսցեմ: Կաեւ
առնցամէ ի զատ օտարազգի հռչակաւոր հեղի-
նակաց գործերը, Հոմերոսի, Վիրգիլեայ, Վի-
ռայի քրիստոնականին, Միլտոնի, Դենեղոնի
և Կռնեների բանաստեղծական գրուածները:
Մեկ խօսքով բուն հայագէտ և ազգասէր չեմ
կրնար ես այն մարդն՝ որ գրաբառ լեզուն չը-
գիտեր:

Լեզուագիտութեան օգտակարութիւնը:

Մեկ աշակերտ մի իւր մայրենի լեզուն ու-
սանելէն յետոյ՝ լեզուագիտութեան ես սէր մի
ունենալու է, և աշխատելու է ուրիշ լեզուներ
եւս ուսանիլ, որոնք առելի ընդհանուր եղած
են և առուտուրի մէջ առելի կ'անցնին. չէ թէ
ասիկայ իւր պարտքն է, այլ իւր մեծագոյն օգ-
տին համար աղէկ է որ ուսանի. վասն զի միայն
իւր լեզուն առնուլ անցնիլը բան չէ: Ասոր հա-
մա է որ հիմայ ազգային բարեկարգ և օրինա-
ւոր դպրոցներու մէջ սկսած են ուրիշ օտար լե-
զուաց եւս դասատուներ կարգել, որպէս զի
ազգայք իրենց մայրենի լեզուէն յետոյ դանոնք
եւս ձեռք բերելով՝ թէ մեծագոյր շահուց և
թէ ազգային յառաջադիմութեան և բարեկր-
թութեան նպաստ մի լինին: Այս եւս յայտնի է

որ՝ մի մարդ որքան լեզու գիտնայ՝ այնքան մարդ
կը համարի, օտարազգուն հետ խօսակցելու
և առուտուր ընելու ժամանակ թարգմանի կա-
րօտ չլինար. և լեզուագէտ մարդն անդադար
կրնայ ճանապարհորդել բոլոր աշխարհի երեսը:
Մարդ մի լեզու չգիտնալով իրենց գոր-
ծառնութենէն և շահերէն յետ մնացեր են, և
իրենց միաքը չեն կարողացեր բացատրել այլոց
այնպիսի երկրի մի մէջ գտնուելով, ուր տեղ իւր
լեզուն հասկցող չկայ. որչափ դժուարութիւն-
ներ կը կրէ և շփոթութեան մէջ կ'ինկնի: Ա-
նոնցմէ ի զատ լեզուագէտ մարդը շատ վտանգ-
ներէ կ'ազատէ զինքը, ինչպէս հետեւեալ օրի-
նակէն կ'երեւի:

Լատիներէն չգիտնալ մահին պատճառ հիւանդի:

Պատմեն, որ հին ժամանակները իբրեւ
երկորդ Ալեքսան համարուած էր իւր ազգին
վեհմտութեան և յաստակութեան համար, հի-
ւանդանոցի մի մէջ հիւանդ պառկած լինելով,
երկու բժիշկ գինքը կը նայէին, որոնք ոչ տկ լե-
նէին և ոչ նորա հիւանդութիւնը կը ճանչէին:
Պատրաստ ակնոյ դնելով լսեց՝ որ այսպէս կը
խօսէին իրարու հետ լատիներէն լեզուով. Ինա-
չիամաս էհափերիմենդոմ լին անիմա վիլլ, որ կը նշանա-
կէ. փորձ մը ընենք սա անարգ հոգւոյն վերայ: Ասկա-
ցաւ խերձ՝ նոցա լսածն խնդալով, և մեկէն

կը ջանայր որ զինքն նոցա ճանկէն ազատէ, ո՞ր մանք վարձի համար իրեն դեղ մի պիտի տային, և դէպ ի անոնց ուղղելով խօսքը՝ ասաց. Ա՛լէ՞ մ անիմամ ափէլլարդիս փրօ ×ոտա Ղրիսդոս մորդոտս եատ. այսինքն՝ Ընա՞րգ կը իւլէ՞ դոտ այն հոգին, որոտ համար Ձիսուս Ղրիսդոս իւր անձը դրաւ: Ընյս խօսքերը պատճելով փախաւ Մովսեսս, ուրախանալով իւր սրտին մէջ տղայութեան ժամանակ լսած ներբէն լեզուն ուսանելուն համար, զոր եթէ չը գիտնայր, անտարակոյս իւր տգիտութեան զոհ պիտի լինէր:

Ձուսման աշխարհագրութեան:

Աշխարհագրութեան ուսումը լեզուագիտութեան և մայրենի լեզուին չափ հարկաւոր է մարդոյս: Աղամհետեւ աշխարհագրութիւնը կ՚ուսուցանէ մեզ երկրիս այլ և այլ գաւառներուն տեղւանքը, որոնց վերայ շատ անգամ խօսակցութեան մէջ կը հանդիպի խօսիլ, ուստի մեծամեծ սխալներ կը գործէք, եթէ քիչ մի տեղեկութիւն չունենանք այս գիտութեան վերայ: Ալեն մէկ քաղաքին աշխարհիս մր մասին մէջ լինելը չգիտնալով, Ափրիկէին Ընդրապետութեան մէջ կը կարծէք, Ընդիայինը Ամերիկային մէջ, և խաղը կը լինիք ամենուն առջեւ:

Աշխարհագրութիւն չգիտնալուն համար ծագած եղոյգ երեսապարտը:

Մի ժողովի մէջ Ճամբորդի մի վերայ խօսք

եղաւ, որ Վալէէն Տուվըը [1] եկեր էր երկու ժամուն մէջ, Թէպէտեւ մէկ քաղքէն մինչեւ միւսն եօթը մղոն հեռու է: Տղուն մէկը լսելով զայս, և չգիտնալով թէ ծռելով կը լինի այն Ճամբորդութիւնը, ասաց. "Կ՚երեւի թէ այս Ճամբորդը պատուական և արընթաց ձի մի ունէր: — Ձէ՛. պատասխան տուին իրեն, անիկայ միայն փայտէ ձի մի ունէր: — Է՛հ. ինչ կ՚ասես, կրնայ տղայն, եօթը մղոն հեռու տեղը ինչպէս կրնայ մարդ հասնիլ երկու ժամուն մէջ փայտէ ձիով մի: — Դայց հաւատաս որ այնպէս եղաւ, պատասխանեց նորէն միւսը. բաւական է միայն գիտնաս՝ որ նորա հեծած ձին թեւաւոր էր և ջրին վերայ կը քայլէր": Ընյն ժամանակ խելքը տեղ ըրաւ տղուն, և իմացաւ թէ ըսած ձին նաւ մի էր. ամենալուն երեսը կարմրեցաւ, և հոն եղողներուն առջեւ խաղը լինելուն վերայ ինքնիրեն բարկանալով, կամացուկ մի քաշուեցաւ գնաց անկէ:

Ընյս մէկ օրինակ կրնայ ձեզ բաւական յորդոր լինիլ, որ զանց չառնէք աշխարհագրութիւնը ուսանելու, որ այսքան հարկաւոր է, և խօսակցութեան մէջ միշտ կը գործածուի: Ընկրնաք լաւ բաւականին տեղեկութիւն մի ունենալ տրա վերայ, համառօտ աշխարհագրու-

1 Քալէն և Տուվըը՝ Գաղղիոյ և Անգղիոյ ծովեզերեայ սահմանագլխներն են, որոնց միջոցը եղած ծովը կ՚լսուի Ներքոյ Քալեայ:

թեան գրքերը կարդալով, և աշխարհագրական թղթերն աչքէ անցընելով, որոնց մէջ գրուած կան աշխարհիս չորս մասերը :

Ուսումն ժամանակագրական :

Աշխարհագրութեան հետ ժամանակագրութիւն եւս պէտք է ուսանիլ : Աշխարհիս տեղւոյն անունն մինչեւ ցայսօր անցած ժամանակներուն և դարերուն կարգը ճանչնալը մեծ օգուտ կ՚ընէ ձեզ : Սոցա մէջ հանդիպուած անց քերն իրարու հետ չէք շփոթեր, և մէկ դարու մէջ պատահածն ուրիշ դարու չէք տար, որ է սքանչելագործական . և այս այնպէս սխալ մի է, որ խիստ շատ անգամ կը գործեն ժամանակագրութեան հմուտ եղողներէն :

Ժամանակագրութիւն չգիտցող տղու մի ծաղրելի սխալմունքը :

Բազմաթիւ ժողովի մի մէջ խօսք բացուեցաւ զանազան աշխարհակալներու վերայ, որ աշխարհիս մէջ երեւցան . տղուն մէկին եւս դարձաւ իւր հօր միամտութեամբ հարցուց թէ՝ Տիգրան ըլլ ամենեւին չաղթութիւն մի գործած էր Աղեքսանդր մեծին դէմ : Առան պատասխան տուաւ հայրը . “ Տիգրան այո խիստ կորիճ թագաւոր էր . և կրնար Աղեքսանդրին դէմ դնելու, բայց մի փոքր արգելք կար , սէտ էր որ Աղեքսանդր 240 տարի յառաջ ծնած լի-

նէր . վասն զի Տիգրան դեռ չաշխարհ եկած Աղեքսանդր երկու քառ հինգ դար յառաջ մեռած էր : Տղայն այն ժամանակ կրկնեց . “ինչպէս ոգեւոր դուռ ասիկայ , հայր : — Յամառնակապրութիւն ուսանելով գիտցայ , ասաց հայրը, և դուն եւս քիչ ժամանակէն սիրտ գիտնաս , երբ՝ ինչպէս մի քանի անգամ պատահեր եմ, չանաս միայն պահել ՚ոյց ընդհանուր պատմութեան ակնարկներուն մէջ նշանակուած այլ և այլ թուականները : Այս գործը եթէ առաջնորդ ունենաս քեզ, ժամանակագրութիւն չես շփոթիր, և երբեւ ոգիտ՝ ամօթով չես մնար մարդոց մօտ ,, :

Ուսումն պիցաբանութեան կամ առասպելաց :

Այս ուսումը թէպէտ և ընդհանրապէս հարկաւոր չէ, այսու ամենայնիւ ձեր միտքը զարդարելու և լուսաւորելու համար՝ քիչ կարեւորութիւն ունեցող ուսմունքներն եւս գանց չեմ ուզեր առնել, ուսոի հարեւանցի տեղեկութիւն մի տալ ձեզ դիցաբանութեան կամ հեթանոսութեան ուստ առասպելագոյ պատմութեան վերայ արժան կը համարիմ : Բանաստեղծներն և պատկերահաններն շատ կը գործածեն այս առասպելները . վասն որոյ անկարելի է անոնց թէ քերթուածոց և թէ պատկերագոյ նշանակութիւնն իմանալ, եթէ քիչ մի տեղե-

կութիւն չունենայ մարդս այն գիտութենէն։ Նաեւ շատ անգամ մարդիկ ոգիտութեամբ հակառակ նշանակութիւններ կուտան նպատակը բանեներուն եւ ներկայացուցած պատկերաց, ո՛չ թոյլ ծաղը եւս կը լինի ամենուն։

Տցու. մի ըրած մեծ սխալանք։

Աստրին գալրոյի աշակերտներէն մին պատկերայ Թանգարանի մի մէջ տեսնելով պատկեր մի, որու մէջ նկարուած էր Ադրոդիտէն Աիրոյ մօտ նստած, և որովհետեւ այս չաստուածուհւոյն մանաւանդ եղած նուիրականները չէր ճանչցեր տղայն, դարձաւ ատոց խօսք մըրը. "Այ ըրկ, տես տուրը Աստուածածինը դեղեցիկ հրեշտակին հետ"։ Այդրը չկրցաւ բռնել զինքը խնդալէն, նոյնպէս հոն գտնուողներն ամենքն ծիծաղելէն կը մարէին. տղայն ամչնալուն կարմրեցաւ, որ եթէ քիչ մի ուսած լինէր դիցաբանութենէն, այս սխալմունքը չէր ըներ. երբ գիտնար թէ կապարճը, նետերը և քրոջը Աիրոյ առասպելական յատկութիւններն էին, այն ժամանակ դիւրաւ կրնար ճանչնալ Ադրոդիտէն որդին լինելն և ոչ հրեշտակ։

Ուսումն պատմութեան։

Ձեր ուսանելու առաջին գիտութիւնը պատմութիւնն է, վասն զի պատմութենէն ու-

րիշ բան չկայ որ կարող լինի ձեր միտքն լաւ մի զարդարել, և ձեր սիրտը ի լաւութիւն կրթել։

Պատմութիւնը կը նմանի պատկերի, որ մեր աչքին առջեւ կը բերէ աշխարհիս տեսարանին մէջ հանդիպած երեւելի դիպուածները։ Նորա մէջ պայծառ կը փայլին դիւցազնական առաքինութեանց օրինակները. անկէ կ'ուսանին մարդ տէրութեանց մէջ պատահած խռովութիւնները, փոփոխութիւնները ու այլ և այլ աղգաց տէրութիւնները։

Պատմութիւն գիտցող մարդը, ամեն դարու և ամեն երկրի մէջ ապրող մարդ է. իսկ չգիտցողն ապուշ վայրենւոյ կը նմանի, որ ոչ իւր բոլորտիքն և ոչ աչքին տակ եղածը կը ճանաչէ։

Ինչ որովհետեւ պատմութիւնն ընդարձակ դաշտ մի է, որ քիչ ժամանակի մէջ մարդ չկարողանայր բոլորը մէկէն պտըտիլ, ուստի առ այժմ բաւական համարեցէք ձեզ միայն համառօտ պատմութիւնը կարդալ ձեր աղգին և լաւ ուսանիլ հին նահապետաց և թագաւորաց ժամանակի դիպուածները, որոնց շատ անգամ կը հանդիպիք գրքերու մէջ, և զոր բարեկիրթ և ուսումնական տղայոց հարկ է որ գիտնան։

Մի կարծէք թէ դժուար եւ ձանձրալի ուսում մի է այս. ընդհակառակն ամէն աւելի մարդոյս մտաց հաճոյական և զուարճալի գի-

ռութիւն չկայ : Այն աքանչելի գործերն մարդ ընելու յօժարակամ ականջկիդ կուտայք , և մեծ հաճոյութիւն կը զգայք օգտակար գիտ-ւածներն և զարմանալի անցքերը լսած ժամանակնիդ : Այսօր մէջ կը գտնէք ձեր ախորժակին հաճոյ գործեր , և ձեր հետաքրքրութիւնը կը լեցնէք նորա թղթերը ուշադրութեամբ դարձնելով . վասն զի աշխարհիս զանազան ազգաց մէջ կարդէ դուրս ինչ որ պատահած կայ , հոն բամբասած կը տեսնէք :

Բայց մի՛ դուցէ պատմութեան հետ չխոթէք առասպելները , որոց մէջ պատմուածք մոգացածին չնմուշ բաներ են . իսկ պատմութիւնն այնպիսի բաներու վերայ կը խօսի , որ իրաք եղած են , և զգայ կերցիք՝ որ զսոնք Թողլալ՝ միւսներուն տեղ չինկնիք կարդալու :

Ձեր վարժապետին տուած դասերն և կրօնութիւնները ամենն ալ պարտականէս ուսանելէն յետոյ , միւս ինացած ժամանակնիդ եւս պատմութիւն կարդալու տուէք : Վասն զի , Թողլ որ ամեն մարդու անհրաժեշտ պարտք է իւր ազգին պատմութիւնը գիտնալ , այլ և նորա մէջ օգտակարին հետ զուարճալին եւս կը գտնէք , եւ ձեր միտքը գեղեցիկ ճանաչութեամբ զարդարելով , առաքինութեան սէրը կը տնկուի ձեր սրտին մէջ , քաջքր և բարի օրինակաց միջոցով :

Դուցէ կ՚ասէք ինձ , Թէ ձեզ առաջարկած

նիւթերս խիստ բազմազանութիւն են , և Թէ անկարելի է այսքան բան մեկէն ուսանիլ մի և նոյն ժամանակի մէջ : Այո՛ , դիտեմ այնպէս լինելը , ուստի և չեմ բռնադատեր որ մի և նոյն ժամանակի մէջ ուսանիք բոլոր այն գիտելիքներն զոր այս գիրքս մէջ ձեզ յիշատակեցի . այլ կը ցանկամ միայն որ դուք հետզհետէ մեկիկ մեկիկ կարդայք միաք առնուք իմ դրած կանոնիս համեմատ : Այս կերպով բոլոր այն գիտելիքները դիւրաւ կը տպաւորին ձեր յիշողութեան մէջ . և ձեր ուսմունքը կատարելէն յետոյ՝ ինչ որ հարկաւոր է ձեզ՝ բոլորն եւս լաւ ուսած կը լինիք : Բայց եթէ՝ ինչպէս որ շատ տղայք կ՚ընեն , առանց կարգի և կանոնի ուսանելու լինիք , ձեր մտաց մէջ ամենքն կը շփոթին , և բոլորը մեկէն ուզելով ուսանիլ , և ոչ բան մի կ՚ուսանիք :

ԳԼՈՒԽ Ի .

Աշխատասիրութեան վերայ :

Քիչ մարդիկ կան որ չցանկան գիտնալ վերը զետեղած բոլոր ուսմունքներն և տեղեկութիւնները . բայց քիչ մարդիկ կան նաեւ որ ուզեն պէտք եղած միջոցն ի գործ դնել զանոնք ստանալու համար :

Այս ասած միջոցս , սիրելի որդեակք իմ , աշխատութիւնն է , վասն զի հասարակաց զբ-

բոյց մի կայ կ՚ասէ թէ՝ առանց աշխատանաց և
ջանից բան մի չկրնար շահուիլ։ Որքան տղայք
դիտութիւն ուսանելու համար ի բնէ յարմա-
րութիւն ունենալով, մեծ յառաջադիմութիւն
ներ կրնային ընել նոցա մէջ, և ուրիշ շատերուն
նման իրենց հայրենեաց պարծանք կը լինէին.
բայց որովհետեւ այս բանիս համար մանկու-
թեան ժամանակ կը հարկաւորէր աշխատիլ և
իրենց ունեցած յարմարութիւնը բանի բերել
և մոքերնին մշակել անհունջ ջանքով, ուստի
զանց առնելով՝ մնացին տգիտութեան մէջ։
Ծուլութիւնը յաղթեց իրենց, աշխատու-
թիւնն իրենց ծանր եկաւ, եւ անարգաբար
յանձն առին ամօթ կրելու, որ տգիտութեան
սիրելի ընկերն է, քան թէ նեղը խօթել ղերինք
դիտութիւն ուսանելով. որով կրնային իրենց
միտքը զարդարել և երեւելի անձ մի լինել, և
իրենց օրինակովը հաստատեցին այն առածն որ
կ՚ասէ թէ՝ որամիտ և ղօրաւոր հանճարն ամե-
նեւին օգուտ մի չբներ, եթէ ուսումն և աշ
խատութիւնը չօգնէ անոր։ Այլ եթէ առանց
ուսման և աշխատութեան բան մի չստացուիր,
սակայն երկուքը միասին գալով՝ ամեն ինչ կրը-
նայ լինիլ։

Վիտութեանց ուսումը կրնայ բաղդատ-
ուիլ գետնի մշակութեան հետ. ինչպէս որ աշ
խատութեան ղօրութեամբ՝ բնապէս անպէ-
տուղ եղող երկիր մի մշակելով կը յաջողի ժա-

մանակին պտուղ բերել, այսպէս անհունջ աշ-
խատելով ուսման մէջ՝ կրնայ մարդս դիտուն
լինիլ, թէպետեւ եղական բնաւորութիւն կամ
կարդալ ուսանելու դիւրութիւն ընդունած չը
լինի բնութենէն։

Աշխատութեամբ բնութեան յաղթելը։

Վիմաթենէս, Յունաստանի երեւելի ա-
ւետաբանից մէկը, իւր բնական յարմարու-
թեանց դէմ այնպէս արգելքներ ունէր, որ
կարծես թէ ամենեւին չպիտի կրնայ և ոչ հա-
սարակութեան մէջ երկու խօսք զրուցել։ Ի՞ն-
զուին վերայ պակասութիւն ունենալով՝ չէր կա-
րողանար երկու խօսք իրարու եռանդագին
նել. նաեւ ձայնն այլ սիրուն չէր, և կուրծքը
տկարութիւն մի ունէր. բայց նա լաւ դիտնա-
լով թէ աշխատութեամբ ամեն ինչ կը յաջողի,
և բնութեան մէջ եղած դժուարութիւններին
բնաւ չվախնալով՝ մտածեց իւր ջանքն աւելցը-
նել և յաղթել անոնց։ Նրբեմն իւր թոթովա-
խօսութիւնը շտկելու համար, բերանը մանր
քարեր կը դնէր, և այնպէս բարձր ձայնով կը
կարդայր. երբեմն եւս իւր կուրծքը զօրացնե-
լու համար, դար ու վոս ժայռերու վերայ
ձանկելով կ՚ելնէր և բարձր ձայնով առեներգա-
նութիւններ կ՚ընէր։ Այ՛նչեւ կ՚ասեն թէ՝ ե-
րեք ամիս լման գետնի տակ փորուած տեղ մի

անցուց, միայն իւր ձայնն և շարժմունքները կանոնաւորելով հայելի մի դիմաց, որ լաւ տես նէ պակասութիւնները։ Նա իւր ջանքերը սպառած չէին, վասն զի բնութեան տուած սրտ գեղքներուն հետ կռուելով, բարեյաջողութեամբ յաղթեց անոնց, և եղաւ Յունաստանի խիստ երեւելի առեղծուածը։ Մի յուսահատիր, սիրելի ոգեակը իմ, եթէ չէ սրտած ձեզ այն հազուագիւտ տաղանդները, զոր Աստուած քիչ մարդու չնորհած է, բայց Դիմոսթենեսի օրինակին վերայ՝ ջանացէք դուք եւս անդադար ուսման պարապելով լեցընել ձեր պակասութիւնը։ Մի թուլնար՝ եթէ առջի քերան երջանիկ վախճան մի չունենան ձեր ջանքերը, ինչպէս որ կը յուսայիք. վասն զի դիտութիւնները կամաց կամաց կ'ուսանի մարդ, և կրթութիւնը ժամանակի և աշխատութեան պտուղն է։

Աշխատասէր երիտասարդը։

Երեւելի Յոյն փիլիսոփային մէկը Աղեքսանդրէս անուն, չափազանց միտք մի ունէր. բայց լաւ դիտնալով թէ անհոնջ պարապմունքը խելքը զինաւորելի կընայ զմեզ դիտուն ընել, բոլոր գիշեր հօրէն ջուր քաշելով պարտիզպանի մի մօտ օրական ապրուստն անկէ կը հանէր, որպէս զի ցերեկը բոլոր կարգանոյ ուսման եռանդ լինի

անձանձրոյթ. և այս կերպովս այնպէս յառաջացաւ դիտութեանց մէջ, որ բոլոր իւր դասընկերներն անցաւ և իւր դարուն լոյս մի եղաւ։

Լաւագոյն միտք ունեցողները չեն միշտ որ դիտութեան մէջ յառաջ կ'երթան, այլ գրեթէ սովորաբար անոնք՝ որ աւելի աշխատութեամբ կը ջանան։ Նա պատուասէր մարդիկ այս աշխատութեան միջոցին է որ փորձ ունեցեր են երեւելի լինիլ դիտնականաց մէջ։

Աշխատասիրութեան գեղեցիկ օրինակներ։

Պլինիոս ծերն այնպէս նախանձաւոր եր իւր ժամանակն օգտակար բաներով միշտ անցընելու, որ երբ տղեկն գուբս եկնել ուզէր, գահավորակի մի մէջ նստելով գիրքը պարտցընել կուսար, որպէս զի կարգանայ ճանապարհին և կարդալու, առանց սրտիդ լինելու իրեն ճանապարհին վերայ եղող մարդիկն։ Աստուածն երթալուն հետը միշտ գիրք մի կը տանէր, որ մինչև խորհրդի սենեկին՝ ժամանակը պարապ չանցընէ։

Պլինիոս կրասերն, իւր եղբօրորդին, կըսէ նամբանել՝ թէ իւր հօրեղբօրն ուսման մէջ ունեցած եռանդը ժառանգեր էր։ Նա ինքն իւր մէկ նամակին մէջ կը պատմէ թէ, որքան գնացած ժամանակ հետը կը տանէր իւր փորը գրքանոցը, որպէս զի որս չեղած ժամանակ նոր

մէկ մտածութեամբ մի իւր միտքը ճոխացընէ։

Ովիդիոս անդադար աշխատութեան օրինակ եղած էր. և հիմայ ըսելիքս յայտնի ապացոյց մի է՝ որ կրթութեան համար ունեցած փափաքն իւր վերայ իշխող կիրքն էր։ Որ մի Ովիդիոս իւր վարժապետին մօտ կ'երթայ նորա տուած դասերը մոխիկ ընելու. առջի քերան ոմարդութեամբ մի վարուեցաւ հետն Ընտիքթենէս, և իրը թէ վռնտել ձեւացընելով ասաց. "Ան մի չեմ ուզեր ուսուցանել քեզ։ Նորա այնպէս վարմունքէն ամենեւին սիրտը չվհրաւորեցաւ Ովիդիոսին, և ընդհակառակն աւելի աստիկ աղաչանքներ սկսաւ ընել. բայց Ընտիքթենէս՝ որ հաւանականաբար կամ նեղութենէ փախչիլ կ'ուզեր, և կամ նորա մտաց հաստատութիւնը փորձել, աւելի մեծ խստութիւն ցըցուց, մինչեւ ծեծելու ալ եղաւ։ "Իսիա լաւ պօռաց այն ժամանակ Ովիդիոս, ծեծէ ըզքան որ կ'ուզես, մինչեւ որ ինձ մոխիկ ընես։"

Ընդհա ձեզ ուրիշ երկու օրինակներ եւս ասելով զարմանալի, ինչու որ իրենց տէրերն եւս աւելի ծաղկահասակ տղայք են։

Յոյն երիտասարդ մի Նւոկրետէս անուն, այնքան մեծ սէր ունէր ուսման, որ երբ Աթենագոց մօտ յաճախելը, նա մոխիկ չընելով երեկոյեան դէմ մութ ժամանակ Ընդէնք կ'երթայր Սոկրատէն դաս առնելու, և առաւանց յետ կը դառնայր նորէն ի Մեգարա՝ կնկան լաթ հագած և գլուխը վերարկու մի առած պանդխտի գոյներով, և երեսն քօղով մի ծածկած որ մարդ չճանչէ զինքը։

Պօրկոնիոյ դուքսը ծանր հիւանդութեամբ պառկած լինելով, խելքն ու միտքը իւր դրբեքսն հետ էր միշտ։ Որ մի փոքր ինչ ապկի դարձած լինելով, աղաչեց իւր դաստիարակին որ իրեն տայ իւր դրքերը։ Հարցուց դաստիարակը թէ "Ինչու համար այսքան մեծ սէր ունիս ուսման"։ Պատասխան առաւ թէ "Կը վախնամ որ դիտցածս չմոռնամ, ուստի մի լուսաւոր դիտելիքներ կան որ ուսանիլ կ'ուզեմ"։ Ո՞ւրմնաղուս բան չէ այս խելամիտ որ դեռ հաղիւ ինն տարեկան կայր, այսպիսի բըլնաւորութեամբ և ուսումնասիրութեամբ իւր միտքը գեղեցկի և անհամար դիտելիքներով զարդ արելը։

Ընդէնք մի քանի անգամ խօսեցայ, և չեմ գտնգաղիր նորէն ասել ձեզ, սիրելի որդեակք իմ, թէ աշխատութիւնը գերազանց բնաւորութիւն մի է, զոր ուսմանց միջոց պէտք է մարդս ունենայ. և որ եւ իցէ աշակերտ մի, եթէ պատանց պարապի, կրնայ քիչ ժամանակի մէջ շատ յառաջ երթալ, ուր ընդհակառակն՝ ով որ աշխատիլ չուզէ՝ զոր հարկաւորապէս ուսմունքը կը պահանջէ, տգիտութեան թանձր

խաւարին մէջ կը մնայ, իւր բոլոր կեանց մէջ ամիկ մարդոց հաւասար կը համարի, և ինքն նոյն բնաւ մեծ մեծ բաներու ցանկալ և հաւնիլ։

Ա՛ուղէք դուք որ օր մի աշխարհիս մէջ երեւելի և պատուաւոր մարդ լինիք, մի թողուք որ դատարկութիւնն և ազատութիւնը դէպի ինեն զձեզ իրենց, ինչպէս որ բնականապէս ևս կը քաշեն զմարդիկ դէպ իրենց։ Այլ դուք մանկութենէ ուսիք ձանձրութեան համբերել և պաշտաւութիւնն սիրել։ Մինչ նորա համբերութեան ժամանակ չառնուք, և ոչ կատարեալ հասակի մէջ կարէք առնուլ, և ամենեւին բանի մի կարող չէք լինիլ։

Ջեմ ասեր ձեզ թէ կարգաբար եռեւէ լինել նելու համար, որպէն կը պատուիրեմ որ դուք եւս հետեւիք, ի սկզբան շատ փոյթ և աշխատութիւն պէտք չլինի և արդիւնքներ չպատահի. բայց մի անդամ որ սովորութիւն ընէք ձեզ քաշած աշխատանքներով ուրախութեան կը վախճան։ Ակ կոյսէն եւս անկէ քաղած շահերը նիպ առաւօրէն կը վարձատրեն ձեր կրած նեղութիւնը։

Ո՞նչ ուրախութիւն է աշակերտի, երբ դպրատան մէջ առաջինը կը լինի և իւր դասընկերները ետ ձգելով՝ ինքն օրէ օր յառաջ կ'երթայ, որով իւր ծնողաց ուրախութիւն կը պատճառէ, և վարժապետաց եւս կը պատուին ու կը սիրեն զինքը։ Ահա այսպէս կը լինի եւս

ձեզ, սիրելի որդեակք իմ, եթէ անդադար պարապիք ուսման. բայց եթէ զանց առնելու լինիք, անկէ քաղած պատուղիք կը լինի սրտի ցաւ, տրիստութիւն և նախատինք։

Վերջապէս զձեզ կարդալու և աշխատութեան յորդորելովս, միտքս այն չէ թէ առաւօտէ մինչեւ յերեկոյ նորա հետեւիք, և զձեզ զբօսանքէ և զուարճութենէ զրկէք։ Ինչ և իցէ բանի մէջ պէտք չէ շատ եռեւն լինիլ, և երկու հակառակ ծայրերէն փախչելու է միշտ, մէկ մի չափազանց աշխատութենէ, երկրորդ՝ հեշտասէր դատարկակեցութենէ։ Առանց շունչ առնելու անդադար աշխատողին ջիղերը նիպ կը թուլանայ և ուժերնիպ կը պակսի, և երկար ժամանակ հանգիստ կեանք վարելին եւս միտքերնիպ կը բթանայ և կը խաւնիսք։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ծուլութեան և դատարկակեցութեան վնասք։

ԾՈՒԼՈՒԹԻՒՆԸ միշտ փոքր տղայոց և անչափահաս երիտասարդաց պակասութենէն է։ Ինչ ամէն մարդ կը ջանայ որ նոցա այս պակասութեան առաջն առնու, բայց որովհետեւ տղայք չեն գիտեր թէ ինչ դէշ հետեւանքներ կ'առնենայ այն, զոր իրենց միշտ կ'իմացնեն, ա-

Մեներեին հոգ չեն ըներ և բանի տեղ չեն դներ իրենց մեծերուն խրատները, այլ կուսան զի-րենք ծուլութեան, և կը կարծեն թէ՝ անով լաւ վիճակ մի պիտի ստանան։

Զուգէ ձեր մէջն եւս ծոյլ տղայք կան, ո-րոնք այնպէս կարծած են՝ թէ ծուլութեան մէջ պիտի գտնեն իրենց զուարճութիւնն և գեղ-ցիկ վիճակ մի. բայց կը խաբուին, սիրելի որ-դեակք իմ, Թող գիտնան իրենց սխալանքը և ճանչնեն որ մեծ մոլութիւն մի է այս։ Ահա ձեզ նորա նկարագիրը, զոր լսուին բանաստեղծ մի գրած է։

Դուշմեան բանաստեղծական նկարագրութիւնը։

Պարնաս լերան տակը խոր քարանձաւ մի կայ զոր բնութիւնը շինած է, առանց մարդ ձեռք դպցընելու։ Այս տեղս այլեւս դիմացն ընդար-ձակ և անպտուղ արտ մի կայ, ուր ամենևին ար-օր մտած չէ, և ոչ երկրագործն ակօս բացած է նորա մէջ։ Վերևին հասկերուն տեղ փուշ ու տատասկ կը բերէ հողը։ Այն տեղ կը Թագա-ւորէ խորին լռութիւն՝ ուր բնաւ Թռչնոց երգ չլսուիր, միայն կենդանեաց մէջ ամենևին անար-դըն իւր ձայնը կը հանէ նորա բնակչաց իմաց տալու համար, որոնք խորունկ քունի մէջ Թա-ղուած են, Թէ արեգակն իւր ընթացքին կէս ան հասած է։ Այրին խորը կը տեսնուի գէշ խոտե-

լու կարգ մի, որոնց չորս դին խաչխաչնեղով պա-տած է։ Այն տեղ կը հանդչի անհոգ աստուա-ծուհի մի Ծուլութիւն անուանով, որ սիրելի է ողջոյց, երիտասարդաց ուշադրութիւն մարդոց։ Այս պատուածուհիս երբեմն երբեմն իւր ամբոխ բնակարանին գուրս կ'ելնէ որ արե-ւուլքին ջինքը ցուցընէ, բայց հազիւ կարող կը լինի քանի մի բայլ նետել իւր դանդաղութեամբ, որու վերայ կուԹքնած է, Թէ-պէտ զօրութիւն չունի։ Կրկին նման իւր մար-մինը քաշկռտելով կ'երթայ՝ քան Թէ կը քայ-լէ, կ'որորտայ և կը տատանի։ Աչքերը կ'ուզե-ն բանալ լայն տեսնել, բայց ջիրնար, վասն զի քունն խլայն կը գոյէ . . . Թարթիչներն և գլուխը ջրնալով շուտակ բռնել, կ'իջնկի կրծքին վերայ։ Տեղէն կ'ելնէ որ քայլէ, մէկէն կանգ կ'առնու՝ փափուկ ամօռի մի վերայ կը կուԹ-նի, զոր իրեն համար պատրաստած է Անեղ կուԹիւնը։ Նորա մօտ կը տեսնէ Տգիտութիւ-նըն իւր աղջիկը, որ իւր անձնուն ականջներէն կը ճանչցուի, որոնք մինչեւ գլուխն ծայրը կ'եր-կննան, և իւր մեծագոյն քօղէն՝ որով ականջ-ները գոցած է։

Ահա ձեզ, սիրուն որդեակք իմ, Ծուլու-Թեան ճշմարիտ պատկերը, կամ աւելի լաւ ա-սել՝ դատարկաբեաց տղուն բուն նկարագիրը, որ իւր կիրքերը կատարելով միայն, իւր օրերն իզուր Թէ փափկութեան և տեսակ մի քնաթոյ-

թեան մէջ կ'անցընէ : Ամէն գիրքը նորա հասմար անտանելի բեռ մի է . եթէ երբեմն ակամայ ձեռք առնու , միկէն դեամն կը ձգէ : Առուել կ'ուզէ ձանձրանալ , սիրտը նեղիլ՝ քան թէ գործի մի եռեւէ լինիլ . և տգիտութիւնը օգտակար գիտելիքներէն լաւ կը հասարի , զրոյնք կրնար դիւրութեամբ ձեռք բերել . ուսումն ուր կ'երթայ՝ նախատինք կը գանէ : Նէթ դպրատան մէջ լինի , միշտ ամենէն եռեւ կը նստի . և վարժապետներէն ուրիշ բան չընդունի , այլ միայն յանդիմանութիւն և պատիժ :

Ծուլութեան ցաւագի հետեւանքներն :

Ամենէն ողբալի բան , ծուլութեան ցաւալի հետեւանքներն են , և անպործ ու անպիտոյ երիտասարդաց անմեղութեան ուսած մահացու հարուածները . վասն զի Թոզ ժամանակին անդարմանելի կորուստն որ կ'ընէ , և միայն այս մեծ վնաս մի է իրեն , այլեւ դատարկութիւնն՝ որ ամեն մեղութեանց մայրն է , անպատճառ կ'առնու կը տանի զինքն անառակութեանց անդնդին մէջ կը ձգէ : Տղայ մի որ չուզեր լաւ բաներու հետեւիլ , անշուշտ ջորութեան կուտայ զինքը , իրեն պէս չար տղայոց հետ կ'ընկերանայ , ուսման ժամանակ վատ ըզբօսանքներով և զուարճութիւններով կ'անցընէ , անպարկեշտ զրոյցներ ընելով . վերջապէս

Ուսուած դիակ նորա չարութեան վախճանին ուր հասնիլը :

Այս միայն իմ մտքէս անցած կարծիքը չէ . փորձն ինքնին կ'ուսուցանէ մեզ՝ թէ խիստ քիչ անգամ կը պատահի որ առաքինութիւնն այնպիսի տղու մի սրտին մէջ բոյն չինէ , որու վերայ կը տիրէ ծուլութիւնը . և ընդհանրապէս խօսելով՝ կրնանք ըսել թէ՝ գատարկակեցութեան եռեւէն կ'երթայ միշտ մոլութիւնը : Սորա համար աշխատութիւնը յատկապահ հեսա ազգու դեղ համարուած է անառակութեան դէմ :

Անապատականի մի խնամատուն խօսքը :

Ջարանց վարքին մէջ կը կարդայուի , թէ մի վանքի գլխաւորն առաւօտէն իւր կրօնաւորաց կողմնէն հիւանդ տալէն յետոյ՝ երեկոյին նորէն քակել կուտայր զանոնք , այնպէս որ՝ ուրիշ բան չէին ըներ , այլ քակածնին նորէն կը սկսէին հիւսել ամեն օր : Կրօնաւորներէն մին ձանձրանալով այս աշխատութենէն , որուն օգուտն ամենեւին չէր տեսներ , գնաց աբբային մօտ և ասաց անոր անկեղծութեամբ , թէ կը զգամնամ շատ՝ թէ ինչու իրենց ժամանակը պարապ բանով կորնչցընել կուտայ , քակել տալով միշտ մեծ ջանքով հիւսած կողմնին : " Կը խաբուիս դու , եղբայր , պատասխանեց ա-

նոր աքքայն, և հաւատաս՝ որ ասով պատ-քս ժա-
մանակիդ չես կորնչիլներ, այլ դատարկութե-
նէն կը փախչես »։

Խոստովանութեամբ էր ճգնաւորին ասածն,
և այսպէս կը մտածեն բոլոր դիտուն անձինք,
որոնք ծուլութիւնն և պարապ կենալը խիստ
գէշ մեղութեան տեղ դրած են։ Իրականին՝ Ա-
ստուածոց տուած օրինաց մին այս էր, որ զին-
քեան այս մեղութեան տուող մարդ ի մահ կը
դատապարտէր։

Այս օրինքս անտարակոյս խիստ կ'երեւի
ձեզ, և եթէ ոչ ուրիշ բան, գէթ կրնայ հա-
մոզել զձեզ՝ թէ այս օրէնդրին առջեւ անհոգ
և ծոյլ մարդը մեծ գէշութիւններ ընող չարա-
գործի պէս՝ դատապարտութեան արժանի հա-
մարուած է։

Փախիլը ուրիշն դատարկութենէն, սիրելի որդեակք իմ, ինչպէս որ կը փախչիք գազանի մի երեսէ, վասն զի դիտնալ որ սկիզբն ոչքան որ ձեզ զբաղցնալի կ'երեւի, յետոյ անչափ մեղութեան մի մէջ կը ձգէ զձեզ։

Դ իցաբանութեան մէջէն հանուած գեղեցիկ խրատաբանութիւն։

Ինքնաբանութեան մէջ կը կարդանք, եթէ համբարտաւանները իրենց անուշ և ներդաշնակաձայնովը ճանապարհորդներն իրենց կը քաշեն, յետոյ փափկութեանց մէջ պահելով զա-

նոնք, վերջապէս անասնոց կը փոխէին։ Թնա-
ւոտն Ոդիսեաս ըսելով զայս, և իւր ճանապար-
հորդութեան մէջ այն նենգաւոր յաւերժա-
հարսանց բնակած երկրէն անցնիլ հարկաւորե-
լով, ականջները խցկեց որ նոցա ձայնը չլսէ, և
այս կերպով նոցա ձեռքն ինկնելու վտանգէն
ազատեցաւ։

Ծուլութիւնն եւս, սիրուն որդեակք իմ, ձեզ հասնար այս գլխէ հանող հարբարտաներէն մին կը համարուի։ Կը ջանայ նա իրեն դարձնել զձեզ՝ որ յետոյ անասնոց պէս ընէ տպխտութեան մեղութեամբ, որոց մէջ անկիսպ կը ձգէ զձեզ։ Սրամիտ Ոդիսեաին օրինակին հետեւեցէք, փախչիք նորա հրապոյրներէն, և ձեզ պարտք համարեցէք ձեր երիտասարդութեան ժամանակին աշխատութեամբ անցնելու։

Դատարկակեցութիւնն իրաւ առջի բերան քաղցր կ'երեւի ձեզ, բայց վերջը ձեր կոտորեան պատճառ կը լինի։ Աշխատութիւնն և կարգաւոր հետեւիլը ձեզ քիչ մի ծանր կը թուի, բայց յետոյ անպին շահու աղբիւր կը լինի ձեզ։

Ներկրագործն իւր արտը կը մշակէ և ժամանակին ընտիր հունտը կը ցանէ, կ'աշխատի կը քրտնի, ընդհակառակն անհոգ մարդը ձեռքերը մէջքն խոթած՝ կը թողու իւր երկիրն անպտղ անմշակ, առաջինն առատ հունձ կը քաղէ, երկրորդը վերջին կարօտութեան մէջ

կ՚ինկնի : Ահա ծոլութեան տուած եւս այս խոհերը կայ :

Այլ այն տղայոց որ ծուլութեան տուած են սիրտնին : Ընդունայն է անոնց տրուած խրատն ու նախատ պատիժը , վասն զի շուտով կը մոռնան յանդիմանութիւնները և պատիժները . նորէն կ՚ինկնին ծուլութեան քնոյն մէջ :

ԳԼՈՒԽ ԻԲ.

Ջգօսանաց և խաղալու վերայ :

Դաստիարակութիւնն և ծուլութիւնէն զձեզ հրաժարեցընելուն՝ չէ թէ զգօսանքներէ և խաղերէ զրկել կ՚ուզեմ զձեզ , սիրելի որդեակք իմ , վասն զի մարդոյս միտքը չկրնար շարունակ զբաղիլ , այլ երբեմն հանգստանալու և զուարճանալու կարօտութիւն ունի :

Սուրբ մարտիր մի ոգեշահ դասախօսը :

Սուրբ Յովհաննէս ասեռապանիչ իւր աշակերտներուն պաշտօնին երկար ժամանակ պատրաստելէն յետոյ , կաքաւ մի կ՚առնոյր և նորա հետ կը զուարճանայր : Այդպէս մեկը զարմանալով նորա ըրածին , ասաց անոր սուրբ Հոգեառաքիչը , թէ ինչպէս որ աղեղը չկրնար միշտ լարած կենալ , այսպէս մարդոյս միտքն եւս չկրնար միշտ աշխատութեան պարապիլ :

Վնաս չկայ որ դուք եւս երբեմն զօսանաք , և կարդալը լինցընելնէդ յետոյ անմեղ զօսանաց հետեւիք . միայն կ՚ուզեմ մի քանի կանոններ տալ ձեզ որ խաղալու ժամանակ զգուշանաք այն բաներէն , որոնք կրնան չարիք մի պատճառել , կամ քթերնիդ բերել :

Տղայք չեն ճանաչեր զօսանաց վտանգները , միայն նոցա մէջ եղած զուարճութիւնները կը տեսնեն , և կը նային որ նոցա քաղցրութիւնները վայելեն . և այնքան կը տաքնան եւ եռանդով մի նոցա ետեւն կ՚ինկնին , որքան որ վախնալ պէտք էր վտանգներէն : Ասոր առնցմէ զձեզ զգուշացընելու համար , որ շատ տղայոց վնաս կը պատճառեն , կ՚ուզեմ ձեր աչքին առջեւ բերել , որպէս զի զօսանաք թէ ինչ կերպով վարուիլ պէտք է զօսանաց և խաղալու ժամանակ :

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Արգելուած զբօսանքներ :

Վնասակար պէտք էք որ ամեն զբօսանք օրինաւոր և ներելի չեն : Այսան կան նոցա մէջ և վտանգաւորներ , ինչպէս են համեստութեան դէմ եղած տեսարանները , անպարկեշտ զրոյցները , վատ գրքերը , և ընդհանրապէս բոլոր այն զուարճութիւնները որ կրնան անմեղութեան և բարի վարուց վնասել : Ասոր պէտք

է ձեզ որ քաղցրութիւն տանեմք հրաժարիլը։ Իրաւ տանք առջի թերան՝ երբ կը սկսիք նոր հաճն առնուլ, հաճուքիւն մի կուտան ձեզ, բայց մտածել պէտք էր անդամ մի թէ այս անցաւոր հաճուքեան ետեւէն կուգան միշտ սրտի խայթեր, խղճմտանաց կշտամբանքներ, որ հազար անգամ աւելի մարդոյս ցաւ կուտան և կը տանջեն, որքան որ տուած զուարճութիւնն մեծ է։

Զուարճութիւն եւ իւր ետեւին եկող վիշտերը։

Նման անպատմելի ուրախութեամբ մի կերաւ իւր եղբօր Յակոբէն ծախու առած ոսպնաթանը. բայց ղոյն լսեցէք յետոյ, երբ սկսաւ մտածել՝ թէ ինչպէս առջ նաեւ էր իրեն այն թանը, որով իւր անդրանկութեան իրաւունքը կորնչուց, սիրտ առաջին նման մը լինչ էր, և չէր կրնար խաղաղել իւր սիրտն, անցաւոր հաճուքեան մի համար իւր բոլոր ստացուածքը զոհ ընելուն։

Ահա այսպէս կը լինի բոլոր այն մարդոց վիճակն, որոնք անցաւոր հաճուքիւն մի վայելելու համար իրենց անմեղութիւնը կը կորնչցունեն, որ մեր խիստ պատուական և անգին գանձն է։ Մի մարդ եթէ ձեզ գաւաթով թոյն տալու լինէր, գաւաթին բերանը մեղրով օծելով, կը խմեիք դուք զայն, անշուշտ ոչ։ Աւելին այսպէս պէտք էք լինել նաեւ արգելուած ըս-

ուանց մասին, քարոզ թոյն մի համարելու էք զանոնք, որ մարդոյս զգայարանքները գրգռելով ինձ կը պատճառեն հոգւոյն։ Սորբ դրոց մէջ այս բանիս վերայ խրատական օրինակ մի կը կարդամք։

Գիցեցիկ պատկեր ցուարմութեանց, եւ նոցա ցաւագին հետեւանքներք։

Յովնաթան Սաւուղի որդին, որ մի իւր վենատիքին հետ Փղշտացւոց վերայ յարձակելով այնպէս սոսկում մի ձգեց թշնամեաց բանակին մէջ, որոնք սկսան իրենք իրենց դէմ զենք վերցունել և զերար ջարդել։ Այս խռովութեանս ըստքը շուտով տարածուեցաւ Իսրայելացւոց բանակին մէջ, և Սաւուղ տեսնելով թէ իւր կարծիքը կատարուեցաւ, և Յովնաթան հետ չեղաւ լինելով միտքը դրաւ որ ինքն երթայ նոյն պահուն Փղշտացւոց վերայ յարձակի, որպէս զի կատարեալ յաղթութիւնն գլխուս տանի, որու փառատոր ակնկալն տուած էր իւր որդին։ Բայց ճանապարհ դնել չեղաւ՝ մեծ եղաւ դժբաւ մեղցընել առ նմ որ արեւը մարդ չմտած բերանը կերակուր դնէ։ Բոլոր զինուորք հնազանդութեամբ կատարեցին նորա պատուէրը. թէպէտ ճանապարհին շատ փեթակ նեռնա հանդիպեցան, այլ ամենեւին ձեռք չը դպցուցին։ Իսկ Յովնաթան՝ որ իւր հօրն ըրած երդումը չէր գիտեր, և շատ աշխատութիւն

ներքին յոգնած լինելով, դաւաղանին ծայրը փե-
թակի մէջ թաթխեց և դէպ ի շրթունքներն
տարաւ։ Այսու ամենայնիւ զօրքերը կանգ ա-
ռին երեկոյեան դէմ, և քիչ մի ժամանակ վե-
նադարձան ընելէն յետոյ՝ Սաուղ փղշտաց
ետց դէմ դիմելու վերայ էր, պատգամ հարցուց
Աստուծոյ՝ որ պիտանայ թէ այս նոր սկսած գոր-
ծըն ինչ վախճան պիտի ունենայ. բայց Աստ-
ուած նորա ամենևին պատասխան չտալուն՝
դիտցաւ թէ զօրաց մէջէն մէկը բարկացուցած
է զինքը իւր ըրած պատուէրը չպահելով, և
երդում ըրաւ որ իւր որդին Յովնաթանն ան-
պատճառ լինի, նորա անհնազանդութեան պատիժը
ատյ։ Ասաի բարակ քննութիւններ ըրին որ
յանցաւորը գտանեն. վերջապէս վիճակն ինկաւ
Յովնաթանու վերայ։ "Ահ, ինչ ըրիր այդ, ա-
ռաց անոր Սաուղ զարհուրելով։ — Ա՛յ ինձ,
հայր իմ, պատասխանեց անոր որդին, երկար
ժամանակ անօթի կենալով ուժս հատեր էր.
ուրիշ բան չըրի, այլ միայն անցնելու ժամանա-
կըս մի քանի կաթիլ մեղր առի գաւազանիս
ծայրովը, և այս փոքրիկ բանիս համար պիտի
մեռնիմ՝ ես հիմայ։ — Այո՛ կրնենց Սաուղ, պի-
տի մեռնիս"։ Ան իրաւցընէ կը պատրաստուէր
իւր երդումը կատարելու, բայց ժողովուրդը ի
գութ շարժելով նորա բարկութիւնը դադրե-
ցուցին, և իրենց աղաչանքներով Յովնաթա-
նու մահուան հնարհել տուին։

Ահա, սիրելի ուղեակք իմ, մահատիպ օրի-
նակ մի որ ձեզ եւս կը հանդիպի, եթէ Աստ-
ծոյ հրամանաց դէմ, որ ձեր ճշմարիտ հայրն և
թագաւորն է, ցանկալու լինիք նորա արդիւնք
հաճութիւններուն մէկը փորձել։ Ահատիպ
օրինակ ըսի, վասն զի Յովնաթան չմեռաւ իւր
պատուիրանազանցութեան համար, բայց դուք,
սիրելիք, առաւել ցաւալի մահուամբ կը մեռ-
նիք քան զայն որ Յովնաթանու համար պա-
հուած էր. և կրնաք ասել աւելի իրաւամբ.
"Ա՜խ քանի կաթիլ մեղր կերայ", ասել է անցա-
ւոր սղտի հաճութիւն մի վայելելէն, և այս ա-
ղետալի հաճութիւնն իմ հոգւոյս մահ տուաւ։

Երիտասարդ տղայք դժուար կը հասկրնան
այս ճշմարտութիւնս. մանաւանդ իրենց հա-
մար դժուարն բան է ամեն կերպ զգօսանայ և
հեշտութեանց անձնատուր լինել. բայց ականջ
դրէք անգամ մի փորձառու մարդուն մէկը ինչ
դրած է իւր որդւոյն, զանիկայ ժայռերէն պահ
պանելու համար, որոնց դէմ ինքն եւս դիմ-
բախտութեամբ զարնուեր էր։

Հօր մի իւր որդւոյն գրած խօսքերէն։

"Չեմ ամչնար խոստովանելու՝ թէ իմ երի-
տասարդութեանս մէջ ունեցած անկարգու-
թիւններս բաղձան եւս սկիզբն ունեցան իմ բաղ-
ձանքէս զգօնութիւն նոր ժամանակիս երիտասարդ

դաց պէս վարուելու։ Այս բանիս համար՝ իմ բնական միտումս դէմ կը գործէի։

«Կինին խիստ կը դանէի, այսու ամենայնիւ շատ անգամ ակամայ գինովցած եմ։ Այսօր մտքիս վերայ շատ դժուարութիւններ և հիւանդութիւններ քաշած եմ, ուստի ըլլ ես այն պէս կը կարծէի թէ շատ գինի խմող մարդը՝ նոր սովորութեան համեմատ ապրող մարդ կը համարուի։

«Այնպէս խնդիր խաղալ համար։ Վէճ և զանգին աւելի դրամի տեր էի, ուստի ուրիշը դրամ շահելու աչք չունէի. բայց կարծէի թէ իրաւն՝ որպէս թէ հարիւրաւոր դարդերին մին է հեշտաբեր մարդոյն յաւակութեան համար, և ամեն տեսակ վտանգաւոր խաղերու անձնասուրթ կը լինէի։

«Այնպէս շատերէ էի, որ պարապ բանի համար եւս երդումներ կ'ընէի՝ կատակ համարելով զանոնք, որպէս թէ իմ խօսքս զարդարանքն էին։ Այս կերպով կարծէի թէ զուարճութիւն մի ունէի, որ էր միմիայն իմ բարձանքս։ Այլ երկար չբշեց, այս խորհուրդս մեկնի ձգեցի, դիտնալով թէ անվայելուչ էր ինձ այն։

«Նոր սովորութեան գերի լինելով, և կարծելն հետեւելով զուարճութիւն անուն ունեցող բաներուն, ճշմարիտ զուարճութիւնն չկրցի գտնել. եհամառանքս կորնցուցի, մարմինը ուժէ ինկաւ, վատեցաւ. հիմայ կը խոստովանիմ քեզ, որ երիտասարդութեան մէջ ըրած զուարճութեանցս պատիժը կը կրեմ։

Կը տեսնէք, սիրուն որդեակք իմ, հեշտասիրութեան չար պատուղները։ Այլ մի կարծէք թէ ամեն զուարճութիւն այսպիսի գէշ հետեւանքներ կ'ունենայ։ Կան վայելուչ և անմեղ զբօսանքներ, ինչպէս են պարկեշտ կենակցութիւնը, ժուռգալներն և չարաւոր խաղերը, բայց թէպետեւ նոքա միասս մի չունին ատասի, այսու ամենայնիւ նոցա մէջ հարկաւոր եղած կանոններն և պայմանները պէտք է պահէք, մանաւանդ որպ կրնան ձեզ վնասակար լինել։

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Խաղալու եւ խաղցողաց ժամանակ դիտուր եղած կանոններու վերայ։

ԿԱՆՈՆ Ա.

Ձեր խաղալու ժամանակը պիտի լինի այն՝ զոր ձեր վարժապետը կամ ծնողքը սահմանած են, ապա թէ ոչ՝ թոյն կը լինի ձեզ բժշկին տրւած դեղը։ Խաղը չափէ դուրս երկարնցընելով՝ ժամանակիդ կորնցուցած կը լինիք, որու բոպէները խիստ թանկագին են. կարդալէ կը պակղիք, ծուլութեան սէրը սրտերնուդ մէջ կը բուսնի, այնպէս որ ձեր մտքին օրէ օր ուժ տալու տեղ՝ աւելի կը տկարացընէք։

Սուրբ Օգոստինոս խիստ կը ցաւէր, և կը յանդիմանէր զինքը սաստիկ սիրով խաղերու անձնատուր լինելուն համար երիտասարդական հասակին մէջ, և ժամանակին անոնցմով անցնելուն, զոր կրնար հարկաւոր գիտելիքներ ձեռք բերելու գործածել: Ուրեմն դուք եւս այս կանոնս պահեցէք, որպէս զի յետոյ նորա պէս չյանդիմանէք զձեզ և ձեռքերնիդ դրէք խրնամոյդ չզարնէք:

ԿԱՆՈՆ Բ.

Պէտք է ղուշանաք որ ձեր խաղը շահու համար չլինի. վասն զի երբ շահասիրութիւնը խաղալն մէջ մտնէ, մեծ աղտեղութիւն մի կը լինի այն, որ ձեր միտքը կը ծանրացընէ, սրտերնիդ կը խառնէ և կիրքերնիդ կ'արթնցընէ:

Կը պատմուի թէ Պարսիկներն իրենց տղայոց ցուցընել ուզելով թէ որքան զգուշ լալ սխալ մի է գիտութիւնը, աչքերնուն առջեւ կը բերէին գիտել մարդ մի: Ձեր սրտին մէջ եւս խաղերուն վերայ սակաւ մի պատճառելս հաստատ, ուրիշ բան չեմ ուզեր, այլ միայն խաղալու մէկը ցուցընել ձեզ, որու սրտին մէջ վախն և յոյսը մէկմէկու հետեւ մտնելով ու փոխուելով իւր միտքը կ'ամբոխեն. և անոտարակոյս պիտեմ որ նորա բարկացած դէմքը, կրակոտ աչքերն և բարկութեան կիրքը տեսնելով,

որոնք երբեմն իրենց վրէժխնդրութիւնը մինչեւ խաղացած խաղերնուն գործիքներուն վերայ թափել կուտան, խենդ մի չիարձէք զայն և նա բա չար կատաղութենէն չզգուշիք:

Ինչ իմ միտքս չէ թէ խաղերը վատ բանի տեղ դնել է, մանաւանդ երբ մարդ իմաստութեամբ անոնց չափը գիտնայ, հապա այն ժամանակ վատ կը լինի, երբ իրեն ունակութիւն կ'ընէ, որ յետոյ երթալով կ'աւելնայ, ծայրը դրամի եւս կը հեծնայ, և այն ժամանակ լինչ վատ մոլութիւններու մէջ չձգեր նա անպղտչ և անարատ սղայքը: Նմէկ գիտնաք այս խաղալն պատճառած թշուառութիւնները թէ մանաւանդ մարդոց և թէ ամբողջ գերդաստանաց, յիրաւի նորա անունը լսելով կը դողայիք. մէկ հատ միայն կ'ուզեմ պատմել ձեզ հատ՝ օրինակի համար:

Ձափագործ խոշտանգութեան ցոյց եղոց դժբախտը:

Ի քանի տարի կայ Պաղտէյ գիտուր քաղաքաց մէկուն մէջ կախարդելս դատապարտեցաւ պատուաւոր գերդաստանէ երիտասարդ մի: Նորա դատակնիքը կարդացուեցաւ, բարեպաշտ և բարեհամբաւ քահանային մէկը մտաւ նորա եղած բանտին մէջ որ զինքն յորդորէ մահուան պատրաստութիւն տեսնելս, բայց սաստիկ խռովութեանց մէջ գտաւ զայն,

աչքերը դարձած և կատղելով այսպէս կը գոչէր. «Ա՛հ, անիծեա՛լ խաղ, անիծեա՛լ խաղ։ Ինչո՞ւ համար կայծակ չիջաւ իմ գլուխս վերայ երբ ես առաջին անգամ ձեռքս երկնցուցի քեզ Հինեռուն (զարերուն) և Թզլթերուն»։ Այս խօսքերս անդադար երկու մեկ կրկնելով, բա՛ց թեսէք քահանայն՝ որ մօտը կանգներ էր, հարցուց անոր թէ՝ ինչո՞ւ համար այսքան կ՚անիծէր խաղը։ — Ա՛հ, պատասխան տուաւ երիտասարդն այլայլած դէմքով. ի՞նչպէս չանիծեմ ես զայն որ իմ այս յաւէտ վիճակիս մէջ կնկնելուս միակ պատճառն եղաւ։ Ա՛ռջի բերան որ այս խաղուն տուի գիս, ամենևին կը երկիւղ և կասկած չունէի նորա ցաւալի հետեւանքներէն, այլ ընդհակառակն մեծ օգուտներ կը յուսայի, վասն զի նոր սկսած ժամանակս՝ յաջող եկաւ ինձ. բայց շուտով բախտս ի չարն դարձաւ, և ուրիշ բան չմոռցայ իմ վերայ, այլ միայն խաղալու չափազանց կիրք մի։ Ու այս կիրքս կրճատացընելու համար գոցեր էի ես ինձ ամենայն ճանապարհներէն որքան որ կրցայ. յետոյ երբ բան մի չմնայ, մեկ խօսքիս վերայ խաղացի, այսինքն իմ հօրմէս ինձ ինկնելու ժառանգութեան վերայ. և իմ ընտանեաքս բոլորովին մոխիր պատի դարձընէի, եթէ հայրս առաջը չառնուր զիս բանալ ընդունելու։ Երբ իմացայ նորա միտքը, ուղեցի ա՛լ զատիլ ձեռքէն, ուստի փախայ և Թաւխառական քաղաքէ քաղաք պտըտեցայ. բայց որովհետեւ խաղալու համար ունեցած կիրքս ամեն տեղ ետևէս կուգայր, և առաջուան պէս զիս բամ եւս չունէի որ խաղամ, վերջապէս ձեռք զարկի . . . ա՛հ Աստուած, խօսելու չեմ համարձակիր . . . Ո՛ւս աւազակ, ես, որ իմ ծնողքներէս բարեկրթութեան և առաքինութեան դասեր առեր էի . . . Ա՛խ, անիծեա՛լ խաղ, անիծեա՛լ խաղ»։ Այս խօսքերը զուսցէին յետոյ լռեց դժբախտ երիտասարդն, և ես ուզեցի սկսա՛ւ արտասուք թափել, կրակ դարձա՛ւ, կարելիքը խոցուած ցլի նման։ Ինծի ըստ բաւականին հասկըցուցած էր թէ՝ իւր գողութեամբն և աւազակութեամբ վերջին թշուառութեան հասնելուն և ատելութեան մէջ ինկնելուն միակ պատճառ խաղն էր։

Խոցուտ ջերայ ցրուցուած պեղեցիկ խօսքեր։

Օ՛, դժո՛ղ կեցիք ուրեմն, սիրելի որդեակք իմ, որ և իցէ դրամով խաղալու խաղերէն, և ամենեւին մտքերնիդ մի հանէք Ա՛ստուած Ցէհովային հմաստուն կնոջ խօսքերը։ «Օ՛, քօսանքներըը դառն կը լինին, երբ չափէն անցնին։ Թիչ խաղալն լաւ է. բայց նայել պէտք է որ միայն զուարճութեան համար խաղացուի։ Խաղամոլ մարդն, ինչպէս հասարակօրէն կը զրուցուի, կերպարանքէն ի զատ ուրիշ մարդկային բան մի չունի իւր վերայ։ Շատ դժուար բան է նաև

որ չկարծուիր , առաքինի և միանդամայն խա-
զամոլ լինիլ : Ո՛ահասիրութիւնն՝ որ մարդս գի-
շեր ցերեկ զբաղեցընել կուտայ , չարութիւն
ընելու համար զօրաւոր խթան մի է : Ա՛ռաջի
բերան ինքը կը խաբուի , այլ յետոյ ինքը կ՚ըս-
կսի զուրիշը խաբել՚՚ :

ԿԱՆՈՆ Գ՝ .

Պէտք է պարկեշտութեամբ խաղալ . և ան-
բաղաքավար վարմունքներէն , խորթ ու ան-
պատեհ կրքերէն , անհամբերութենէն և հա-
կառակասիրութենէն զգուշանալ : Երբ այս կա-
նոնէս դուրս ելնիք , զոր վայելչութիւնն և քա-
ղաքավարութիւնը կը պահանջէ , ուրիշին նա-
խատինք կը կրէք , և ատելի կը լինիք անոնց՝ ո-
րոնց հետ որ կը խաղաք :

Գ՝Հ ԽՕՑԱՄՈՂՔ :

Խաղամոլ մարդ մի կը ճանաչեմ՝ ես , որ երբ
բաղդը չի անիկը , մօտն եղողներուն հետ կռիւ
կ՚ընէր : Ա՛՝Կ խօսքն և մէկ անգամ երեսը նա-
յելը բաւական էր զինքը բարկացընելու : Իւր
պատնեշակ վարմունքն և խօսքերն ամենեւին
մէկուն չէին դպչեր , վասն զի ամէն մարդ կը
ճանչէր նորա բնութիւնը . բայց օր մի և երբ
մէկուն հետ կը խաղայր , խաղը կորսնցնելով
սկսաւ մօտի եղողներուն մէկուն երեսը նայիլ

կատղած դէմքով մի : “ Պարոն , ասայ այս ան-
ձը , եթէ ես բաղդն լինէի , իրաւունք կ՚ունենա-
յիր հետս խնկնելու և ծուռ աչքով նայելու .
բայց դիտցիր որ ես այս ինչ մարդն եմ՚՚ : Խա-
զամոլը մի քիչ իրեն եկաւ , բայց շուտով մոռ-
ցաւ այս գեղեցիկ խրատս . և մինչեւ այս օրս
նոյն բնութիւնն ունի , որուն մարդ չկրնայ
համբերել , մանաւանդ երբ խաղը կորսնցընե-
նէ , վասն զոյ հմայուչ ոգ չուզեր հետս խաղալ :

Օ՝գոյշ կեցիք , կ՚ազաչեմ զձեզ , սոցա օրի-
նակին հետեւելու , և նայեցէք որ խաղաս մէջ
թէ՛ շահելու և թէ՛ կորսնցընելու որ լինիք՝ ա-
մենեւին մէկուն սիրտը ջարդցընէք , մանաւանդ
ձեր խօսմտանքը չծանրացընէք այն մեղքերով ,
որոնց աղբիւր եղած է խաղը :

Բարկութեան եզնոց խոցամողք :

Ջազխիր Պոլընիայի Թագաւորը , օր մի իւր
պալատականաց մէկուն հետ կը խաղայր . ասի-
կայ դրամին հետ միատեղ իւր կեղտարանքն ևս
կորսնցընելով , այնքան բարկութեան ելեր էր ,
որ գրեթէ ինքզինքը մոռնալով՝ Թագաւորին
երեսին ապտակ մի իջեցուց . և այս բանիս հա-
մար դատապարտուեցաւ գլուխը կորսնցնել :
Ջազխիրը ջնջեց նորա դատաւճիռն և ասաց . “ Ա՛՝
մենեւին չեմ զարմանար այս ապտակին բռնած
վերայ . վասն զի նա չկրնալով բաղդէն վրէժն

առնելու, զարմանք չէ նորա այսպէս վարուիլը ինձ հետ՝ ուսկէ հնարհք գտած է ի միասիրան ձին։ Այս բանիս մէջ յանցաւոր միայն ես եմ. պէտք չէր ինձ որ նորա սրտին մէջ արմատացը նէի խաղաղութեան կիրքը. բայց այս իմ ըրած սխալմունքէս յառաջ եկած անպատեհութիւնն ինձ դաս մի կրնայ լինիլ, որ յետ այսր րիկ անկէ զգուշանամ»։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ստախօսութեան վերայ։

Տղայոց շատ պակասութիւններ գործելով, և վախնալով որ յանդիմանութիւն չլսեն և չպատժուին, կը ջանան շատ անգամ ծածկել զանոնք ստախօսութեան վարագոյրին տակ, որպէս զի յանդիմանութենէ ազատին։

Ձեմ կարծեր ես, սիրելի որդեակք իմ, որ դուք եւս այս անարժան հնարքը բանեցընէք, բայց որովհետեւ կրնայ լինել որ դուք եւս երբեմն ստիպուիք զայն բանեցընելու, վասն որոյ պարտք կը համարիմ զգուշացընել զձեզ այս մասին, և որքան սոսկալի բան լինիլը ձեզ իմացընել։

Թէ ի՞նչ է ստախօսութիւնը։

Ստախօսութենէն աւելի ստելի բան չկայ։ Ստախօս մարդը Աստուած կ՚անարգէ, զմարդկիկ կը խաբէ. և չկայ մեղութիւն մի որ ստախօսը չգործէ։

Ընդհակառակն առակ մի կայ որ կ՚ասէ Թէ, Ձկոյ ինձ ստախօս մի, և ես յուսացնեմ քեզ գող մի։ Այսինքն ասել կամի Թէ, մեկ մարդ մի որ սուտ խօսելու վախ չունի, ամեն տեսակ չարութիւն անխիղճ կը գործէ։

Ստախօսութիւնը ինչ համարուած էր հեթանոսաց մօտ։

Հեթանոսները անգամ ամեն ժամանակ ճանչցեր են ստախօսութեան վատ բան լինիլը և դատապարտեցին զայն։ Իմանք մատնութեան չափ վատ համարեցին. ոմանք իբրեւ տեսակ մի ամբարշտութիւն, շատերն եւս նշան չարագործ մարդոյ։

Նորա մէջ եղաւ մէկն, որուն այնքան զզուելի էր այս մեղութիւնը, որ մինչեւ միտքը դրաւ ամենեւին սուտ չխօսիլ՝ և ոչ ընդ կատակս։ Կորնելիոս Նեպոտ Աթտիկոսի կուտայ այս մականաւոր գովեստը։

Հռոմերուս կ՚ասէ Թէ՝ Աքիւլես այս խօսքը կը կրկներ միշտ, Թէ՝ Ա՛ահէն աւելի ստախօս մարդէն կը ստամ։

Պարսից մօտ ստախօսութիւնը խիստ ամօթալի մեղութիւն մի համարուած էր, և իրենց որդիքը հինգ տարին չհասած՝ կը պատուիրէին

միշտ անոնց որ անկեղծութեամբ ճշմարիտն խօսին ։

Խրատական մարգու մի գեղեցիկ խօսքը ։

Ձեր սրտին մէջ կ'ուզեմ տպաւորել գիտնական իշխանաւորի մի գեղեցիկ խօսքն , զոր իւր մատաղ դրեց իւր որդւոյն շրթունքներուն վերայ ։ Նախ մեռնիմ՝ քան թէ սուտ խօսիլ ։ Այս խօսքս եթէ ի գործ դնէք , ամեն մարդոյ մէ յարգ և պատիւ կրնանաք , և ամեն մարդ մեծարանութեամբ կը սիրէ զձեզ ։

Այնպիսի մարդու մի՝ որոյ անունը ստոխօս եղած է , մէկը չուզեր հաւատալ ։ Յայտնի է որ նորա բերանը սրտին հետ համաձայն չէ , ուստի իւր խօսքերը միշտ երկբայելի են , և ոչ ոք կը հաւատայ նորա զրուցածին , թէեւ ճշմարիտը խօսելու լինի , վասն զի կարծեր թէ ճշմարիտը զրուցէ նա այն պարագային մէջ այն բանին վերայ , որ ուրիշ հազարումէկ պարագաներու մէջ իւր ստոխօսութիւնը յայտնի ըրած է ։

Արդ՝ սիրելի որդեակք իմ , պիտի կեցնիք դուք ստոխօսութենէն , որ ատելի մեղք մի է և անվայել պարկեշտ մարդոց , մանաւանդ քրիստոնէից ։ Աստուած մեզ այս լեզուախօսութիւնը տուած է միայն ճշմարտութիւնը յայտնելու համար , ուստի նորա պարգեւները գէշ գործածած կը լինինք և իւր խորհրդոյը մտա-

նիչ կը համարիմք , եթէ զանիկայ ստախօսութեան և մեր ընկերները խաբելու գործիք ընենք ։

Գուցէ կ'ասէք լինէ թէ , երբ ստախօսութիւնն ամենեւին մէկուն վնաս չտար և մեզ օգուտ ընելու կը լինի , ապէսք չէ՞ այն ժամանակ սուտ զրուցել ։ Ահա այս ձեր հարցման պատասխան թող լինի հետեւեալ պատմութիւնն , որ շատ ժամանակ չկայ Արաս քաղաքին մէջ պատահեցաւ եւ պատմողն եւս ականատես մարդ է ։

Ճշմարտութեան սիրոյն համար նահատակ եղողը ։

Արաս քաղաքի մէջ վէնետոյ մի կայր քահանայապետական , որ բռնի վէնետորութեան գրուած էր ։ Այս երիտասարդը չափազանց սիրով կը սիրեր իւր մայրն , և անդադար կը հառաչէր թէ երբ պիտի տեսնէ արդեօք իւր ծնողը , և թէ պէտ շատ ժամանակ կայր տակաւին այն ծառայութեան մէջ մնալը , այսուամենայնիւ մի քանի անգամ հրամանն խնդրեր էր զօրապետէն , բայց չէր կրցեր բնաւ ընդունիլ ։ Վասն որ իրեն բաղձանաց կը հակառակէին , այնչափ աւելի կարօտութիւնը կ'աւելնայր , և տեսնելով թէ ուրիշ ճար կայ , միտքը դրաւ գաղտուկ փախչելու ։ Ուստի գիշեր մի երբ քաղաքի պահպանութիւն կ'ընէր ,

մէջքն երկայն ամբոխ չուանով մի կապեց, հը-
բացանին սլաքը պարապին ճեղքուածներուն
մէջ խորունկ գամեց, և չուանին մէկ ծայրն ա-
նոր կապելով և միւս ծայրն ևս ձեռքը բռնած՝
սկսաւ վայր իջնել. բայց կամ մարմնոյն ծանրու-
թենէն սլաքը տեղէն խախտելով, կամ չուանը
վրթռելով՝ դժբախտութեամբ ինկաւ պարըս-
պին տակ փորուած փոսին մէջ և ոտքին մէկը
ջախջախեց: Ա՛ռաւօտեան դէմ ինկան մէկն ան-
կէ անցնելու ժամանակ նորա տղայոլգալան
ձայնը լսեց, որ Թշուառ վիճակի մէջ մնացեր
էր, և իսկոյն գնաց իմաց տալու պահապան զօ-
րաց: Օ՛, ինչ-որ պահապան պաշտօնէից մէկն ևկաւ
հոն, հարցուց զինուորին իւր դժբախտութեան
պատճառը. նա միամտութեամբ պատասխան
տուաւ թէ՝ իւր մայրը խիստ կարօտութեամբ
տեւանել ուզելով, փախչելու համար փորձ մի ը-
րեր էր, դժբախտաբար չյաջողելով իւր փորձը՝
այն խեղճութեան հանդիպեր էր: "Ի՞նչ ի՛ա-
սես դու, պօռաց պահապան զինուորը, որ
զինքը կը սիրէր և կ՛ուզէր ազատել: Օ՛, դուշ ե-
ղիր, կ՛աղաչեմ, չլինի որ այդպէս ըրուցես մեր
զինուորակիցներուն: Նէթէ դու փախստական
լինելդ յայտնես, ինքզինքդ կախաղանը կը գըր-
նես": Բայց խեղճ զինուորը կրնկեց նորէն.
"Թող Աստուծոյ կամքն լինի. իմ քահանայս և
մայրս շատ անգամ ըրուցած են ինձ թէ, որ և
իցէ պարագայի մէջ պէտք չէ բնաւ սուտ խո-

սիլ": Պատերազմական խորհրդին պաշտօնեա-
ները զարմանքի մէջ մնալով իւր ճշմարտասի-
րութեան վերայ, և միանգամայն դուխերնին
շարժելով՝ կը փափագէին որ կերպով մի ազա-
տեն զինքը, բայց ստիպուելով օրինաց համեմատ
դատելու, ականջ ստորագրութիւն դրին նորա
դատապարտութեան թղթին մէջ: Բաջասիրա
ոգւոյն նոյն խաղաղ ոգւով ընդունեց մահը՝ ո-
րով իւր յանցանքը խոստովաներ էր, և իւր
սրտին հաստատութեան եւ բարեպաշտու-
թեան ականատես եղող մարդիկ չկրցին իրենց
արտասուքը բռնել և չպարմանալ նորա վերայ:

Դուք այսպիսի դէպ վիճակի մէջ չէք գըտ-
նուիր. բայց կարելի է որ Հարկն ստիպէ եր-
բեմն զձեզ կամ սուտ մի պատմելու, կամ պատ-
ւոյ սուտերնիդ խոստովանելու, որ արժանի
լինիք յանդիմանութիւն լսելու կամ պատիժ
կրելու. բայց դուք, սիրուն որդեակք, ճշմար-
տութիւնը լաւ համարեցէք՝ քան անպատիժ
մնալը: Ստախօսութիւնը կրնայ միասել ձեզ որ
և իցէ պատժի մի ատելի: Յանցանքը կէս մի
ներուած կը համարուի, երբ խոստովանուի.
բայց երբ ուրացուի, նոյն յանցանքին չափը
լեցընել ասել է:

Սուտ խօսելով ամենեւին բան մի չշահուիր,
այլ ընդ հակառակն կը միասուի եւս: Ա՛սկէ ի
զատ՝ սուտութիւնը պրուցողին խղճմտանքն եւս
կը վիրաւորէ, և սոսկալի պատիժներ կը ժողվէ

իւր վերայ, ուստի ալ իւր յանցանաց Թողութիւն տեսող մի չկրնար գտնել. իսկ ճշմարիտը խօսիլը միշտ գովելի է և շահաւոր: Այլ որ այս բարի սովորութիւնն ըրած է, յայտնի կ'ընէ իւր ճշմարտասիրութիւնն ուր տեղ որ իւր յանցանաց վերայ խօսք կը լինի. զոր եթէ գոլ ծած եւս լինի սիտարամտութեամբ, զանոնք անկեղծութեամբ խոստովանելովը շատ անգամ Թողութիւն կը գտնէ:

Իշխանն եւ Թին գտտարարտուցնքը:

Իշխանին մէկին որ մի գեհանաւի մէջ մտաւ ուր տեղ շատ մարդիկ Թին գտտարարտուելը էին ոտքերնին կոճղներու մէջ, և ի պատիժ իւ րենց չարագործութեանց անդադար ծեծ կ'ուտէին խարազանով: Այդա զիշխանը տեսնելնուն պէս, որ մարդասիրութեամբ լրենց հետ կը տեսնուէր, մեծ յոյս մի ունեցան իրենց տառապանքէն ազատելու: Անոնք եւս իրենց ազատութիւնը կը խնդրեին, և զայն ընդունելու համար՝ յանցանքնին պարարկելով եւ ուրիշ պատճառանքներ մէջ բերելով՝ զիրենք խոզ պէս ջրին երեսն հանելու կը ջանային: Անոնց իւր գտտարարտուելուն պատճառ կը բռնէր Թշնամեաց պղտարտութիւնը, միւսը գտտաւորաց անարդարութիւնը: Անոնց կ'ասէր՝ Թէ նախանձոտութեամբ մատնեցին զիս. ուրիշ մի եւս հասիւ Թէ իւր երիտասարդական խակամտութեան կուտայը իւր գտտարարտուիլը:

Անկ խօսքով եթէ նոցա ատածին հատատալու լինէը, պէտք էր որ ամենուն եւս ազատութիւն տայը: Նոցա մէջ մի հոգի միայն կայր ամենէն ծերը, որ գտնուելով դէպ ի իշխանին՝ ասաց. «Այս անկեղծութեամբ կը խոստովանիմ, և փառք կուտամ Աստուծոյ, որ ի պատիժ իմ ահագին ոճրագործութեանցս՝ միայն չորհանաւ դրուելու գտտարարտուեցայ: Նախ ընտանիք գող էի եւս, յորոց եղայ նշանաւոր աւազակ. իմ չարագործութիւններս խայտառակ մահուան արժանի էին, կամ կախաղանն ելնելու և կամ անուայ[1] մատնուելու»: Զարմանալով իշխանն նորա աքանչելի անկեղծութեան վերայ, և իրը Թէ բարկացած ձեւացընելով զինքը. «Ինչ է այս, ասաց, դիմանալիս բան է որ այսքան անմեղներուն մէջ տասնակ մեկ աւազակ գող և չարագործ մարդ գտնուի: Չէ չէ, դուրս հանեցէք ասկէ սա մարդն, որ միւս աղէկներն եւս պիսի չհանէ, որոնց ընկերը եղած է»: Հրամանը մեկին կատարուեցաւ: Ամենքն տատամսելը Թին մնացին, իսկ միւսն ազատուելով՝ փութալ իմացաւ Թէ, մարդ իւր յանցանքներն անկեղծութեամբ խոստովանելով՝ շատ անգամ Թողութիւն կ'ընդունի նորա վոխարէն:

1 Ընիւը տեսակ մի տանջանաց է:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Որկրամոլութեան վերայ:

ՍՏԱԽՕՍՈՒԹԵՆԷ յետոյ, որու վերայ հինգ խօսեցայ, կրնամ ասել թէ՝ որկրամոլութիւնն է, որուն առաւելապէս միտած են տղայք:

Չիչ տղայք կան որ այս ախտս չունենան, և իրենց վարմունքն եւս յայտնի կը ցուցընէ շատ անգամ այս պակասութեանս տէր լինելնին: Ա՛ման զի ձեռքերնին տակ մի անցնելուն պէս՝ չաքարեղէններու կը պատկեցընեն. և գէշն այն է որ, որկրամոլ տղայք իրենց բաղձանքը կատարելու համար՝ եթէ քովերնին տակ չունենան, ուրիշ աւելի մեծ յանցանք մի եւս գործելու կը յօժարին, վարպետութեամբ տակ գողնալով. և այս պզտիկ գողութիւնները բան նի տեղ չեն դներ:

Սոսկ կը կարծեմ, սիրելի որդեակք իմ, որ այս ախտս ունեցող չկայ ձեր մէջ, և եթէ լինէր՝ աչքէ շատ կ'իյնայիր:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Որկրամոլութիւնն անարգ մոլութիւն մի է:

Որկրամոլութենէն աւելի անարգ ինչ մոլութիւն կայ: Օ՛մեզ անասնոց կը նմանեցընէ, որոնք մեզ պէս բանական հոգի չունենալով ուրիշ բանի չեն նայիր, այլ միայն իրենց բնական

անհանգիստ բաղձանքը կատարելու. ասոր համար Աստուծոյ ուզելով Յակիմուրոսի աշակերտաց բարքը նկարել, այն հեշտասէր փիլիսոփայն, որ մարդոց բոլոր երջանկութիւնը զգայական հեշտութեանց մէջ կը կայանայ կ'ասէր, զանոնք Յակիմուրոսի խոզերը կ'անուանէր:

Կ'իմաչք դուք եւս որ ոտքա նմանող մարդոց այս անունը կատան, և ընդհանրապէս ամենուն աչքին առելի են. և այս առելութիւնը մանաւանդ տղայք կ'ընդունին, որոնց վերայ սիրած է այս մոլութիւնս: Ուրիշ բան չեն լսեր, այլ միայն այս անարժան մոլութեանս համար յանդիմանութիւն. և քանի որ այս ախտս անվայելչագործերու գիրենք կը յորդորէ, ամեն մարդ նոցա երեսը վար կ'առնու. և երբոյ կը լինեք՝ եթէ այսքան բաւական համարեր գիրենք ուղղելու համար, ինչպէս որ ուրիշ մեկն ուղղութեան եկաւ և զգաստացաւ, գոր կ'ուզեմ հոս պատմել ձեզ իրրեւ խրատական օրինակ:

Որոգայթը բռնուող որկրամոլը:

Տղան մեկն այնքան որկրամոլ էր, որ իր մանկութենէն չափազանց յօժարութիւն ունէր ամեն տեսակ չաքարեղէն և անուշեղէն բաներ: Իր ծնողքն եւս երբեմն երբեմն ձեռքը տակ կուտային, բայց որովհետեւ նոցա տուա-

ձրն ամենեւին բաւական չէր լինելը իւր ցան-
կացած բաներուն, ուստի կ'երթայր միշտ պա-
հարաններուն և գզուոյներուն մէջ կը պըտ-
տեր որ որկորը լեցընելու մի բան գտնէ. և երեսի
ջրով ամենեւին բան մի չէր թողուր, ինչ որ
գտնէր պնակով կ'ուտէր, կ'ուտէր, մանաւանդ
երբ կարկանդակի պնակ տեսնէր, ստամբներով
մէջ կը մտնէր: Իւր ծնողքն ոտքա ըզաճնելը մի
քանի անգամ տեսնելով, շատ յանդիմանեցին
զինքն և երեսը վար առին. բայց որովհետեւ նա
ամենեւին իւր չար ունակութենէն չէր կե-
նար, ուրիշ հնարք մի բանեցուցին զինքըն ու-
զելու. և սա էր ինչպէս: Ա՛ն էկ երիկուն մի պաղ
կարկանդակ մի բերին սեղան, և քնաւ ձեռք
չզպցուցած՝ հագին յետոյ նորէն եռ տարին, ու
դրին պահարանին մէջ, և բանվորներն եւս իր-
րեւ թէ մոռցած պէս՝ այնպէս սեղ մի դրին,
ուսկէ դիւրաւ կրնար գտնել զայն տղան. հե-
տեւեալ առաւոտն նախաճաշի ժամանակ մօտե-
ցած լինելով, ծնողք մտան մօա եղած խուցը,
որ անկէ տեսնեն տղան գլուխն գալիքը: Նայ-
ես այնդիէն փրթած որկրամոլը, և սկսաւ սլուձ
ըլլալ տուբի ինկնիլ և կարկանդակին գլուխն անց-
նել: Պահանոյքին բանվորը գտնելով, անհամբե-
րութեամբ մի կը բանայ զայն, կը տեսնէ կար-
կանդակը, վերայի խուրմը կը վերցընէ և ձեռն
երկնցընելուն չմնար, կ'ուզէ կը մնայ կարկան-
դակին տեղ հայի կտորտանքներ տեսնելով, և

նորա վերան հատատ թուղթ մի, ուր տեղ կը-
նուած էր խոշոր գրերով այս խօսքերս. "Ա՛յ-
սէս որոգայթ կ'ինկնին որկրամոլը": Ա՛յս բա-
նիս վերայ մեծ ամօթով մնայ տղայն և կամաց-
միր կարեցաւ երեսը. բայց աւելի խաղը ե-
զաւ, երբ տեսաւ որ հայրը, մայրը, եղբայրը
և քոյրերը, ամենքն եւս միեւնոյն ծռտանելը
դուրս ելան իջեցին և սկսան բարձր ձայնով
ծաղր ընել զինքը: Չկրցաւ լացը բռնել, և մաղ
մնաց որ պիտի մարէր ինկնէր. բայց ծնողք
սիրտ տալով իրեն, թաղութիւն խնդրեց անոնց-
մէ, և ոչ միայն հրատարակաւ խօսք տուաւ
ուրիշ անգամ նոյն մոլութեան մէջ չինկնելու,
այլ և իւր ժուժկալութեամբ մոռցընել տալու
նոցա իւր որկրամոլութիւնը: Հաստատ կեցաւ
խօսքին վերայ, և հաստատանեցաւ յետոյ՝ թէ
նոցա այնպէս ամչցընելով պատժելին, իրեն
մեծ բարութիւն մի կը համարէր:

Ո՛չմարիտ կ'ասեմ, սիրուն որդեակք իմ,
շատ լաւ և օգտակար բան է որ տղայ մի զինքը
վարժեցընէ քիչ բանով գոհ լինելու: Ա՛յս ու-
նակութիւնը գրեթէ բնականապէս զուրկ կե-
նաց մէջ չտիրապետութեամբ ապրիլ կուտայ
մարդոյ. իսկ ընդհակառակն՝ եթէ իւր որկրա-
մոլութեան ունեցած միտումին ձգտի, այս մո-
լութիւնը խորունկ կ'արմատանայ իւր սրտին
մէջ, և մինչեւ ի գերեզման իջնելը մօտէն չըզ-
տաւիր:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Որկրամոլութեան չար հետեւանքները:

Ամեն օր աչքերնուս դիմացին պակաս չէ այս մոլութեան գէշ հետեւանքներուն օրինակները: Ի քանի տարի է որ ճանչեմ ես, ո՛չ մէկ անգամ լինելով զերծնիք, և առանց քիչ մի հոգ տանելու զգալ իրենց անասնական յաժարութիւնը, այն պիսի մեծ անառակութեանց մէջ ինկան, որոց համար կրնայ ասել մարդ՝ ինչ որ Աստուածաշունչը կ'ասէր նոցա համար, որոնց աստուածն իրենց որովայնն էր: Յիրաւի՝ նոքա ուրիշ աստուած չեն ճանչեր: Նոցա խօսքերուն և գործերուն մեծ մասը յայտնի կը ցուցընեն թէ ո՛չ չափաւորութիւն ունին, եւ ոչ աստուածապաշտութեան ոգի, և այն ղեղուկութիւնն որոց մէջ լինկղմեր մնացեր են, զերծնիք բոլորովին անաստուած գարձուցած է այն աստիճան՝ որ երբ մարդուն մէկին նոցա մէկուն ասաց թէ, լրած ղեղուկութիւնները իւր կեանքը պիտի կարճեցընեն, ան նամօթաբար պատասխան տուաւ անարգ անանոյ նման, թէ՝ երկար ապրելու համար այնքան հոգ չեմ ըներ, միայն թէ իմ կեանքս կարճ՝ բայց փափուկ և զուարճալի լինի:

Աւելորդ է ասել թէ բոլոր որկրամոլ մարդոց կեանքը կարճատեւ կը լինի, վասն զի ընդհանուր աւած է, որ ինչպէս չափաւորութիւն

նըն մայր է առողջութեան, նոյնպէս անժուժկալութիւնն երկարակեցութեան թոյնն է. և երբեւ առակ եղած է այն խօսքը, թէ՝ որկրամոլութիւնը դանակին աւելի կը սպաննէ մարդոց սրտոր:

Քանի՛ քանի հոգի իրենց անկարգ ախորժանոց անսանձ անձնատուր լինելով, իրենց մարմնոյն խառնուածքը կը տկարացընեն և կամաց կամաց այնպիսի վիճակի մէջ կ'ինկնին, որ գեղեցկացման կ'առնու կը տանի զերծնիք: Քանի՛ հոգի եւս մէկ անգամ չափէ դուրս ուտելով կամ խմելով կաթուածի հանդիպեցան, և խլոյն իրենց կենաց թելը խզեցաւ: Օ՜օ ժամանակ ներս գալ օրինակ մի եւս պատահեցաւ մի քաղաքի մէջ, ուր տեղ կը գանուէի ես:

Իւր որկրամոլութեան ցոյն եղոյց երիտասարդը:

Չափէ դուրս որկրամոլ տղուն մէկը, որուն ոչ յանդիմանութիւններն և ոչ պատիժները կրցին օգուտ մի ընել և այս վերատակար մոլութենէս զինքն ուղղել, օր մի շաբաթով եկած թուրինջ ուտելով, զոր նախաճաշի համար պատրաստեր էին, այնքան շատ կերաւ, որ նոյն օրը չկրնալով մարսել՝ մեռաւ խեղճը, և իւր որկրամոլութեան պտուղը գտաւ:

Ահա տեսէք, սիրուն որդեակք իմ, որկրամոլութեան վերջն ուր կ'երթայ, այն մոլու-

թեան՝ որ մանաւանդ ձեր հասակի տղայոց յատուկ է : Ընդհակառակը մարդս կը նուաստացնէ , առաջնորդելով զանոնք դէպի ստորնութիւն , և շատ անգամ եւս իւր տունը տեղը մնալով կը դարձընէ , վերջին աղքատութեան մէջ ձգելով :

Որկրամոլ մարդուն հոգին , կ՚ասէ երեւելի հեղինակին մէկը , բոլորովին իւր քմայքը մէջն է : Ուրիշ բանի չէ՝ այլ միայն անուշ կերակուրներու վերայ կը խենդենայ , և իւր խելքն ու միտքը և հոգին միայն նոցա վերայ է : Զգուշացիր պատառ մի նորա համար՝ ձկան խայծին չափ զուարճութիւն կուտայ , զոր ձուկը կլլելու համար կ՚երթայ կարթին մէջ կը նետուի :

Անարգ մարդիկն եւ չափը ճանչցող տգէտն :

Պիտոս՝ իւր Ժդահակ պապան պալատին մէջ եղած ժամանակ , օր մի մատուռակուրթիւնն ինքն ըրաւ . և գինին դաւաթին մէջ լցընելէն յառաջ , որ Թագաւորին պիտի տայր , ինքը նախ համը ճաշակեցաւ , ինչպէս որ սովորութիւն էր : Ժդահակ դիտելով զայն և պատճառը հարցընելով , պատասխան տուաւ Պիտոս և ասաց . «Վախցայ որ Թոյն չլինի այս խմելիքը , վասն որոյ չուզեցի համն յառաջ եւս առնում» : Ընդ որում Ժդահակ ասաց . «Ես ծանեայ զքեզ հաւատարիմ ծառայ հարկեւորի մը , բայց մի խմելու ատեն զգուշութիւնդ մի՛ մոռնար , զի ոմանք անարգ մարդիկ եւ չափը չճանչցող տգէտներ , որոնց մէջ կրնամ ես քեզ համարել , ինչպէս որ ըրիր , ամենքդ եւս փոխուելոյ և ուրիշ բնութիւն մի ունելոյ : Թող տուէք զձեզ այնպիսի բաներ ընելու , զոր մեզ կ՚արգիլէիք երիտասարդ լինելնուս համար : Ամենքդ եւս վատ անճառնի ձայն մի հանել , պօռալ , և ամենեւին տաճնիդ չէիք դիտեր : Ծաղրական եղանակաւ մի կ՚երգէիք , կարծելով թէ խիստ անուշ երգ մի էր : Կերակուրը լըմնալուն՝ ելաք ոսկի վերայ որ պարբերաբար խաղաք , բայց ոչ թէ միայն ձեր կաքաւը օրհնաւոր չէր , այլեւ ոսկի վերայ եւս չէիք կրնար կանգնիլ : Ահա խօսքով՝ կ՚երեւէր թէ ձեր Թագաւոր լինելը մոռցեր էք , և ոչ հրաւիրեալները ձեր հպատակայ տեղ կը դնէիք : — Ո՛չ , ասաց Ժդահակ , քու հայրդ եւս պիտի խմէր որ լինի , այս բաներս չընիր : — Այ , պատասխան տուաւ Պիտոս Համարձակութեամբ , վասն որոյ եթէ անգամ մի խմելու եւս լինի , եսը չեմ անեցըներ » :

Հին ծգտցիքներուն մի զարմանալի գործառնութիւնը :

Պարսիկներն , որոնց մէջ կրթուած էր Պիտոս , մինչեւ որ հարկը չառնէր , երբեմն կենայ պահպանութեան համար ոչ կ՚ուտէին և ոչ կը խմէին , և մի փոքր պարզ կերակրով բաւականի կը լինէին : Ուստի երբ Պիտոսին պատիւ նորա մանկութեան ժամանակ պատուոյ հարկերոյթի մի տուաւ իրեն , «Այո , հայր , ասաց անոր , այս

մեծ ծախքով պատրաստուած սեղանդ չատ նե-
ղութիւն պիտի տայ ձեզ, եթէ եկած կերա-
կուրներուն ամենէն ուտելու լինելը։ — Ո՛չ,
ասաց Ալժդահակ, միթէ իմ պատրաստած
սեղանս Պարսկաստանու մէջ եղածներէն վա-
ռառ և ընտիր կ'երեւի քեզ։ — Ա՛յ, ամենե-
ւին ընմանելի նոցա, պատասխանեց Կիւրոս,
վասն զի մեր մեծ ախորժանին հասնելու համար,
զոր սեղան նստած ժամանակ պիտի ունենայ
մարդս, որ է իւր անօթութիւնը մարել, չո-
րակ և միանգամայն կարճ ճաշատարհէ մի
կ'երթամք. և ուրիշ բանի հարկաւորութիւն
չունինք այս բանիս համար, այլ միայն պատրաս-
մի հայի, և մի քիչ կոմեակ կամ ընդեղէնի. և
դուք ընդհակառակն նոյն ախորժանին համար
այլ և այլ ճաշատարհներէ երթալով՝ հարիւր
թէ կէսը կը մոռնաք, ուր մեք առելի դիւրու-
թեամբ և շուտով կը հասնինք »։

Այսպէս խօսեցաւ Կիւրոս. բայց իւր խօս-
քերն իրեն տուած օրինակներովը հաստատե-
լու համար, Ալժդահակ իշխանութիւն տալով
անոր՝ որ սեղանին վերայ եղած կերակուրներէն
որոնն ուզածն առնու ուտէ, Կիւրոս մեկէն ա-
ռաւ բաշխեց Թագաւորին դնելու սուներուն, ու
բանք այն տեղ կանգնելը և իրեն ծառայութիւն
մի ըրած էին։

Յանկարծ եր որ բոլոր երիտասարդ ազգաք
այս միտքս բանեցընելին և Կիւրոսի պէս վար-

ուէին։ Նոքա ազգ մի խիստ պզտիկ հասակէն
սկսորութիւն ընել չափաւորութեամբ սորվե-
լու, բաղդը չկրնար իւր կամքն նորա վերայ բա-
նեցընել. և եթէ բարեյաջող վիճակը փոխուե-
լով՝ աղքատանայ և ինկնի, արդէն քիչ բա-
նի գոհ լինելու սկսորած լինելով՝ ամենեւին նե-
ղութիւն մի չկրեր, և ձեռքի եղած քրչին բա-
ւական կը լինի։ Բայց եթէ ընդհակառակն՝ ազ-
գայութենէն փախուի և հեշտասէր կեանք ան-
ցընելու սկսորած է, չկրնար իւր սրտին ուզած
հեշտալի բաներէն յետ կենալ. և եթէ դիպ-
ուածով անոնցմէ զրկուի, այս զրկուիլը միայն
աստիճ տանջանք մը կը լինի իրեն։

Ա՛յ այն ազգայոց որ խիստ փափկութեամբ
կը մեծնան, և աչքերնին ուրիշ բանի չէ, այլ
միայն իրենց կամքը կատարելու։ Նոքա եթէ այնպէս
մի ազգայոց դաստիարակութիւն ինձ յանձնե-
լու լինէին, զերեկը չափաւորութեան մէջ վար-
ժեցընելու համար, երբեմն երբեմն փորձի մէջ
կը դնէի զերեկը, ինչպէս որ Կիւրոս իւր
աշակերտաց կ'ընէր։ Նոքա մեծ առջեւն
սեղան կը հանէր խիստ ախորժ կերակուրներով
և երբ անօթի աչքերով ադեկ մի կը դիտէին
անոնց, կը հրամայէր որ սեղանը վերցընեն, ա-
ռանց մեկը ձեռք երկնցընելու և այն կերա-
կուրց համը նայելու։

Գուցէ կ'ասէք՝ թէ այս բնչ անդթութիւն
է. բայց հաստատեցէք ինձ որ ձեզ ադեկ կը լինի.

եւ եթէ այս կերպով չափաւոր կենաց սովորիք, արիրամոլութեան ցաւալի հետեւանքներէն ա զատ կը մնաք: Այն ժամանակ ոչ եւս վախ կ'ունենաք ուրիշէն նախատինք կրելու, կարօտութեան եւ այլ տեսակ անկարգութեանց մէջ ինկնելու, ուր տեղ անբարեխառնութիւնը կ'առնու կը տանի բոլոր իրեն գերի եղողները. այլ հաստատակաց յարգը, որուն հանդարտութիւն եւ առաջնութիւն կը վայելէք, որոնք չափաւոր կենաց հաստատակ պտուղներն են. եւ գձեզ անպատուր հաճութենէ մի զրկելով, ձեր կենաց երջանկութիւնը կ'ապահովէք:

Այս տուած գաստրս ձեր մտաց մէջ աւելի խոր տպաւորելու համար, դիտցած եւ հրցածիս չափ կը պատուիրեմ ձեզ իրրեւ գրի խուսոր առած ընդունելու այս խօսքս թէ՝ Ոչ կրամոլութիւնը, չէ թէ իւր խոստացած հաճութիւնը կուտայ ձեզ, այլ ընդ հակառակն օ չէ օր աւելի կը թշուառացնէ զձեզ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Քաղաքավարութեան վերայ:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Թէ ինչ է քաղաքավարութիւնը:

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆՆ ամեն ժամանակ բարեկիրթ մարդոց հարկաւոր յատկութիւն

ներէն մին համարուած է: Այս է որ մարդոց ազնուաւորութեան վերայ այն չքեղութիւնն եւ գեղեցկութիւնը կ'աւելցնէ, որով սիրելի կը լինի ապրող:

Ուրիշին մարդ մի եթէ սիրուն վարմունք ներ չունի, կը նմանի վարպետութեամբ շինուած պատկերի, որու վերայ վայելուչ գոյները չեն տեսնուիր, եւ կամ ճշմարտապէս սեղմով՝ կը նմանի պատուական ադամանդի, այլ չինքը տձեւ եւ անհաւասար: Իւր գեղեցիկ յատկութիւնները՝ այսպէս ասենք, կոպիտ վարմունքովն մրճուած է: Իւր անմարդավարութեամբ կը կորսնցնէ այն յարգը, զոր կրնար իւր հանճարով ձեռք բերել. եւ մարդիկ զինքն այն թռչուններուն մէկուն տեղը կը դնեն, որոնք միայն մութին մէջ կենալու համար ստեղծուած են, եւ չեն կարեր ցերեկ ատեն երեւիլ՝ առանց վնաս տալու իրենց նայողաց աչքին:

Ջահիհաս մարդոց վերայ ինչ որ կը զուարճանայ, նոյնը պէտք է նմանիլ համեմատաբար անքաղաքավար եւ անկիրթ տղաս մի կամ երիտասարդի համար: Եթէ ատենցմէ մին կամ խիստ կոպիտ եւ կամ յանդուգն լինելով, արժանի չը համարի իրեն մէկուն բարեւ տալու կամ առնելու, եւ կամ իրեն բարիք մի ընողին չը զգալ ընդհակառակ լինիլ, ահա կ'ըսուի՝ անքաղաքավար տղայ մի: Ես կարծես թէ անտառաց մէջ

անքան անսանոց հետ մեծցած է :

Բայց ընդ հակառակն, երբ տղայ մի ընտ-հալի կերպով մարդու դիմաց երթայ, պարկեշտութեամբ և ընտրելով պատասխան տայ իրեն քան հարցընողին, եթէ խոր մեծերուն հետ ան-նաճութեամբ վարուի, եթէ ընկերութեան մէջ խօսելու կամ լռելու ժամանակը գիտնայ, այն ժամանակ թէպէտև ամեն կերպով հարկաւոր եղած արժանապատուութիւնը չունենայ, այսու ամենայնիւ կը սիրեն և կը յարգեն զինքն և անուշ գովեստներ լսելու եւս արժանի կը լինի :

Ա՛հա, սիրուն որդեակը իմ, այսպէս և դուք որքան շնորհալի և սիրուն եղանակաւ այլոց հետ վարուիք, այնքան կը սիրուիք և աչք կը մնիք, վասն զի մարդս ձեր ունեցած արժանաւորութիւնն արտաքին վարմունքնիդ կը գտանէ :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Պարապմանց եւ սիրուն ցանմունքի վերայ :

Նայեցէք որ սովորեցնէք զձեզ ամեն պարապմի մէջ և ամենուն հետ մարդավար և սիրուն եղանակաւ վարուելու. վասն զի մարդավարութիւնն եւ շնորհալի վարմունքն ամեն մարդու դէմ պէտք է ունենանք, և ամեն տեղ պէտք է ցուցընէք ծանր և նազելի շարժուածք

մի, զգուշանալով անվայելուչ նստուածքէ, ձամբան շուռ շուռ քայլելէն. այլ և մարմնոյն շարժմունքը պէտք է չափաւոր լինի, դէմքին վերայ ամենեւին չպիտի ցուցընէ գոռոզութեան կամ ոհաձութեան նշան մի, կամ որպէս թէ՝ աշխարհս բնաւ իրեն հոգը չընել, զուրիշը մարդս դեղ չդնել : Ընկերութեան մէջ զգուշանալ պէտք է հակառակ պատճառներէ, կամակորութեամբ վիճաբանութիւն ընելէ, մարդուս խօսքը ընդմիջելէ, անվայելուչ բառեր գործածելէ, որ ոամիկ մարդոց բերնէն կը լսուին : Խոհմութեան մէջ առաջին տեղը չնաշխ, նոր եկողներուն տոք երթալ ու բարեւել. նստելու երթալու ժամանակ վայելուչ և շնորհալի եղանակ մի ունենալ. մինչեւ որ չհարցուին պատասխան չտալ. խոսքու մէջ միշտ հաւասար և միակերպ լինել, թէ կատակելու լինի և թէ շահելու. ձանձրացուցիչ քայլած ժամանակ, և թէ խոր հետն եղողն իրմէ մեծ է, ինքն անտեղի ետեւ և միշտ վարի կողմէն երթալու է, և նայելու է որ նախ ինքն բարեւ տայ ուրիշին. կերակրոյ ժամանակ պէտք է չափաւոր լինել պատհեցող և մաքուր :

Մեկ ամբողջ հատոր մի բաւական չէր լինէր, եթէ ուզէինք մարդավարութեան պատհանջած բոլոր պարտաւորութիւնները մի կիսի մի կիսի դրելու : Սակայն կարող են ձեր փափագը լեցընել քաղաքավարութեան համար չինուած

մանաւոր դէպքերը, միայն թէ հոգ տանելու է նոցա մէջ եղած դասերն լաւ մտաք պահելու, և ոչինչ բանի տեղ չհամարել այն կանոններն, որոնք կրնան օգուտ ընել ձեզ յայտ մասին։ Թէպէտեւ առաջին անգամ կարդալնուդ այդքան օգտակար չերեւին ձեզ, այսու ամենայնիւ պահելը հարկաւոր է, մանաւանդ երբ կ'ուզէ մէկը քաղաքավար երեւիլ մարդու քով և պատիւ տանալ աշխարհիս առջեւ. ուր ընդհակառակն, ինչպէս վերն ըսի, անկիրթ և անքաղաքավարն աւելի տեղի մարդ չկայ հիմակուան ժամանակս։ Նմին ուրիշ կողմէ որ ժանաւորութիւն եւս ունենայ, իւր անշնորհ վարմունքով զայն եւս կը կորսնցնէ, և տեսնողին այնպէս կարծել կուտայ, որպէս թէ բնաւ կերպով մի արժանաւորութիւն չունի։ Ընդհակառակ կամ հպարտութեամբ երեւելն եւ զրկ մարդու կը նմանի, որ ուժիկ մարդոց հետ խառնուած կը լինի, եթէ իւր տեղին վայելած հպարտութիւնը չհագնի, և մարդու մէջ ատելագ և գծուծ կերպարանքով երեւի։

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Քաղաքավարութիւնն եւ մարդաւարութիւնն աշխուժական գործունէութեան մէջ կը կայանայ։

Պէտք չէ կարծել թէ քաղաքավար մարդ լինելու համար, բաւական է միայն մարդավարական արտաքին արարողութիւն մի ցոյց տալ. Ճշմարիտ քաղաքավարութիւնն այնքանով չէ բաւականանար։ Նախ և վերատրապէս պէտք է ամենուն հետ գեղեցիկ շնորհալի և մարդավարի վարմունքներ բանեցընել։ Ասոնք բաւական չէ միայն բարեւ տալ, և հետերնին տեսութիւն ըրած մարդոց պատիւ ընելն յայտնի ընել, այլ պէտք է պարտաւորել դիրքնիք, և կանոն ծառայութիւն մի ընել և գործելնուն գանուիլ առիթ մի պատահելուն։ Այս միջոցով, զոր կը թոյն և մարդկութիւնն եւս կը պատուիրէ մեզ, ուրիշին յարդ և բարեկամական սէր կը տանք նամբ։

Քաղաքավարութիւն ցնծագործութեան։

Օպերնէ հիւսիսը ձանապարհորդութիւն ընելով հասաւ երեկոյեան դէմ փոքրիկ քաղաք մի։ Ըսին պանդոկ մի իջնելով՝ հրամայեց պանդոկապետին որ կերակուրը պատրաստէ. և մինչ մինչեւ նախ սեղան, մարդ մի իրիկնոյն քաղաքի աւագերէցին, աղաչելով որ գայ ընկերութիւն ընէ օտարական ձանապարհորդի մի, որ միայնակ կերակուր ուտելու սովրած չէր, միանգամայն աղաչեց որ ներողամիտ լինի ինքն անձամբ չգնալուն համար պինքը հրաւիրելու գալ ձանապարհին յոգնած լինելովին։ Աւագերէցը դեռ ու անկիրթ մէկին լինելով չկրցաւ

նորա հրաւէրքը, այլեւ քանի մի կոպիտ խօսքեր եւս ըսուցեց, որ անծանօթ ճանապարհորդին դժարը պիտի բերէին։ Այնիկայ իրեն փոխանորդ մի ունէր, ընկերասէր եւ անուշ բնաւորեալ մի, որ այն ժամանակս դիպուածով նորա քով դանուելով, ուզեց որ նորա կողմէն ինքն երթայ օտարականին սեղանակից լինի. ա-ւագերէցը հաճութիւն տուաւ, պատուիրելով իրեն՝ որ շատ չվատահի այն զինուորին վրայ։ Օպինեէի կոմսը փոխանորդին հետ սեղան նստաւ, եւ տեսաւ որ խելացի ու խիստ ազնուաբարոյ էր։ Իրարմէ զատուելէն ա-ռաջ ընդհակառակ եղաւ նորա մարդասիրութիւնէն. եւ ութ օր յետոյ առանց իրեն բան ասելու, եպիսկոպոսական պաշտօն ընդհանուր տուաւ, առանձին թեմեւս պարգեւեց իրեն՝ անպատմելի զարմանք պատճառելով աւագերէցին, որ այս դէպքին ուսաւ թէ՝ բնաւ պէտք չէ անքաղաքավարութիւն ցուցընել եւ ոչ ճանչցած մարդուն, եւ թէ՝ մարդավարութիւնը միշտ գովելի եւ շահաւոր է։

Բայց դայս եւս գիտցած եղիք որ, քաղաքավարութիւնն ոչքան որ շահաւոր է մարդոյս, ամարդութիւնն եւս այնքան վնասակար է, ինչպէս հետեւեալ պատմութենէն տղէկ կ'իմացուի։

Գաղիւ կրոց կոդիտները։

Վաղղիացւոց պատմութեան մէջ կը կարդացուի, թէ Հնրիկոս Դ որպէս եղած լինելով, կերակուրի ժամանակ որ եկաւ՝ գնաց մինակուկ պանդոկ մի, և հարցուց պանդոկապետին՝ թէ փորը կշտացընելու բան մի ունի։ Պատասխան տուաւ պանդոկապետը թէ՝ կերակուր չկայ, վասն զի ուշ եկաւ մնացեր, ասաց. իսկ Թագաւորը տեսաւ որ կրակին վերայ շամփուր մի կայր լեցուն միսով, հարցուց նորէն. «Արդ հասար է ապա այդ խորտիկը»։ Պանդոկապետը պատասխան տուաւ թէ՝ անիկայ քանի մի պարոններու համար կը պատրաստէր, որոնք պանդոկին վերի յարկը սենեկի մի մէջ հաւաքուած էն և կը կարծէր ինք՝ թէ Թագաւորական մարդիկ էին։ Թագաւորը, որ պանդոկապետին աչքին հասարակ զինուոր մի կ'երեւէր, աղաչեց որ երթայ այն պարոններուն ըսուցէ թէ՝ իւր պանդոկը ճանապարհորդ մի եկեր է յոգնած ու տնօթի, և կ'աղաչէ զերենք որ իրենց խորովածէն մնաս մի հանեն, կամ իրենց սեղանն առնուն զինքն եւս, ասելով թէ՝ իւր մասին ինչ որ ինկնի՝ կը վճարէ. բայց պարոնները երկու խնդիքը մէկէն մերժեցին՝ ասելով. «Մեր կերակուրը մեզ հարիւր կը բաւէ, և թէ՝ ուրիշ անծանօթ մարդ չեմք ուզեր մեր սեղանը»։ Հնրիկոս բարկանալով այսպիսի յանդուգն պատասխանին վե-

բայ, զոր բարձր ձայնով կուտային որ ազեկ մի լսուի, իբր հետեւ եղող բոլոր մարդիկը ներս մտնուին, որոնք տասն տասուերիս հոգի կային, որոնց մէջ էր նաեւ պահապան զօրուց գլխաւոր Վ. խրբին պարոնը, որուն հրամայեց խաբարհանքով լաւ մի վարձատրել նոցա կատարելիքը։ Հարուածն ինչպէս որ սէտք է՝ ի գործ դրուեցաւ, և պարոններն իրենց ձիասանին ուսան՝ ետ քաղաքավարութեան պարտքերը չըկատարողին, ուրիշէն աւելի իրեն կը վնասէ։

Քաղաքավարութիւնը կամ ազնուականութիւնը դիտր է բնական չինի։

Ո՞ձեղ քաղաքավարութեան և ազնուական վարմունքներուս յորդորելս, միտքս այն չէ ետ՝ զուք ինքզինքնիդ արուեստական ընել, այսինքն ձեր վարմունքը բնականէ դուրս լինի շարժուածքով, հագուստով և զարդարանքով, արուեստական երեսոյթդ վերայ կը տեսնուի. և ատոր համար իբրեւ ծաղր ընելով վրեպելիք՝ խոցոտել ազնուական կը կանչէի։

Տղայք, զգոյշ կեցէք, մի գուցէ այս ծաղրական օրինակաց հետեւիք, որ է արուեստական կեանք տուող քաղաքավարութիւն։ Այս կերպ մարդավարութիւն բանեցնող երիտասարդը թէպետեւ խելացի և իմաստուն լինի, աւելի տռեալ կ՚ընծայէ վնաքը։ Նորա խելքը միտքը միայն իբր դեղեցիկ կերպարանաց, պչրանաց,

կոտրտուելուն, զարդարանաց և իբր անձին գեղեցկութեան հետ լինելով, իբր բոլոր յատկութիւնք այս անցաւոր արտաքին բաներուս վերայ կը հաստատի, և այդոցմէ յորդ և մեծ բանք սեռնելու արժանաւոր կը կարծէ ինքն, ասոնց համար՝ որ մի քանի քաղաքավարական արտայայտութիւններ (զօմիլիմէնթներ) գիտէ, և կը պարծի՝ որպէս թէ լաւ կը ճանչէ խոնարհութեան ինչ լինելը. բայց սակայն խելացի մարդիկ չեն խաբուիր բնաւ այս արտաքին խաբեբայ վարմունքներէն։

Ազնուապետ և շնորհալի եղիք, բայց ձեր քաղաքավարութիւնը չինծու չլինի. և ջանայիք այնպէս աշխուժ ածքներ ունենալ, որ սարկ և բնական լինին։

Իսկ այն չինծու քաղաքավարութիւնն որ միայն արտաքին կերպարանաց վերայ կը կայանայ, ծաղրական է, և ուրիշ բանի չծառայեր, այլ միայն տխմար մարդոց տեղ դնելու վրեպ։

Երիտասարդ տղան մէկը, որուն Վ. եպիսկոպոսին կայսրը պաշտօն մի շնորհած էր, զոր և ինքը խիստ կը բաղձայր առանալու, փութացաւ անոր շնորհակալութեան երթալու. և կարծելով հաճելի բան մի ընել նորա աչքին, գլխէն մինչեւ ոտքերն անուշահոտ իւղերով օծուեցաւ, և խիստ ազնիւ հագուստ մի հագաւ։

Բայց Վ. եպիսկոպոսս այնպէս զզուեցաւ նորա արուեստակեալ արտաքին կերպարան

քին, որ իւր հնարհաճ պաշտօնը ձեռքին առ-
նելէն յետոյ, որով իրեն պատիւ ըրած էր, նո-
րա գրգռանաց և զարդարանաց վերայ չափազանց
սէր ունենալն եւս յանդիմանելու համար՝ բար-
կանալով ասաց իրեն. "Հ՚ատ աղէկ էր որ սրիւ
տուր հոտելիք":

Ուրիշ պակասութիւն եւս, որ նոյնպէս մար-
գարէութեան եւ աղնուական վարմունքին
հակառակ է, և դուք իսկ պէտք է զգաչ կե-
նաք միշտ անկէ, այն խենդութիւնն է, որով
մարդս բան գիտցալն մի տեղ անցնիլ կ՚ուզէ,
և ասով կը ցանկայ ուրիշին յարգ ստանալու.
այս մոլութիւնս եւս առաւելապէս տղայոց մէջ
հատարակ եղած է: Ամանցմէ քանի քանիները
կը սեմնուին ամեն օր, որոնք մարքէ զուրկ և ա-
մենեւին բան մի չգիտնալով՝ ամեն խօսքի մէջ
կը մտնեն, և խնամատուն մարդս մը պէս կըսկը-
սին խօսիլ գոռոզ և ամբարտաւան դէմքով. իւ
բենցմէ գատ ուրիշ զամենքն եւս կը նախատուին,
և այս կերպով կը խաբեն ոչ էտ մարդիկը: Իսկ
խելացի և գրամիտ մարդը գիտէ նոցա ինչ ատ
սիճանի և ինչ արժանութեան տէր լինելը. կը
տեսանէն որ այս գոռոզամիտ մարդոց բոլոր կա-
տարելութիւնն անմիտ ունայնասիրութեան
մէջ կը կայանայ, որու վերայ կը պարծենան,
և ամեն մարդ եւս պիրկնք խենդի տեղ դնե-
լով վրանին կը ծիծաղին:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Կենաց վճռակ ընտրելու վերայ:

Թէպէտեւ դուք հիմայ այն հասակին մէջ
չէք որ կարող լինիք որոշել ձեզ կենաց վիճակ
մի, այսու ամենայնիւ, սիրուն որդեակք իմ,
որովհետեւ քիչ ժամանակէն սիրոն ստիպուիք
գործի մի ձեռք զարնելու, ուստի պարտք կը
համարիմ ինձ այս բանիս վերայօք խրատ տալ
ձեզ, որպէս զի հիմակուընէ կարող լինիք հար-
կաւոր զգուշութիւններն ընել, որ չսխալիք այս
ամենահարկաւոր գործիս մէջ:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Այս քնարութեան հարկաւորութիւնը:

Ակնէց աւելի հարկաւոր գործ կրնամ ասել
ձեզ չկայ, ուսկէ կախեալ է բան մեծի մասին
հոգւոյ յաւիտենական փրկութիւնը, վասն զի
երբ բարեպաշտութեամբ լաւ ընտրութիւն
ընելու լինի, և աստուածային կոչման հետեւի,
կրնայ այն ժամանակ յոյս ունենալ բարեյաջող
վախճանի մի հասնելու. վասն զի Աստուած՝ որ
հաւատարիմ է, անխնամ՝ չթողուր բնաւ զա-
նազանը որ իւր կոչման ձայնին կը հետեւին: Այլ
ընդհակառակն՝ մէկը եթէ նորա կոչման ձայնին
մտիկ չընէր, թող վախնայ նա իւր հոգւոյն
փրկութեան վերայ, վասն զի կրնամք այնպէս

կարծել թէ նա Աստուածամարդութեան կարգադրութեանց հակառակ ընտրած վիճակին մէջ չկրնար այնքան օգնութիւն գտնել։

Ո՛րքա՜ ան որ լաւ կ՚ընտրեն իրենց վիճակը, ո՛րքա՜ մէջ պիտի ապրին, կը նմանին այն ծառերուն՝ որոնք իրենց յարմար եկող երկրի եւ կլիմայի մէջ կը տնկուին։ Անոնց մեծ հոգ ունենալու նոցա վերայ եւ մշակելու, զարմանալի արագութեամբ կ՚աճին, տերեւուտ ճիւղերնին կը տարածեն, եւ խիտ դեղեցիկ եւ առատ պտուղ կը բերեն։ Իսկ ընդհակառակն նոքա որ երկինայինի կոչման անհատաբար լինելով, Աստուծոյ կոչում՝ ըրած էն տարբեր վիճակ մի կ՚ընտրեն իրենց, կը նմանին այն ծառերուն, զորոնք ուրիշ դաւառ ու երկիր կը փոխեն կը տանին, որ իրենց յարմար չէն գար։ Ընդունած տեղը կը ջրեն գանոնք եւ մեծ հոգ կ՚ունենան վրանին մը շակելով, որ աճին եւ ծաղկին, վասն զի միշտ տկար եւ միշտ անպտուղ կը մնան. կամ թէ որ պտուղ եւս տան, ամենեւին համ հոտ չէն ունենար, եւ կատարեալ չէն հասունցնար։

Ահա թօքով՝ այն վիճակն ուր տեղ Աստուած կը կոչէ զմեզ, այն ճանապարհն է, ուսկից ինքը կ՚ուզէ առաջնորդել մեզ դէպ ի փրկութեան նաւահանգիստն։ Սակայն հրաժարուելով եթէ ուրիշ ճանապարհէ դնացք, յայտնի է որ վտանգի մէջ կը ձգեցիք զինք. և կ՚երթայիք կը զարնեցիք գլուխնիս այնպիսի տեղ մի, որ մնքերը

նիս դրած նպատակէն դուրս հակառակ ծայր մի կը լինիք։

Ահ կարծէք թէ ասով պարապ երկիւղ տալ կ՚ուզեմ ձեզ. այս անհակառակելի ճշմարտութիւն մի է, և բոլոր աշխարհս կը ճանչէ։ Ասենք, սիրելի որդեակք իմ, հոգ ասրէք որ խնդրեք թէ ի՞նչ վիճակ ընդունելու կը հրաւիրէ զձեզ Աստուած։ Ահ յաժարիք հետեւիլ երկուսասարդաց մեծագոյն մասին օրինակին, մնա՛ք նպատակ մեր ժամանակի, որոնք առանց հոգերնին ընելու Աստուծոյ իրենցմէ խնդրածը, խնդրեցին փշածին պէս կենաց վիճակ մի կ՚ընտրեն. և այն վիճակին մէջ ուրիշ բան չէն խնդրեր, այլ զայն միայն որ իրենց ախորժակին յարմար և իրենց մտքի հակամիտութեանց հաճելի լինի։ Գոնէ դուք եւս այն սուրբ աղաչեն պէս բուցեցէք, որ երբ ուրիշները կը սախսէին պնդելն աշխարհ մտնելու, ուր տեղ առատութիւն կոչումն պնդը կանչած չէր, և իւր առջև կը բերէին թէ ի՞նչ մեծ պատիւներու և առաջնութեանց տէր պիտի լինի եթէ կարդալի՛ սէրերը քին դպրոցը Թեամբ. «Ո՛վ ի՞նչ օգուտ զաշխարհ ամենայն շահիլ՝ և զանձն իւր տուժել»։

Թէպէտև աշխարհիս ամենէն մեծ թագաւորութեան աթոռը նստած լինիք, եթէ Աստուծոյ կամաց հակառակ է այն, ըսէ պէտք էք ձեր վիճակին վերայ, և դժբախտ մարդուս տեղ դնել զձեզ։

Աբեմն արժան է ամեն բանէն յառաջ Աստուծոյ կամքն իմանալ, և ձեր ընդունելութիւնն ալ ճակին մէջ ուրիշ բան չընդրել, այլ միայն Աստուծոյ ձեր վերայ ունեցած դիտաւորութիւնն ներքը կատարել. վասն զի կենայց որ և իցէ ճակին մէջ մնանելն առանց Աստուծոյ կամքն իմանալու, կը նմանի նաւու մի մէջ նստելու առանց նաւապետի, որ չետոյ մեծ վտանգի մէջ կ'ինկնի, մինչեւ նաւաբեկ լինելու:

Բայց վերջապէս Աստուծոյ կամքն ազէկ ճանչնալու, և այս ամենահարկաւոր գործիս մէջ չսխալելու համար, պէտք է կարեւոր միջոցներ և նախապատրաստութիւններն ի գործ դնել, զոր խոհեմութիւնն և կրօնը կ'ուսուցանեն մեզ:

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Աջեկ ընտրութիւն ընելու համար դիտք եղած նախացգուշութիւնները:

Ա. Պէտք է անարատ և կանոնաւոր կեանք վարել, վասն զի հատարակօրէն Աստուած անարատ և անմեղ հոգւոց հետ կը հաղորդակցի:

Բ. Պէտք է դէպ ի Աստուած դիմել աղօթիւք և ստէպ ստէպ ասել Սամուէլին պէս. "Խօսէ՛ Տէր, և յայտնէ ինձ քու կամքդ", կամ ինչպէս կ'ասէր Դաւիթ. "Ցոյց ինձ, Տէր, այն ճանապարհն, ուսկէ պէտք է որ ես գնամ, ինչու որ ես իմ հոգիս դէպ ի քեզ վերցուցի":

Այսպէս աղօթք որ ընես, Աստուած եւս քեզ մոիկ կ'ընէ, մանաւանդ եթէ ջերմեռանդութիւն ունենաս և հաղորդութենէ ետ չկենաս:

Գ. Հարկ է խորհուրդ հարցընել Աստուծոյ պաշտօնեայ, կ'ուզեմ ասել ձեր խոստովանահայր կառավարին, նաեւ ձեր ծնողաց, զորոնք Աստուած իբրեւ առաջնորդ տուած է ձեզ: Աբեմն ամենէն բան մի որոշէք առանց խրատ հարցընելու նոցա, և առանց անկեղծութեամբ ձեր իրաւունքներն նոցա յայտնելու: Պատրաստ էք դուք նոցա կամքին դուրս չելնել և հնազանդութիւն ցուցընել:

Սակայն կան այնպիսի առիթներ, որու մէջ պէտք չէ ծնողաց բաշձանացն և կամաց յարմարիլ. վասն զի երբ Աստուած, օրինակի համար, ձեզ յայտնապէս իմացընէր թէ կ'ուզէ որ դուք եկեղեցական պաշտօնի մէջ մնայիք, և եթէ ձեր ծնողքը չափազանց սիրով ուզեն զձեզ յաշխարհ մոցընել, ուր տեղ ձեր հոգւոյն փրկութիւնը մեծ վտանգի մէջ ինկնելու լինի, այն ժամանակ օրէնք է դէմ կենալ նոցա կամաց, բայց առանց որդիական հնազանդութենէ եւ սիրաձութենէ չետ կենալու, զոր պարտաւոր էք իրենց, պէտք էք պատասխան տալ նոցա աղաչելով այս խօսքը, զոր անգամ մի զսպեցէին. "Իրաւունք է որ մեք ձեր հրամանն Աստուծոյ հրամանին մեծ համարիմք": Կամ եթէ ընդ-

հակառակին՝ ձեր ծնողքն անխորհրդաբար, կամ ծայրահեղ չերմեռանդութեամբ ուզեն զձեզ քահանայ կամ վարդապետ ընել, որ հաւանական լինի Աստուծոյ կամաց, նոյնպէս պէտք չէ նոցա հնազանդիլ։ Այսպէս ալ շատ օրինակներ ունինք մեր առջեւ, որոնք մանկութեան ժամանակ առանց կարող լինելու անձամբ ընտրել իրենց վիճակը, ծնողաց անխոհեմ ընտրութեամբ եկեղեցական պաշտօնի ձեռք զարնելով, և կամ կարօտութենէ ստիպեալ՝ առանց Աստուծոյ կամքն իմանալու, շահու և հանգստութեան համար արբանեակ կարգն ընդունելով, ոչքան վատ հետեւանքներ ունեցեր են յետոյ, չարաչար գործածելով իրենց պաշտօնն, որուն խիստ մեծ պատշաճութեամբ պէտք էր մատեներային։ Այսպէս՝ թէ՝ ինչպէս կրնանք ա՛ռնել՝ թէ Աստուծոյ պաշտօնն անվրէպ կը կատարեն, որ անշուշտ առանց երկնային կոչման նոյն արբանեակ կարգին ձեռք զարնելով, զանիկայ իրեն գործիք մի՛ընէ խնդիր ժողովուրդը կողոպտելու, անարժան գործերու յանձնառու լինելով, և երբեմն գայլ ոխարարգեան անմիջ գառանց մէջ մանելով, անուշ լեզուով զանոնք կ՚սպասէ և յաւիտենական կորուստը կը պրկէ, վոհանակ դէպ ի երկնից ձանապարհն առաջնորդելու։ Այս պատճառներն առանց բաւական քննութիւն ընելու և Աստուծոյ կամքը ճանչնալու եկեղեցական վիճակին ընդունողներն են։

Ասուածային կոչման հաւատարիմ եղոց երիտասարդք։

Երբ Փրանկիսկոս Սալեզացին իմացաւ այն վիճակին ուր կը հրաւիրէր զինքն Աստուած, իր ծնողքը պարապ տեղը կ՚ասէին իրեն՝ թէ ծնողացն անգթանկին է, և թէ նորա համար պէտք է որ իրենց նեցուկ և օգնական լինի. անօգուտ տեղն նորա կը պատճէին թէ եկեղեցական վիճակն ընդունելու համար ունեցած բաղձանքը իր անխոհեմ՝ չերմեռանդութենէ յառաջ եկած է, և թէ՝ իր հոգւոյն փրկութիւնը թէ աշխարհիս և թէ եկեղեցական կարգին մէջ կրնայ առանալ։ Պարապ տեղը նորա դիմաց կը բերէին պատուաւոր և բաղմաշահ առաքեալներն, որոնց կրնար հաւասիլ յաշխարհ մանելով. ամենեւին ինչ որ ըրին՝ վարձքացան նորա միտքը դարձընել իր սրբութիւնէն։ Աստուծոյ կամքն իր ծնողաց կամքէն մեծ համարեց, և այն իրեն խոստացած անցաւոր փառքերէն հրաժարելը լաւագոյն, քան թէ առաքելական կոչման շնորհքները կորսնցընել, որ զինքը սրբութեան գերագոյն աստիճան բարձրացուց։

Ահա, սիրուն որդեակք իմ, դուք եւս պէտք էք այս օրինակիս հետեւելով հնազանդիլ երբ հնային կոչման, առանց մտիկ ընելու ձեր ծնողաց, որոնք կ՚ուզեն իրենց կամացը դարձընել զձեզ. ասպա թէ ոչ մարդոյ հրամանն Աստու-

ծոյ հրամանէն մեծ համարած կը լինէք, և զձեզ արժանի կ'ընէք պատժոյ, որով շատ անգամ կը պատուհասէ Աստուած զանոնք, որ իւր կամայ դէմ կենալով՝ այնպիսի վիճակ մի կ'ընտրեն, ուր ի վերուստ կոչուած չեն։ Մէկ օրինակ մի միայն կ'ուզեմ բերել հոս լսարին դրբէ մի, ուակէ կրնաք մակաբերել թէ՝ ինչպէս Աստուած անաչառապէս կը պատժէ զանոնք որ կը համարձակին Եպիսկոպոսութեան դիտաւորութեան հակառակ՝ իրենք իրենցմէ կոչումն ընել։

Իւր կոչումեն դանկանչուն համար պատիժ կրող երիտասարդը։

Ինչ ատեն Ղեւնեդիկտոս հայրն իւր սրբութեան համբաւով կը հռչակուէր, եկեղեցիս երիտասարդին մէկը, օր մի նորա մօտ գնաց որ ապաչէ ապաւել վինքը դիւէն, ուակէց Թըշուառաբար կը տանջուէր։ Սուրբն աղօթք ընելով Աստուծոյ, ապառեց այսահարեալ տղային չար դիւին ձեռքէն, բայց բժշկելէն յետոյ պատուիրեց նորա Աստուծոյ կոչմէն՝ որ սրբազան կարգ չընդունի, ասելով՝ որ եթէ համարձակի քահանայ օծուելու, Աստուած նորէն իշխանութիւն կուտայ դիւին նորա մարմնոյն տիրելու ի պատիժ իւր յանդգնութեան։ Այներիւ կոսը խիստ վախնալով այս ապառնալիքէս՝ միտքը դրաւ սուրբ ձեռնադրութիւն խոյրէն դուրս չելնել

նել, բայց կամ ժամանակ անցնելէն մոռնալով, կամ իւր ծնողացմէ ստիպուելով, համարձակեցաւ իւր եպիսկոպոսին երթալ և սրբազան կարգը ինդրել։ Իսկ նա սուրբ ձեռնադրութեան ըրած կանխատեսութիւնն իմացած չլինելով՝ չէ ջատագ, մէկէն ուսաւ նորա քահանայութեան աստիճանը. բայց դեռ հազիւ ընդուներ էր զայն, կիսամեռ լինելով եպիսկոպոսին ոտքն և իւր անդամները սոսկալի կերպով մի ծռմռիլ գալով, ողբալի ձայնով պօռաց՝ թէ նոյն րոպէին մէջ նորէն դիւահարեցաւ, արժանի պատիժ իւր յանդգնութեան, վասն զի առանց մտիկ ընելու Աստուծոյ հրամանին, որ կ'արգիլէր զինքը սուրբ ձեռնադրութիւն բերնով սրբազան աստիճանն չելնելու, յանդգնաբար ինդրեր եւ ընդուներ էր նոյն սուրբ կարգը։

Եթէ Աստուած միշտ այսպէս սաստիկ կերպով չպատժեր զանոնք՝ որ իրենց կոչման հետ ւսատարմութեամբ չեն հետեւիր, սակայն անպատիժ եւս չթողուր։

Որքան մարդիկ կան որոնց ի դատնութիւն վտխուած է այն քաղցրութիւնները, զոր կը յուսային գտնել նոյն վիճակին մէջ, զոր Աստուծոյ կամաց հակառակ ընտրեցին և յետոյ զայն ընդունելնուն պղծացան։ Այլ թէ եւ այն անցաւոր երջանկութիւնը մոքերնուն դրած չէս վայելած եւս լինիր, այսու ամենայնիւ յաւիտենական արժանի են. վասն զի դըժ-

ւար է յաւիտենական երջանկութեան արքա-
յութիւնն հասնիլ մի այնպիսի ճանապարհէ՝ որ
Աստուծոյ կըցուցածէն տարբեր և նեղական է ։

Դժոխային անդնդին մէջ շատ ամբարիշտ-
ներ կան, որոնց հոն ինկնելնուն պատճառն ի-
րենց կոչումէն հրաժարիլն է, և կրնային փրկու-
թեան նաւահանգիստը հասնիլ՝ եթէ հաւա-
տարմութեամբ հետեւէին անոր ։

Նոցա օրինակով ուսիք ամեն ջանք ի գործ
դնել, որ ճանաչէք այն ճանապարհն ուսկէ Աս-
տուած կ՚ուզէ դէպ ի երկինս առաջնորդել ըզ-
ձեզ, և զայն ճանաչելնէդ յետոյ՝ իմ վերը յի-
շուցած զանազան միջոցներն ի գործ դնելով,
դնացէք նոյն ճանապարհէն անեղկիւզ սրտիւ,
և մի եւս անկէ դուրս ելնէք ։

Ա՛ռանձնապէս ասկէ կախեալ է ձեր եր-
ջանկութիւնը թէ այս և թէ հանդերձեալ աշ-
խարհին մէջ ։ Այն կենաց վճռին ուր Աստ-
ուած կը հրաւիրէ զձեզ, ընդունելու որ լինիք,
երբեւ մէկ գրաւ մի կ՚ունենաք թէ այս ամբար-
հիս վերայ հանգիստ կեանք վարելու, և թէ եր-
կնից մէջ անմահ փառքը ժառանգելու ։

Արդ, ո՛ր և իցէ վճռակ մի որ ընդունիք, ջա-
նացէք, սիրելի զրկեակք իմ, հաւատարմու-
թեամբ կատարելու նորա պարտաւորութիւն-
ները ։ Այն վճռակի մէջ բարի վարքը ճշմարիտ
երջանկութեան աղբիւրն է, ուստի չկրնար
մարդ ճշմարտապէս երջանիկ լինիլ, եթէ միշտ

առաքինի և պարկեշտ չէ ։ Այն դժուար քան
է առաքինութեան և բարեպաշտութեան ճա-
նապարհներուն մէջ միշտ հաստատ քայլել, ա-
պա մեծ մեծ օգուտներ կան անկէ քաղելու՝ և-
թէ բնաւ չմղուիք ։

Այս պատճառաւ մեր երջանկութիւնը բուլ-
լային մեղմէ կախեալ չէ, և նոքա՝ որոնց հետ
պիտի կենակցիմ, կրնան զմեզ կամ երջանիկ
կամ դժբախտ ընել ուսոյն պարտք կը համարիմ
ինձ յանդգնիլ ձեզ՝ որ եթէ անգամ մի ուսու-
նութեան վճռակին ընդունելու լինիք, հարկ է
ձեզ այն կապը հաստատեցնէդ յաւուրջ ձանչէք
ոչ միայն ձեզ ընկերը ընելու անձին խնաստուն
վարքը, այլ և նորա բարքն ու վարքը, որպէս
զի յետոյ անօգուտ տեղ չզղջաք ։

ԳԼՈՒԽ Ե Ի ։

Տղայք ժայռերուն դէմ զարնելէն կը զգուշացուին, և
աշխարհս մէջ շատ անգամ հանդիպած վտանգները ։

ԺԱՄԱՆԱԿս և աշխատութիւնս կորնչուց-
ած կը լինէի, սիրելի զրկեակք իմ, եթէ, ինչ-
պէս որ վերեւ ասս տեղս ըսի՝ ջանայիմ ձեզ
սրտին մէջ ընկերու առաքինութեան սէրը հան-
դերձ բարեպաշտական խրատներով, դուք եւս ձեր
կողմէն հոգ տանիք զգուշանալ անառակ տղա-
յոց խօսքերէն և օրինակներէն, որոնք՝ ինչպէս

եւս կը կարծեմ, խիստ դէշ ժայռեր են, և խիստ վսխնալ պէտք են անոնցմէ անսխրձ երիտասարդները։

Շատ չար և անառակ տղայք կան, որ դէշ խրատներ կուտան իմ տուածներուս դէմ։ Հակառակ, զորոնք ձեր մտաց մէջ տպաւորելու համար ձեռքէս եկած չանքն ըրի։ Կան ուրիշներ եւս որոնք կ'ասեն՝ թէ երիտասարդական հասակը զուարճութեանց դարուն է, և թէ խենդութիւն է ուսմամբ և աշխատութեամբ զայն անցընելը։ Ուրիշներն եւս կը խրատեն՝ թէ պէտք է ամեն մարդոց յարմարիլ և որու հետ որ կը տեսնուի մէկը, նորա օրինակին հետեւելու է։ Կը գտնուին այնպիսիներ եւս, որ ձեր պարկեշտ եւ բարի վարքը ծաղր կ'ընեն։

Ընդհակառակ և ասոնց պէս ուրիշ շատ հակառակ խօսքեր կը լսէք հարիւրաւոր տղայոց մէջ, զորոնք կ'երեւի թէ դժոխքը դուրս փսխած է երկրիս երեսը, փորձելու և մոլորեցընելու համար զանոնք որ կ'ուզեն բարեկարգ և բարի օրինակ լինել այլոց։ Բայց դուք մի խաբուիք նոցա խաբեբայ չար զրոյցներէն։ Ո՞ձեզ երեսն ի վայր կ'անարգեն, վասն զի ձեր բարեկարգ լինելնիդ իրենց անառակութեանց լուկ յանդիմանութիւն մի է, բայց ատոր գիտցիք որ իրենց սրտին մէջ կը յարգեն զձեզ և ձեր երջանիկ վիճակին վերայ եւս կը նախանձին։ Դուցէ նաեւ

երբեմն ձեր հաստատուն առաքինութիւնը տեսնելով կը պատուեն զձեզ, մինչեւ ձեր առջեւն իրենց անմիտ կատակներն եւս կ'ամբչնան ընելու։

Անառակ տղայոց առաքինութիւնը դատուելնին։

Երբնաբախնոս Ալենացին իւր ուսման ժամանակ շատ անգամ հանդիպեցաւ անկիրթ և չար տղայոց մէջ գտնուիլ։ բայց որովհետեւ ան մինչեն եւս կը ճանչէին նորա առաքինութիւնը, ուստի չէին կրնար անոր արժանաւոր եղած պատիւը չտալ։ Իւր ներկայութիւնը սանձ մի էր, որ մինչեւ խիստ անառակ տղայն կը զսպէր։ Մի քանի տղայք մեկտեղ ժողովուած ժամանակ երբ նա երեւալու լինէր, ամենքն մէկէն կը լռէին. "Լռեցէք, կ'ասէին իրարու, Իերնաբախնոն հոս է։"

Բայց թէպէտեւ լսրբ տղայք ձեզ սրհամարհութիւն միայն ցուցընելու լինին, միթէ դուք առաւօրէն չէք վարձատրուիր ձեր խղճին բարի վկայութեամբն և բարեկիրթ մարդոց ձեզ տուած յարգութեամբ։ Մի՛ խիայն առաքինի մարդ կրնայ մեզ պատիւ ընել, որուն անթիւ անառակ տղայք չեն կարեր վնասել. և ոչ թէ տղոց մեր վերայ ունեցած կարծիքն, այլ մեր անձին վերայ մեր ունեցած կարծիքն է որ կը նայ երջանիկ ընել զմեզ։

Բայց դուք որովհետեւ խեռ ազգայոյց անա-
ձեծի եւ անպարկեշտ լեզուին գայթակղութեան
դէմ չէք կարեր երկար դիմանալ եւ քաջութեամբ
յաղթել, ուստի մեծ խնամատարութիւնն այն է՝ որ
նոցա հաղորդակցութենէն հեռու փախչիք ։

Իսկ եւ անառակ ազգայոյց օրինակին եւս վե-
րադառնալու ժայռ մի է, ուակէ զգուշանալ պէտք
է. վասն զի պէտք չէ կարծել՝ թէ ամեն երիւ
տասարդ ազգայ իմ ուսուցած խնամատուն կա-
նոնացս համեմատ կը վարուին ։ Շատերը կը
սեանձէք դուք որ գլխաւին ներհակ ճանապարհ
ներս մէջ կը քայլեն. եւ զայս՝ իրաւունք չպիտի
համարիք ձեզ ուղիղ չափ գնդրելու ։

Այժմ սեանձէք դուք որ անթիւ չիմար մար-
դիկ ինքզինքնին իբրեւ խաղ գահավէժ տեղէ
մի վար կը ձգեն, դուք չէ թէ նոցա չէք հետե-
ւիր, այլ իրենց կուրութեան վերայ խակ կը խըզ
ձաք եւ կը տսկաք ։ Արդ՝ նայնպէս տսկալ պէտք
է, երբ անառակ երիտասարդք չար օրինակ
տալս լինին ձեզ ։ Այդ եւս այլոց պէս չիմար
մարդիկ են. բայց տոցա կորուստն ամենեւին ըզ
ձեզ իրենց հետ չմոլորեցընելէն ի զատ, սւելի
խնամատուն եւս կ'ընեն իրենց չիմարութեամբ ։
Այսքանիկ բերէք թէ ուրիշն օրինակը միշտ
կանոն չպիտի լինի մեզ. այլ նոցա միայն պիտի
հետեւիմք, որոնց վարքը լեցուն է դիտու-
թեամբ. բայց երբ ձշմարտութեան չաղէն նո-
ցա եւս մոլորելու լինին, այն ժամանակ անոնց

հետեւելու տեղ՝ պարտաւոր եմք հեռու փախ-
չել անոնցմէ ։

Երկու ուսումնական երիտասարդաց խնամատուն ջնարջ ։

Ինչ ժամանակ սուրբ Գրիգոր եւ սուրբ Բար-
սեղ իրենց ուսման մտադրութեամբ կը պարա-
պէին, իրենց բոլորակիքը պատեր էին մոլի եւ ա-
նառակ ազգայք ։ "Դուք մեկնք, ի՛սահ սուրբ Գը-
րիգոր, այն ընդհանուր մոլութեան մէջ նման
նութիւն կը բերէիք բանասաեղծներուն ա-
սածին պէս՝ մի գեսի, որ ծովու լեզու ջրերուն
մէջ իւր անուշութիւնը կը պահէ, կամ՝ անաս-
նոյ մի՝ որ կրակին մէջ անվնաս կը մնայ առանց
տաքութիւնը զգալու ։ Անոնք նոցա հետ ամե-
նեւին տեսութիւն չէիրնք բներ, որոնց օրինակը
կարող եր զմեզ գլխէ հանել ։ Անոնք Աթէնքի
մէջ երկու ճանապարհ միայն կը ճանչէիրնք, մի-
կը եկեղեցին, միւսը դպրոցն ։ Իսկ այն ճա-
նապարհներն որ դէպ ի աշխարհասիրն հանդէս-
ներ, թատրոններ, հասարակաց խաղալու տե-
ղեր եւ պարահանդէսներ կ'առաջնորդեին, եր-
բէք չէիրնք ճանչեր ։ "

Զեղօրինակ առէք, սկրատեսն որդեակք իմ,
այս երկու սուրբ երիտասարդաց վարքը. նոցա
հետ միայն յաճախ տեսնուելիք, որոնք կրնան
ձեզ օրինակ տալ քրիստոնէական առաքինու-
թեանց ։ Նարի խրատներն իբրեւ կանոն սիրած

ընդունեցէք. և ընդհանրապէս խօսելով՝ նայելա էք որ խրատն անսիրտ երիտասարդներէն չընդունիք, այլ խելացի մարդոցմէ՝ մանաւանդ ծերունիներէն ընդունիք՝ որոնք տարիքով և փորձառութեամբ իմաստուն եղած են. բայց հասարակօրէն տղայք չեն ուզեր նոցա մօտ երթալ խորհուրդ հարցնելը բան ուսանիլ մանաւանդ անոնցմէ հեռու կենալը պարծանք կը համարին իրենց, մենք իրենցմէ շատ բան գիտեմք ասելով մարդու տեղ չեն դներ զիրենք, և ի՞նչ նպատակ եւս:

Դառնամք նորէն շար օրինակաց վերայ խօսելու, որոնք խեղճ նորահաս տղայոց մեծագոյն մասին գլուխ եղելուն ցաւալի պատճառն է. ուստի պարտաւոր եմ ասել ձեզ՝ թէ առանց շարունակ հոգ տանելու շար տղայոց օրինակին հեռու փախչելու և դէմ կենալու, անկարելի է անմեղութեան վիճակին և առաքինութեան սիրոյն մէջ մնալ: Ժամբաղդաբար եթէ յանդգնելի մէջ ինկնելու լինիք, զգայ կեցիք շասել այն խօսքը, թէ՝ ահա ուրիշ տղայք եւս ի՛նչեն. և մի կարծէք թէ առանձին արդարանալ:

Ուրիշներուն պակասութիւնները չեն կարեր մերին արդարացընել: Ժորժուած շարութիւնը բնաւ նեղելի վիրաւոր լինի՝ թէպէտ եւ դժոխոյները անթիւ և անհամար հոդի լինին, այլ միշտ շարութիւն կը համարուի, և հեռուեւսէս պարտական է միշտ արհամարհելու եւ

անկէ միշտ հեռի փախչելու:

Պէտք չէ վախնալ թէ մատաղ կը ցասցընեն զմեզ՝ ասելով. "Ա՛հա եղական մարդ մի", երբ չուզենք միանալ մեղութեան կատակից կամ գործի եղանակներուն հետ: Ա՛յս եղականութիւնն 1 որքան որ հարկաւոր է մարդուս, այնքան եւս աւելի գովելի է, և առաքինի մարդը պէտք է փառք և պարտաւորութիւն համարելու է:

Գողնալի եզականութիւն:

Տօնելիք երիտասարդը կը սեմնէր որ ժողովրդին ամեն օր կոտոր առջեւ խունկ կը նուիրեին. և ինքն այն բաղմութեան օրինակին չհետեւելէն ի զատ, իւր վարքովն նոցա կը հակառակէր. և երբ պզտիք բարձր տեղեր կ'ելնեին կրոնց պաշտօն մատուցանելու, այս ջերմեռանդ Իսրայելացին մինակ կ'երթայր իւր պաշտօնը ճշմարտին Աստուծոյ նուիրելու Երուսաղէմոյ տաճարին մէջ:

Ա՛յս առաքինի օրինակիս վերայ ձեր վարքը շհակեցէք, սիրուն որդեակք իմ, շար օրինակ նեղուն յանդուգն յարձակման քաջասրտութեամբ դէմ դրէք. և եթէ սեմնէք որ բոլոր մարդիկ ինքզինքնին անառակութեան տուած

1 Եզականութիւնը սեռակ մի հպարտութիւն է, որով մարդս չուզէր ուրիշին վարուց կամ գործոց յարմարիլ, թէեւ բարի լինին, այլ ինքն իւր յատկութեամբ կ'ուզէ միշտ առանձին կամ մեկ հատիկ լինել աշխարհիս վերայ:

են, դուք միշտ հաւատարիմ կեցիք իմ հոգեշահ խրատներուս մէջ, ջերմեռանդ աշխատեցայ ձեր սրտին մէջ տպաւորել։

Այլոց չար օրինակներն անարգած ժամանակիդ, սիրեցիք որ դուք եւս այլոց գայթակղութեան քար չլինիք։ Տղայոց մեծ մասին վատ լինելուն պատճառ իրենք իրենց մէջ ղիւրաւ գլխէ հանելին է. ուրեմն մի ջուցիք այն սիրեցիկ բան մի՝ որ ձեր ընկերին գայթակղութիւն տայ, այլ իբրեւ ճշմարիտ բարեկամ այնպիսի բարի խրատներ տուէք, որոնց պէտք ունին։ Բայց ձեր վարքն եւս այնպէս լինելու է որ խօսքերնուդ հետ գործերնիդ եւս յարմար գան. վասն զի խմաստուն խրատներով զանոնք աղեկսուելու յորդորելնիդ անօգուտ կը լինի, եթէ գիտնական օրինակներով չարութեան միտեցը նէք նոցա սիրտը։ Զկայ արդարեւ ընկերութեան մէջ չար օրինակներէն աւելի ցաւալի բան մի, եւ ոչ դուք՝ որքան մեծ գթութեան եւս ընելու լինիք, կրնաք չտալ ուրիշին վատ օրինակ մի։ Ուրիշներու գայթակղեցընելով՝ դուք ձեր անձին կը գիտէք, եւ միանգամայն վատ անուն կը ստանաք՝ թէ դուք անձամբ յանցանք մի գործէք եւ թէ ուրիշին գործել տաք։

Նոյ որովհետեւ միտքս դրած եմ ցուցընել ձեզ այս գլխուս մէջ այն ժայռերն՝ ուսկէ ըզգուշանալ պէտք էք չզարնուելու, որպէս զի անվթարութեան մէջ յարատեւէք, կ՚ուզեմ այս

տեղս մի քանի խօսք եւս կատակերգութեանց կամ թատերական տեսարաններու եւ պարահանդէսներու վերայ ընծայել։

Հրեշտակապայծ մեծագոյն մասն այնպէս կը կարծեն, թէ տէպ թատրոն երթալով ամենեւին եւ ոչ վնաս մի կը ստացուի անկէ. բայց խմաստուն եւ տեսակցին մարդիկ միաբան կը հաստատեն՝ թէ թատրոններուն չափ վնասակար եւ գիտակար բան չկայ, մանաւանդ անոյշ եւ անզգոյշ տղայոց համար։ Նոյ այս տեղս չեմ ուզեր մեկիկ մեկիկ գրել այն մարդոց իրաւունքները, զորոնք իմ զրուցածս իբրեւ սպացոյց մէջ կը բերեն, այլ միայն ձեզ գտնուած մի տալու համար այն վճռանգին վերայք, ուր տեղ թատրոն գնացող տղայք անզգուշաբար կ՚ինկնին, բաւական կը համարիմ ասել ձեզ մեկ հեղինակի մի կարծիքն, եւ իւր որդւոյն ըրուցածը։

Գասնի կարծիքն եւ օրինակը։

Այս տասը հեղինակս է երեւելի գաղղիացին Վասին, որ իւր տասներկու երեսներէն եւ վասուածասիրութենէն մղուելով, տեսնելով անգամ ինքզինք բաղդատելի թատերական գործեր յօրինելու տուած էր, եւ միշտ նոցա կը զգաղէր երջանկի յաջողութեամբ. եւ կ՚երեւէր թէ տղոց ջոկ խելք տուող չկայր այս ուսմունքը յատա-

ջայլնելու , յօժարութիւն մի ձգելու հասա-
րակութեան սրտին մէջ , և նորա պաշտպան
կենալու : Բայց երբ իւր կրից եռանդը դադրե-
ցաւ և ինքն իրեն եկաւ , մտադրութեամբ հոգ-
ւոյ աչք կշռեց իւր վարքը , և փոխանակ ինք-
զինքն արդարացընելու ջանալու , դատապարտու-
թեան արժանաւոր համարեց՝ դատապարտե-
լով սեռասրանները , ինչպէս որ ըրաւ : Յետոյ
Թատերական գործեր յօրինող հեղինակները
կը նմանեցընէր Հասարակութեան Թոյն խմող
նոյնեցու : Ասոնք այս իւր կարծեաց հաւանե-
լով , ոչ թէ միայն հրաժարեցաւ անկէ յետոյ
Թատերական բան գրելէ , այլ և իրեն օրէնք մի
դրաւ Թատրոնի մէջ և ոչ ոտք կոխելու . և իւր
որդւոյն ուրիշ բան չէր պատուիրեր , այլ մի
այն կը զգուշացընէր որ ամենևին Թատրոն
չերթայ : Ըւ ահա այս բանիս վկայութիւն՝ նո-
րա սոյն մտքին իւր որդւոյն գրածը :

" Դու գիտես , սիրելի զաւակ , ինչ որ քեզ
" արդէն պատմած եմ Թատերական գործոցդ
" Թեանց եւ կատակերգուԹեանց վերայօք :
" Ա՛առվ քաղաքին մէջ ԹատերգուԹիւն մի
" պիտի կատարուի այս մօտերս : Խիստ մեծ
" բան է քեզ և ինձ համար՝ որ դու չերթաս
" հոն : Ծադաւորն և բոլոր պալատի մարդիկ
" պիտին՝ որ ես իմ վերայ պարտաւորուԹիւն
" դրած եմ ոչ եւս Թատրոնի մէջ ոտք կոխե-
" լու , ուստի վատ կարծիք կ՚ունենային քո վե-

" րայ եթէ այդ ծաղիկ հասակի մէջ իմ խրատս
" ներս զանց ընելու լինիս : Այս դիտեմ որ մարդ
" դուն մօտ պատիւդ չես կորսունցըներ Թատրոն
" երթալով , բայց դու ոչինչ քան կը համարիս
" Ստուծոյ առջեւ անպատիւ և անարդ լինելը :
" Կարծես դու Թէ մարդիկ անպատճառ չեն զարմա-
" նար տեսնելով որ իմ տուած խրատներուս հա-
" կառակ կը վարուիս : Ա՛տածէ անգամ մի որ
" Պորկինիայի երիտասարդ դուքսը , որ այս տե-
" սակ զբօսանքները խիստ սաստիկ կը սիրէ ,
" դեռ մինչեւ յայսօր ամենևին մէկ տեսարան
" գացած չէ " :

Կասկած մի տալ ուրեմն այն տղայոց , որոնք դէմ կենալով կ՚ասեն՝ Թէ կաթոլիկութեան եւ Թատերական տեսարաններուն ամենևին միտս մի չունին : Ասոնք այս մտքին մէջ ամենեն ա-
ւելի միտած և խելք տուած էր , և դուք հիմայ կարդացիք նորա հարազատ կարծիքը : Ա-
սիկայ ձեզ կանոն մի կրնայ լինել , ձեր վերայ տա-
նելով իւր որդւոյն գրած խրատաբանութիւնը :

Ա՛եր ազգին մէջ , և այն մի քանի երեւելի քաղաքաց մէջ միայն , քանի մի տարիէն ի վեր է սկսուած է այս տեսակ հրապարակական ներ-
կայացումներ : Ազգս Ընտրեալի տեսարանաց ազատ ու համարձակ և մարդկային համեստու-
Թեան ներհակ ներգործութիւններն չունենալով , նոցա վտանգներն եւս չունին : Թատերական ներկայացմանց աւելի դրդիչ և անխորտ երև-

ստասարդաց դիւրադաց կիրքերը վերովարդ մա-
ւերն են սիրահարական գործերը. և որովհե-
տեւ առքա նորահաս օրիորդաց միջամտու-
թեամբ կը խաղացուին, նոցա հրապուրիչ տես-
քըն ու կերպարանքը միայն բաւական լուսկիր
մի է պատանեկութեան դիւրաւառ կրիցը բոր-
բոքման: Վասն որոյ բարեբախտ կը համարիմ
ես զիս որ ազգային ներկայացմունքն այս տեսակ
արարուածներ չեն, այլ միայն ազգային նշա-
նաւոր դիպաց և դիւցազնագործութեանց ան-
ձնաւորեալ պատմութիւնքն են. իսկ ուրիշ ար-
ուեստիքն արարուածներն ևս բարոյականութեան
վերայ հիմնուած գործեր են: Սոցա օգուտները,
ղոր չեմք կարեր երբեք ուրանալ, հասա-
րակութեան յայտնի եղած են. և առանց պա-
տրուակաւ խօսելու՝ այս տեսակ ներկայացում-
ներն, որոնց դերասանները միայն արական սե-
ռէ են, չունին իրենց մէջ իգացուցիչ և թու-
քամրթի տեսիլներ, վասն որոյ փոխանակ երի-
տասարդութեան աչքերն իգօրէն մեղկելու և
հանճարն ու միտքը ծնդելու և բթելու և սիր-
տը դիւրաբեկելու, ընդհակառակը կը վառէ
և կը բորբոքէ այրական վեհանձնութեամբ և
ազգասիրական եռանդով, և. նորա սիրտն ու
միտքը կը կրթէ և կը հրահանգէ առաքինական
բարեմասնութեամբք:

Իմ խօսքս մի միայն եւրոպական թատերաց
վերայ են, որոց ներկայացումները թէպետեւ

բարոյականութենէ զուրկ չեն, այլ քան որում
նորա արտասանած լեզուն մեր ազգի պատա-
նեաց շատերուն անծանօթ է, վասն որոյ ա-
ռանց կարենալու նորա ատացուածքներէն ի
մասն մի քաղել, բարոյապէս օգուտ ու շահ
կրել, այլ միայն դերասանութեաց արտաքին
հրապուրիչ պատկերներէն դիւթուելով, և ի
բնէ անմեղ սիրտերնին և զգացմունքնին թու-
նաւորելով, վերովարդ կիրքերը յետ կը դառնան,
և կը վնասեն թէ նիւթապէս և թէ բարո-
յապէս:

Վասն որոյ ահա ես եւս Պասմնի իւր որդ-
ւոյն տուած պատուէրը ձեզ կատամ, սիրելի
որդեակք իմ, ամենևին ոտք չկոխէք օտարազ-
գի թատրոնաց մէջ, ուրտեղ դիւրաւ կը կորն-
ցընէք ձեր անմեղութիւնը. իսկ ազգային թա-
տրերը, ինչպէս քիչ մի յառաջ ասացի, չունե-
լով այն վտանգները, կրնաք երբեմն երթալ,
մանաւանդ ձեր կատարեալ հասակին մէջ, վա-
րելն ալ ձեր մտաց զգաստութիւնն և իմնաց-
կանութիւնը կատարեալ լինելով՝ կրնաք ապե-
կը գիշեր որոշել:

Պարահանդէսներն եւս քիչ վտանգաւոր
չեն անփորձ երիտասարդաց համար, որ գոնէ
թատերախաղերու բարոյական մասերն եւս
չունին: Երեւելի պատասխանեին մէկը, որ ա-
ղէկ կը ճանչէր նոցա վտանգները, եպիկտետ-
սի մի հետ նոցա վերոյիշեալ խօսելով՝ այսպէս ա-

ասց. «Այս ամենեւին չէի կարծեր թէ պարա-
» հանդէսներն այսքան վտանգաւոր լինին: Այս
» ժողովներուս մէջ հաւաքուող անձինք սովո-
» րաբար երիկ ու կիսիկ մարդիկ միատեղ կը լի-
» նին, որոնք եթէ առանձնութեան մէջ շատ
» ներզսութիւն կը կրեն իրենց կրից յաղթելու,
» այսպիսի առիւծանք որ գտնուին, դիւրաւ կը
» յաղթին փոքրամասնէ, ուր ճգնաժամը ան-
» գամ այս հանդէսին զարդարանքները, ջահե-
» րը եւ քաղցրաձայն նուագարանները սեմնե-
» լով ու լսելով՝ կը վառին կը բորբոքին: Ա՛յսն
» որպ ես այնպէս կը կարծեմ՝ թէ քրիստոնեայ
» եղբայր հեռու փախչիլ պէտք է պարահանդէս-
» ներէն. եւ կ՚երեւի թէ տեսչական ա-
» տեանները, որ մարդոց բարի վարուց հոգ
» տանելու համար հաստատուած են, արդի-
» լել պէտք են զիրենք հոն երթալու »:

Կարծեմ, սիրելի որդեակք իմ, որ ձեր երթալու ճանապարհը ուսուցանելու համար յարմար ինչ որ կայր՝ խօսեցայ ձեզ, հեռացնելով միանգամայն ձեզմէ այն ժայռերն՝ որոնց խիստ շատ անգամ կը զարնուիք: Այս մի կարծիք բնաւ թէ ձեզմէ պահանջած դժուարեան մի է ի դործ դնելու: Միւս անցեալ դասերուն մէջ ձեզ նկարադրած եղանակներս, զորով պէտք էք վարուիլ աշխարհիս մէջ, ամենեւին դժուարութիւն մի չունին, նաեւ ձեզ հասակակից եւ վիճակակից անհամար աղայք ի

դործ դրած են, եւ այնպէս կը վարուին:

Այս բանիներուս զօրաւոր փորձերը տեսած վերը դրած օրինակաց շատերուն մէջ. բայց առաւել սիրտ համոզուիք ինձ՝ եթէ Հարանց վարքը կարդալու լինիք, որուն մէջ ներկայացած սուրբ մարդիկն ամեն ժամանակ եւ աշխարհս ամեն կողմն երեւելի հանգիսացան գեղացանց առաքինութիւններով, նաեւ խիստ դժուար պարագաներու, հակառակ գործելու եւ սոսկալի հալածանաց մէջ: Այս գիրքս, զոր օրը գտնէ մէկ քառորդ ժամ պէտք էք կարդալ խիստ շահաւոր կը լինի ձեզ, ձեր սրտին մէջ եռանդ մի կը ձգէ նոյն ճշմարիտ դիւցազանց նմանելու, այս աշխարհիս մէջ՝ ձեր երջանկութիւնը կը շինէ, եւ հանդերձեալ կեանց մէջ յաւիտենական եւ կատարեալ ուրախութիւն առնելու ապահով յոյս կուտայ:

ՎԱՀՃԱՆ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ 1

Ա. Թէ երչափ հարկաւոր է որ տղայք մանկութեան սկսին առաքինութեան հետեւիլ։ 3

ԱՌԱԿ. Երկու նաւավարներք։ 8

Բ. Հետեւեալ առակքներս լաւ կ՚իմացընեն տղայոց՝ Թէ գժուար բան է մանկութեան ժամանակ ստացած չար սովորութիւնները ուղղել։ 10

ԱՌԱԿ. Կաղնին և եղերաբոյս տունկ։ 15

Գ. Աստուածպաշտութեան վերայ։ 18

ՅՕԴ. Ա. Աստուածպաշտութենէ աւելի հարկաւոր բան չկայ։ »

ՅՕԴ. Բ. Ամեն բանէն աւելի աստուածպաշտութիւնն ընտրելի է։ 21

ՅՕԴ. Գ. Աստուածպաշտութիւնը միայն կրնայ զմեզ երջանիկ ընել։ 24

ՅՕԴ. Դ. Աստուածպաշտութեան պարտաւորութիւնները դիւրաւ կրնան ի գործ դրուիլ 26

Դ. Աստուածպաշտութեան այլ և այլ կրմտութիւնները։ 30

ՅՕԴ. Ա. Աղօթք։ 31

ՅՕԴ. Բ. Սուրբ պատարագ։ 33

ՅՕԴ. Գ. Սակս հաղորդութիւն առնելոյ։ 34

ՅՕԴ. Դ. Աստուածպաշտութեան կրքերուն ընթերցումը։ 38

ՅՕԴ. Ե. Պահպանել հրեշտակին առաքինութեամբ Հանապարհորդութիւն ընդ երիտասարդը։ 39

Ե. Անմեղութեան վերայ։ 45

Զ. Անմեղութեան պահանջած խնամքներն և նախազգուշութիւնները, և զանիկայ պահպանելու միջոցները։ 54

Է. Մոլի բարեկամաց վերայ։ 60

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԱՌԱԿ. Խնձորին ծառն իւր պտուղներէն ճանչցած։

Ը. Նոյն նիւթին վերայ, այսինքն նոյն վտանգին որու մէջ կ՚ինկնին տղայք մոլի ընկերներու հետ տեսնուելով։ 73

ԱՌԱԿ. Գղտի մուկին և ծերի կատուն։ 75

Թ. Վնասակար և վատ գրքերը։ 78

ԱՌԱԿ. Երկաթագործն ու տղայն։ 82

Ժ. Տղայոց պարտաւորութիւններն իրենց ծնողաց գէմ։ 84

ԺԱ. Տղայոց իրենց գատխարակաց և վարժապետաց գէմ ունեցած պարտաւորութիւնները։ 104

ԱՌԱԿ. Իւր տէրը խածնող շունը։ 113

ԺԲ. Վարժապետաց ամաչառութիւնը պէտք չէ որ աշակերտաց սերը պաղեցընէ անոնցմէ։ 119

ԱՌԱԿ. Որթն և այգեգործը։ »

ԺԳ. Հնազանդութեան վերայ։ 127

ԺԴ. Տղայք իրենց ընկերաց հետ ինչպէս պէտք է վարուին։ 140

ԺԵ. Թէ ինչպէս պէտք են վարուիլ տղայք ազգատաց հետ, և ինչպէս ողջոյնները ընդունիլ և նոցա։

ԺԶ. Բարեգործութեան օրինակ։ 176

ԺԷ. Ճշմարիտ արժանաւորութեան վերայ։ 187

ՅՕԴ. Ա. Ճշմարիտ արժանաւորութիւնը չեզի ամբաւութեան վերայ չէ։ 188

ՅՕԴ. Բ. Մարդուս արժանաւորութիւնը փառաժամութեան վերայ չէ։ 192

ՅՕԴ. Գ. Պատուոյ և իշխանութեանց վերայ։ 197

ՅՕԴ. Դ. Քաջութեան և պատերազմի գործոց վերայ։ 200

ՅՕԴ. Ե. Տաղանդաց և հանճարոյ վերայ։ 203

ԱՌԱԿ. Արամազդ, Պարկեշտութիւն և միւս Առաքինութիւնք։ 205

ՅՕԴ. Զ. Ճշմարիտ արժանաւորութիւնն ա-

ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
	ուսքիմուբեան մէջ կը կայանայ :	215
ԺՐ.	Գիտութեանց վերայ :	216
	ՅՕԴ. Ա. Գիտութեան յարգը :	
	ՅՕԴ. Բ. Գիտութեան վերայ եղած յարգը :	219
	ՅՕԴ. Գ. Գիտութեան օգուտները :	226
	ԱՌԱԿ. Գեաին մօտ Ճանապարհորդը :	228
ԺԹ.	Տղայոց ուսանելու ուամուեքները :	230
	ՅՕԴ. Ա. Կրօնագիտութեան վերայ :	231
	ՅՕԴ. Բ. Գրաբառ լեզուին վերայ :	238
Ի.	Աշխատասիրութեան վերայ :	251
ԻԱ.	Ճարտութեան և դատարկակեցութեան վերայ :	259
ԻԲ.	Ջբօսանաց և խաղալու վերայ :	266
	ՅՕԴ. Ա. Արգելուած զբօսանքներ .	267
	ՅՕԴ. Բ. Խաղալու և խաղալու ժամանակ պէտք եղած կանոններուն վերայ :	273
ԻԳ.	Սուտ ասուելու վերայ :	280
ԻԴ.	Որկրամոլութեան վերայ :	288
	ՅՕԴ. Ա. Որկրամոլու թիւնն անարգ մոլութիւն մի է :	»
	ՅՕԴ. Բ. Որկրամոլութեան չար հետեւանքները :	292
ԻԵ.	Քաղաքավարութեան վերայ :	298
	ՅՕԴ. Ա. Թէ ինչ է քաղաքավարութիւնը :	
	ՅՕԴ. Բ. Մարդավարութեան և սիրուն վարմունքի վերայ :	300
	ՅՕԴ. Գ. Քաղաքավարութիւնն և մարդավարութիւնն ամենուսկան վարմունքին մէջ կը կայանայ :	302
ԻԶ.	Կենաց ուիճակ ընտրելու վերայ :	309
	ՅՕԴ. Ա. Այս ընտրութեան հարկաւորութիւնը :	»
	ՅՕԴ. Բ Արժէկ ընտրութիւն ընելու համար պէտք եղած նախապատրաստութիւնները .	312
ԻԷ.	Տղայք ծնողաց դէմ ունենալիք կրկնուշադութիւն . և աշխարհիս մէջ շատ անգամ հանդիպած վտանգները :	319

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱԱՀ — ՏՐԱ
Ա. Մաթևոսյան
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՆՎԱՆ

1694

2013

0025780

ՀՀ Ազգային գրադարան
NL0025780